



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՅԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ
ԵՎ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2013-2022
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն	4
Մեթոդաբանություն	9
Չեկոյցում օգտագործված հապավումները	11
Ա. Ուշադրության արժանի հիմնական ոլորտները	12
1. Համապարփակ քաղաքականությունը և ռազմավարությունը	12
2. Համակարգումը	14
3. Ռեսուրսների բաշխումը	18
4. Անկախ մշտադիտարկումը	26
Բ. Ընդհանուր սկզբունքները (Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 12-րդ հոդվածները)	30
1. Խտրականության արգելքը	30
2. Երեխայի լավագույն շահը	35
3. Երեխայի լաված լինելու իրավունքը	38
Գ. Բռնությունը երեխայի նկատմամբ (Կոնվենցիայի 19-րդ հոդված, 37-րդ հոդվածի (ա) ենթակետ և 39-րդ հոդված)	46
1. Վատ վերաբերմունքը և ֆիզիկական պատիժը	46
2. Բռնության բոլոր ձևերից զերծ լինելու՝ երեխայի իրավունքը	53
4. Վնասակար պրակտիկայի դրսևորումները	62
Դ. Ընտանեկան միջավայրը և այլընտրանքային խնամքը (Կոնվենցիայի 5-րդ, 18-րդ (1-ին և 2-րդ կետեր), 9-11-րդ, 19-21-րդ, 25-րդ, 27-րդ (4-րդ կետ) և 39-րդ հոդվածներ)	64
1. Ընտանեկան միջավայրը և ընտանեկան միջավայրից զրկված երեխաները	64
2. Որդեգրումը	79
Ե. Հաշմանդամությունը, տարրական առողջությունը և բարեկեցությունը (Կոնվենցիայի 6-րդ, 18-րդ (3-րդ կետ), 23-րդ, 24-րդ, 26-րդ, 27-րդ (1-3 կետեր) հոդվածները)	85
1. Հաշմանդամություն ունեցող երեխաները	85
3) Առողջությունը և առողջապահական ծառայությունները	112
Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2022» զեկոյցով ներկայացվել են հետևյալ վիճակագրական տվյալները՝	121
4) Կենսամակարդակը	130
2. Կրթությունը, ժամանցը և մշակութային միջոցառումները (Կոնվենցիայի 28-րդ, 29-րդ և 31-րդ հոդվածները)	133

1. Կրթությունը, ներառյալ՝ մասնագիտական վերապատրաստումը և ուղղորդումը.....	133
Ե. Հատուկ պաշտպանության այլ միջոցները (Կոնվենցիայի 22-րդ, 30-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 37-րդ (բ)-(դ), 32-36 հոդվածներ)	150
1. Չուղեկցվող, ապաստան հայցող և փախստական երեխաները	150
2. Տնտեսական շահագործումը, ներառյալ՝ մանկական աշխատանքը.....	159
3. Անչափահասների գործերով արդարադատության իրականացումը	170
1. Ներպետական քրեաիրավական կարգավորումների համապատասխանությունը Արձանագրությանը.....	180
2. Իրազեկության բարձրացում ու տարածում	183
5. Կիրառված միջոցները Արձանագրությամբ սահմանված հանցագործությունները կանխարգելելու համար.....	184
6. Երեխա զոհերին պաշտպանելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները	185
7. Չոհերի վերականգնում և վերաինտեգրում.....	185
1.Կանխարգելում	187
2. Արգելք և այլ հարակից հարցեր	189

Ներածություն

Հայաստանը Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետև՝ նաև Կոնվենցիա)՝ վավերացրել է 1993 թվականին՝ պարտավորություն ստանձնելով համապատասխանեցնելու իր ներպետական օրենքները և պրակտիկան Կոնվենցիայի պահանջներին: Հետագայում Կոնվենցիան լրացվել է երեք կից արձանագրություններով՝ 1) Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը, 2) Չինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը, 3) Հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրություն¹: Կամընտիր արձանագրությունները, գործող Կոնվենցիային առնչվող իրավական փաստաթղթեր են, որոնք առավել մանրամասն անդրադառնում են այն հարցերին, որոնք մայր Կոնվենցիան չի ընդգրկում կամ բավարար չափով չի ընդգրկում²: Կոնվենցիայի և կից երեք արձանագրությունների՝ անդամ պետությունների կողմից կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն (այսուհետև՝ նաև Կոմիտե)³:

Երեխայի իրավունքների կոմիտեն 18 անկախ փորձագետներից բաղկացած մարմին է, որը վերահսկում է իր մասնակից պետությունների կողմից (Կոնվենցիան վավերացրած պետությունների) Երեխայի իրավունքների կոնվենցիայի դրույթների պատշաճ կատարումը: Այն նաև վերահսկում է Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունների դրույթների կատարումը: Նշված վերահսկողության հիմնական գործիքներից է՝ մշտադիտարկումը: Կոնվենցիան վավերացրած բոլոր պետությունները պարտավոր են պարբերաբար ներկայացնել զեկույցներ Կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման մասին: Նշված զեկույցները ուսումնասիրվում են Կոմիտեի կողմից, որից հետո պետությանը ներկայացվում են «Ամփոփիչ դիտարկումներ» Կոնվենցիայով սահմանված իրավունքներին կիրարկմանը առնչվող կոնկրետ խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը և հետագայում բացառմանը:

ՀՀ-ն Կոմիտեին իր առաջին զեկույցը ներկայացրել է 1997 թվականի փետրվարին, որի վերաբերյալ Կոմիտեն իր դիտարկումները ներկայացրել է 2000 թվականին: Այնուհետև, ՀՀ կառավարությունը 2003 թվականին ներկայացրել է երկրորդ պարբերական զեկույցը, իսկ 2011 թվականին՝ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցները 2001-2009 թվականների համար՝ Կոնվենցիայի և կից երկու արձանագրությունների կատարման վերաբերյալ: 2013թ. մայիսի 27-ից հունիսի 14-ը

¹ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2021 թվականի հունվարի 19-ին:

² Հասանելի է <https://www.un.org/development/desa/disabilities/resources/handbook-for-parliamentarians-on-the-rights-of-persons-with-disabilities/chapter-three-monitoring-the-convention-and-the-optional-protocol-3.html> հղումով:

³ Հասանելի է <http://www.ohchr.org/EN/HRBodies/CRC/Pages/CRCIndex.aspx> հղումով:

անցկացված 67-րդ նիստում Կոմիտեն հաստատել է իր ամփոփիչ դիտարկումները Կոնվենցիայի դրույթների և կից երկու արձանագրությունների վերաբերյալ: Դիտարկումներում ներկայացված են Կոմիտեին մտահոգող հարցերը և դրանց վերաբերյալ համապատասխան առաջարկությունները: Ավելին, նշված ամփոփիչ դիտարկումներում Կոմիտեն հրավիրել է Չայաստանի Չանրապետությանը ներկայացնել իր հաջորդ՝ հինգերորդ և վեցերորդ համատեղ զեկույցը մինչև 2019 թվականի հունվարի 22-ը և դրանում ներկայացնել տեղեկություններ 2013 թվականի Ամփոփիչ դիտարկումներում նշված առաջարկությունների կատարման վերաբերյալ⁴:

Չայաստանն իր հինգերորդ և վեցերորդ համատեղ զեկույցը ներկայացրել է 2020 թվականին, որտեղ ի թիվս այլնի նշված է նաև, որ Չայաստանի 5-րդ և 6-րդ պարբերական ազգային զեկույցի պատրաստումը համընկել է սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի (Արցախի Չանրապետության) և ավելի ուշ՝ Չայաստանի դեմ սանձազերծված նախապես ծրագրված լայնածավալ ռազմական հարձակման հետ: Չեկույցով շեշտվել է, որ տասնյակ հազարավոր երեխաներ զրկվել են մարդու հիմնարար իրավունքներից, այդ թվում՝ կյանքի և կրթության իրավունքից⁵:

Այս առումով, հարկ է նշել, որ Ադրբեջանի հարձակման առաջին օրից՝ 2020թ. սեպտեմբերի 27-ից սկսած ադրբեջանական զինված ուժերը թիրախավորել են քաղաքացիական անձանց Արցախում (Լեռնային Ղարաբաղում) և Չայաստանում, այդ թվում՝ երեխաների⁶:

Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցով նշվել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի բնակելի հատվածի ուղղությամբ անօդաչու թռչող սարքի (այսուհետ՝ ԱԹՍ) հարվածի արդյունքում վնասվել է ոչ միայն բնակելի տներից մեկը, այլ նաև պայթյունի վայրից մոտավորապես 100-150 մետր հեռավորությամբ գտնվող դպրոցը: Կորոնավիրուսային համավարակով (Covid-19) պայմանավորված գյուղի դպրոցում դասընթացները կազմակերպվում էին մեծամասամբ հեռավար՝ չնայած շաբաթվա որոշ օրերին առանձին առարկաներ դասավանդվում էին նաև դպրոցում: Պայթյունի պահին դպրոցում երեխաներ թեև չեն գտնվել, բայց նրանց ծնողները զրույցներում Պաշտպանին հայտնել են, որ նրանք վախեցած են և ստիպված են եղել երեխաների հետ միասին ժամանակավորապես թաքնվել նկուղներում կամ մնալ վտանգի ներքո: Ադրբեջանի կողմից Չայաստանի քաղաքացիական բնակչության դեմ ուղղված զինված հարձակումները դատապարտելի են ու հանցավոր բնույթի նաև մեկ այլ պատճառով. դրանք տեղի են ունեցել կորոնավիրուսային (COVID-19) համավարակի ընթացքում, երբ մարդիկ մեծամասամբ տանն են, ուստի նրանց կյանքին ու առողջությանը վնասների ռիսկերն էապես մեծ են⁷:

⁴Տե՛ս https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=5&DocTypeID=5 հղումով:

⁵Տե՛ս https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2f5-6&Lang=en հղումով:

⁶ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/c010fc007595011de89a91d3b791232e.pdf> հղումով:

⁷ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/ff7396ae7e860c201bbfd6f410fef5a4.pdf> հղումով:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով մեծաթիվ էին ադրբեջանական զինված ուժերի կողմից միջազգային հումանիտար իրավունքի խախտման, Արցախի խաղաղ բնակչության թիրախավորման և մարդու իրավունքների խախտման դեպքերը: Հետպատերազմյան շրջանում Արցախն ու Հայաստանը հայտնվեցին շուրջ 100 հազար բռնի տեղահանված անձանց, այդ թվում՝ երեխաների, կյանքի, առողջության, անվտանգության և նվազագույն կենսապայմանների ապահովման մեծածավալ և տարաբնույթ խնդիրների առջև:

Ադրբեջանական հարձակումների արդյունքում կոպտորեն խախտվել են երեխաների իրավունքները, նրանց լավագույն շահերը՝ Հայաստանում և Արցախում երեխաների կյանքի ու առողջության համար իրական վտանգներով, պատերազմական հանցանքների սպառնալիքներով: Օրինակ, 2020 թ. հոկտեմբերի 14-ին վաղ առավոտյան՝ ժամը 09:00-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերը ԱԹՍ-ի հարվածներ են հասցրել Հայաստանի Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքին մոտ գտնվող Սոթք համայնքի ուղղությամբ, ինչի արդյունքում ծանր վիրավորում է ստացել երեխա՝ Վարդենիս քաղաքի բնակիչ, 14-ամյա Ն. Ա.-ն: Վերջինս տեղափոխվել էր հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք: Հոկտեմբերի 14-ի վաղ առավոտյան վիրավորում ստացած 14-ամյա երեխան իր 16 տարեկան հարազատ եղբոր, ինչպես նաև հոր հետ միասին նույն օրը գնացել է իրենց ընտանիքին պատկանող գյուղատնտեսական նշանակություն ունեցող ցանքատարածություն՝ սեզոնային բերքահավաք իրականացնելու: Դրանից հետո կարճ ժամանակ անց լսել են ԱԹՍ-ների ձայներ, որոնք լսելուն պես վիրավորում ստացած երեխան և իր ընտանիքի մյուս անդամները փորձել են փախչել ԱԹՍ-ի հարվածից: Դրանից գրեթե անմիջապես հետո ԱԹՍ-ն հարվածել է հենց այն նույն վայրում, որտեղ իրենք եղել են կանգնած: Այս փաստը, հատկապես, հաստատում է Ադրբեջանի զինված ուժերի կողմից խաղաղ բնակչությանը թիրախավորելու և կյանքից ապօրինաբար զրկելու հանցավոր մտադրությունը: Ադրբեջանի զինված ուժերի կողմից շարունակական ռամզաօդային հրթիռակոծումների պատճառով նշված բնակավայրերում երեխաները զրկված են եղել դպրոց հաճախելու հնարավորությունից, քանի որ Վարդենիս քաղաքի և հարակից համայնքների դպրոցները ԱԹՍ-ների կողմից թիրախավորվել են⁸:

Երեխաների իրավունքները հատուկ պաշտպանված են և ճանաչված «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնկի կոնվենցիաներով: Ժնկի կոնվենցիաների թիվ 1 լրացուցիչ արանագրությամբ ամրագրված է, որ երեխաների նկատմամբ պետք է ցուցաբերվի հատուկ հարգանք, հակամարտության մեջ գտնվող կողմերը նրանց պետք է տրամադրեն խնամք և օգնություն՝ նրանց տարիքին համապատասխան⁹: Բացի այդ, երեխայի իրավունքների կոնվենցիայի 38-րդ հոդվածով ամրագրված է, որ մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական

⁸ Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1364> և <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1364> հղումներով:

⁹ Տե՛ս <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/api-1977/article-77?activeTab=undefined> հղումով:

իրավունքի նորմերը, որոնք կիրառվում են զինված ընդհարումների դեպքում և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց նկատմամբ հարգանքը: Ինչպես նշված է Կոմիտեի թիվ 13 Ընդհանուր մեկնաբանությունում՝ երեխաները արտակարգ իրավիճակներում ծայրահեղ խոցելի են բռնության նկատմամբ, երբ, ի թիվս այլևի զինված հակամարտությունների հետևանքով երեխաները բաժանվում են իրենց ծնողներից, խնամակալներից և ապահով միջավայրից դուրս են¹⁰: Վերոգրյալը բազմիցս նշվել է Պաշտպանի զեկույցներով՝ Պաշտպանի մշտադիտարկման արդյունքների ներկայացմամբ:

Հատկանշական է նաև, Պաշտպանի՝ 2022 թվականի սեպտեմբերի հրապարակային զեկույցը, որտեղ ամփոփվել ու վերլուծվել են ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված պատերազմական հանցագործությունները, ներկայացրել մեծածավալ փաստահավաք աշխատանքների արդյունքները: Անդրադարձել է ինչպես ադրբեջանական սոցիալական ցանցերում տարածվող հայ զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնության, նվաստացնող վերաբերմունքի, վիրավորանքի և ծաղրանքի, այնպես էլ զոհված զինծառայողների մարմինների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի, խոշտանգումների կադրերին, որոնք բուռն քաջալերման ու գովաբանման են արժանացել ադրբեջանական հազարավոր օգտատերերի կողմից: Ներկայացվել են նաև Ադրբեջանի կողմից էթնիկ հայատյացության քաղաքականությանը բնորոշ այլ փաստեր: Պաշտպանը զեկույցում շեշտել է, որ հաճախակի բնույթ է կրել զոհված զինծառայողների մարմինների/մարմինների մասերի հրապարակումներին ուղեկցող «լավագույն հայը մահացած հայն է» և «լավագույն հայուհին մահացած հայուհին է» գրառումները: Ատելության ու բռնության կոչեր ինչել են ինչպես սոցիալական ցանցերի օգտատերերի, այնպես էլ հասարակական ու քաղաքական գործիչների, պաշտոնյաների կողմից: Չեկույցում ներկայացվում է նաև, որ ատելության խոսքը քարոզվում ու վերարտադրվում է դպրոցներից սկսված մինչև պետական պաշտոնյաների ելույթներով: Վերլուծված են կոնկրետ օրինակներ: Պաշտպանի փաստահավաք աշխատանքները և զանգվածային լրատվամիջոցների ու սոցիալական ցանցերի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ադրբեջանական պաշտոնատար անձինք և հասարակական գործիչները ՀՀ իշխանությունների, զինված ուժերի, և նույնիսկ քաղաքացիական անձանց գործողությունների մասին իրենց խոսքում օգտագործում են «հայկական ֆաշիզմ» արտահայտությունը: Հայաստանի Հանրապետության՝ «ֆաշիստական պետություն» լինելու գաղափարը բազմիցս արտահայտվել է Ադրբեջանի Նախագահի կողմից, և հիմնվում է վերջինիս կողմից արվող այն պնդման վրա, որ ՀՀ ներկայիս տարածքը «պատմական ադրբեջանական հողերի» վրա է կառուցված: Չեկույցում ներկայացվում է նաև դեռևս 2022թ-ի հուլիս-օգոստոս ամիսներին Պաշտպանի փաստահավաք առաքելության կողմից արձանագրված ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկման վերաբերյալ հավաստող փաստեր: Հիմնավորվել է, որ ադրբեջանցի զինծառայողների

¹⁰ Տե՛ս https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/crc.c.g.13_en.pdf հղումով:

կողմից խաղաղ բնակչության ահաբեկման ու վնասման գործողությունները, որպես էթնիկ ատելության շարժառիթով պայմանավորված ու հրամանատարության կողմից համակարգված գործողություններ, փաստացի միտված են եղել սեպտեմբերյան ագրեսիայի համար հիմքեր նախապատրաստելուն, քանի որ հիմնականում թիրախավորել են սեպտեմբերին հարձակման ենթարկված համայնքները¹¹:

Մարդու իրավունքների նշված խախտումները դեռևս շարունակվում են: Սույն զեկույցի կազմման աշխատանքների ընթացքում արձանագրվել է նաև, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից 120.000 երեխաներ, տարեցներ, կանայք ու տղամարդիկ Արցախում հայտնվել են գոյութենական թակարդում: Տեղաշարժի արգելափակման պատճառով 1100 անձ, այդ թվում՝ ավելի քան 270 երեխա չեն կարողանում տուն վերադառնալ: Անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող հիվանդներին հնարավոր չէ եղել տեղափոխել Հայաստան՝ մասնագիտական օգնության համար: Դադարել է պարենի ու բժշկական պարագաների մատակարարումը: Վտանգված է եղել 120 հազար մարդու կյանքի, առողջության պահպանման, կենսապահովման, ազատ տեղաշարժի, կրթության և այլ կենսական ու անբակտելի իրավունքները: Մարդիկ զրկված են եղել ջեռուցումից, տաք ջրից, բուժհաստատությունները չեն կարողացել ապահովել առաջնային բժշկական օգնություն, Արցախի ուսումնական հաստատություններում դադարեցվել է դասապրոցեսը¹²:

Երեխաների իրավունքների վիճակի մշտադիտարկման կարևոր բաղադրիչ է նաև Պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2016 թվականից գործում է առանձին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: Երեխայի իրավունքների կոմիտեի առաջարկության հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանվել է, որ «Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն»: Այս կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանին վերապահելու առաջարկով էր հանդես եկել նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը:

Սույն զեկույցը կազմվել է Պաշտպանի կոնվենցիոն մանդատի շրջանակներում և կազմում է Պաշտպանի մշտադիտարկման ընթացքի կարևոր բաղադրիչը: Չեկույցի նպատակն է ներկայացնել, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում կատարել Կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Ուստի, զեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակներում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ դիտարկումները, ներկայացված

¹¹ Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2364> հղումով:

¹² Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/8015e970b4e618c7e518be045acd382b.pdf> հղումով:

առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ:

Մեթոդաբանություն

Սույն զեկույցը կազմվել է Կոմիտեի ամփոփիչ դիտարկումների ձևաչափով, ինչպես նաև՝ հետևելով Կոմիտեին ներկայացվող զեկույցների վերաբերյալ ուղեցույցի խորհուրդներին¹³: Այսինքն՝ զեկույցը կազմվել է ըստ Կոնվենցիայի մի խումբ հոդվածներ ընդգրկող իրավունքների: Չեկույցի բաժինները համապատասխանում են Կոմիտեի ամփոփիչ դիտարկումների բաժիններին: Յուրաքանչյուր բաժնի կամ ենթաբաժնի շրջանակներում նշվում է, թե Կոմիտեն տվյալ թեմայի վերաբերյալ ինչ կարծիք կամ գնահատական է տվել և որոնք են Կոմիտեի առաջարկությունները, որից հետո ներկայացվում է պետության կատարված աշխատանքները, ձեռնարկված քայլերը: Վերջում ներկայացվում է համապատասխան գնահատականը, թե արդյոք Կոմիտեի տվյալ առաջարկը կատարվել է Հայաստանի Հանրապետության կողմից, թե՛ ոչ, որից հետո յուրաքանչյուր ենթաբաժնի կամ մի քանի ենթաբաժինների վերջում ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ:

Չեկույցը կազմելիս ուսումնասիրվել են Կոմիտեի՝ Կոնվենցիայի և կից արձանագրությունների առումով երկու ամփոփիչ դիտարկումները, ՀՀ կառավարության ներկայացրած զեկույցները, հասարակական կազմակերպությունների ոլորտին առնչվող զեկույցները:

Ուսումնասիրվել են «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության երեխայի պաշտպանության ինդեքսը, ՅՈՒՆԻՍԵՖի զեկույցները¹⁴, Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի զեկույցը ապաստան հայցող, փախստական և տեղահանված երեխաների վիճակի մասին¹⁵, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության վերլուծությունը ՀՀ-ում երեխայի իրավունքների մասին¹⁶, «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության 2020 թվականի տարեկան զեկույցը¹⁷, Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան

¹³ Տե՛ս https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/CRC/GuideNgoSubmission_en.pdf հղումով:

¹⁴ Տե՛ս <https://www.unicef.org/armenia/%D5%B0%D6%80%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80> հղումով:

¹⁵ Տե՛ս Assessment of the situation of asylum, seeking, refugee and displaced children in Armenia. UNHCR. Report. December 2015 – April 2016. © United Nations Children Fund. Yerevan 2016. http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/Situation_of_-Refugee_Children_-Armenia_2016_eng.pdf հղումով:

¹⁶ Տե՛ս Սեյվ դը չիլդրեն, Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան 2015 թվական, <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf> հղումով:

¹⁷ Տե՛ս <https://www.wvi.org/hy/publications/annual-report/2020> հղումով:

հաղորդումները և արտահերթ հրապարակային զեկույցները¹⁸, Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ զեկույցները¹⁹ և այլն:

Չեկույցի կազմման աշխատանքների ընթացքում մանրամասն հարցադրումներ են արվել նաև պետական իրավասու մարմիններին, իսկ այդ հարցադրումների պատասխանների արդյունքում ստացվել են բազմաթիվ տվյալներ, որոնք նույնպես ներառվել են սույն զեկույցում:

Հարկ է հատուկ ընդգծել, որ Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցերով պարբերաբար այցելում են տարբեր տարիքի երեխաներ: Այցերն իրականացվում են 2017 թվականից: Այս տարիների ընթացքում երեխաները պարբերաբար նշել են իրենց իրավունքներին առնչվող բազմաթիվ հարցերի մասին, որոնք նույնպես տեղ են գտել սույն զեկույցում:

¹⁸ Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/SpecialReports> հղումով:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

Չեկույցում օգտագործված հապավումները

ԱԾԽՄ	Առանց ծնողական խնամքի մնացած
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՄՅՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԸՄ	Ընդհանուր մեկնաբանություն
ԽՅՅ	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
ԽՅՄ	Խնամակալության և հոգաբարձության մարմին
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԺԱՅՅ	Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ԽԿԿ	Խոշտանգումների կանխարգելման կենտրոն

Ա. Ուշադրության արժանի հիմնական ոլորտները

1. Համապարփակ քաղաքականությունը և ռազմավարությունը

Կոմիտեն ի գիտություն է ընդունել Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ազգային ծրագրի, ինչպես նաև՝ Կոնվենցիայի տարբեր ուղղություններին վերաբերող բազմաթիվ այլ ռազմավարությունների և ծրագրերի ընդունումը: Այնուամենայնիվ, Կոմիտեն ափսոսանք է հայտնել, որ ծրագրերը և ռազմավարությունները չեն ապահովվում բավարար ֆինանսական միջոցներով և հիմնականում հենվում են միջազգային կազմակերպությունների ֆինանսավորման վրա: Կոմիտեն նաև ափսոսանք է հայտնել, որ այդ ծրագրերի և ռազմավարությունների կատարողական առաջընթացի պարբերական գնահատում չի իրականացվում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 11)՝

- տրամադրել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և Երեխաների իրավունքների բնագավառում ընդունված այլ ռազմավարությունների և ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները,
- ապահովել ազգային ծրագրի և դրա կատարման արդյունավետության, ինչպես նաև հնարավոր կրկնողություններից խուսափելու նպատակով այլ ռազմավարությունների և ծրագրերի կատարման արդյունավետության պարբերական գնահատումը:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի²⁰, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշմամբ նպատակն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը: Ռազմավարության գերակայություններն են՝ երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի բարելավումը, հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության, ինչպես նաև ուսումնական հաստատություններում սովորողների համալիր անվտանգության ապահովումը, երեխայի առողջության պահպանման իրավունքի ապահովումը, իրավախախտում կատարած, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների վաղ հայտնաբերումը,

²⁰ Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=91088> հղումով:

բռնության դեպքերի կանխարգելումը, երեխաների մշակութային կյանքին մասնակցության, մշակութային և ստեղծագործական կարողությունների զարգացման, գործունեության խթանման, մշակութային արժեքներին հաղորդակցման, գեղարվեստական կրթությունը ստանալու ապահովումը, երեխաների արդարադատության մատչելիության ապահովումը:

Ինչպես նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի «Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկուլյցով²¹, քննարկվող ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախատեսված միջոցառումներում զգալի մաս են կազմել միջոցառումները և ծրագրերը, որոնք պահանջում են օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորում: Այդուհանդերձ, ռազմավարությունը չունի հստակ բյուջետային գնահատում, ինչը թույլ չի տալիս տեսնել, թե ինչ միջոցներ են հարկավոր եղել կամ ինչ միջոցներից հնարավոր չի եղել օգտվել ռազմավարությունը իրականացնելու համար: Ավելին, ռազմավարությունը չի ներառում բոլոր երեխաներին, այսինքն՝ ոչ միայն դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին ուղղված միջոցառումները:

Ռազմավարությամբ նշված միջոցառումներից թեև շատերի իրականացմանն ուղղված տարվել է աշխատանք, այնուամենայնիվ դեռևս կան կարևոր խնդիրներ, որոնք դեռևս մնում են չլուծված: Օրինակ, ապահիստիտուցիոնալացման քաղաքականության շրջանակներում պետության կողմից ձեռնարկվել են միջոցներ ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովման ուղղությամբ, սակայն տվյալ գործընթացում արձանագրված խնդրահարույց հարցերը շարունակում են մնալ արդիական: Երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրով ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովումը դիտարկվել է որպես առաջնահերթություն: Ըստ ԱՄՆ-ի տրամադրած տվյալների՝ 2021 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք է վերադարձել 10 երեխա, ժամանակավոր խնամք իրականացնող կենտրոններից կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորվել է 48 երեխա: Համեմատության համար հարկ է նշել, որ ըստ Նախարարության տվյալների՝ 2020 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա պետական հաստատություններից (մանկատներից) ընտանիք էր վերադարձել 47 երեխա: Վերոգրյալից պարզ է դառնում, որ 2020 թվականի համեմատությամբ՝ 2021 թվականին երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք են վերադարձել գրեթե հավասար թվով երեխաներ, որն ապահիստիտուցիոնալացման քաղաքականության նպատակների հաշվառմամբ և քննարկվող ռազմավարական ծրագրի գնահատման՝ դրական արդյունք չէ:

²¹ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf> հղումով:

Այնուամենայնիվ, ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրման առումով արձանագրվել է առաջընթաց: Մասնավորապես, 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում առկա է ծրագրի Մշտադիտարկման և գնահատման առանձին բաժին: Փաստաթղթում մասնավորապես նշված է. «Ռազմավարության ներդրման ընթացքում առաջնահերթ ուշադրություն կդարձվի շարունակական մոնիտորինգի և վերահսկողության անցկացմանը, որն ուղղված կլինի սույն ռազմավարության ներդրման արդյունավետության գնահատմանը, ծագած խնդիրների հստակեցմանը և հնարավոր լուծումներին: Ռազմավարության լայնածավալ գնահատումը պետք է հիմնվի մի քանի աղբյուրների, այն է՝ մոնիտորինգի և գնահատման, այլընտրանքային հետազոտությունների, պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծության վրա, որոնց դրական արդյունքները և քաղած դասերը կօգտագործվեն տվյալ ռազմավարության շրջանակներում իրականացված ծրագրային միջոցառումների արդյունավետության գնահատման և հետագա զարգացումների ապահովման նպատակով»:

Ծրագրում նշվում է, որ 2019 թվականին կիրականացվի ռազմավարության առաջընթացի միջանկյալ գնահատում, իսկ 2021 թվականին՝ ամփոփիչ գնահատում: Հարկ է արձանագրել, որ ՀՀ ԱՄՅՆ-ից ստացված պաշտոնական պարզաբանման համաձայն՝ ամբողջ ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատումն իրականացնելու նպատակով Նախարարությունը դիմել էր ՅՈՒՆԻՍԵՖ-ին: Ըստ Նախարարության՝ 2022 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ աշխատանքները գտնվում են ամփոփման փուլում:

Առաջարկություններ

- *Երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիրն ամբողջությամբ շարադրել Երեխայի իրավունքների կոնվենցիայի տրամաբանությանը համապատասխան:*
- *Գնահատման արդյունքները պետք է ներկայացվեն Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին, հրապարակվեն և հասանելի լինեն բոլոր շահագրգիռ կողմերի համար:*
- *Ռազմավարական ծրագրի միջանկյալ և ամփոփիչ գնահատումները մշակել պատշաճ պարբերականությամբ, որպեսզի հնարավոր լինի արդյունքները հաշվի առնել մյուս ռազմավարությունները մշակելիս:*

2. Համակարգումը

Կոմիտեն ողջունել է Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի՝ որպես համակարգող մարմնի ստեղծումը 2005 թվականին: Այնուհանդերձ, Կոմիտեն ափսոսանք է հայտնել, որ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովն այնքան էլ արդյունավետ չի

իրականացնում համակարգողի իր դերը: Կոմիտեին մտահոգել է նաև այն հանգամանքը, որ բավարար չափով չի իրականացվում միջոլորտային համակարգումը նախարարությունների, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Կոմիտեն առաջարկել է (կետ 13)`

- անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելով Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին վերապահել անհրաժեշտ լիազորությունները և տրամադրել համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը կարողանա պետական մարմինների միջև արդյունավետորեն համակարգել երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,
- բարելավել միջոլորտային համակարգումը նախարարությունների միջև, ինչպես նաև ազգային կառույցների և մարզային ու տեղական կառույցների միջև` առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարածաշրջաններին և առավել անբարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջաններին:

Չայաստանում երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգը ներդրվել է 2005 թվականին` ազգային մակարդակում ընդգրկելով Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, մարզային մակարդակում` Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները և համայնքային մակարդակում` ԽՅՄ-ները: Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 835-Ն որոշմամբ: Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:

Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են` Չայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանն աջակցելը, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանն աջակցելը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն աջակցելը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող երեխաների խնամքի և

պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և համագործակցությանն աջակցելը: Այնուհետ, ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշմամբ հաստատվել է հանձնաժողովի նոր կանոնադրությունը և անհատական կազմը:

Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում Հանձնաժողովի կարևոր դերին և վերապահված լիազորություններին, Հանձնաժողովի գործունեությունը բավարար արդյունավետ չի եղել՝ երեխաների իրավունքներին վերաբերող խնդիրները համակարգելու, նոր լուծումներ առաջարկելու տեսանկյունից:

Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը վերջին տարիներին դարձել է ոչ արդյունավետ: Պաշտպանի՝ դեռևս 2018 թվականին հրապարակված «Հայաստանի կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկուլյցով²² նշվել է, որ հաշվի առնելով, որ հանձնաժողովն ամբողջությամբ չի իրականացնում երեխաների իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ուղղությունների, առաջնահերթությունների, մասնավոր ու պետական հատվածի փոխգործակցության ապահովման ու հիմնախնդիրների քննարկման իր գործառույթը: Արտահերթ զեկուլյցով նշվել է, որ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսված երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ստեղծման և գործունեությանը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն: Դրանց արդյունավետ կիրարկման ապահովման տեսանկյունից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում հատուկ ընդգծվել է, որ հանձնաժողովը պետք է ունենա պատշաճ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կարողանա արդյունավետ համակարգել երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերը և բարելավել համագործակցությունը միջգերատեսչական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական համայնքներին՝ հաշվի առնելով նաև ՀՀ-ի վերաբերյալ 2013 թվականի ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումներում հանձնաժողովի վերաբերյալ Կոմիտեի առաջարկները:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշման

²² Հասանելի է <https://www.ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf> հղումով:

ընդունումից հետո երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը գումարել է շուրջ 16 նիստ:

Ըստ Նախարարության՝ ՀՀ Վարչապետի 2022 թ. հոկտեմբերի 17-ի N 1224-Ն որոշման համաձայն ՀՀ Վարչապետի 2012 թ. դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություն և լրացումներ: Փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո նոր հնարավորություն է ստեղծվել գումարել հաջորդիվ նիստերը՝ հաշվի առնելով մինչ այդ լիազորող նորմի բացակայությունը: Փոփոխությամբ ամրագրվել է նաև հանձնաժողովին կից երեխաների մասնակցությամբ աշխատանքային խումբ ունենալու հնարավորությունը՝ վերջիններիս ձայնը լսելի դարձնելու նպատակով: Նշվել է նաև, որ շրջանառվող օրենսդրական փոփոխությունների փաթեթով օրենքի նախագծով առաջարկվել է սահմանել հանձնաժողովի գործունեության շրջանակը, ինչպես նաև հստակեցվել է հանձնաժողովի քարտուղարության լիազորությունը, ինչն ինքնին հնարավորություն կստեղծի հանձնաժողովի արդյունավետության բարձրացման համար:

2022 թվականի տարեվերջյան նիստի ընթացքում ազգային հանձնաժողովի կողմից նախաձեռնվել է հանձնաժողովին կից աշխատանքային խմբերի ձևավորումը, սակայն աշխատանքային խմբերը դեռևս ձևավորվել են միայն առանձին թիրախային խմբի երեխաների իրավունքների և պաշտպանության հարցերի շուրջ են աշխատելու համատեքստում:

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի առկա բացերը և խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է որպեսզի երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բոլոր օղակները գործեն հնարավորինս արդյունավետ: Այս գործում հատկապես կարևոր է համակարգող մարմնի պատշաճ աշխատանքը, որը ինչպես նշված է վերևում տարիներ շարունակ ոչ լիարժեք է և անարդյունավետ, որը խաթարում է երեխայակենտրոն միասնական պետական քաղաքականության ապահովումը: Ուստի անընդունելի է, որ 2005 թվականին ստեղծված Հանձնաժողովի վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների կապակցությամբ կատարվող աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, երբ խնդրի մասին բազմիցս նշվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներով և արտահերթ զեկույցներով:

Երեխաների իրավունքների՝ նախարարությունների միջև միջուկորտային համակարգման առումով Կոմիտեի առաջարկության կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել Երեխաների համար մատչելի արդարադատության խորհրդի ստեղծումը, որն արդարադատության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N633-Ա հրամանով ձևավորված միջգերատեսչական մարմին է: Խորհուրդը ստեղծվել է 2015 թվականին ՀՀ Արդարադատության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի շրջանակում: Խորհրդի նպատակն է խթանել միջգերատեսչական համագործակցությունը, ծառայել որպես հարթակ տարբեր կառույցների և

կազմակերպությունների միջև ոլորտի վերաբերյալ խնդիրների քննարկման համար, մշակել համատեղ ռազմավարություններ և ներկայացնել առաջարկություններ օրենսդրական նախագծերի վերաբերյալ:

Այսպիսով, **Կոմիտեի առաջարկությունը կատարվում է մասամբ:**

Առաջարկություններ

- *միջգերատեսչական համագործակցությունն ամրապնդելու նպատակով Յանձնաժողովի աշխատանքը կազմակերպել ռոտացիոն սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի այն լիազորելով երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի շահագրգիռ գերատեսչություններից մեկին,*
- *սահմանել հանձնաժողովի նիստերի նվազագույն պարբերականություն,*
- *հնարավորին սեղմ ժամկետներում ընդունել Յանձնաժողովի գործունեությունը կարգավորող և բարեփոխող համապատասխան օրենսդրական ակտերը,*
- *հանձնաժողովին վերապահել անհրաժեշտ լիազորությունները և տրամադրել համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի Յանձնաժողովը կարողանա արդյունավետ համակարգել երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,*
- *բարելավել միջգերատեսչական համագործակցությունը նախարարությունների, ինչպես նաև մարզային ու համայնքային կառույցների միջև՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարածաշրջաններին և առավել անբարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջաններին:*

3. Ռեսուրսների բաշխումը

Կոմիտեն մտահոգություն է հայտնել բյուջետային հատկացումների եական կրճատումների վերաբերյալ, մասնավորապես՝ առողջապահության և կրթության բնագավառներում (համապատասխանաբար 2007 թվականին ՅՆԱ-ի 2.1 %-ից մինչև 2012 թվականին 1.5 %, և 2010 թվականին ՅՆԱ-ի 3.2 %-ից մինչև 2012 թվականին 2.5 %): Կոմիտեն ափսոսանք է հայտնել բյուջեի պատրաստման գործընթացում երեխայի իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ անբավարար տեղեկատվության կապակցությամբ:

Կոմիտեն հիշեցրել է 2007 թվականին «Ռեսուրսները հանուն երեխայի իրավունքների. պետությունների պատասխանատվությունը» խորագրով ընդհանուր քննարկումների օրվա ընթացքում իր հրապարակած առաջարկությունների մասին, և այդ հիմքով.

Կոմիտեն առաջարկել է (կետ 15)՝

- զգալիորեն ավելացնել և համարժեք մակարդակների հասցնել առողջապահության և կրթության բնագավառներում կատարվող հատկացումները.
- ձևավորել բյուջետավորման այնպիսի գործընթաց, որում հաշվի կառնվի երեխայի իրավունքների վրա հիմնված տեսակետը և երեխաների համար նախատեսված հստակ հատկացումներ կնախանշվեն ըստ համապատասխան ոլորտների և կառույցների, ներառյալ՝ որոշակի ցուցանիշներ և դրանց կատարումը վերահսկելու համակարգ. և
- ձևավորել մեխանիզմներ Կոնվենցիայի կատարման համար տրամադրվող ռեսուրսների համարժեքությունը և դրանց բաշխման արդյունավետությունը և արդարացիությունը մշտադիտարկելու և գնահատելու համար:

Պաշտպանի՝ դեռևս 2018 թվականին հրապարակված «Հայաստանի կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցով²³ նշվել է, որ առողջապահության և կրթության ոլորտում հատկացումները 2013 թվականից հետո Էական առաջընթաց չեն արձանագրել: Առողջապահությանը հատկացված գումարները եղել են ՀՆԱ 1.5 %-ի սահմաններում, իսկ կրթության ցուցանիշները նվազել են մինչև ՀՆԱ 2.34 %: Նվազել են նաև երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման նպատակով ԱՍՀՆ-ը ՀՆԱ-ից հատկացված մասնաբաժինը: 2018-2020 թվականների միջնաժամկետ պետական ծախսերի ծրագրով²⁴ նախատեսվում է մինչև 2020 թվականը առողջապահությանը ՀՆԱ-ից հատկացվող մասնաբաժինը նվազեցնել մինչև 1.06 %, իսկ կրթությանը՝ համապատասխանաբար՝ 1.85 %:

Աղյուսակ 1²⁵

	2013	2014	2015	2016	2017
Առողջապահություն	1.44%	1.61%	1.64%	1.59%	1.55%
Կրթություն	2.40%	2.54%	2.40%	2.39%	2.34%
Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման համար	0.0716%	0.0774%	0.0757%	0.697%	0.0649%

²³ Հասանելի է <https://www.ombuds.am/images/files/Ob44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf> հղումով:

²⁴ Հասանելի է հետևյալ հղումով http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/:

²⁵ Աղյուսակը կազմվել է 2015-2017, 2016-2018, 2017-2019, 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի պետական ծրագրերը համադրելու արդյունքում.

http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/:

Մինևույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր» հավելվածի համաձայն ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներով ծրագիրը ՀՀ-ում 2013-2017 թվականներին ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2²⁶

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագիրը ՀՀ-ում 2013-2017 թվականներին

	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	16.5	17.2	17.4	17.4	15.28
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	79.77	77.71	77.57	80.8	83.0
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	13.16	13.37	13.53	14.0	12.7
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	76.97	76.47	76.91	75.5	75.2
ՀՀ պետական բյուջեով հաստատված միջոցներ (մլրդ դրամ)	37,105	37,105	38,362	38,362	39,498
Նպաստի միջին ամսական (հաստատված) չափ (դրամ)	29,537.8	29,537.8	30,357.6	30,357.6	31,422.2

Կոմիտեի թիվ 19 ընդհանուր մեկնաբանության 4-րդ հոդվածում նշվում է, որ պետությունները պետք է երեխայի իրավունքների իրականացման համար հատկացնեն առավելագույն չափով առկա ռեսուրսները, ինչպես նաև ապահովեն ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, գործունեությունը,

²⁶ Աղյուսակը 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի պետական ծրագրի մաս է, տե՛ս էջ 239, http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/ հղումով:

արդարությունը, թափանցիկությունը, և կայունությունը բյուջեի պլանավորման, ընդունման, կատարման և կատարման վերահսկողության բոլոր գործընթացներում: Բյուջեի վերաբերյալ կայացվող բոլոր որոշումներում լուրջ ուշադրություն պետք է դարձնել երեխաների՝ ներկա և ապագա սերունդների լավագույն շահերին: Մասնակից պետությունները պետք է մոբիլիզացնեն եկամուտները և կառավարեն հանրային ռեսուրսներն այնպես, որ ապահովի երեխաների իրավունքների ուղղակի կամ անուղղակի իրացմանն ուղղված ծրագրերի իրականացումը²⁷:

Այնուամենայնիվ, Հայաստանում արդիական մնացող հիմնախնդիրներից է մանկական աղքատությունը: ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ Հայաստանում յուրաքանչյուր 3-րդ երեխա ապրում է աղքատության մեջ²⁸:

Աղքատությունն անմիջականորեն ազդում է երեխաների՝ առողջապահական ծառայություններից օգտվելու, կրթությունն ավարտին հասցնելու և պատշաճ կենսապայմաններում ապրելու իրավունքների իրացման վրա: Աղքատությունը երկարաժամկետ բացասական հետևանքներ է ունենում հետագայում երեխայի՝ որպես չափահաս մարդ հասարակության լիարժեք անդամ լինելու վրա:

Պետությունը, որպես երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության առաջնային երաշխավոր պետք է իր երկարաժամկետ քաղաքականության մեջ առաջնային դարձնի երեխաների զարգացումը և երեխայակենտրոն սոցիալական պաշտպանության ծրագրերի ստեղծումը՝ մանկական աղքատության կանխարգելման և հաղթահարման համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղքատությունը շատ դեպքերում առավել խոցելի է դարձնում հաշմանդամություն ունեցող, բազմանդամ ընտանիքներում, հեռավոր և սահմանամերձ գյուղական համայնքներում ապրող երեխաներին:

Կոնվենցիայով երաշխավորված է երեխայի՝ անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Կոնվենցիան վավերացրած բոլոր երկրներն ընդունել են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի, որի ապահովման իրացման գործում կարևոր դեր ունի պետությունը:

Երեխաները, որոնք աղքատության մեջ գտնվելու պատճառով լիարժեք չեն իրացնում իրենց իրավունքները, հետագայում չեն կարող ամբողջական մասնակցություն ունենալ պետության սոցիալական, քաղաքական և տնտեսական աճին: Աղքատության մեջ մեծանալով՝ երեխաները չափահաս տարիքում ևս կարող են բախվել սոցիալապես անապահով պայմաններում լինելու խնդրին: Ավելին, հիմնականում աղքատության մեջ ապրող երեխաները հաճախ զբաղվում են մուրացկանությամբ և դուրս են մնում կրթությունից:

Պետության կողմից տրամադրվող դրամական աջակցությունն ու ծառայությունները պետք է լինեն փոխկապակցված երեխաներին տրամադրվող այլ

²⁷ Տե՛ս <https://digitallibrary.un.org/record/838730#record-files-collapse-header> հղումով:

²⁸ Տե՛ս <https://uni.cf/3sDhQfg> հղումով:

ծառայությունների հետ, որոնք դրական ազդեցություն կունենան երեխաների կյանքի որակի վրա:

Երեխաների աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են Հայաստանի հանրապետության վիճակագրական կոմիտեի 2021 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկուլյցում²⁹:

Նշված զեկուլյցով արձանագրվել է, որ 2020 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 33.9 տոկոսը (որից՝ աղջիկներ - 34.3 տոկոս, տղաներ - 33.6 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատ՝ 0.7 տոկոսը (որից՝ աղջիկներ - 1.3, տղաներ - 0.8 տոկոս): Ընդհանուր վիճակագրական պատկերը ամբողջ բնակչության համար հետևյալն է. 27 տոկոս աղքատ է, 0.7 տոկոս՝ ծայրահեղ աղքատ:

Մանկական աղքատության ամենաբարձր մակարդակը 2020 թվականին եղել է Շիրակի մարզում (57.7%): Բարձր մակարդակ է դիտվել նաև Գեղարքունիքում (56.0%), Տավուշում (46.1%) և Արագածոտնում (40.1%):

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2020 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկուլյցով արձանագրվել էր, որ 2019 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 33.6 տոկոսը, այսինքն, ՀՀ-ում 2020 թվականին ընդհանուր բնակչության համեմատ մանկական աղքատության պարագայում առավել բարձր ցուցանիշներ են գրանցել:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դրամական սոցիալական աջակցության ոլորտի ամենամեծ ծրագիրը, ինչպես բնակչության ընդգրկվածության, այնպես էլ ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով՝ ընտանեկան նպաստի ծրագիրն է: Մինևույն ժամանակ, թեպետ սոցիալական աջակցության միջոցները զգալիորեն նպաստում են աղքատության կրճատմանը, Հայաստանում աղքատ բնակչության գրեթե կեսը ներառված չէ սոցիալական աջակցության որևէ ծրագրում, և այդ ծրագրերի ոչ բոլոր շահառուներն են կարողանում աջակցությունը ստանալու արդյունքում հաղթահարել աղքատությունը³⁰:

Մինևույն ժամանակ, ըստ վիճակագրական տվյալների, ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկվածությունը 2016-2019 թվականներին նվազման միտում է դրսևորել՝ 14%-ից հասնելով 13%-ի: Այդ միտումը 2020 թվականին շարունակվել է, և տարվա արդյունքներով ընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը կազմել է շուրջ 12%: Թեև ընդգրկվածության ցուցանիշի այս ընդհանուր նվազումն ազդել է հիմնականում ոչ աղքատների վրա և հանգեցրել ծրագրի ծախսարդյունավետության բարձրացմանը, աղքատների ընդգրկվածությունը նույնպես նվազել է գրեթե 4

²⁹Տե՛ս https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf հղումով:

³⁰ Հասանելի է https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf հղումով:

տոկոսային կետով, ինչի արդյունքում 2019 թվականի համեմատ ծրագրի շահառու աղքատների թիվը նվազել է ավելի քան 15%-ով³¹:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի առաջին պարբերությամբ սահմանված է, որ Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից:

Վերոգրյալից պարզ է, որ մանկական աղքատության խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր պետության կողմից, սակայն դրանք չեն կարող բավարար համարվել:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի 1-ին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը ամենուրեք և բոլոր մարդկանց համար պետք է իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, առնվազն կիսով չափ նվազեցնել ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը, ներդնել տվյալ երկրում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր:

Տվյալ հարցի քննարկման շրջանակներում հարկ է նաև անդրադառնալ հաշմանդամություն ունեցող անանց՝ այդ թվում երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների համար բյուջեից հատկացվող միջոցներին: Այսպես, 2019 թվականի պետական բյուջեով հաշմանդամություն ունեցող անձանց 6-24 տարեկան երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման՝ կիրառական բնույթի գիտելիքների տրամադրում, անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունների զարգացման նպատակով հատկացումներ են նախատեսվել ցերեկային կենտրոնում աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների զբաղվածության և սոցիալական-հոգեբանական ծառայությունների տրամադրում՝ 26,666.9 ՀՀ դրամի չափով, իսկ նույն միջոցառման համար 2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 85,022.4 ՀՀ դրամ: Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նպատակով բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայություններ՝ 75,514.0 ՀՀ դրամի չափով, իսկ 2020 թվականի պետական բյուջեով՝ 81,689,000 ՀՀ

³¹ Տե՛ս նույն տեղում:

դրամի չափով: Թեև աուտիզմ ունեցող անձանց համար թիրախային միջոցառման ընդգրկումը պետական բյուջեում, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր է՝ հաշվի առնելով նրանց կարիքների առանձնահատկությունը, այնուամենայնիվ, կոնվենցիոն պահանջների կատարման տեսանկյունից խնդրահարույց է այն, որ միջոցառման արդյունավետության և դրա՝ աուտիզմ ունեցող անձանց զբաղվածության համակարգային խնդրի լուծման վրա ազդեցության գնահատման համար անհրաժեշտ տվյալներն ու արդյունքներն առնվազն թափանցիկ և մատչելի չեն հանրության համար: Մինչդեռ, ակնհայտ է, որ ծրագրային բյուջետավորման և առհասարակ պետության պոզիտիվ պարտավորությունների պատշաճ կատարման տեսանկյունից թափանցիկությունը, հանրային վերահսկողությունը սկզբունքային նշանակության գործոններ են³²:

2020 թվականի պետական բյուջեով «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման նպատակն է «մարդու և հանրության առողջության պահպանում՝ բնակչության առողջության բարելավում՝ հիվանդությունների կանխարգելում՝ հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցումը», իսկ որպես վերջնական արդյունք՝ «առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերի ազդեցության և արդյունավետության բարելավում», որի համար նախատեսված է եղել 991,878.8 ՀՀ դրամ: Այս դեպքում խնդրահարույց է այն, որ բացի առաջարկվող միջոցառումներից՝ կոնկրետ համակարգային խնդիրների կարգավորման վրա ազդեցությունը գնահատելու չափելի ցուցանիշները կամ բացակայում են և ներդրված չեն կամ ապահովված չէ դրանց և գնահատման համար բավարար տվյալների հանրային հասանելիությունն ու մատչելիությունը: Մինչդեռ, ակնհայտ է, որ առանց բավարար և հետևողական կերպով անհրաժեշտ վիճակագրական և վերլուծական տվյալների դասակարգման (ըստ հաշմանդամության և դրա առանձին տեսակների) հնարավոր չէ ոչ միայն գնահատել այս կամ այն միջոցառման ազդեցությունը համակարգային խնդրի լուծման վրա, այլ նաև խնդրահարույց է դառնում դրա հետագա ռիսկերի, առաջնահերթությունների և այլ գործոնների կանխատեսումն ու պլանավորումը: Արդյունքում, քիչ չեն դեպքերը, երբ ոչ արդյունավետ պլանավորման պատճառով պետական բյուջեով նախատեսված կոնկրետ միջոցառումներ տարիներ շարունակ չեն իրականացվում կամ մասամբ են իրականացվում՝ դրանց կատարումը տեղափոխելով հաջորդ տարիներ³³:

Պաշտպանի՝ դեռևս 2018 թվականին հրապարակված «Հայաստանի կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկուլյցով³⁴ նշվել է, որ երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարության միջոցառումների 2017-2021 ծրագիրը նախատեսել է՝ երեխայի իրավունքների իրականացմանն ուղղված բյուջետավորման վերաբերյալ

³² Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

³³ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

³⁴ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/0b44c6d762045fbc7edd99b443608b0.pdf> հղումով:

վերլուծություն, որի համար մշակվել է մեթոդաբանություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից և վավերացվել է ոլորտային նախարարությունների և ֆինանսների նախարարության կողմից: Նշվել է, որ վերլուծությունը իրականացվում է, սակայն բացակայում է կառավարության կամ ֆինանսների նախարարության կողմից հանձնառություն գործընթացը կայացնելու վերաբերյալ: Թեև անցում է կատարվում ծրագրային բյուջետավորման, որը թույլ է տալիս ընդգրկել երեխայի իրավունքների վրա հիմնված բյուջետավորումը, բացակայում են կոնկրետ մեթոդական ցուցումները: Այս առումով հարկ է նշել, որ 2013 թվականին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով առաջին անգամ ամրագրվել է և պարտադիր դարձել Հայաստանում «ծրագրային բյուջետավորման» իրականացումը³⁵:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ծրագրային բյուջետավորումը կարևոր է, քանի որ ծրագրային բյուջետավորման շնորհիվ հնարավոր կլինի հասնել երեխաների իրավունքների նպատակներին ծառայող և միջոցներն ավելի արդյունավետ օգտագործող պետական բյուջե, ինչը հնարավորություն կընձեռի ծրագրային հիմքի վրա դնել երեխայի իրավունքների բյուջետավորումը³⁶: Այդուհանդերձ, հաշվի առնելով վերը նշված վիճակագրական տվյալները, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները ամբողջությամբ չեն կատարվել:**

Առաջարկություններ

- *Ծրագրային բյուջետավորման գործընթացում կարևորել երեխայի իրավունքների պաշտպանությունը՝ որպես ցուցանիշ, և ապահովել համապատասխան մեթոդական ցուցումներով:*
- *Կիրառել երեխաներին ուղղված ծախսերի վերլուծության մեթոդաբանությունը, հնարավորություն ընձեռելով ներկայացնել և տեղեկատվություն հասանելիությունն ապահովել ծախսերի վերաբերյալ պետական բյուջեից երեխաներին հատկացվող ուղղակի և անուղղակի ծախսերն ու ապահովելով պետական ծախսերի արդյունավետությունը, արդարությունը և թափանցիկությունը՝ օգտագործելով երեխաներին ուղղված ծախսերի հավաքագրումը բոլոր գերատեսչություններից:*
- *Երեխաներին ուղղված բյուջետավորման գործընթացը կապել գենդերային բյուջետավորման գործընթացի հետ, որպես Կայուն զարգացման նպատակների իրականացմանը ուղղված միջոցառում:*

³⁵ Տե՛ս [http://www.parliament.am/committee_docs/5/FV/Brochure%201%20\(10-09-2014\).pdf](http://www.parliament.am/committee_docs/5/FV/Brochure%201%20(10-09-2014).pdf) հղումով:

³⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2017-2022 թվականներ http://www.arlis.am/banners/HH_kar-cragir.pdf հղումով:

4. Անկախ մշտադիտարկումը

Կոմիտեն ողջունել է 2011 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխաների իրավունքների մշտադիտարկման, պաշտպանության և խթանման հարցերով պատասխանատու համակարգողի գործառույթի ստեղծումը: Այնուհանդերձ, մտահոգություն է հայտնել այն մասին, որ աշխատակազմը բավարար կարողություններ և ռեսուրսներ չունի իր մանդատն արդյունավետորեն իրագործելու համար: Մասնավորապես՝ երեխաները, կարծես տեղյակ չեն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 17)՝

- հաշվի առնելով Կոմիտեի թիվ 2 ընդհանուր մեկնաբանությունը Մարդու իրավունքների անկախ հաստատությունների դերի վերաբերյալ (CRC/GC/2002/2), միջոցներ ձեռնարկել:
- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխայի իրավունքներով զբաղվող առանձին ստորաբաժանում ստեղծելու ուղղությամբ՝ վերջինիս տրամադրելով անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները:
- միջոցառումներ իրականացնել՝ հանրությանը, մասնավորապես՝ երեխաներին զանգվածային լրատվամիջոցներով և դպրոցներում իրականացվող բացատրական գրույցների միջոցով տեղեկացնելու Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ:
- վերը նշվածն իրագործելու համար տեխնիկական համագործակցության նպատակով դիմել, ի թիվս այլ կառույցների, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին և Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամին:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը սահմանում է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: Երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություններից է և գտնվում է անմիջական ուշադրության ներքո՝ սկսած անօթևան երեխաների վիճակից, ընտանիքում ապրելու երեխայի իրավունքից մինչև հաստատություններում երեխաների իրավունքների ու նրանց շահագործման հետ կապված հարցեր:

Մինչև 2013 թվականի հունիս ամիսը երեխաների իրավունքների պաշտպանությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում

ապահովվում էր մեկ պատասխանատուի կողմից, ով զբաղվում էր նաև հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց հիմնախնդիրներով:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի առաջարկության հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանվել է, որ «Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն»: Ընդ որում, ինչպես վերևում նշվել է, այս կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանին վերապահելու առաջարկով էր հանդես եկել նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ը:

2016 թվականին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է Երեխայի իրավունքների պաշտպանության բաժինը, որը իրականացնում է Պաշտպանին ուղղված երեխաների իրավունքներին առնչվող գրավոր և բանավոր բողոքների քննարկման Պաշտպանին վերապահված լիազորություններով սահմանված աշխատանքները: Բաժնի գործունեության կարևոր բաղադրիչ է նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների մշտադիտարկման այցերը, որոնց ընթացքում հնարավոր է լինում տեղում ուսումնասիրել առավել խոցելի իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակը: Բաժինը համակարգում է Պաշտպանի՝ երեխաների իրավունքներին առնչվող մի շարք գեկույցների և ուղեցույցների մշակման աշխատանքները: Նշվածներից են օրինակ՝ Եվրոպայի խորհրդի «Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում» գործնական ուղեցույցի հայերեն տարբերակի ներկայացումը³⁷: Ուղեցույցը նպատակ ունի բարելավել երեխաներին անազատության մեջ պահելու պայմանները՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին ապահովելով կիրառական գործիքներով: Ուղեցույցի հայերեն ադապտացված տարբերակը նախատեսված է երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մանդատով, օրենքով կամ առանձնահատուկ համաձայնագրով մշտադիտարկում իրականացնելու կամ այցելելու իրավասություն ունեցող մասնագետների, ինչպես նաև երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի ղեկավարության, վարչակազմի և աշխատակիցների համար: Բաժինը նաև կազմակերպում է երեխաների իրավունքների վերաբերյալ վերապատրաստումներ, դասընթացներ և իրազեկումներ:

Գործում է նաև Պաշտպանի՝ երեխաների համար մատչելի ինտերնետային կայքը (www.children.ombuds.am), որի միջոցով երեխաները կարող են նաև առցանց դիմում ուղարկել Պաշտպանին կամ ստանալ խորհրդատվություն: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ երեխաները կարող են դիմել անձամբ, չմիջնորդավորված: Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից ներդրվում են երեխաների հետ աշխատելու նոր մոտեցումներ:

³⁷ Տե՛ս ուղեցույցը, <https://www.ombuds.am/images/files/2f01b9fdae9273bcfdf85a14940df721.pdf> հղումով:

Պաշտպանի աշխատակազմը մասնակցում է երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի աշխատանքներին, որը նպատակ ունի խրախուսել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը³⁸: Մարդու իրավունքների պաշտպանը երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի լիիրավ անդամ է: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է նաև Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների կոմիտեի աշխատանքներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համագործակցելով «Կասպերսկի» ընկերության հետ 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կազմակերպել է «Մեծահասակները և երեխաները թվային աշխարհում» խորագրով սեմինար հանրակրթական դպրոցների ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համար: Սեմինարին մասնակցել են ինֆորմատիկայի ուսուցիչներ Երևանի շուրջ 100 հանրակրթական դպրոցներից: Միջոցառմանը քննարկվել են թվային միջավայրում երեխաների անվտանգությանը և նրանց իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցեր³⁹:

Աշխատակազմի ներկայացուցիչները 2021 թվականի հունիսի մեկին կազմակերպել են միջոցառում երեխաների համար, որին մասնակցել են հանրակրթական ու հատուկ դպրոցների սաներ, Արցախից տեղահանված երեխաներ, հաշմանդամություն ունեցող երեխաներ, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված «Փոխիր աշխարհը» արշավի մասնակիցներ: Միջոցառումն ուղեկցվել է ժեստերի լեզվով թարգմանությամբ, իսկ հյուրասիրությունը երեխաների համար իրականացվել է «Արեգակ» ներառական փոռ-սրճարանի հետ համագործակցությամբ: Միջոցառման կազմակերպմանը աջակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը⁴⁰:

2022 թվականի հունիսի 1-ին տեղի է ունեցել «Երեխայի իրավունքները երեխաների աչքերով» խորագրով համաժողով, որի ընթացքում բանախոս և մասնակից բոլոր երեխաները կարևոր թեմաներով ելույթներ են ունեցել և այդ կարծիքներն ու առաջարկները ավելի լսելի դարձնելու համար՝ այսուհետ պարբերաբար Մարդու իրավունքները պաշտպանի պաշտոնական էջերում կիրառարակվեն խոսնակ երեխաների ելույթները: «Երեխայի իրավունքները երեխաների աչքերով» խորագրով համաժողովի խորհրդանիշն է եղել պատկերված երկրի քարտեզը իր ծովային և ցամաքային սահմաններով: Երեխաների պատկերները քարտեզի վրա ունեցել են հատուկ խորհուրդ. յուրաքանչյուրը՝ անկախ սեռից, ազգությունից, արտաքին առանձնահատկություններից, պաշտպանված լինելու իրավունք ունի⁴¹:

Աշխատանքներ են տարվել երեխաների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ: Պաշտպանի աշխատակազմ են այցելել դպրոցահասակ երեխաներ, որոնք ծանոթացել են Մարդու իրավունքների պաշտպանի

³⁸ Տե՛ս Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի կայքէջը, <http://enoc.eu/> հղումով:

³⁹ Տե՛ս միջոցառման մասին, <https://ombuds.am/am/site/ViewNews/1970> հղումով:

⁴⁰ Միջոցառման վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս <https://ombuds.am/am/site/ViewNews/1722> հղումով:

⁴¹ Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2259> հղումով:

լիազորություններին: Երեխաներին ներկայացվել են իրենց իրավունքներն ու ազատությունները: Վերջիններս նաև ծանոթացել են երեխաներին նվիրված Պաշտպանի Էլեկտրոնային կայքէջին, որի միջոցով նրանք կարող են նաև առցանց դիմում ուղարկել Պաշտպանին կամ ստանալ խորհրդատվություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում 2021 թվականին հրապարակվել և տպագրվել է ուսուցիչների համար նախատեսված «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցը⁴², որը երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարի հրամանով որպես ուսումնական նյութ դպրոցներում օգտագործելու համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ, իրականացրել է «Աջակցություն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին՝ երեխայի իրավունքների ոտնահարումների դեպքերին առավել արհեստավարժ արձագանքելու նպատակով կարողությունների բարելավման գործընթացում» ծրագիրը: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում երեխաների իրավունքների պաշտպանության թեմաներով իրականացվել են վերապատրաստումներ Պաշտպանի աշխատակազմի, Ծիրակի և Լոռու մարզերի դպրոցների հասարակագիտության թվով 50 ուսուցիչների համար:

Հայաստանում երեխաների համաշխարհային օրվա կապակցությամբ ՅՈՒՆԻՍԵՖ-ը միավորել է ջանքերը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ՝ աջակցելու Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի գործարկմանը: Հասարակական խորհրդի գործունեությունը կնպաստի երկրում երեխայի իրավունքների անկախ մշտադիտարկմանը և կամրապնդի երեխաների՝ իրենց վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու և կարծիք արտահայտելու իրավունքները: Սա կարևոր քայլ է Հայաստանում երեխաների մասնակցությունն ապահովելու առումով, քանի որ առաջին անգամ է, որ պաշտոնապես ստեղծվում է նման հասարակական խորհուրդ: 2022 թվականի նոյեմբերի 18-ին և 19-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ը և ՄԻՊ-ի աշխատակազմը խորհրդի անդամներին ներկայացրել են երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Հայաստանում երեխայի իրավունքներին առնչվող իրավական դրույթները⁴³:

Հիմք ընդունելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունն կատարվել է:**

⁴² Տե՛ս ուղեցույցը, հասանելի է <https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf> հղումով:

⁴³ Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2407> հղումով:

Բ. Ընդհանուր սկզբունքները (Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 12-րդ հոդվածները)

1. Խտրականության արգելքը

Կոմիտեն մտահոգություն է հայտնել սեռի հիմքով խտրականության, մասնավորապես՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման երևույթի, նորածինների սեռերի հարաբերակցության խախտման վերաբերյալ:

Կոմիտեին նաև մտահոգել է, որ առկա է խտրական վերաբերմունք խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների տարբեր խմբերի, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների նկատմամբ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 19)՝

- գործադրել սեռի հիմքով խտրականության դեմ պայքարի մասին ՀՀ օրենսդրությունը և միջոցներ ձեռնարկել՝ պտղի սեռով պայմանավորված հղիության վաղաժամ ընդհատումը կանխելու և արգելելու ուղղությամբ.
- ապահովել որոշակի ծրագրերի իրագործումը խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների որոշակի խմբերի նկատմամբ խտրականության իրավիճակը հաղթահարելու նպատակով, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների համար:

1) Պտղի սեռով պայմանավորված հղիության վաղաժամ ընդհատումը կանխելու և արգելելու ուղղությամբ միջոցառումները և օրենքի գործադրումը

Պտղի սեռով պայմանավորված հղիության վաղաժամ ընդհատումը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է, ինչի պատճառ են ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները, այնպես էլ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները: Ավելին, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ հաճախ կնոջն են մեղադրում տղա երեխա չունենալու համար: Դեռևս մինչ հղիությունը, հղիության ողջ ընթացքում,

ծննդաբերությունից հետո և հատկապես միայն աղջիկ երեխաներ ունեցող կանայք մշտապես քննադատվում են⁴⁴:

Սեռերի անհամամասնության խնդիրը Հայաստանում ի հայտ է եկել դեռևս 1990-ական թվականներին: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ 2008-2012թթ. այն հասել էր վտանգավոր սահմանագծի և դարձել ժողովրդագրական լուրջ խնդիր: 2011թ. յուրաքանչյուր 100 աղջկա հաշվով ծնվել է 114 տղա: Երրորդ և հաջորդ երեխաների դեպքում այդ ցուցանիշն ավելի բարձր էր (2008-2012թթ. միջին ցուցանիշը կազմել է 164 տղա՝ 100 աղջկա դիմաց): Խնդիրը հատկապես արտահայտված էր առանձին մարզերում⁴⁵:

2000-ականներից սկսած սեռերի հարաբերակցության շեղումը սկսեց նվազել և 2012-2015 թվականներին սեռերի համամասնությունը կազմեց 100 աղջիկ-114 տղա, իսկ Առողջապահության նախարարության վերջին տվյալների համաձայն, սեռերի համամասնությունը 2016 թվականին կազմել է 100 աղջիկ-112 տղա, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակում՝ 100 աղջիկ-110 տղա:⁴⁶

Վերջին դրական միտումն արդյունք էր բազմաթիվ միջոցառումների, որոնք իրականացվեցին օրենսդիր, պետական մարմինների, ինչպես նաև բազմաթիվ հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց իրականացրած շատ քայլեր ֆինանսավորվում էին միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ Եվրոպական միության կողմից:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2021 թվականի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի՝ սեռերի հարաբերակցության գործակիցը 2019 թվականի համեմատ 2020 թվականին պահպանվել է 1.10, իսկ 2018 թվականի համեմատ՝ նվազել: Ճիշտ է, վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2020 թվականին սեռերի հարաբերակցության գործակիցը չի աճել, ինչը դրական տեղաշարժ է, սակայն ընդհանուր տեսանկյունից ստացվում է, որը խնդիրը շարունակում է պահպանվել նույն արդիականությամբ: ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2008-2012 թվականների ժամանակահատվածում ծնվածների մեջ աղջիկ-տղա հարաբերակցության միջին ցուցանիշը կազմել է 100-115, 2014 թվականին՝ 100-113.4, 2015 թվականին՝ 100-112.7, 2016 թվականին՝ 100-111.9, 2017 թվականին՝ 100-109.8, 2018 թվականին՝ 100-111, 2019 թվականին՝ 100- 110, իսկ 2020 թվականին՝ 9 ամսում՝ 100-111.3:

ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2021 թվականի Հայաստանի ժողովրդագրական տվյալների՝ սեռերի հարաբերակցության գործակիցն, ըստ ծննդի կարգի՝ առաջին երեխայի դեպքում 1.07 է, երկրորդի դեպքում՝ 1.03, երրորդի երեխայի դեպքում՝ 1.25, չորրորդ երեխայի դեպքում՝ 1.3347: Սեռերի հարաբերակցության գործակիցների

⁴⁴ Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով:

⁴⁵ Տե՛ս <https://www.moh.am/#1/415> հղումով:

⁴⁶ Առողջապահության նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի պաշտոնական հայտարարությունը: <http://www.moh.am/#1/687> հղումով:

⁴⁷ Տե՛ս https://www.armstat.am/file/article/demog_2021_3.pdf հղումով, էջ 72:

համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019 թվականի համեմատ առաջին և չորրորդ երեխաների դեպքում սեռերի հարաբերակցության գործակիցը աճել է, առաջինի դեպքում՝ 1.03-ից դառնալով 1.07, իսկ չորրորդի երեխայի դեպքում՝ 1.26-ից 1.33: Դրական փոփոխությունն առկա է երկրորդ և երրորդ երեխաների պարագայում, քանի որ սեռերի հարաբերակցության գործակիցը համեմատաբար նվազել է 1.07-ից և 1.27-ից դառնալով՝ 1.03 և 1.25⁴⁸:

2017 թվականին հրապարակվել է հետազոտություններից, որով նշված է, որ Հայաստանի բոլոր մարզերում հստակ արտահայտված է տղա առաջնեկ ունենալու նախապատվությունը: Նման նախապատվությունն առավել արտահայտված է Վայոց ձորի, Արարատի, Ծիրակի և Լոռու մարզերում, մինչդեռ, Երևանի և Սյունիքի կանանց մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 61.6% և 62.4%) առաջին հղիության ժամանակ առաջնեկի սեռը չի կարևորել⁴⁹:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքը, համաձայն որի՝ բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 180-Ն որոշումը սահմանում է հղիության արհեստական ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումները, ինչպես նաև աբորտների իրականացման կարգը և պայմանները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար մարզային փոքր բժշկական կենտրոններում սեռով պայմանավորված աբորտներ չեն իրականացվում, մասնակիցների կարծիքներով տեղական բժշկական այն կենտրոններում, որտեղ հնարավոր է աբորտ իրականացնել, այն իրականացնում են գաղտնի, առանց գրանցման, երեկոյան ժամերին կամ ոչ աշխատանքային օրերին: Առավել տարածված է դիմել բժշկի աջակցությանն ավելի մեծ քաղաքներում և հատկապես՝ Երևանում⁵⁰:

2018 թվականի «Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում⁵¹ նշվել է, որ օրենսդրական փոփոխություններից

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹ Տե՛ս Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույց, <https://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=8> հղումով:

⁵⁰ Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 39:

⁵¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը,

զատ, զուգահեռաբար իրականացվել են հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ՝ ուղղված հղիության արհեստական ընդհատման դեպքերի կրճատմանը: Օրինակ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ մշակվել և 2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով հաստատվել և իրագործվել է «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017 թվականների ծրագիրը», ստեղծվել է «Տեղական մասնակցության և ոչ խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանց, որի շրջանակներում ՀՀ մարզերում և երևանում տեղի են ունեցել աշխատանքային, մեկնարկային հանդիպումներ և այդ հանդիպումների արդյունքում ձևավորվել են «Տեղական մասնակցության և ոչ խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի խորհրդատվական աշխատանքային խմբեր: ՉԼՍ-ների միջոցով մշակվել են սոցիալական հոլովակներ, հեռարձակվել են թեմատիկ հաղորդումներ, մշակվել են տեղեկատվական, կրթական և հաղորդակցության նյութեր ու պաստառներ, համայնքներում ստեղծվել են քաղաքացիական ակտիվ խմբեր (այսուհետ, ՔԱԿ): Կազմակերպվել են սեմինարներ ծննդոգնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատություններում հղիներին նախաձևնոցյան խորհրդատվություն տրամադրող բուժաշխատողների համար՝ սեռի որոշման տեխնոլոգիաների կիրառման էթիկական խնդիրների վերաբերյալ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ նախապատրաստվել է երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար հատուկ մեթոդաբանության ձեռնարկ:⁵²

Պաշտպանի՝ 2021 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականին պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թվի նվազեցման և խնդրի լուծման նպատակով մշակվել և 2020 թվականի մարտին Առողջապահության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով հաստատվել է «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023 թվականների ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը», որի շրջանակներում շարունակվում են իրականացվել հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքներ՝ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և տեղական հասարակական ու համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ստացվում է, որ օրենսդրական կարգավորումներով սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման արգելքի սահմանմամբ կամ միայն հանրային

<http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf>

հղումով:

⁵² Նկարագրված միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները ստացվել են Առողջապահության նախարար Լ.Ալլթունյանի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին հասեցազրված գրությամբ՝ ի պատասխան Պաշտպանի գրության:

իրագրված աշխատանքների իրականացմամբ չեն կարող սահմանափակվել խնդրի լուծմանն ուղղված քայլերը: Խնդրի դեմ պայքարի նպատակով համալիր միջոցառումներ պետք է իրականացվեն՝ ուղղված համապարփակ ձևով հարցի առավելապես խորքային պատճառների վերացմանը⁵³:

Ներկայում հնարավոր է պտղի սեռը որոշել առավել վաղ ժամկետներում՝ հաշվի առնելով բժշկական տեխնոլոգիաների զարգացումը⁵⁴: Երեխայի սեռի նախընտրության խնդրի հետ կապված հարկ է անդրադառնալ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով ամրագրված դրույթին. *վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռը պլանավորել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն, կամ ընտանիքն ունի նույն սեռի 3 երեխա*: Այսպիսով, ստացվում է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռը պլանավորման արգելքից բացառության շարքում սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականությունն առկայությունից բացի ամրագրվել է նաև ընտանիքի՝ ունի նույն սեռի 3 երեխա ունենալու հանգամանքը: Հարկ է ընդգծել, որ երեխայի սեռի պլանավորումն ընտանիքի նույն սեռի 3 երեխա ունենալու դեպքում խնդրահարույց է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի դեպքում, հատկապես, երբ դեռևս լուծված չէ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը:

Վերջին տարիներին խնդրի դեմ պայքարի նպատակով ձեռնարկված քայլերը և համալիր ջանքերը դրական տեղաշարժի են գրանցել՝ նպաստելով նորածինների սեռերի հարաբերակցության գործակցի բարելավմանը: Սակայն խնդիրը դեռ շարունակվում է արդիական մասը:

Ինչպես արդեն նշվեց, սեռերի անհամամասնության նվազման միտումը, որ դիտվում է վերջին տարիներին, պայմանավորված էր վերը նշված միջոցառումների հետևողական կիրառությամբ: Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են, սակայն անհրաժեշտ է զանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով՝ ընդգծել կնոջ՝ որպես որոշում կայացնողի, հասարակության լիիրավ անդամի դերը, հանրային իրագրված համակարգված աշխատանք իրականացել աղջիկ երեխայի արժևորման, կնոջ՝ որպես եկամուտ վաստակողի, որոշումների կայացնողի դերի հաստատման, ինչպես նաև ծնելիության բարձրացման նպատակով, ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել և կիրառել պարտադիր բնույթ կրող մեխանիզմներ՝

⁵³ Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով:

⁵⁴ Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «ՀՀ-ում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման գեկույցը» կետ 68, <https://cutt.ly/qtlovQM> հղումով:

վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումների պահպանումը:

Առաջարկություններ

- Սեռով պայմանավորված վաղաժամ հղիության դեմ իրականացվող ցանկացած ծրագիր, միջոցառում պետք է ներկայացվի, նախևառաջ սեռի հիմքով խտրականության բովանդակությամբ: Այդ նպատակով պետք է գործադրել խտրականության արգելքի վերաբերյալ օրենսդրությունը, դրանով սահմանված սկզբունքներն ու չափանիշները:
- 2) Խոցելի և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների որոշակի խմբերի նկատմամբ խտրականությունը և դա հաղթահարելու ուղղությամբ միջոցառումները

2. Երեխայի լավագույն շահը

1) ՀՀ Սահմանադրության և օրենսդրության փոփոխություններ

2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով 37-րդ հոդվածով ամրագրվել է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան, ինչպես նաև սահմանվել է, որ Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

Այնուամենայնիվ, Սահմանադրությամբ ամրագրված չէ «լավագույն շահ» եզրույթը, այնուամենայնիվ տվյալ փոփոխությունը կարևոր առաջընթաց էր:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է «երեխայի օրինական շահ» սկզբունքը: Սակայն, նախատեսվող օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է ամրագրել «երեխայի լավագույն շահ» սկզբունքը: Այսպես, «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախածով ամրագրվել է, որ պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես անձի դաստիարակման առաջնահերթության սկզբունքներից՝ ապահովելով երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը:

«Երեխայի լավագույն շահ» սկզբունքը ամրագրվել է նաև Քաղաքացիական դատավարության և Ընտանեկան օրենսգրքերում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերով⁵⁵:

Այսպիսով, **Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են:**

2) «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառումը դատական վարույթներում

«Երեխայի լավագույն շահ» սկզբունքը՝ օգտագործվում է նաև դատական պրակտիկայում:

Մարգարիտ Յովհաննիսյանի վերաբերյալ 01.04.2011թ. թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում **պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից**, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ:

Անի Մարտիրոսյանի վերաբերյալ 2012 թվականի մարտի 23-ի թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ ստորադաս ատյանները «երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը, **դատարանները պետք է հաշվի առնեն երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն)**»⁵⁶:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է ապահովել, որպեսզի ստորադաս ատյանների դատավորները Կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության սկզբունքները կիրառեն երեխաների վերաբերելի բոլոր գործերում՝ ապահովելով միասնական դատական պրակտիկա:

3) «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի արտացոլումը ռազմավարական և այլ ծրագրերում

⁵⁵ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/4936/about> հղումով:

⁵⁶ Տե՛ս նաև Մելվ դը չիլդրեն, «Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան» 2015թվական, էջ 38. <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>:

«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N-1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշման մեջ ամրագրվել է երեխայի լավագույն շահը՝ որպես սկզբունք:

13.07.2017 թվականի թիվ 30 արձանագրային որոշմամբ ընդունվել է «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը»⁵⁷: «Երեխայի լավագույն շահը ճանաչելը» առաջին անգամ սահմանվել է որպես ծրագրի ռազմավարական սկզբունք: Ինչպես նշվել է Պաշտպանի՝ «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցով՝ նախկին երեք ծրագրերում այս իրավունքը ծրագրի շրջանակներում չի սահմանվել⁵⁸:

ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը 2017 թվականին հրապարակել է «Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույց»-ը⁵⁹, որի նպատակն է ապահովել երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության միասնական մեկնաբանումը, իրազեկել երեխաներին, ծնողներին ու տվյալներ մշակողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին և բարձրացնել երեխաների անձնական տվյալների պաշտպանության մակարդակը: Ուղեցույցում երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներում, ի թիվս այլնի սահմանված է երեխաների լավագույն շահի սկզբունքը:

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 09.06.2021թ. թիվ 33-Լ հանձնարարականով հաստատվել է Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցը⁶⁰, որով սահմանվել է, որ հարկադիր կատարողի կողմից իրականացվող՝ երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթներն առանձնահատուկ բնույթ և կարևորություն ունեն: Երեխայի լավագույն շահի ապահովումը նշված կատարողական վարույթներով առաջնահերթություն է:

⁵⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի 10-րդ կետի 1-ին մասը:

⁵⁸ Առաջին ռազմավարական ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 1745-Ն որոշմամբ, որի նպատակն էր երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի ստեղծումը՝ համայնքային, մարզային և հանրապետական կառուցակարգերով: Երկրորդ ռազմավարական ծրագիրն ընդունվեց Կառավարության 2006 թվականի հունվարի 1-ի N 206-Ն որոշմամբ, որով հաստատվեց կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը: Երրորդ ռազմավարական ծրագիրը հաստատվեց Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու» N 1694-Ն որոշմամբ:

⁵⁹ Տե՛ս http://justice.am/storage/uploads/001.Ughecuyc-erexaneri_andznakan_tvyalner.pdf հղումով:

⁶⁰ Տե՛ս <https://cesa.am/sharedfiles/6347/%D5%8F%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB-%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf> հղումով:

Հաշվի առնելով վերը նկարագրված զարգացումները գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները կատարվում են:**

Առաջարկություններ

- *Խնամակալության և հոգաբարձության մարմինների համար պետք է կազմվեն մեթոդական ուղեցույցներ՝ «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառության մասին՝ ըստ թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության ուղեցույցի,*
- *անհրաժեշտ է անցկացնել շարունակական դասընթացներ «Երեխայի լավագույն շահ» հասկացության վերաբերյալ՝ թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության հիմքով ոլորտի բոլոր մասնագետների համար:*
- *Երեխաներին վերաբերելի բոլոր օրենսդրական ակտերում ներառել «Երեխայի լավագույն շահ» հասկացությունը:*
- *Շարունակական աշխատանք իրականացնել «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառման դատական պրակտիկայի զարգացման ուղղությամբ:*

3. Երեխայի լաված լինելու իրավունքը

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ թեև երեխայի լաված լինելու իրավունքը ներառված է մի շարք օրենքներում, սակայն տարբեր դատական և ոչ դատական վարույթներում երեխաների տեսակետները իրականում կանոնավոր կերպով հաշվի չեն առնվում: Կոմիտեն նաև մտահոգիչ է համարել, որ մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ բժշկական միջամտություն կատարելու համար համաձայնությունը տալիս է միայն երեխայի օրինական ներկայացուցիչը: Կոմիտեն առաջարկել է միջոցներ ձեռնարկել, որ երեխայի լաված լինելու իրավունքը կիրառվի Կոմիտեի թիվ 12 Ընդհանուր մեկնաբանությանը համահունչ՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխան ուղղված այդ իրավունքի պաշտպանությունը կատարելագործելու ուղղությամբ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 23)՝

- **իրականացնել օրենսդրական և քաղաքականության միջոցառումներ՝ խթանելով և օժանդակելով երեխային առնչվող ցանկացած հարցի կապակցությամբ երեխայի տեսակետների հարգումն **ընտանիքում, դպրոցներում, խնամքի հաստատություններում և դատարաններում,****
- **ապահովել, որ բժշկական միջամտությունների դեպքում հաշվի առնվեն երեխաների իրավունքների տեսակետները՝ ինչպես նախանշված է Կոմիտեի թիվ 15 ընդհանուր մեկնաբանության մեջ:**

Երեխայի լսված լինելու իրավունքի ներառման նպատակով կատարվել են գործուն քայլեր, այդ իմաստով հատկանշական է սահմանադրական բարեփոխումները: Այդուհանդերձ, օրենսդրության մեջ դեռ պահպանվել է հիմնական մոտեցումը, ըստ որի երեխայի լսված լինելու իրավունքը սահմանափակված է տարբեր տարիքային շեմերով, որի արդյունքում առանց տարիքային սահմանափակման երեխայի տեսակետը հաշվի առնելու կոնվենցիոն պահանջը դեռ լայն կիրառություն չունի պրակտիկայում:

1) ՀՀ սահմանադրական և օրենսդրական փոփոխություններ, զարգացող դատական պրակտիկա և ոլորտում քաղաքականության մշակում

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 37-րդ հոդվածով, որի առաջին մասի համաձայն՝ *«Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում»*: Այս դրույթն ուղղակիորեն բխում է Կոնվենցիայի 12-րդ հոդվածից և Կոմիտեի Թիվ 12 ԸՄ-ով սահմանված այդ հոդվածի իմաստից⁶¹:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները պետք է հարգվեն հետևյալ 9 սկզբունքները. **թափանցիկություն և տեղեկացվածություն, կամավորություն, հարգանք, վերաբերելիություն, երեխայակենտրոն միջավայր և աշխատելու մեթոդներ**, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը, **ներառականությունը**՝ երեխայի մասնակցությունը պետք է լինի ներառական, այսինքն՝ պետք է բացառվի ցանկացած տեսակի խտրականություն, **երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստում**՝ երեխաների հետ աշխատող անձիք պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ, **անվտանգության ապահովում**՝ երեխան իր կարծիքը արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա, եթե նա խոսի իրեն հուզող հարցերից, **հետևողականություն**՝ ցանկացած խորհրդատվական գործընթաց պետք է լինի հետևողական և երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես իրենց կարծիքը լսեցին և հաշվի առվել է:

ՄԴՈ-919⁶² որոշման մեջ Սահմանադրական դատարանը Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված երեխայի լսված լինելու իրավունքը սահմանող դրույթի սահմանադրականությունը քննության է առել «Երեխայի լավագույն շահ» հասկացության համակցությամբ՝ որոշելով, որ եթե դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերին, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով, այն է՝ երեխայի կարծիքը

⁶¹ Տե՛ս Ընդհանուր մեկնաբանության 26-31 կետերը:

⁶² Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=61311> հղումով:

գնահատել երեխայի շահին ծառայող այլ գործոնների լույսի ներքո, որոնք շարադրված են Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում: Այսինքն՝ ընտանեկան հարաբերություններում երեխայի լաված լինելու իրավունքի իրացումը, ըստ Սահմանադրական դատարանի, պետք է ապահովվի բոլոր դեպքերում, սակայն որոշումը պետք է կայացվի երեխայի շահին գերապատվություն տալով: Նման սահմանադրական կարգավորումը լիովին համահունչ է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ և 12-րդ հոդվածների առարկային ու նպատակին: Ավելին, երեխայի լաված լինելու իրավունքին սահմանադրաիրավական կարգավիճակ տալը նպաստում է այս իրավունքի հորիզոնական և ուղղահայաց կիրառությանը թե՛ օրենսդրության մեջ, թե՛ պրակտիկայում:

Հատկանշական է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1333 որոշմամբ երեխայի լաված լինելու իրավունքի մեկնաբանությունը քրեական արդարադատության շրջանակում: Դրանով վկայակոչելով Սահմանադրության 37-րդ հոդվածը և Կոնվենցիայի 3-րդ հոդված՝ Սահմանադրական դատարանն, ըստ էության, *mutatis mutandis* սահմանեց, որ «իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, որը չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Կոնկրետ քրեական դատավարության իմաստով դատարանը սահմանեց, որ վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել»:

Յեռնաբար, անհրաժեշտ է վերանայել օրենսդրական բոլոր այն դրույթները, որոնք երեխայի լաված լինելու իրավունքը կախվածության մեջ են դնում տարիքից, այլ ոչ թե հասունության աստիճանից:

Սահմանադրական դատարանի վերը նշված մեկնաբանությունները կարևոր են երեխայի լաված լինելու իրավունքի տեսանկյունից: Չնայած վերոգրյալին, օրենսդրության մեջ դեռ շարունակում են պահպանվել երեխայի լաված լինելու իրավունքի տարիքային սահմանափակումներ: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի երկրորդ մասով ամրագրված է, որ **տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝** կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: Օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

Ստացվում է, որ չնայած Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումներով արտահայտած դիրքորոշմանը, դեռևս գործող օրենսդրությամբ երեխայի կարծիքը հաշվի առնելը կապված է վերջինիս՝ որոշակի տարիքի հասնելու հետ:

Յարկ է արձանագրել, որ շրջանառվող օրենսդրական փոփոխությունների փաթեթով առաջարկվում է Ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«Օրենսգրքի 44-րդ հոդվածում՝ 1-ին մասի երկրորդ նախադասության «կամ մանկավարժի» բառերը հանել, 2-րդ և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս՝ «4. Երեխայի կարծիքը կարող է ներկայացվել գրավոր, բանավոր կամ տեսաձայնագրությամբ: Երեխայի կարծիքը լսելիս կամ տեսաձայնագրությունը վերարտադրելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը, դատարանը կամ այլ մարմիններ և կազմակերպություններ, որոնք ապահովում են սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը կամ պետք է լսեն այդ կարծիքը, ներգրավվում են մանկական հոգեբան կամ սոցիալական աշխատող: Երեխայի կողմից տրամադրված գրավոր կարծիքը ներկայացվում է մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի գրավոր կարծիքի հետ միասին, իսկ բանավոր և տեսաձայնագրությամբ ներկայացվող կարծիքն ուղեկցվում է մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի բանավոր կամ տեսաձայնագրությամբ կարծիքով, ինչն արձանագրվում է:»⁶³:

Նույն մոտեցումն առկա է նաև Ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածում (Ճնողական իրավունքների պաշտպանությունը), որի առաջին կետի երկրորդ պարբերությունում նշված է. *«հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը **չի բխում երեխայի շահերից**»:* Ընդ որում, նշված սահմանափակումների հիմքերը երբեմն ձևակերպված են լայն ու անորոշ կերպ, (օրինակ՝ *«որոշակի միջոցառումներին մասնակցելը», «օրենքով նախատեսված այլ դեպքերում»*), *«օրենսգրքով նախատեսված դեպքերում»*, ինչը բարձրացնում է իրավական անորոշության խնդիր: Բացի այդ, 44-րդ և 57-րդ հոդվածների կարգավորումները հակասության մեջ են գտնվում Կոնվենցիայի 3-րդ և 12-րդ հոդվածի հետ, որոնք երեխայի արտահայտվելու իրավունքը սահմանում են *«այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային»* (հոդված 12), իսկ սահմանափակումը պայմանավորում են ոչ թե տարիքային շեմով, այլ երեխայի լավագույն շահով (3-րդ հոդվածի 1-ին մաս, ըստ որի *«երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:* Յետևաբար, նշված հոդվածները պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն Սահմանադրության 37-րդ և Կոնվենցիայի 12-րդ հոդվածներին՝ վերացնելով տարիքային սահմանափակումները:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում տարիքային սահմանափակում երեխայի լավագույն շահի իրավունքի կիրարկման տեսանկյունից: Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:

⁶³ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/4936/about> հղումով:

Այնուամենայնիվ, գործող օրենքը ինքն իրենով հռչակագրային բնույթի ձևակերպումներ է պարունակում և կրկնում է ԵԿԿ-ի դրույթները, մինչդեռ օրենքը պետք է առավել մանրամասն կարգավորի ոլորտը: Ողջունելի են շրջանառվող օրենսդրական փաթեթով առաջարկվող փոփոխությունները: Մասնավորապես, առաջարկվում է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» նոր օրենքի 28-րդ՝ «Երեխայի լսված լինելու իրավունքը և երեխայի մասնակցությունը», հոդվածով սահմանել հետևյալը. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը ներգրավում է մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի: »:

Նշված փոփոխությունների վերաբերյալ ԱՄՆ 2022 թվականին տրամադրած պարզաբանման համաձայն՝ իրականացվող օրենսդրական բարեփոխումների համատեքստում առաջարկվել է վերը նշված իրավունքին առնչվող փոփոխություններ կատարել՝ համապատասխանեցնելով ՀՀ սահմանադրությանը և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային:

Երեխայի լսված լինելու իրավունքն իրացվում է նաև երեխային վերաբերող հարցերի առնչությամբ քաղաքականության, օրենսդրության և ռազմավարությունների ընդունման, իրականացման կամ փոփոխման դեպքում: Երեխայի լսված լինելու իրավունքի պատշաճ պաշտպանության մեխանիզմները թույլ կտան երեխայի մյուս իրավունքների վերաբերյալ օրենսդրության բարեփոխումներն առավել երեխայակենտրոն դարձնել:

Հատկանշական է նաև, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է, որ անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվում է Կառավարության սահմանած կարգով որակավորված հոգեբան: Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարման իրավունք ունի մասնակցելու նրա օրինական ներկայացուցիչը: Քննչական գործողությունն սկսելուց առաջ հոգեբանին և օրինական ներկայացուցչին պարզաբանվում են քննչական գործողությանը մասնակցելու և դիտողություններ անելու իրավունքները: Ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությանը մասնակցող հոգեբանին և օրինական ներկայացուցչին բացատրվում է նաև հարցեր տալու նրանց իրավունքը, իսկ հոգեբանին՝ նաև կատարվող քննչական գործողության վերաբերյալ մասնագիտական առաջարկներ ներկայացնելու իրավունքը: Քննիչն իրավունք ունի հանելու տրված հարցերը կամ չընդունելու ներկայացված առաջարկները, սակայն ամեն դեպքում դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 847-Ն որոշմամբ էլ հաստատվել է անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի

մասնակցությամբ քննչական գործողությունների կատարմանը ներգրավվող հոգեբանների որակավորման կարգը:

Ընտանեկան գործերով դատական պրակտիկայում, ընդհանուր առմամբ, ձևավորված է երեխաների կարծիքը հաշվի առնելու դատական մշակույթ: Նման գործերով երեխաների կարծիքը կարող է վճռորոշ լինել դատավորի կողմից որոշում կայացնելու համար՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Երբեմն դատավորները դիմում են դատավարական պրոակտիվ եղանակների՝ երեխայի իրական տեսակետը պարզելու համար, քանի որ տարածված են դեպքերը, երբ, օրինակ, մերձավոր ազգականներն ուղղորդում են երեխաներին և ազդում նրանց կարծիքի ձևավորման վրա: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվում են բողոքներ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ:

Այսպես, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածը սահմանում է, որ ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման: Վեճի առկայության դեպքում ծնողներն իրենց ծնողական իրավունքները պաշտպանելու համար կարող են դիմել դատարան: Հաշվի առնելով երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը չի բխում երեխայի շահերից: Իսկ նույն օրենսգրքի 67-րդ հոդվածով ամրագրված է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

Այս առումով պետք է նշել, որ Պաշտպանին ուղղված բողոքներում մեծաթիվ են այն դեպքերը, երբ ծնողները մտահոգություն են հայտնում ԽՀՄ-ների և դրանց կից գործող հանձնաժողովների աշխատակիցների կողմից երեխայի լսված լինելու իրավունքի ոչ պատշաճ ապահովման մասին: Մասնավորապես, հաճախ չեն ապահովվում երեխայի կարծիքը լսելու տարրական նորմերը, երեխայակենտրոն միջավայրը և այլն:

Հատկանշական է նաև, որ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 09.06.2021թ. թիվ 33-Լ հանձնարարականով հաստատվել է Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցը⁶⁴, որով սահմանվել են երեխայի

⁶⁴ Հասանելի է <https://cesa.am/shared-files/6347/%D5%8F%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6->

տեսակցության վարույթը մի շարք հիմքերով կասեցնելու վերաբերյալ ուղենիշային կարգավորումներ: Ուղեցույցով սահմանված «եթե երեխայի տարիքն ու զարգացման մակարդակը թույլ են տալիս արտահայտել իր մտքերն ու ցանկությունները, հարկադիր կատարողը պարտավոր է տեսակցությունից երեխայի հրաժարվելու հանգամանքի մասին հավաստիանալու համար խոսել երեխայի հետ» մոտեցումը, ընդունելի չէ: Մասնավորապես, տվյալ կարգավորումը խնդրահարույց է և չի բխում ցանկացած իրավիճակում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու, երեխայի լաված լինելու իրավունքի իրացումն ապահովելու հրամայականից: Անհրաժեշտ է ապահովել, որ երեխային վերաբերող ցանկացած հարցի կապակցությամբ ապահովվի վերջինիս լաված լինելու իրավունքի իրացումը՝ անկախ նրա տարիքից:

Երեխայի ոչ բավարար զարգացվածության, շատ փոքր տարիքի պատճառով մտքերն արտահայտելուն ունակ չլինելու դեպքում վերջինիս լաված լինելու իրավունքի իրացումը հնարավոր է ապահովել, օրինակ, համապատասխան մասնագետների ներգրավմամբ, այդ թվում՝ հոգեբանի կողմից նրա հետ համապատասխան աշխատանք տանելու միջոցով:

Ուստի, համապատասխան կարգավորումները պետք է ձևակերպվեն այնպես, որ ցանկացած դեպքում բացառվի երեխայի լաված լինելու իրավունքի իրացումը հարկադիր կատարողի կողմից չապահովելը՝ դա պայմանավորելով երեխայի ոչ բավարար զարգացվածությամբ, շատ փոքր տարիքի պատճառով մտքերն արտահայտելուն ունակ չլինելով, ինչպես նաև նմանատիպ այլ հանգամանքներով: Նման դեպքերում, ինչպես արդեն նշվել է, երեխայի լաված լինելու իրավունքի իրացումը հարկադիր կատարողը պարտավոր է ապահովել այլ եղանակներով, այդ թվում՝ հոգեբանի պարտադիր ներգրավմամբ: Ընդ որում, սա ևս օրենսդրական կարգավորում պահանջող հարց է:

Չաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են, սակայն հնարավորինս սեղմ ժամկետներում անհրաժեշտ է րևոլունել ոլորտի օրենսդրության փոփոխությունները:

Առաջարկություններ

- *Իրավակիրառ պրակտիկայում, այսինքն՝ վարչական վարույթներում, քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության շրջանակներում իրավակիրառողները պետք է առաջնորդվեն Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1333 որոշման մեջ արտահայտված դիրքորոշմամբ, համաձայն որի, իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լաված լինելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով:*

[%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB-%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf](#) հղումով:

- *Նույն մոտեցմամբ պետք է առաջնորդվեն երեխայի շահերին առնչվող ցանկացած որոշում կայացնողները՝ ընտանիքում, դպրոցում, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում:*
- *Ընդունել ՅՅ ընտանեկան օրենսգրքի փոփոխությունները:*
- *Երեխայի լաված լինելու և նրա կարծիքը հաշվի առնելու իրավունքների մասին կոնվենցիոն սկզբունքները պետք է լայնորեն իրագրվեն:*
- *Երեխայի լաված լինելու իրավունքի և դրա կոնվենցիոն մեկնաբանության մասին անհրաժեշտ է իրագրել համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների աշխատակիցներին, մարզպետարաններում գործող ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատակիցներին, մանկավարժներին, հոգեբաններին, սոցիալական աշխատողներին, դեպք վարողներին:*

2) Երեխայի լաված լինելու իրավունքը բժշկական միջամտության դեպքում

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ բժշկական միջամտություն կատարելու համար համաձայնությունը տալիս է միայն երեխայի օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ չի հարգվում մինչև 18 տարեկան երեխայի լաված լինելու իրավունքը: Այս կարգավորումը սահմանված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՅՅ օրենքի 8-րդ հոդվածով: Կոմիտեն առաջարկել է ապահովել, որ երեխային հնարավորություն տրվի արտահայտել իր կարծիքը բժշկական միջամտության դեպքում, ինչպես նախանշված է Հանձնաժողովի թիվ 15 ընդհանուր մեկնաբանության (CRC/C/GC/15) մեջ:

2020 թվականի մայիսի 6-ին թիվ ՅՕ-268-Ն օրենքով կատարվել են փոփոխություններ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՅՕ-42 օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Գործող Օրենքի 16-րդ «Համաձայնությունը բժշկական միջամտության համար» հոդվածի համաձայն՝ 16 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի բժշկական միջամտության համար գրավոր համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, եթե բացակայում են Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները: Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում հաշվի է առնվում 16 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի կարծիքը: Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք (պացիենտ) իրավունք ունի մատչելի ձևով ստանալու տեղեկություն իր առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, տրամադրված (տրամադրվող) բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ բուժման մեթոդների ընտրության, կիրառման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի

վերաբերյալ: Իսկ 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի, երեխայի (պացիենտի) վերաբերյալ 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են նրան, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

1) եթե բժշկի կարծիքով օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձը, երեխան ի վիճակի են գնահատել իրենց առողջական վիճակը,

2) այդ տեղեկությունները չեն վնասի օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին, երեխային կամ կոյուրացնեն նրան բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը,

3) օրինական ներկայացուցիչները չեն առարկում այդ տեղեկությունները տրամադրելուն:

Նույն Օրենքի 18-րդ հոդվածով ամրագրվել է, որ 16 տարին լրացած երեխաները իրավունք ունեն տալու գրավոր իրազեկված համաձայնություն բժշկական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, թեև կատարվել են փոփոխություններ, այնուամենայնիվ Կոմիտեի առաջարկը վերաբերելի է դարձել միայն 16-ից 18 տարեկան երեխաներին առնչվող դեպքերին:

Կոմիտեի այս առաջարկը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *Անհրաժեշտ է ամբողջությամբ կատարել Կոմիտեի առաջարկությունը և նախատեսել այնպիսի կարգավորում, որի շնորհիվ հաշվի կառնվի երեխայի կարծիքը՝ յուրաքանչյուր դեպքում իր տարիքին և հասունությանը համապատասխան:*

Գ. Բռնությունը երեխայի նկատմամբ (Կոնվենցիայի 19-րդ հոդված, 37-րդ հոդվածի (ա) ենթակետ և 39-րդ հոդված)

1. Վատ վերաբերմունքը և ֆիզիկական պատիժը

Կոմիտեն մտահոգություն է հայտնել այն տեղեկությունների կապակցությամբ, որ փակ և մասնակի փակ հաստատություններում, մասնավորապես՝ Վանաձորի մանկատանը և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնում (թիվ 1 գիշերօթիկ դպրոցում) երեխաները ենթարկվում են վատ վերաբերմունքի և բռնության: Չնայած ՀՀ ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի Հայաստանի Հանրապետության օրենքը պարունակում են ֆիզիկական

պատիժն արգելող դրույթներ, սակայն այդ դրույթների կիրարկման մեխանիզմներ չկան և ՀՀ օրենսդրությամբ չեն նախատեսվում պատժամիջոցներ խախտումների դեպքերի համար:

Կոմիտեն առաջարկել է (կետ 25)՝

- հրատապ միջոցներ ձեռնարկել փակ և մասնակի փակ հաստատություններում, մասնավորապես՝ Վանաձորի մանկատանը և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնում (թիվ 1 գիշերօթիկ դպրոցում) բռնության առանձին դեպքերը քննելու, ինչպես նաև՝ քրեական հետապնդման և մեղավորներին պատժի ենթարկելու ուղղությամբ:

2013 թվականից մինչև 2017 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, ըստ ՀՀ ԱՍՀՆ պարզաբանման՝ հաստատություններում տեղի է ունեցել երեխաների նկատմամբ բռնության 2 դեպք: Մասնավորապես. «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում երեխաների նկատմամբ բռնության դեպք է արձանագրվել 2014 թվականին, որի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ այն բանի համար, որ ՊՈԱԿ-ի աշխատակիցն ուսումնական հաստատությունում իր կողմից կազմակերպված տողանների ընթացքում, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացի այլ փուլերում՝ 2010-2014 թվականների ընթացքում, միասնական հանցավոր մտադրությամբ, պարբերաբար, տարբեր պատճառաբանություններով բռնություն է գործադրել հաստատության՝ իր բնորոշմամբ «կարգազանց» ավելի քան մեկ տասնյակ սաների նկատմամբ, ինչով էլ նրանց դիտավորությամբ պատճառել է հոգեկան ուժեղ տառապանք⁶⁵: Երկրորդ դեպքում՝ 2016 թվականի մայիսին Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում երեխայի նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ դեպք է արձանագրվել, որի վերաբերյալ հետագայում քրեական գործ չի հարուցվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

ԱՍՀՆ պարզաբանումների համաձայն՝ *2018-2022 թվականների ընթացքում քննարկվող հարցի վերաբերյալ պատկերը հետևյալն է.*

«Գավառի մանկատուն» ՊՈԱԿ՝ 2018-2022թթ. ընթացքում բռնության դեպքեր չեն արձանագրվել, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ. 23.01.2018թ. շահառուներից մեկի կողմից ֆիզիկական բռնության է ենթարկվել մանկատան մեկ այլ շահառու, որից հետո շահառուն տեղափոխվել է Սուրբ Աստվածամայր ԲԿ-ի Վիրաբուժական բաժանմունք: Կատարվել է առաջնային վիրաբուժական մշակում: 10.01.2020թ. շահառուներից մեկի կողմից ֆիզիկական բռնության է ենթարկվել մանկատան մեկ այլ շահառու: Շահառուին մանկատանը ցուցաբերվել է առաջին

⁶⁵ Հիմք՝ ԿԴ2/0060/01/15 քրեական գործ.

<http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal>:

բուժօգնություն: 12.10.2021թ. շահառուներից մեկի կողմից ֆիզիկական բռնության է ենթարկվել մանկատան դաստիարակներից մեկը: Մանկատանը ցուցաբերվել է առաջին բուժօգնություն, որից հետո դաստիարակը դիմել է «Մասիս» ԲԿ: Մյուս տարիներին բռնության դեպքեր չեն գրանցվել: «Մարի Իգմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ 2018-2022 թթ. ընթացքում գրանցվել են միայն երեխաների կողմից երեխաների նկատմամբ բռնության դեպքեր: «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ 2020թ. գրանցվել է 1 դեպք, որը գտնվում է քրեական դատավարության ընթացքում և դեռևս դատավճիռ չի կայացվել, բռնության տեսակը՝ ֆիզիկական և հոգեբանական: «Երևանի «Չատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում 2020թ. արձանագրվել է ֆիզիկական բռնության 2 դեպք սաների միջև: Դեպքերից մեկի հետևանքով հաստատության և ոստիկանության համատեղ աշխատանքի արդյունքում կազմվել է անհատական սոցիալական ծրագիր, իսկ երկրորդ դեպքի առթիվ, որը հանգեցրել է մարմնական վնասվածքների՝ հարուցվել է քրեական գործ: Նույն հաստատությունում արձանագրվել է նաև երեխայի նկատմամբ մեկ հոգեբանական բռնության դեպք մանկավարժի կողմից: Մանկավարժին հայտարարվել է խիստ նկատողություն, որից հետո սեփական դիմումի համաձայն մանկավարժը ազատվել է աշխատանքից:

Պաշտպանի՝ 2018 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների մշտադիտարկման այցերի ընթացքում կատարված առանձնագրույցների արդյունքում ստացվել է տեղեկություն մի շարք հաստատություններում երեխաների նկատմամբ տեղի ունեցած բռնության վերաբերյալ: Մասնավորապես, Յանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիրի իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ սաների միջև պարբերաբար տեղի են ունեցել վիճաբանություններ: Մասնավորապես, ստացված տեղեկության համաձայն՝ դեպքերից մեկի ժամանակ վեճի մասնակիցները միմյանց նկատմամբ գործադրել են ֆիզիկական ուժ, որի պատճառով ստացել են վնասվածքներ, երեխաներին ցուցաբերվել է բժշկական օգնություն: ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն Որոշման հավելվածի 2-րդ չափորոշիչի 7-րդ կետով նախատեսված պահանջ է՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ունենա երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ կրթահամալիրում չէր վարվում սաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան, ինչպես նաև նշված դեպքերի մասին իրավասու մարմիններին որևէ կերպ չի հաղորդվում: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են կրթահամալիրի սաների միջև ֆիզիկական բռնության, միմյանց հարվածներ հասցնելու, ինչպես նաև անձի կոնֆլիկտայնության և մերկ մարմինն ի ցույց դնելու երևույթներ, սակայն շատ դեպքերում դայակները նույնիսկ չէին ել նկատում դրանք, իսկ սաներն իրենք էին

փորձում հարթել մյուսների կոնֆլիկտները, միջամտել բռուկացքով կամ կոշիկով իրար փոխադարձ հարվածներ հասցնելու դեպքերին: Ավելին, տարիքով ավագ սաներն իրենց հեղինակային հրամայական խոսքով հանդարտեցնում էին իրավիճակը և վստահեցնում, որ սովորական երևույթ է: Պետությունը պետք է ապահովի, որպեսզի բոլոր անձինք, որոնք իրենց աշխատանքի շրջանակներում պատասխանատու են բռնությունների կանխարգելման, դրանցից պաշտպանության և դրանց արձագանքելու համար, ինչպես նաև դատական համակարգում աշխատող անձինք հաշվի առնեն երեխաների կարիքները և հարգեն նրանց իրավունքները: Բռնության արգելքի որևէ բացառություն չի կարող լինել: Երեխաները կարող են ենթարկվել բռնության մեծահասակների կողմից, ինչպես նաև բռնությունը կարող է տեղի ունենալ երեխաների միջև: Փաստաթղթի 27-րդ կետով նախատեսվում է «երեխաների միջև բռնության» մեկնաբանությունը: Դա ներառում է ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունը, հաճախ ահաբեկելու միջոցով, որն իրականացվում է երեխաների կողմից այլ երեխաների դեմ՝ հաճախ երեխաների խմբի կողմից: Այն ոչ միայն վնասում է երեխայի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանն ու բարեկեցությանը, այլ նաև բացասաբար է անդրադառնում նրա զարգացման, կրթության և սոցիալական ինտեգրման վրա: Նույն կետում նշվում է նաև, որ չնայած երեխաներն են դա իրականացնում, այնուամենայնիվ, նրանց համար պատասխանատու մեծահասակների դերը կարևոր է յուրաքանչյուր դեպքում՝ պատշաճ կերպով դրանց արձագանքելու և բռնությունը կանխարգելելու, ապահովելու, որպեսզի բռնության դեպքերը չկրեն պատժիչ բնույթ և չկիրառվի բռնություն բռնության դեմ: Անդրադառնալով իրավասու մարմինների պարտականություններին՝ անհրաժեշտ է նշել, որ նույն փաստաթղթի 32-րդ կետը տալիս է «երեխայի իրավունքների համակարգային և պարբերական խախտումներ» եզրույթի մեկնաբանությունը:

Կոնվենցիայի 13-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ «երեխայի իրավունքների համակարգային և պարբերական խախտումներ» է համարվում որևէ մակարդակում գտնվող իրավասու պետական մարմինների կողմից, որոնք պատասխանատու են երեխաներին բոլոր տեսակի բռնություններից պաշտպանելու համար, Կոնվենցիայով նախատեսված պարտականությունն արդյունավետ չկատարելու եղանակով ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս պատճառելը: Նման բացթողումները ներառում են օրենսդրական և այլ դրույթներ չընդունելը, օրենքներին և այլ կարգավորումներին չհետևելը, ինչպես նաև անհրաժեշտ նյութական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների ու կարողությունների բացակայությունը՝ բացահայտելու, կանխելու և արձագանքելու երեխաների հանդեպ բռնությանը: Իրավասու անձինք և մարմինները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության բոլոր տեսակի դեպքերը բացառելու ուղղությամբ: Դրանց կանխարգելումը նույնպես իրավասու մարմինների պարտականությունների շրջանակներում է:

Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում երեխաների հետ տեղի ունեցած առանձնագրույցների և խմբային գրույցի ընթացքում մի քանի երեխաներ բողոքում էին աշխատակազմի՝ հատկապես գիշերային խնամքն իրականացնող աշխատակիցների կոպիտ վերաբերմունքից: Կրթահամալիրի աշխատակիցների տեղեկացմամբ՝ 2019 թվականի մայիս ամսին կրթահամալիրի երկու սաներ ծեծի են ենթարկել աշխատակիցներից մեկին, մասնավորապես, երեխաներից մեկը բռնել է ուսուցչի ձեռքերը, իսկ մյուսը փայտով հարվածել է նրան: Ըստ աշխատակիցների՝ կրթահամալիրի տնօրինությունը տվյալ միջադեպի մասին տեղյակ է պահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: Բացի այդ, կրթահամալիրի աշխատակիցների տեղեկացմամբ, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված տեղեկությունների համաձայն⁶⁶ կրթահամալիրի 14-ամյա սանը նույն կրթահամալիրի 16- ամյա սանի կողմից ենթարկվել է սեռական բռնության: Նշված փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, որը 2019 թվականի մայիսի 31-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Մտահոգիչ է, որ վերոնշյալ միջադեպերն արձանագրված չէին կրթահամալիրում վարվող սովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցամատյանում: Այցի պահի դրությամբ գրանցամատյանում ընդամենը մեկ դեպք էր գրանցված, որի վերաբերյալ արձանագրված էր, որ երեխան վնասվածքը ստացել էր տանը, այլ ոչ թե կրթահամալիրում:

Հարկ է նշել, որ Գավառի մանկատան սոցիալական աշխատողները վարում էին հաստատությունում խնամվող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցամատյան, սակայն այցի պահի դրությամբ որևէ դեպք հաշվառված չէր: Չնայած այս փաստին, մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ հաստատությունում երեխաների միջև վիճաբանություններ տեղի են ունենում, օրինակ՝ առանձնագրույցների ընթացքում երեխաները նշել են, որ 2019 թվականի սեպտեմբերի 8-ին երկու աղջիկների միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի արդյունքում երեխաները ստացել են մարմնական վնասվածքներ:

Ըստ բժշկական անձնակազմի՝ իրենք տեղյակ չեն եղել վիճաբանությունից և սաների ստացած վնասվածքներից այն դեպքում, երբ վիճաբանությանը մասնակցած երեխաներից մեկը, ըստ ամբուլատոր հաճախումների մատյանի, 2019 թվականի սեպտեմբերի 9-ին՝ դեպքի հաջորդ օրը, գլխացավ ունենալու զանգատով դիմել է բժշկական անձնակազմին՝ բժշկական օգնություն ստանալու համար: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ երբ երեխաները դիմում են բժշկական անձնակազմին օրինակ՝ գլխացավով, ապա աշխատակազմը խորքային մոտեցում չի ցուցաբերում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 27.01.2017թ. թիվ 7-Ա/1 և ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.04.2017թ. թիվ 464-Ա/2 համատեղ

⁶⁶ Տե՛ս նյութը՝ <https://news.am/arm/news/517518.html> հղումով:

հրամանով հաստատվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը: Այնուամենայնիվ, ոչ բոլոր հաստատություններն են վարում երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան:

Պաշտպանի կատարած մշտադիտարկումը ցույց է տալիս, որ որոշ հաստատություններում նշված գրանցամատյաններն առկա են, սակայն խնդրահարույց էր դրանց պատշաճ վարման ապահովումը, քանի որ դրանք հիմնականում լրացված չեն լինում կամ ցույց չեն տալիս իրական պատկերը, և աշխատակազմը հաճախ տեղեկացված չէ գրանցամատյանի վարման, ինչպես նաև իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդելու կարգի մասին:

Պետական և ոչ պետական դպրոցների համար ևս առկա է բռնության դեպքերի արձանագրման և դրանց արձագանքման կարգի ընդունման անհրաժեշտություն: Նշվածի կապակցությամբ, հարկ է նշել, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2022 թվականի պարզաբանման համաձայն՝ բռնության դեպքերի արձանագրման և դրանց արձագանքման կարգի մշակման վերաբերյալ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ քննարկումներ են իրականացվում:

Բռնության դեպքերի վերաբերյալ ներկայացված վերոգրյալ ցուցանիշների թիվը կարող է ավելի մեծ լինել իրականանում, քանի որ առկա են բռնության մասին իրազեկվածության ու ընկալումների յուրահատկություններ: Ոլորտում իրականացված հետազոտություններից մեկի, որն իրականացվել է «Հուլյս և օգնություն» ՀԿ-ի կողմից և ներառելով նաև ֆոկուս խմբերի քննարկումներ մանկավարժների շրջանում, ի տարբերություն Երևանի մանկավարժների, մարզերի մանկավարժները հակված չեն որպես բռնություն դիտարկել իրենց կողմից ձեռնարկվող մի շարք բռնի գործողություններ (ականջ քաշել, սաստել \$իզիկապես և այլն): Ավելին, նրանք կարծում են, որ նման սահմանումները դրսից են պարտադրվում մեր հասարակությանը և հակասում են մեր ազգային հոգեկերտվածքին: Ճատերը նշում են, որ ավանդական կրթության և դաստիարակության մեթոդները՝ իրենց պատժամիջոցների համակարգով, շատ ավելի արդյունավետ են եղել, քան այն ինչ այսօր պահանջում են մանկավարժներից⁶⁷: Այս իմաստով, ինչպես նման դեպքերի արձանագրումները, այնպես էլ դրանց նկատմամբ համապատասխան իրավական արձագանքի փոքր թվաքանակը կարող է պայմանավորված լինել հենց բռնության ընկալումներով և դրանց նկատմամբ դրսևորված անտարբերությամբ:

ՀՀ կառավարությունը 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 51 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին» և «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի

⁶⁷Տե՛ս Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն // Հետազոտ. աշխատ. խումբ.- Եր.: Լուսաբաց, 2014 թվական 116 էջ, <http://hopehelp.am/files//pdfs//violence%20against%20children%20in%20the%20republic%20of%20armenia.pdf> հղումով:

հայեցակարգից բխող միջոցառումների ցանկին»: Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթները:

ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-Ն վերոնշյալ որոշմամբ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների պաշտպանության համապատասխան չափորոշիչներ, որոնց համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է երեխայի պաշտպանությունը հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, վատ վերաբերմունքից, աշխատանքի շահագործումից, հանցագործություններից, անուշադրությունից և անարդարությունից, առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից:

2015 թվականի սեպտեմբերի 10-ին հաստատվել է նաև ՀՀ կառավարության «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշումը, ըստ որի՝ կարգավորվում են սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում համագործակցության կողմերի, համագործակցության շրջանակներում կողմերի իրավունքների ու պարտականությունների, միջգերատեսչական համագործակցության ձևերի ու կարգի, համագործակցող կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների ծավալի, ժամկետի և ձևի մասին պահանջների, խնդրահարույց այն դեպքերի, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները: Հարկ է նշել, որ տվյալ որոշմամբ սահմանված դրույթների կիրառումը գործնականում արդյունավետ չէ, առկա է մասնագետների կարողությունների զարգացման կարիք, ինչպես նաև առկա՝ ոչ երեխայակենտրոն գործելակերպի փոփոխության անհրաժեշտություն:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի 25-րդ կետով նախատեսված է «օրենսդրորեն արգելել երեխայի նկատմամբ մարմնական պատիժները»:

Ըստ Արդարադատության նախարարության պարզաբանումների՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի 25-րդ կետի համաձայն, Նախարարությունը նշված կետով սահմանված միջոցառման կատարման ապահովման ուղղությամբ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի ինստիտուտ հետ համագործակցությամբ ազգային ու միջազգային փորձագետների ներգրավմամբ իրականացվել է Երեխայի նկատմամբ մարմնական պատիժներն արգելող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակմանն ուղղված

հետազոտությունը: Հետազոտությունն անդրադառնում է մարմնական պատժի միջազգային մարդու իրավունքների և երեխայի իրավունքների շրջանակին, ինչպես նաև ՀՀ համապատասխան օրենսդրությանը և իրավակիրառ պրակտիկային, միջազգային լավագույն փորձին: Ուսումնասիրությունը վեր է հանում երեխայի նկատմամբ մարմնական պատժների վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությունը և ներկայացնում բացերի հասցեագրմանն ուղղված առաջարկներ: Ուսումնասիրության հիման վրա Արդարադատության նախարարությունը կնախաձեռնի համապատասխան շահագրգիռ կողմերի հետ քննարկումները՝ օրենսդրական փոփոխությունները մշակելու նպատակով:

Առաջարկություններ

- *ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաստատություններում սովորող և (կամ) խնամվող երեխաների հանդեպ և նրանց միջև հնարավոր բռնության դեպքերը բացառելու համար: Ներդնել և գործարկել նման կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ,*
- *հաստատություններում վարել երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցամատյան՝ ապահովելով նման բոլոր դեպքերի պատշաճ կարգով արձանագրումը,*
- *հաստատություններում սովորող և (կամ) խնամվող երեխաների՝ իրենց ընտանիքի անդամների և այլ անձանց հետ կապն ապահովելու, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թե՛ գծին զանգահարելու հնարավորությունն ապահովելու նպատակով՝ տեղադրել հեռախոս ու ապահովել հեռախոսակապի հասանելիությունը,*
- *իրականացնել խորացված և շարունակական բնույթ կրող վերապատրաստումներ հաստատությունների աշխատակազմի համար՝ իրավասու մարմիններին, այդ թվում՝ ոստիկանությանն այդ մասին ժամանակին հայտնելու և համապատասխան մատյաններ վարելու, կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու ընթացակարգերի վերաբերյալ,*
- *մշակել և ընդունել երեխայի նկատմամբ մարմնական պատժները արգելող օրենսդրական փոփոխությունները:*

2. Բռնության բոլոր ձևերից զերծ լինելու՝ երեխայի իրավունքը

Վերհիշելով երեխաների նկատմամբ բռնության թեմայով Միավորված ազգերի կազմակերպության 2006 թվականի ուսումնասիրության (A/61/299) առաջարկությունները, և վկայակոչելով թիվ 13 ԸՄ-ն,

Կոմիտեն առաջարկել է (կետ 26)՝

- մշակել համապարփակ ազգային ռազմավարություն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխելու և վերացնելու նպատակով,
- ընդունել համակարգման ազգային ծրագիր երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ պայքարելու նպատակով,
- ընդունել օրենսդրություն, որով ուղղակիորեն կարգելվեն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը ցանկացած իրավիճակներում, առանձնակի ուշադրություն դարձնել բռնության գենդերային բաղադրիչին:

Երեխայի նկատմամբ բռնությունը հակասում է երեխայի լավագույն շահի գաղափարին և խախտում է նրա իրավունքները: Երեխայի նկատմամբ բռնության դրսևորումները կարող են լինել հաստատություններում (մանկապարտեզ, դպրոց, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն), ընտանիքում և նույնիսկ թվային միջավայրում:

Երեխայի նկատմամբ բռնությունը կարող է դրսևորվել տարբեր կերպ՝ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն և անտեսման ձևով:

Երեխաների իրավունքների պաշտպանությանը անդրադառնալիս, առանձնակի կարևորություն ունի բռնության բոլոր դրսևորումներից վերջինիս պաշտպանությունը, այդ դրսևորումների կանխարգելումն ու բացառումը: Պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ երաշխավորելու համար երեխայի պաշտպանությունը բռնությունից՝ անկախ բռնության դրսևորման ձևից: Երեխան պետք է պաշտպանված լինի բռնության բոլոր ձևերից այդ թվում՝ ֆիզիկական կամ հոգեբանական, ծեծից, վիրավորանքից կամ չարաշահումից, ծաղրանքից կամ անտեսումից, կոպիտ վերաբերմունքից, շահագործումից և այլն: Պետությունը պետք է գործի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության այնպիսի գործուն և արագ արձագանքող համակարգ, որում ի թիվս այլնի պետք է ներառվեն, սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին:

Բռնության դրսևորումները վաղ հայտնաբերելու և դրանք կանխարգելելու գործում մեծ դեր ունեն դպրոցն ու մանկապարտեզը, որոնք պետք է լինեն այն երեխայակենտրոն միջավայրերը, որտեղ կապահովվի երեխայի կրթության իրավունքի իրացումը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից, իսկ դպրոցական կարգապահության պահպանմանն ուղղված մեթոդները պետք է լինեն երեխայի արժանապատվության հետ համատեղելի⁶⁸: Բռնությունը հաճախ թաքնված բնույթ ունի՝ պայմանավորված երեխայի՝ բռնության ենթարկվելու հանգամանքը չգիտակցելը: ՄԱԿ-ի կողմից հրապարակված երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ անկախ փորձագիտական ուսումնասիրությամբ նշվում է, որ երեխաները վախենում են հայտնել բռնության դեպքերի մասին, ինչպես նաև

⁶⁸ Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 28:

հաճախ բռնության մասին չի բարձրաձայնվում, քանի որ այն ընդունելի է հասարակության կողմից որպես կարգապահական մեթոդ⁶⁹:

ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի առաջին հավելվածով նշված է, որ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություն: Սակայն վերջին տարիներին մարդու իրավունքներին ամնչվող ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական կիրառման խնդիրներին իրենց զեկույցներում պարբերաբար անդրադարձել են միջազգային կառույցները⁷⁰: Նշվել է, որ ՀՀ-ում մարդու իրավունքների լրջագույն խնդիրներից է երեխաների նկատմամբ բռնության և մարդու իրավունքների այլ խախտումների նկատմամբ պետության անհամարժեք արձագանքը⁷¹:

Պաշտպանին ուղղված բողոքներով և բանավոր ահազանգերով բարձրացված խնդիրների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ են երեխաների հանդեպ բուլինգի դեպքերը, որին դպրոցի անձնակազմը պատշաճ չի արձագանքում: Օրինակ՝ երեխայի նկատմամբ դրսևորել է խտրական մոտեցում դպրոցում՝ հոգեբանորեն ճնշելով վերջինիս հաշմանդամություն ունենալու, սոցիալական ապահովվածության կամ այլ հիմքով: Արդյունքում, դպրոցում երեխայի՝ բուլինգի ենթարկվելու, պատշաճ արձագանք չստանալու հետևանքով ծնողը ստիպված է եղել փոխել երեխայի դպրոցը կամ երեխան շարունակել է լարված և անապահով միջավայրում շարունակել կրթությունը: Արձանագրվել են նաև դեպքեր, որ պայմանավորված երեխայի առանձնահատկություններով, որոնք դպրոցի անձնակազմի բնորոշմամբ խաթարում են դպրոցի անդորրը և ծնողին առաջարկվել է փոխել երեխայի դպրոցը, քանի որ դպրոցը չունի բազմամասնագիտական այնպիսի անձնակազմ, որը աշխատանքներ կտանի երեխայի հետ: Տվյալ դեպքում Պաշտպանի աշխատակազմի մասնագիտական խորհրդատվությունից և միջամտությունից հետո, պայմանավորվածություն է ձեռք բերվել տարածքային մասնագիտական աջակցության կենտրոնի կողմից անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունը վկայում է, որ ծնողները պատշաճ կերպով տեղեկացված չեն իրենց երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ և չգիտեն, թե որ մարմին դիմեն դպրոցում երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքում:

⁶⁹ Հասանելի է https://www.unicef.org/violencestudy/reports/SG_violencestudy_en.pdf հղումով:

⁷⁰ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը (առաջին հերթին՝ Համընդհանուր պարբերական զեկույցի շրջանակներում), ՄԱԿ-ի հատուկ զեկուցողները, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն, Եվրոպայի խորհրդի հոշտանգումների կանխարգելման կոմիտեն, Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարները, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, ԱՄՆ Պետքարտուղարությունը, «Հյուսիս Արևելյան Ուղի» կազմակերպություն:

⁷¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշումը, հավելված 1:

Հատկապես խնդրահարույց է հատուկ կարիքներ ունեցող երեխաների նկատմամբ բուլինգի դրսևորումները դպրոցներում:

ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ 2020թ-ի ընթացքում իրականացվել են տարբեր միջոցառումներ, օրինակ՝ «Բուլինգի դրսևորումները ուսումնական հաստատություններում և դրանց կանխարգելման ուղիները», «Բուլինգը, դրա դրսևորումները և կանխումը դպրոցներում» ծրագիրը, «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում», «Բուլինգի դրսևորումներն ուսումնական հաստատություններում և դրանց կանխարգելման ուղիները», «Կիբերբուլինգի կանխարգելման և նվազեցման ծրագիր»: «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» և այլն:

Դպրոցում երեխաների նկատմամբ բռնության դեպքերն առհասարակ դժվար բացահայտվող են: Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները հիմնականում խուսափում են հայտնել դպրոցում իրենց նկատմամբ կիրառված բռնության կամ վատ վերաբերմունքի մասին, խուսափելով հետագայում առավել խտրական վերաբերմունքի արժանանալուց: Դրա մասին են վկայում վերոգրյալ դեպքերը, երբ ծնողը, դպրոցում իր երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման պատճառով և պատշաճ արձագանք չստանալով, փոխում է երեխայի ուսման վայրը: Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցերով 2017 թվականից պարբերաբար այցելող տարբեր տարիքի երեխաներ մշտապես նշում են, որ դպրոցներում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնության դեպքերի են ականատես լինում: Հաճախ երեխաները չգիտեն, որ իրենց նկատմամբ բռնության ցանկացած տեսակի դրսևորում արգելված է, այդ թվում՝ ուսուցիչների կողմից: Նշվածը վկայում է, որ երեխաները քիչ են տեղեկացված բռնությունից պաշտպանված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Երեխաները հայտնել են, որ դպրոցում բռնության և վատ վերաբերմունքի դեպքերի դրսևորման պարագայում չկան գործող ուղղորդման կարգեր: Պաշտպանի աշխատակազմը մշտապես երեխաներին մանրամասն իրազեկում է իրենց իրավունքների մասին, սակայն խնդրի վերաբերյալ պետք է շարունակական աշխատանք տարվի դպրոցներում, ընտանիքում, համայնքում:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ երեխաների նկատմամբ բռնության բոլոր տեսակների վերացմանն ուղղված գործողությունները ոչ միշտ են արդյունավետ: Այս մասին դեռևս 2015 թվականին ներկայացվել է նաև երեխաների պաշտպանության ինդեքսի շրջանակներում՝ շեշտադրելով պետության հաջողությունները հանձնաժողովների, իրավական ակտերի ու կառավարման մեխանիզմների ստեղծման ոլորտում, սակայն դեռևս առկա են մարտահրավերներ համայնքային մակարդակում երեխաների նկատմամբ բռնության դեպքերը բացահայտելու, գնահատելու և հասցեական ու ժամանակին միջամտություն ցուցաբերելու

տեսանկյունից: Որպես օրինակ կարելի է բերել հանրակրթական հաստատություններում տիրող իրավիճակը: Ըստ հետազոտության, դպրոցում ուսուցիչների կողմից կարգազանց աշակերտների նկատմամբ կիրառվող մեթոդները սկսվում են բացատրական գրույցներից մինչև հոգեբանական ճնշում, նսեմացնող պատիժներ՝ անկյուն կանգնել, հատակ սրբել, մեկուսացում, ապտակ, հրմշտոց, հարվածներ կամ ծեծ: Թեև ֆիզիկական բռնությունը համարվում է ամենաանարդյունավետ միջոցը, սակայն հաշվի առնելով, որ բողոքելն ընդհանուր առմամբ համարվում է ամոթալի արարք, արդյունքում անարդյունավետ համարվող ապտակները և նսեմացնող պատիժները երբեմն արդյունավետ ու ընդունելի են դառնում: Խիստ տարածված են ավագ դասարանի աշակերտների միջև ֆիզիկական բռնության դեպքերը՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, և նկատվում է դրանց աճի միտում՝ ինչպես ընդհարումներ և ֆիզիկական ուժի կիրառմամբ կռիվներ, այնպես էլ խոշոր կռիվներ, այդ թվում սառը զենքի օգտագործմամբ:⁷²

Խնդրահարույց է նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում բռնության դեպքերի, դրանց բացահայտման և կանխարգելման ուղղված քայլերի բացակայությունը: Մանկապարտեզներում բռնության կասկածելի և հաստատված դեպքերի բացահայտման, պատշաճ ուղղորդման և կանխարգելման տեսանկյունից կարևոր է, որ մանկապարտեզներում պարտադիր գործի բռնության դեպքերի գրանցման կարգ: Մանկապարտեզներում բռնության դեպքերի նկատմամբ պետք է լինի հսկողություն տնօրինության և իրավասու տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Պետք է արձանագրել, որ մանկապարտեզում բռնության դեպքերի կանխարգելման համար առաջնային կարևորություն ունի ծնողների բարձր տեղեկացվածությունը երեխաների իրավունքների վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ անչափահասների նկատմամբ բռնության դեպքերի պատկերն հետևյալն է.

⁷² Տե՛ս երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն: Երևան 2014: <<Հույս և օգնություն>> ՀԿ, 2014: էջ 25-26: Հետազոտությունը հասանելի է հետևյալ հղումով <http://hopehelp.am/files//pdfs//violence%20against%20children%20in%20the%20republic%20of%20armenia.pdf>

Թվական	Գրանցվել է անչափահասների նկատմամբ բռնության	Որից՝ ընտանիքում բռնության	Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ	Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ	Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ	Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն	Սեփականության դեմ ուղղված հանցագործություն
2018թ.	149 դեպք	4 դեպք, 3-ը՝ ծեծ, 1-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը	80	15	50		
2019թ.	154 դեպք *Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ 1 համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ 1, հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ 3:	15 դեպք, 15-ը՝ ծեծ	78	8	60	4	3
2020թ.	154 դեպք *հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործու	9 դեպք՝ 7-ը՝ ծեծ, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառել, 1-ը՝ սպանության,	85	8	52	5	3

	թյուններ 1:	առողջությանը ծանր վնաս պատճառելու և ոչնչացնելու սպառնալիք:					
2021	149 դեպք *համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ 1:	9 դեպք՝ 8-ը՝ ծեծ, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառել:	78	3		2	1

2022 թվականի 9 ամիսների ընթացքում գրանցվել է անչափահասների նկատմամբ բռնության 132 դեպք, որից՝ ընտանեկան բռնության դեպքեր առկա չեն: Նշված դեպքից՝ (2003 թվականին ընդունված քրեական օրենսգիրք) կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ 41, անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ 11, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ 22, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն 1, հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ 1 դեպք: (2021 թվականին ընդունված քրեական օրենսգիրք) մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններ 4, առողջության դեմ ուղղված հանցագործություններ 3, ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ 28, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ 16, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն 4, հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ 1:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2021 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված թվով 105 դիմում-բողոքներից 28 դիմում-բողոքների դեպքում երեխաները ենթարկվել են ընտանեկան բռնության (10-ի դեպքում՝ իգական սեռի ներկայացուցիչներ, 8-ի դեպքում՝ արական, 10-ի դեպքում՝ երեխայի սեռի հետ կապված տվյալներ չեն ներկայացվել): Դիմում-բողոքներից 1-ով ընտանեկան բռնության է ենթարկվել առողջական խնդիրներ ունեցող երեխա: Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ մյուս բողոքների դեպքերում երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության գործադրման մասին տվյալներ

չեն արձանագրվել: Մինչդեռ, նշվածը բավարար չէ այն պնդման համար, որ այդ դեպքերում ընտանեկան բռնության գործադրմանը երեխաներ ներկա չեն գտնվել:

Ըստ ՀՀ ԱՍՀՆ տվյալների՝ Ազգային ժողովի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով շրջանառվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի նախագիծը, որտեղ երեխան դիտարկվում է որպես բռնության ենթարկված անձ, ով անմիջականորեն ականատես է եղել բռնության կիրառմանը և/կամ կրել է բռնության բացասական հետևանքներն իր վրա: Ֆիզիկական կամ սեռական բռնությանն ականատես լինելու կամ հոգեբանական հարկադրանքի անմիջական ազդեցությունը կրելու հետևանքով երեխան՝ տարիքային առանձնահատկություններից ելնելով, հայտնվում է խիստ խոցելի, հոգեբանորեն ծանր վիճակում: Սակայն երեխան՝ որպես բռնությունից տուժած անձ, չի ստանում իրավական պաշտպանություն և գործնականում հաճախ մնում է բռնարարի անմիջական ազդեցության տակ: Օրենքի նոր նախագծով բռնության ազդեցությունն այլ կերպ կրած երեխայի պաշտպանությունը և աջակցությունը հավասարեցվում է բռնության ենթարկված անձանց կարգավիճակին՝ օրենքով սահմանված երաշխիքների տրամադրմամբ:

Ինչպես արդեն վերը նշվեց, ՀՀ կառավարության N 51 արձանագրային որոշմամբ դեռևս 2014 թվականի դեկտեմբերի 4-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը: Միաժամանակ, հարկ է նշել, որ 2016-2022 թվականների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից ընդունվել են այլ իրավական ակտեր ու կանոնակարգեր ևս, որոնք այս կամ այն չափով կարևորում են երեխային բռնությունից զերծ պահելու երաշխիքները: Այդ իրավական ակտերն են.

- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն արձանագրային որոշումը:
- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» 2016 թվականի մարտի 10-ի N 9 արձանագրային որոշումը:
- «ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» 2016 թվականի մայիսի 12-ի N 18 արձանագրային որոշումը:

- «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 34 արձանագրային որոշումը:
- 2017 թվականի հուլիսի 13-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30 արձանագրային որոշումը:
- ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 432-L որոշումը:
- «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու մասին» կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշումը:
- Ծրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքն ընդունելու, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» նախագծերը:

Առաջարկություններ

- Մշակել բռնության ենթարկված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ուղենիշեր պարունակող միասնական ուղեցույց, որը ուղենիշային կլինի ինչպես պետական լիազորված մարմինների, այնպես էլ երեխաների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպությունների համար:
- Մշակել երեխաների կողմից իրենց նկատմամբ գործադրված բռնությունների մասին անձամբ հայտնելու և պաշտպանված լինելու հստակ երաշխավորված իրավական ու գործնական ընթացակարգեր:
- Սահմանել իրավական չափանիշներ երեխաներին խնամատար ու խնամակալ, ինչպես նաև որդեգիր ընտանիքներում, այդ թվում՝ օտարերկրյա որդեգրման դեպքերում, բռնությունից զերծ մնալու հավանականությունը գնահատելու

ուղղությամբ: Իրականացնել հատուկ վերապատրաստումներ այդ գործընթացների համար պատասխանատու պետական ու ոչ պետական կառույցների ներկայացուցիչների համար:

- Վիճակագրական տվյալների հավաքագրման տեսակետից գործարկել վարչական ռեգիստր՝ պատասխանատու բնության ենթարկված երեխաների տվյալների հավաքագրման համար՝ հնարավորինս մանրամասն ցուցիչներով (սեռ, տարիք, բնության սուբյեկտ, բնության վայր, բնության տեսակ, հաշմանդամության առկայություն և դրա տեսակ և այլն):*
- Իրականացնել դրական ծնողավարության դասընթացներ և հանրության շրջանում հետևողականորեն խրախուսել դրական ծնողավարությունը՝ որպես բնությունը կանխարգելող կարևորագույն միջոց,*
- Ուսումնասիրել կրթության համակարգում բնության դեպքերը և մշակել ընթացակարգ՝ հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների համար երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման նպատակով,*
- Երեխաներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ մանկապարտեզներում և դպրոցներում՝ հասարակագիտության դասընթացների շրջանակներում, ինչպես նաև այլ միջոցառումների ընթացքում:*

4. Վնասակար պրակտիկայի դրսևորումները

Կոմիտեն նշել է, որ եզրիական համայնքի աղջիկները հաճախ ամուսնանում են ավանդական արարողության շրջանակներում՝ նախքան ամուսնության օրինական տարիքի լրանալը:

Կոմիտեն առաջարկել է (կետ 28)՝

- ամուսնության բոլոր ձևերի համար լիարժեքորեն կիրարկել ամուսնանալու համար օրենքով սահմանված տարիքը,
- մշակել և իրականացնել իրազեկության բարձրացման համապարփակ ծրագրեր՝ նվիրված իգական սեռի երեխաների առողջության, կրթության և զարգացման իրավունքների վրա վաղ ամուսնության բացասական հետևանքներին՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ծնողներին և համայնքային առաջնորդներին:

Հայաստանի Հանրապետությունում ամուսնության հետ կապված իրավակարգավորումները այդ ակտի գրանցման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտանեկան օրենսգրքով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և

ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը՝ բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձն առնվազն 18 տարեկան է:

Մինչ 2013 ապրիլի 30-ին Ընտանեկան օրենսգրքում կատարված փոփոխությունը՝ ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ կանանց համար՝ տասնյոթ, իսկ տղամարդկանց համար տասնութ տարեկան տարիքի հասնելը Օրենսգրքում կատարվել է նշված փոփոխությունը, սակայն այն չի արտացոլում Կոմիտեի դիտարկումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վաղ ամուսնությունները երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառներից կարող են լինել՝ առանձին էթնիկ խմբերի դեպքում: Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի 2019 թվականի զեկույցի՝ հանրակրթությունից դուրս մնացած 367 երեխայից 196 դեպքերում՝ ծնողների՝ երեխային դպրոց չուղարկելը կամ թույլ չտալը¹⁴:

Ինչ վերաբերում է եզդիական համայնքի իգական սեռի ներկայացուցիչների ամուսնությանը, ապա թեև սոցիոէթնիկ որոշակի առանձնահատկություններից ելնելով, նման դեպքերը կարող են առկա լինել, սակայն կրում են լատենտային բնույթ՝ առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԶԿԱԳ ծառայության հաշվառման: Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հարցերով խորհրդում ներգրավված է նաև եզդի համայնքի ներկայացուցիչ:

Առաջարկություններ

- *Իրականացնել մեծածավալ ու հասանելի տեղեկատվական արշավներ ու միջոցառումներ՝ ուղղված սոցիո-էթնիկ տարբեր համայնքների կամ խմբերի ներկայացուցիչների շրջանում, ՀՀ օրենսդրության պահանջների և դրանց կիրարկման առանձնահատկությունների վերաբերյալ:*
- *Դեռահասների շրջանում վաղ ամուսնության դեպքերը կանխարգելելու նպատակով դպրոցականներ և ուսուցչական կազմի շրջանում կազմակերպել տեղեկատվական-մասնագիտական դասընթացներ:*

Դ. Ընտանեկան միջավայրը և այլընտրանքային խնամքը

(Կոնվենցիայի 5-րդ, 18-րդ (1-ին և 2-րդ կետեր), 9-11-րդ, 19-21-րդ, 25-րդ, 27-րդ (4-րդ կետ) և 39-րդ հոդվածներ)

1. Ընտանեկան միջավայրը և ընտանեկան միջավայրից զրկված երեխաները

Կոմիտեն ողջունել է երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգը, որը ստեղծվել է ազգային, մարզային և տեղական մակարդակներում, սակայն մտահոգիչ է համարել այն, որ տեղական մակարդակում երեխայի պաշտպանությունը, կարծես, հիմնականում իրականացվում է անհրաժեշտ որակավորում և մասնագիտական պատրաստվածություն չունեցող կամավորների կողմից, ինչպես նաև, որ դժվարությունների և երեխաների կրթության ծախսերը կամ տարրական կարիքները հոգալու անկարողության պատճառով որոշ ընտանիքներ ստիպված են լինում իրենց երեխաներին տեղավորել գիշերօթիկ դպրոցներ և մանկատներ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 30)`

- միջոցներ ձեռնարկել` տեղական մակարդակում երեխաների պաշտպանության գործին ներգրավելու երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների
- ավելացնել խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին, մասնավորապես` ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքներին ցուցաբերվող օժանդակությունը` համակարգված, երկարաժամկետ քաղաքականությունների և ծրագրերի միջոցով ապահովելով սոցիալական ծառայությունների և կայուն կերպով եկամուտներ վաստակելու հնարավորությունների հասանելիությունը նրանց համար
- արգելելու երեխաների տեղավորումը խնամքի հաստատություններում միայն ֆինանսական պատճառներով, ինչպես նաև` հաստատություններ տեղավորելը կիրառել միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում` երեխաների այլընտրանքային խնամքի մասին ՄԱԿ-ի կողմից 2009 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված ուղենիշներին համապատասխան
- ապահովել ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային բավարար տարբերակներ ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար
- ավելացնել համընդհանուր և հասցեական ծառայությունների տեսքով խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին ցուցաբերվող

օժանդակությունը՝ զարգացնելով նրանց ծնողավարման հմտությունները, և նրանց ներգրավելով սոցիալական աջակցության ծրագրերի մեջ

- ապահովել խնամքի հաստատություններում տեղավորելը միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում, ինչպես նաև՝ համարժեք երաշխիքների և կարիքների վրա և երեխայի լավագույն շահերի վրա հիմնված հստակ չափորոշիչների կիրառությունը երեխային խնամքի հաստատությունում տեղավորելու նպատակահարմարությունը որոշելու համար, և առավելագույն օժանդակություն ցուցաբերել հաստատություններից դուրս եկող երեխաներին ուսման և/կամ աշխատանքի հնարավորություններ գտնելու հարցում, ինչպես նաև նրանց համար ապահովել համարժեք կացարան

Ըստ «Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ախտորոշում» աշխատության⁷³՝ Հայաստանի բնակչության մեկ քառորդը և երեխաների մեկ երրորդն ապրում են աղքատության մեջ: Թեև աղքատության մակարդակը նվազում է, սակայն այն շարունակում է մնալ ամենաբարձրերից մեկը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) երկրների շրջանում: Ավելին, 2010-2015 թվականներին աղքատությունը հաղթահարած յուրաքանչյուր 3 անձանցից մեկը կրկին հայտնվել է աղքատության մեջ: Բնակչության որոշ խմբեր, ինչպիսիք են մանկահասակ երեխաները, երեք կամ ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները և կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, հատկապես խոցելի են աղքատության նկատմամբ Աղքատությունը բազմաչափ երևույթ է և տարբեր կերպ է դրսևորվում՝ շոշափելով կյանքի տարբեր կողմերը, ինչպիսիք են սպառումը, պարենային ապահովությունը, առողջապահությունը, կրթությունը, պաշտպանությունը, անվտանգությունը, արժանապատվության իրավունքը և արժանապատիվ աշխատանքը:

Սոցիալական պաշտպանության ոլորտի կարևոր բարեփոխումներից մեկը ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումն է:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, սոցիալական աջակցության շրջանակներում նրանց կողմից իրականացվող գործառույթների (լիազորությունների) և միջոցառումների ամբողջությունն է: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը համագործակցության

⁷³ Տե՛ս

<https://www.unicef.org/armenia/media/9301/file/%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%AB%20%D5%AD%D5%B8%D6%80%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%A1%D5%AD%D5%BF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4.pdf> հղումով:

ապահովման միջոցով կանխարգելում է անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, վերացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համակարգի բարելավումը սոցիալական աջակցության ոլորտի ծրագրերից մեկն է, որի նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելն է: Այս նպաստների նշանակումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա: Ըստ ՀՀ ԱՍՐՆ կողմից «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցի շրջանակներում տրամադրված պաշտոնական տեղեկատվության՝ ծրագրի ծածկույթը կազմել է բնակչության շուրջ 14 %-ը, իսկ երեխաների դեպքում՝ շուրջ 24 %:

Սույն զեկույցի կազմման աշխատանքների շրջանակներում նույն նախարարության տվյալների համաձայն՝ 2015-2020թթ. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում փաստագրված, ինչպես նաև նպաստառու ընտանիքների քանակն անընդհատ նվազել է, ինչը պայմանավորված է եղել այդ ընթացքում աղքատության մակարդակի նվազմամբ (բացառությամբ 2020թ-ի աղքատության մակարդակի): Համակարգում փաստագրված ընտանիքների գերակշիռ մասը նպաստառու է՝ փաստագրվածների թվում նպաստառու ընտանիքների մասնաբաժինը 2015-2020թթ. ընթացքում պահպանվել է 77-86 տոկոսի սահմաններում:

2019 թվականին աղքատ է եղել Հայաստանի Հանրապետության բնակչության 26.4 տոկոսը (ըստ աղքատության միջին գծի՝ ամսական 44,048 դրամ), այդ թվում ծայրահեղ կամ պարենային աղքատ՝ 1.4 տոկոսը (ըստ աղքատության պարենային գծի՝ ամսական 23,763 դրամ): Նպաստառու է եղել ՀՀ բնակչության 12.6, իսկ ընտանիքների՝ 11.6 տոկոսը: Նպաստառու է եղել նախքան նպաստ ստանալը աղքատ ընտանիքների ընդամենը 32 տոկոսը, այդ թվում ծայրահեղ աղքատ ընտանիքների՝ 80.9 տոկոսը: Նպաստառու ընտանիքների թվում նախքան նպաստ ստանալը աղքատ է եղել 65.3 տոկոսը (իսկ բնակչության 71.9 տոկոսը), այդ թվում՝ ծայրահեղ աղքատ է եղել 19.9 տոկոսը (իսկ բնակչության 23.9 տոկոսը): Մյուս կողմից նպաստառու ընտանիքների 34.7 տոկոսը (իսկ բնակչության 28.1 տոկոսը) նույնիսկ նախքան նպաստ ստանալը եղել է ըստ սպառման ազդեցատի ոչ աղքատ, **ինչը համակարգի հասցեականության՝ ներառման խնդիրն է մատնանշում:**

Ըստ ԱՍՐՆ-ի Աղքատության կրճատման առումով ԸԿԲՈՒՆ-ի ազդեցությունը բավականին ցածր է, իսկ ծայրահեղ աղքատության կրճատման առումով՝ բարձր: **Այնուամենայնիվ, ծայրահեղ աղքատ բնակչության 37 տոկոսը նպաստառու լինելու պայմաններում մնացել է ծայրահեղ աղքատ, ինչն էլ նշում է գործող համակարգի անարդյունավետության խնդիրը:**

Նախարարության տվյալներով, երեխաների շրջանում աղքատության, այդ թվում նաև ծայրահեղ աղքատության մակարդակը Հայաստանում մշտապես բարձր է եղել բնակչության շրջանում աղքատության միջին մակարդակից: 2019թ. աղքատ է եղել 0-18 տարեկան երեխաների 33.6 տոկոսը, այդ թվում ծայրահեղ աղքատ՝ 2.3 տոկոսը: Նպաստառու է եղել 0-18 տարեկանների 22.5 տոկոսը: Նպաստառու երեխաների քանակը փոքր է եղել աղքատ երեխաների քանակից՝ կազմելով դրանց 67 տոկոսը, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների քանակին գերազանցել է 9.8 անգամ: Նպաստառու երեխաների թվում նախքան նպաստ ստանալը աղքատ է եղել 74.9 տոկոսը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատ է եղել 27.2 տոկոսը: Այսպիսով, գործող ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ԸԿԲՈՒՆ) հասցեականությունը՝ ըստ սպառման ագրեգատի ծայրահեղ աղքատ 0-18 տարեկան երեխաների նկատմամբ 2019թ. կազմել է ընդամենը 27.2 տոկոս: Նպաստառու երեխաների 25.1 տոկոսը նույնիսկ նախքան նպաստ ստանալը եղել է ըստ սպառման ագրեգատի ոչ աղքատ, ինչը համակարգի ներառման սխալն է՝ երեխաների համար: Նպաստների հասցեականությունը երեխաների նկատմամբ փոքր-ինչ բարձր է ընդհանուր բնակչության նկատմամբ եղած հասցեականությունից՝ այնուամենայնիվ մնալով ընդհանուր առմամբ ոչ բարձր: Եթե 2019 թ. ՀՀ երեխաները ԸԿԲՈՒՆ չստանային՝ ըստ աղքատության միջին գծի աղքատության մակարդակը նրանց շրջանում կաճեր շուրջ 13.4 տոկոսով և փաստացի 33.6 տոկոսից կհասներ 38.1 տոկոսի, այդ թվում ծայրահեղ աղքատության մակարդակը կաճեր 3 անգամ և փաստացի 2.3 տոկոսից կհասներ 7.1 տոկոսի: Այսինքն, երեխաների շրջանում ԸԿԲՈՒՆ ազդեցությունը ևս փոքր-ինչ բարձր է ընդհանուր բնակչության նկատմամբ ունեցած ազդեցությունից:

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթ թիրախը ծայրահեղ աղքատ բնակչությունն է: Սոցիալական աջակցության ծրագրերն ավելի հասցեական դարձնելու և շահառուների սոցիալ-տնտեսական ակտիվությունը խրախուսելու նպատակով ներկայումս վերանայվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը՝ ծայրահեղ աղքատներին պարենային զամբյուղով ապահովելու համար: Ըստ ԱՄՀՆ-ի՝ հասցեականությունն ուղղված է ծայրահեղ աղքատների առավելագույն ներգրավվածությանը անապահովության նպաստների համակարգում՝ երկրում ծայրահեղ աղքատության վերացման նպատակով: **Անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմամբ նախատեսվում է ընտանիքներին դուրս բերել աղքատությունից՝ զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փոխարին հաղթահարման մոդելների կիրառմամբ:**

Սոցիալապես անապահով ընտանիքների համար ինքնուրույնաբար կայուն եկամուտի ձևավորման իրական հնարավորությունների ստեղծման և դեպի պետական նպաստն առկա ձգտումների առավելագույնս խթանման նպատակով վերանայվել է ընտանիքների անապահովության գնահատման կարգը: Նոր կարգում հնարավորինս ներառվել են տնտեսապես ակտիվ անձանց աշխատանքի շուկայում ունեցած

վարքագծի գնահատականները՝ դրանով խթանելով աշխատանքային գործունեություն ծավալելու իրենց ցանկությունը: Ավելացել է երեխա ունեցող ընտանիքների անապահովության գնահատման հարցում երեխաների առկայության հանգամանքի կշիռը՝ դիտարկելով նման ընտանիքներին աղքատության տեսանկյունից ավելի ռիսկային:

Քանի որ սույն զեկույցը ընդգրկում է 2013-ից 2022 թվականները, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ԱՍՀՆ ներկայացրած տվյալների համաձայն՝ նախարարության ենթակայության՝ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ խնամվել է 1044 երեխա, այդ թվում՝ մանկատանը խնամվում է 632 երեխա, գիշերօթիկում՝ 412, նրանցից 379-ն առնվազն ունի մեկ ծնող՝ մանկատանը՝ 222, գիշերօթիկում՝ 157: Հարկ է նշել, որ 2022 թվականին շուրջօրյա խնամքի ծառայություններում խնամվել է 601 երեխա, խնամատար ընտանիքում՝ 95, ցերեկային խնամքի ծառայություններ են ստացել 600 երեխա:

Ըստ առկա պաշտոնական տվյալների՝ ՀՀ կառավարության 2019 թ. հոկտեմբերի 31-ի N 1507-Ն որոշման համաձայն լուծարվել են հետևյալ ՊՈԱԿ-ները՝ «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն», «Վանաձորի մանկատուն»: 2020 թ. նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարության N 1878 որոշմամբ «Գյումրի քաղաքի երեխաների հոգածության սոցիալական կենտրոն» և «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, որն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2021 թ. հունիսի 1-ից՝ իրականացնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 100 երեխայի ցերեկային խնամք և 0-18 տարեկան 60 երեխայի շուրջօրյա կարճաժամկետ խնամք:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 14-ի N 37 որոշմամբ ստեղծվել է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի գործունեությունը մեկնարկել է ս.թ. մայիսի 1-ից: Համաձայն հաստատության կանոնադրության՝ ցերեկային խնամքի բաղադրիչով խնամք են ստանում 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 100 երեխա, կարճաժամկետ շուրջօրյա խնամք է տրամադրվում 0-18 տարեկան 40 երեխայի: Երեխաների շուրջօրյա խնամքը՝ անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է նաև խնամողի հետ:

2021 թվականի մայիսի 1-ից գործում է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, իսկ հունիսի 1-ից՝ «Շիրակի մարզի երեխայի և

ընտանիքի աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ը, ինչպես նաև Երևանում՝ «Երևանի «Չատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Կենտրոնների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Նախարարությունը մի շարք կազմակերպությունների հետ՝ այդ թվում «Կորլդ Վիժն Ջայաստան բարեգործական կազմակերպության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ՝ իրականացնում է աշխատանքներ՝ մասնավորապես կահավորման, մասնագիտական գույքով հագեցման, ինչպես նաև մասնագետների գիտելիքների և կարողությունների հզորացման ուղղությամբ: Ներկա դրությամբ Նախարարության ենթակայության երեխաների խնամքի հաստատությունների վերակազմակերպում կամ լուծարում չի նախատեսվում:

Ապահովագրության քաղաքականության շրջանակներում պետության կողմից 2021 թվականին ձեռնարկվել են որոշ միջոցներ ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովման ուղղությամբ, սակայն տվյալ գործընթացում արձանագրված խնդրահարույց հարցերը շարունակում են մնալ արդիական:

Ջայաստանի Ջանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրով ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովումը դիտարկվել է որպես առաջնահերթություն:

Ապահովագրության քաղաքականությունը պետք է հիմնված լինի ցանկացած իրավիճակում երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու, յուրաքանչյուր երեխայի կարիքների գնահատման հիման վրա նրա կարիքներին անհատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության վրա:

Որպես առաջնահերթություն՝ պետք է դիտարկել երեխայի խնամքն իր կենսաբանական ընտանիքում կազմակերպելն ապահովելու հարցը: Դրա անհնարինության պարագայում պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի երեխայի խնամքն ընտանիքահեն, համայնքահեն միջավայրում կազմակերպելու համար՝ նրան այլընտրանքային խնամքով (խնամակալություն, խնամատարություն, որդեգրում) ապահովելու միջոցով:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների տեղավորումը պետության կողմից պետք է դիտարկվի միայն որպես վերջին, ծայրահեղ միջոց՝ միայն վերը թվարկված միջոցներով երեխայի խնամքը կազմակերպելու անհնարինությամբ պայմանավորված:

Պետության առաջնահերթություններից պետք է լինի երեխայի՝ իր ընտանիքի հետ հնարավոր վերամիավորմանն ուղղված գործունե միջոցների ձեռնարկումը, այդ թվում՝ դրական ծնողավարության դասընթացների կազմակերպման, երեխաներին և նրանց ընտանիքներին բնաիրային, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրելու միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանի առանձնահատուկ ուշադրության ներքո է գտնվում ապահովագրության քաղաքական արդյունքում ընտանիք վերադարձած

երեխաների խնամքի պայմանների, նրանց կրթություն ստանալու, անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու, ինչպես նաև այլ իրավունքների իրացման հարցը, որի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվում է հատուկ մշտադիտարկում:

Ապահաստիտուցիոնալացման արդյունքում ընտանիք վերադարձած երեխաների իրավունքների պատշաճ իրացման ապահովումը պետք է հատուկ ուշադրության արժանանա պետության կողմից, այդ թվում՝ պատշաճ վերահսկողություն իրականացնելու և ընտանիքներին անհրաժեշտ աջակցություն տրամադրելու միջոցով: Վերահսկողությունն իրականացնելիս պետք է հաշվի առնել այն, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից ընտանիք վերադարձած երեխաներն առավել խոցելի են և հաճախ են խնդիրների, խոչընդոտների հանդիպում իրենց իրավունքներն իրացնելիս: Այս առումով անհրաժեշտ է հատուկ աշխատանք րականացնել երեխաների ընտանիքի անդամների հետ:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի ընթացքում ևս իրականացրել է ապահաստիտուցիոնալացման գործընթացի, ընտանիք վերադարձած երեխաների իրավունքների իրացման մշտադիտարկում: Մշտադիտարկումն իրականացվել է նաև համապատասխան այցեր (այդ թվում՝ ընտանիք վերադարձած երեխաների բնակության վայր) իրականացնելու և առկա վիճակը, այդ թվում՝ խնդիրները, տեղում արձանագրելու միջոցով:

Ընտանիք վերադարձած երեխաների բնակության վայր իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ երեխայի ընտանիք վերադառնալուց հետո հիմնական խնդիրները, որոնց բախվում են երեխաներն ու ընտանիքի անդամները կապված են ընտանիքի սոցիալական ծանր պայմաններում գտնվելու, երեխայի ծնողների (ծնողի) աշխատանք չունենալու (հիմնականում՝ կրթություն չունենալու, առողջական խնդիրներ ունենալու պատճառով), ինչպես նաև ծնողների մոտ ծնողավարման հմտությունների պակասի կամ բացակայության հետ:

Ընդ որում, վերը նշված խնդիրների մասին այցերի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են հենց ծնողները

Վերոգրյալը հերթական հաստատումն է նրա, որ ապահաստիտուցիոնալացման գործընթացում պետությունն ավելի մեծ ջանքեր պետք է ներդնի և առավել գործունե միջոցներ ձեռնարկի ընտանիք վերադարձած երեխաների ծնողների (ծնողի) ծնողավարման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց աշխատանքով ապահովելու նպատակով մասնագիտական հմտություններ սովորեցնելու կամ ունեցած կարողությունները զարգացնելու ուղղությամբ:

Կարևոր է նաև սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալներն ընդլայնելը, այդ թվում՝ աջակցության նոր ծրագրեր մշակելու և դրանց կենսագործումն ապահովելու միջոցով:

ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշմամբ սահմանվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև կարգավորվում են այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հետ կապված հարաբերությունները: Այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի տրամադրման նպատակով ուղղորդումն իրականացվում է հիմնականում հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելու առաջնահերթությունը՝ այլընտրանքային խնամքի տրամադրումը դիտելով որպես տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ, սակայն պարտադրված միջոց, իսկ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի ճգնաժամային բաղադրիչում տեղավորելը՝ որպես ժամանակավոր լուծում:

2) երեխայի համար նրա համակողմանի զարգացմանը նպաստող, աջակցող, պաշտպանող և խնամք ապահովող մթնոլորտի և կյանքի պայմանների ապահովում:

3) տարբեր գործոններով պայմանավորված՝ երեխայի խնամքն իր կենսաբանական ընտանիքում ապահովելու անհնարինության դեպքում, երեխայի խնամքն այլընտրանքային խնամքի ընտանեկան տիպի որևէ տեսակի (որդեգրում, խնամակալություն կամ հոգաբարձություն, խնամատար ընտանիք, երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի ճգնաժամային բաղադրիչ) միջոցով կազմակերպումը:

4) երեխայի անհատական կարիքներին ու լավագույն շահին առավելագույն համապատասխանող այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքը կազմակերպելու վերաբերյալ որոշման (այսուհետ՝ այլընտրանքային խնամքի որոշում) ընդունում միայն երեխայի կարիքների համակողմանի գնահատման, ինչպես նաև այլընտրանքային խնամքի տարբեր տեսակներից յուրաքանչյուրի հնարավորության ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա:

5) այլընտրանքային խնամքի հետագա շարունակման հնարավորության և նախընտրելիության, այլընտրանքային խնամքի որոշման արդյունավետության, ինչպես նաև երեխայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորվելու հնարավորության գնահատում՝ երեխայի այլընտրանքային խնամքի պարբերական մշտադիտարկման հիման վրա:

6) երեխային, միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից երկարաժամկետ բաժանելու և այլընտրանքային խնամքի տեղավորելու գործելակերպի բացառումը: Սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով երեխային ժամանակավորապես կարելի է բաժանել կենսաբանական ընտանիքից, եթե այդ

պայմաններն ակնհայտորեն սպառնում են նրա կյանքին, ֆիզիկական և հոգեկան առողջությանը.

7) երեխայի նկատմամբ այլընտրանքային խնամքի տրամադրման վերաբերյալ որոշման ընդունում երեխայի ֆիզիկական ու հոգեբանական անվտանգության ապահովման հնարավորությունների, երեխայի տարիքի, հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունների, հուզական կապերի, շփման և հաղորդակցության ունակությունների, այլընտրանքային խնամքն ստանձնող ընտանիքի կամ ֆիզիկական անձի բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների, խնամքն ստանձնող անձանց մարդկային որակների, ծնողավարման հմտությունների, երեխայի առանձնահատուկ կարիքների, ինչպես նաև երեխայի պահանջմունքների՝ կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում հնարավոր փոփոխությունների պարտադիր հաշվառման հիման վրա.

8) երեխային այլընտրանքային խնամքի տրամադրման վերաբերյալ որոշումների ճկունություն, որը ենթադրում է, որ այդ որոշումները պետք է պարբերաբար վերանայվեն, եթե երեխայի համար այլընտրանքային խնամքի սահմանման հիմնական պատճառները փոփոխվել կամ վերացել են:

Այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հիմքում ընկած են հետևյալ չափորոշիչները՝

1) այլընտրանքային խնամքի որոշում ընդունելիս երեխայի կարծիքը հաշվի է առնվում երեխայի տարիքին և հասունության աստիճանին համապատասխան (Հատկանշական է, որ այս կետը փոփոխվել է ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1486-Ն որոշմամբ⁷⁴, նախկինում նշված էր տասը տարեկան լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելու հանգամանքը)

2) այլընտրանքային խնամքի վերաբերյալ որոշման ընդունման գործընթացում սոցիալական աշխատողի, հոգեբանի, սոցիալական և հատուկ մանկավարժների, իրավաբանի և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող այլ մասնագետների ներգրավում.

3) կենսաբանական ընտանիքից դուրս բերելու անհրաժեշտության դեպքում 0-3 տարեկան երեխաների խնամքի կազմակերպում ընտանեկան տիպի խնամքի որևէ տեսակում, իսկ անհնարինության դեպքում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում (մինչև 2026 թվականը)⁷⁵.

4) միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով երեխային իր կենսաբանական ընտանիքից բաժանման դեպքում այլընտրանքային խնամքի տրամադրման տևողությունը չպետք է գերազանցի 6 ամիս ժամանակահատվածը.

5) բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում տեղավորված երեխաների վիճակի ամենամյա հետազոտություն՝ վերջիններիս խնամքը ընտանեկան տիպի

⁷⁴ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=168914> հղումով:

⁷⁵ Այս կետը 02.04.20 N 470-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության խմբագրությամբ ուժի մեջ կմտնի 2026 թվականի հունվարի 1-ից:

այլընտրանքային խնամքի որևէ այլ տեսակով կազմակերպելու հնարավորությունները գնահատելու նպատակով.

6) երեխայի այլընտրանքային խնամքի կազմակերպում նրա ծագման համայնքին հնարավորինս մոտ (բացառությամբ՝ որդեգրման և (կամ) ազգականների խնամակալության (հոգաբարձության) հանձնելու դեպքերի).

7) երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի ճգնաժամային բաղադրիչում տեղավորված երեխաների՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու հնարավորության բացառման դեպքում խնամքը կազմակերպել հետևյալ առաջնահերթությամբ՝ որդեգրման հնարավորության դեպքում՝ որդեգրում, խնամակալի, հոգաբարձուի, խնամատարի ընտանիք, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն:

Ըստ ԱՄՆ-ի տվյալների՝ գործող պետական շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններից 2018 թվականին վերամիավորվել են 45, 2019թ.՝ 46, 2020թ.՝ 47, 2021թ.՝ 58, 2022թ.՝ 56 երեխա: Ընտանիքների հետ վերամիավորված երեխաներին կարիքահեն աջակցություն է տրամադրվել Վորլդ Վիժն Յայաստան ԲՅԿ-ի, ՍՕՍ մանկական գյուղեր Յայաստան հիմնադրամի հետ համագործակցությամբ, ընտանիքներին աջակցություն է տրամադրվում նաև մարզպետարանների կողմից, ըստ անհրաժեշտության ընտանիքներն ընդգրկվում են նաև պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայություններում: ՅՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի հետ համագործակցությամբ, ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել առնվազն 20 ընտանիքի կարիքների խորքային գնահատում, որից ցածր ռիսկային գոտում գտնվող 10 ընտանիքների համար կիրականացվի ամրապնդման ծրագիր և այդ ընտանիքների երեխաների վերամիավորում:

ՅՅ ԱՄՆ-ն հաշվի է առել հաշմանդամություն ունեցող երեխաների վերամիավորման գործընթացի ցածր տեմպերը՝ Նախարարության կողմից ՅՅ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորման ծրագրային առաջարկություն, որն ընդունվել է ի գիտություն: 2022 թվականի դեկտեմբեր ամսվա տվյալներով՝ մշակվում է այդ ծրագրի ֆինանսական գնահատականը՝ ՅՅ վարչապետի աշխատակազմ լրացուցիչ ներկայացնելու նպատակով: 2022 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ 3 մասնագիտացված շուրջօրյա խնամքի հաստատությունների շուրջ 24 երեխաների և նրանց ընտանիքների կարիքների խորքային գնահատման գործընթացն ավարտվել է և արդյունքները գտնվում են ամփոփման փուլում:

ՅՅ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ, ի թիվս այլ հարցերի կարգավորված է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ երեխաների ուղեգրումը: ՅՅ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ⁷⁶ ի

⁷⁶ Մինչ այդ գործում էր 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշմամբ հաստատված կարգը:

թիվս այլ հարցերի կարգավորված է երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը և այլն:

Երեխաների՝ հաստատություն տեղավորվելը հաճախ կատարվում է հենց կենսաբանական ծնողների նախաձեռնությամբ: Օրինակ՝ ծնողները, երեխայի հաշմանդամություն ունենալու, ընտանիքի սոցիալական անապահով լինելու, ինչպես նաև արտագնա աշխատանքի կամ այլ հիմնավորմամբ, ժամանակավորապես հրաժարվում են իրենց երեխային խնամելուց, ինչի արդյունքում երեխան տեղավորվում է հաստատություն: Ծնողի կողմից երեխայից հրաժարվելը կարգավորվում է որդեգրման հարաբերություններում: Ըստ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 118-րդ հոդվածի՝ ծնողների գրավոր հրաժարումը՝ երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից կամ ծնողի գրավոր համաձայնությունը՝ երեխային որդեգրման տալու վերաբերյալ:

Տարածված է նաև հետևյալ պրակտիկան. ծնողը չի հրաժարվում երեխայից, իսկ վերջինս որպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա հայտնվում է հաստատությունում, որի արդյունքում չի կարող ոչ որդեգրվել, ոչ էլ տեղավորվել խնամատար ընտանիք: Ծնողը պարբերաբար հայտնում է երեխայի խնամքով զբաղվելու իր ցանկության մասին և դրանով կանխում երեխայի կարգավիճակի հստակեցումը: Լինում են նաև դեպքեր, երբ ծնողը, ըստ էության, չի խուսափում երեխայի խնամքից և դաստիարակությունից, սակայն ելնելով սոցիալական պայմաններից, աշխատանքային զբաղվածությունից և այլն, չի կարողանում ապահովել երեխայի խնամքը և այս դեպքում ևս այլընտրանք այլ կարգավիճակ և համապատասխանաբար դրանից բխող ընթացակարգեր և ծառայություններ չլինելու պատճառով՝ երեխան ճանաչվում է ԱԾԽՄ և հիմնականում տվյալ դեպքերում ուղղորդվում է հաստատություն:

Այս առումով հատկանշական է, որ գործող Ընտանեկան օրենսգրքի. <<Ընտանեկան օրենսդրությունը սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու ձևերն ու կարգը>> վերտառությամբ 2-րդ հոդվածի սահմանումից նախատեսվում է հանել <<առանց ծնողական խնամքի մնացած երեխաների>> եզրույթը՝ փոխարինելով <<կյանքի դժվարին իրավիճակում հայտնված>> բառերով:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգն ու չափորոշիչներն հաստատվել են ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26 N 551-Ն որոշմամբ:

Ըստ ԱՄՆ տվյալների՝ ԱՄՆ ՄԳԳ D4I ծրագրի շրջանակներում մշակվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման նոր տեղեկատվական

համակարգի նախատիպը, որը պարունակում է որդեգրման գործընթացի կազմակերպմանն ուղղված առանձին մեծ բաղադրիչ:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատվել է նաև բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններից երեխայի դուրսգրման կարգը, ըստ որի Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխան՝ մինչև 18 տարին լրանալը, կարող է դուրս գրվել՝

- 1) նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ՝
- 2) որդեգրման հանձնելու, կամ՝
- 3) բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպություն տեղափոխվելու, կամ՝
- 4) խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնելու կամ՝
- 5) այլ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելու և նրա ընտանիքում տեղավորվելու դեպքում կամ՝
- 6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Նշված կարգի 63-րդ կետի համաձայն՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխան կենսաբանական ընտանիք է վերադարձվում երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի և ընտանիքի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացության հիման վրա, որից մեկական օրինակներ ուղարկվում են նաև լիազորված պետական մարմին և ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին»:
Այստեղից հետևում է, որ երեխայի դուրսգրման համար անհրաժեշտ է հետևյալ հիմքերի միաժամանակյա առկայությունը՝

1. երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմում.
2. ընտանիքի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացություն:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով⁷⁷ հաստատված ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրության 8-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված է, որ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային

⁷⁷ «Գրանցված է» ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23 դեկտեմբերի 2015 թ., պետական գրանցման թիվ 11515502

կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում, կատարած ուսումնասիրության արդյունքում տալիս է համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական)՝ դրա մեկական օրինակներն ուղարկելով նաև նախարարությանը և տվյալ ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 3-ի N 54-Ն հրամանի 4-րդ հավելվածով հաստատվել է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխայի՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու համար տրվող եզրակացության ձևը:

Այսպիսով, ժամկետներ սահմանված չեն ուսումնասիրության և եզրակացության կազմման համար: Եզրակացության հաստատված ձևի ուսումնասիրությունից պարզ չէ բացասական եզրակացություն կայացնելու հնարավորությունը, չնայած, որ այն նախատեսված է: Եզրակացություն տալու չափորոշիչներ նույնպես բացակայում են: Ակնհայտ է, որ երեխան վերադարձվում է ընտանիք, եթե տրվել է դրական եզրակացություն (ենթադրվում է, որ դիմում տալու պահին վերացել են ծնողից երեխային անջատելու հիմքերը, ծնողական իրավունքների սահմանափակում, զրկում և այլն), սակայն բացասական եզրակացություն տալու դեպքում մի շարք խնդիրներ կարող են առաջանալ, որոնք կրկին առաջ են բերում նախորդ պարբերություններում անդրադարձած երեխային ծնողից անջատելու իրավական հիմնավորումների և ընթացակարգերի բախման:

Քանի որ բացասական եզրակացություն տալու համար կրկին անհրաժեշտ է լինելու հաստատել ծնողական իրավունքների առնվազն սահմանափակում և գործընթացը չի կարող սահմանափակվել միայն բացասական եզրակացությամբ: Առաջ է գալիս նաև բացասական եզրակացությունը վիճարկելու ծնողի իրավասություն և վիճարկման ընթացակարգի անհրաժեշտություն, ինչը ևս կարգավորման կարիք ունի: Նշվածի վերաբերյալ արձանագրվել են դեպքեր, երբ Պաշտպանին ուղղված բողոքներով նշվել է քննարկվող եզրակացության հաճախ չհիմնավորված կամ գործընթացի անհիմն երկարացված լինելու մասին:

2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է երեխաների խնամքի ու պաշտպանության այլընտրանքային ձևերից մեկի՝ խնամատար ընտանիքի ինստիտուտը: 2017-2022 թվականների դեկտեմբերի դրությամբ խնամատար ընտանիքում խնամք ստացող երեխաների թվի պատկերն հետևյալն է.

	2017	2018	2019	2020	2021	2022
Հոգեզավակների թիվը	25	94	94	94	125	123

Այդ ուղղությամբ Էական ու համակարգային առաջընթաց ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի մարտի 10-ին N 9 արձանագրային որոշմամբ հավանություն էր տվել «Կյանքի

դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին»:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ խնամքի ձևի ընտրությունը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է ԱԾԽՄ երեխաների իրավունքների պաշտպանությունը և նրանց նկատմամբ խնամքի ընտրվող ձևերն ու առաջնահերթությունը: Օրենսգրքի 111-րդ հոդվածը սահմանում է, որ Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են որդեգրման կամ խնամակալության (հոգաբարձության) միջոցով կամ խնամատար ընտանիքում, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ դաստիարակչական, բժշկական հաստատությունում, բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություններում կամ բնակչության կամ երեխայի սոցիալական պաշտպանության նպատակ հետապնդող այլ կազմակերպություններում: Երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելիս պետք է հաշվի առնվեն նրա Էթնիկական ծագումը, որոշակի կրոնական ու մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, դաստիարակության ու կրթության գործում հաջորդականությունն ապահովելու հնարավորությունները: Այլ իրավական ակտերով սահմանված են կոնկրետ խնամքի ձև ընտրության կարգերը:

Հատկանշական է, որ շրջանառվող օրենսդրական փոփոխությունների համաձայն առաջարկվում է՝ Օրենսգրքի 109-րդ հոդվածում՝ 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Երեխայի պաշտպանության ոլորտում խնամակալության և հոգաբարձության մարմինների լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:» և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս՝ «3. Բացի խնամակալության և հոգաբարձության մարմիններից առանց ծնողական խնամքի մնացած և այլընտրանքային խնամքի կարիք ունեցող այլ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնում են պետական կառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում, ինչպես նաև մասնավոր և հասարակական կազմակերպությունները: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն իրականացնող մարմինների և կազմակերպությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը:»: Նախատեսվում է նաև Օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև այլընտրանքային խնամքի կարիք ունեցող այլ երեխաների դեպքերի բացահայտման հիմնական պատասխանատուն համայնքի սոցիալական աշխատողն է, ում այդ հարցում աջակցում են նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ հաստատությունները և դրանց պաշտոնատար անձինք: Սույն մասում նշված կազմակերպությունների պաշտոնատար այն անձինք, որոնք տեղեկություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած կամ

այլընտրանքային խնամքի կարիք ունեցող այլ երեխայի մասին, պարտավոր են այն պահից, երբ նրանց հայտնի է դարձել այդ տեղեկատվությունը, անհապաղ այն հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ ըստ երեխայի փաստացի գտնվելու վայրի:» Նախագծով սահմանված է՝ 110-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1.-ին մաս՝ «1.1. Առանց ծնողական խնամքի մնացած կամ այլընտրանքային խնամքի կարիք ունեցող այլ երեխա բացահայտելիս խնամակալության և հոգաբարձության մարմնին անհապաղ իրականացնում է այլընտրանքային խնամքի կարիք ունեցող երեխայի և ընտանիքի նախնական գնահատում և դեպքի ուսումնասիրություն:»: Գովելի է նաև, որ Նախագծով հանվել է «դաստիարակչական կազմակերպություն» վերտառությամբ եզրույթը, որն ինքնին արդեն խտրական է և համահունչ չէ ԵԻԿ-ի սկզբունքներին:

Այսպիսով, Կոմիտեի առաջարկները կատարվել են մասամբ:

Առաջարկություններ

- *Ընդունել վերոշարադրյալ՝ երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերը:*
- *Չստակեցնել յուրաքանչյուր մարմնի իրավունքներն ու պարտականությունները դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների խնամքի տրամադրման գործընթացում՝ բացառելով դրանց կրկնությունները և անհստակությունները:*
- *Բացառել ողջամիտ ժամկետներից ավելի երեխաների ժամանակավոր բնակությունը հաստատություններում՝ իրականացնելով կոնկրետ աշխատանքներ երեխայի ընտանիք վերադարձնելու ուղղությամբ՝ յուրաքանչյուր երեխայի դեպքում կազմելով ընտանիքի հետ աշխատանքի պլան,*
- *կարիքների գնահատման հիման վրա անհատական մոտեցում ցուցաբերել և անհրաժեշտ աջակցություն (այդ թվում՝ ֆինանսական, բնաիրային, սոցիալ-հոգեբանական աջակցություն) տրամադրել ընտանիք վերադարձած երեխաներին, նրանց ընտանիքներին,*
- *ձեռնարկել գործուն միջոցներ՝ ուղղված հաստատություններից ընտանիք վերադարձած երեխաների ծնողների (ծնողի) ծնողավարման հմտությունները զարգացնելուն, ինչպես նաև նրանց աշխատանքով ապահովելու նպատակով մասնագիտական հմտություններ սովորեցնելուն կամ ունեցած կարողությունները զարգացնելուն,*
- *իրականացնել հաստատությունների վերակազմակերպման արդյունքում ընտանիք վերադարձած երեխաների խնամքի պայմանների, նրանց իրավունքների (այդ թվում՝ կրթություն ստանալու, անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքների) պատշաճ իրացման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,*

- *ավելացնել խնամատար ընտանիքների թիվը, ինչպես նաև խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձանց և խնամատար ծնողների հետ պարբերաբար իրականացնել վերապատրաստումներ,*
- *ձևավորել խնամատար ընտանիքների գնահատման գործընթացում միջգերատեսչական համագործակցության արդյունավետ մեխանիզմներ՝ բացառելով խնամատար ընտանիքի ընտրությունը միայն մեկ կառույցի կողմից,*
- *բացառել է միայն ֆինանսական պատճառներով երեխաների դուրսբերումը ընտանիքից:*

2. Որդեգրումը

Կոմիտեն ողջունել է Ընտանեկան օրենսգրքում որդեգրման ընթացակարգերի 2010 թվականի փոփոխությունները, ինչպես նաև «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի թիվ 33 կոնվենցիայի վավերացումը: Այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգություն է հայտնել դրանց իրագործման թերությունների առկայությամբ: Մասնավորապես, Կոմիտեին մտահոգել են, որ

- 1) Որդեգրման գործընթացի մշտադիտարկումը և վերանայումը կենտրոնացված չեն և իրականացվում են մարզային մակարդակով՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների կողմից, մինչդեռ որոշումները կայացվում են տեղական դատարանների կողմից,
- 2) որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա,
- 3) որդեգրման գործընթացին մասնակցող սուբյեկտների մասնավոր գաղտնիքի պաշտպանությունն օգտագործվում է որպես հիմք՝ որդեգրման գործընթացի մշտադիտարկման սահմանափակումներն արդարացնելու նպատակով:

Կոմիտեն առաջարկել է (կետ 34)՝

ստեղծել արդյունավետ մեխանիզմներ Հաագայի թիվ 33 կոնվենցիայի և որդեգրման 2010 թվականի կարգի կատարումն ապահովելու ուղղությամբ, մասնավորապես՝

- ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված համակարգ,
- սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն ոչ միայն նրանց նյութական վիճակի,

- այլ նաև՝ այլ պայմանների վրա, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն՝ մեծանալ առողջ և ապահով միջավայրում, պատասխանատու ծնողների հետ,
- սահմանել կարգ որդեգրող ծնողներին որդեգրումից առաջ վերապատրաստման և օժանդակության ծառայություններ մատուցելու մասին, և ստեղծել որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ:

1) Որդեգրման գործի վերանայման կենտրոնացված համակարգ և որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ

Երեխաները ծննդյան պահից ընտանիքում ապրելու և ծնողական խնամք ստանալու իրավունք ունեն: Լինում են դեպքեր, երբ երեխաները, զրկված լինելով ընտանեկան միջավայրից, հայտնվում են պետության խնամքի ներքո՝ հաստատություններում: Երեխաների խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու անհնարինության դեպքում պետք է ջանքեր գործադրվեն այլընտրանքային խնամքի տարբերակներ ապահովելու համար⁷⁸: Նշված տարբերակներից է երեխայի որդեգրումը: Որդեգրումը սոցիալական և իրավական գործընթաց է, որի միջոցով երեխան դառնում է նոր ընտանիքի անդամ, եթե նա չի կարող դաստիարակություն և խնամք ստանալ իր կենսաբանական ընտանիքում⁷⁹: Երեխայի որդեգրման գործընթացը կարգավորող դրույթներ սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային կոնվենցիաներով: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի սահմանում որդեգրման գործի վերանայման կենտրոնացված համակարգ՝ Կոմիտեի մտահոգությունը այն է, որ որդեգրման գործի հաստատման և մշտադիտարկման մասին որոշումները կայացվում են մարզային մակարդակով (ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մարմինների կողմից), մինչդեռ որոշումները կայացվում են ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Առաջարկվում է ստեղծել որոշումների կայացման և վերացման միասնական համակարգ:

2017 թվականի դեկտեմբերին ընդունված Ընտանեկան օրենսգրքի փոփոխություններով ամրագրվել են որոշ երաշխիքներ որդեգրման գործընթացի ապահովման համար:

⁷⁸ Տե՛ս https://www.unicef.org/childfamily/index_24511.html հղումով:

⁷⁹ Տե՛ս <https://resourcecentre.savethechildren.net/sites/default/files/documents/6029.pdf> հղումով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելի ձևը: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից տրամադրվող հատուկ պաշտպանության և օգնության իրավունք ունի: «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի թիվ 33 կոնվենցիան ևս ընդունել է, որ երեխան իր անձի լիարժեք և ներդաշնակ զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան շրջապատում: Պետությունը՝ որպես առաջնահերթ խնդիր, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի երեխայի խնամքն իրականացնի նրա հարազատ ընտանիքը: Օտարերկրյա որդեգրումը կարող է առավելություններ տրամադրել երեխային, որի համար հնարավոր չէ գտնել հարմար ընտանիք նրա ծագման պետությունում, սակայն պետք է այնպիսի միջոցներ ձեռնարկել, որ օտարերկրյա որդեգրումը կատարվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, նրա հիմնական իրավունքները և երեխաների առևանգումը կամ վաճառքը կանխելու կարևորությունը: Օրենսգրքի 2017 թվականի փոփոխությամբ որդեգրման եզրույթի նոր սահմանում է տրվել: Այսպես, որդեգրումը դատական ակտ է, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որոնց շնորհիվ որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որդեգրողի և որդեգրվողի համադրելիության չափանիշների գնահատման հիման վրա:

Օրենսգրքի փոփոխությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

Վերանայվել են նաև որդեգրման վերացման հիմքերը, որոնց հիմքում ընկած են երեխայի լավագույն շահերը: Մասնավորապես, ըստ օրենսգրքի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը՝ երեխայի որդեգրումը կարող է վերացվել, եթե որդեգրողը՝ խուսափում է իր վրա դրված ծնողական պարտականությունները

կատարելուց, չի փոխում իր վարքագիծը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացմանը խոչընդոտելու համար որդեգրողը վարչական պատասխանատվության է ենթարկվել և 15-օրյա ժամկետում չի կատարել ստանձնած պարտավորությունը, առանց հարգելի պատճառի հրաժարվում է վերցնել իր երեխային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից, մեկ տարի անընդմեջ առանց հարգելի պատճառի հրաժարվում է վերցնել իր երեխային դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ հաստատություններից, չարաշահում է իր ծնողական իրավունքները, այդ թվում՝ իր վարքագծով վնասակար ազդեցություն է գործում երեխայի վրա և այլ հիմքեր, որոնք ուղղված են երեխային պաշտպանելուն:

Օրենսգրքի համաձայն՝ ամուսնության մեջ գտնվող անձանցից յուրաքանչյուրը հաշվառվում է որպես որդեգրող: Հաշվառումն իրականացվում է փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով: Որդեգրելու իրավունք ունի սահմանված կարգով երեխա որդեգրել ցանկացող հաշվառված չափահաս անձը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Երեխա որդեգրել ցանկացող անձին հոգեբանական, մանկավարժական և իրավական աջակցություն տրամադրելու նպատակով օրենսդրական փոփոխությամբ սահմանվում է, որ լիազորված պետական կառավարման մարմինը պետք է իրականացնի անվճար նախապատրաստական դասընթացներ: Սահմանված են նաև այլ երաշխիքներ, ապահովելու համար երեխայի որդեգրումը՝ ելնելով նրա լավագույն շահերից: Նախատեսվում է տարիքային շեմ՝ որդեգրողի և որդեգրվողի միջև: Որդեգրողի և որդեգրվողի տարիքային տարբերությունը պետք է լինի 18 տարուց ոչ պակաս և 50 տարուց ոչ ավել, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան որդեգրվում է որդեգրելու նախապատվության իրավունք ունեցող անձանց կողմից:

ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Ն որոշման N 2 հավելվածի համաձայն հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի 81-րդ կետով նախատեսված է «Բարելավել երեխայի որդեգրման ընթացակարգը» միջոցառումներում: Ըստ ՀՀ ԱՍՀՆ-ի պարզաբանումների՝ որդեգրման համակարգում կատարված փոփոխություններն արձանագրվել են ՀՀ կառավարության 2019 թ. մայիսի 23-ի N 630-Ն, ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 26-ի N 1197-Ա որոշումներում: Որդեգրման գործընթացի բարեփոխմանն ուղղված կարգավորումներն արտացոլվել են օրենսդրական բարեփոխումների նախագծերի փաթեթում, դրանց ընդունումից հետո փոփոխություններ կիրականացվեն ենթաօրենսդրական իրավական ակտերում:

Ըստ Արդարադատության նախարարության 2022 թվականի պարզաբանումների՝ երեխաների որդեգրման գործընթացին առնչվող ընթացակարգերի փոփոխության նպատակով ԱՍՀՆ-ի հետ մշակվել են ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, ինչպես նաև որդեգրման նոր կարգը կառավարության որոշման ձևաչափով: ՀՀ ընտանեկան օրենսգրքում նախատեսվող լրացումների և փոփոխությունների ընդունմամբ է պայմանավորված կառավարության որոշման նախագծի ընդունումը: Օրենքի նախագիծը գտնվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության քննարկման ներքո: Նախագծի մշակումն ու ընդունումը կոչված է համապատասխանեցնել որդեգրման ոլորտը կանոնակարգող ներպետական օրենսդրությունը «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաազայի 29.05.1993թ. Կոնվենցիայի պահանջներին: Օտարերկրացիների կողմից որդեգրված երեխաների կյանքի պայմանների վերաբերյալ հետորդեգրման զեկույցները պարբերաբար ներկայացվում են օտարերկրյա պետությունների կենտրոնական մարմինների կամ հավատարմագրված կազմակերպությունների կողմից:

Այսպիսով, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել:**

2) Անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ

Ընտանեկան օրենսգրքով նախատեսվում է որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողություն, որի նպատակն է նպաստել երեխայի ինտեգրմանը և բարեկեցությանը, ինչպես նաև իրավունքների և շահերի ունահարման կանխարգելմանը որդեգրողի ընտանիքում: Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) կողմից՝ համատեղ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ վերահսկողություն իրականացնող մարմին): Հայաստանի Հանրապետությունից այլ պետությունում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում, եթե այլ բան նախատեսված չէ մյուս պետության օրենքով:

Վերահսկողությունն իրականացնող մարմինն իրավունք ունի՝

1) սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի (այսուհետ՝ սեփականատեր) համաձայնությամբ մուտք գործելու երեխայի բնակության վայր.

2) ուսումնասիրելու երեխայի կենսապայմանները և դրանց ապահովվածությունը.

3) անարգել շփվելու երեխայի և որդեգրողի (որդեգրողների), ինչպես նաև նրա մերձավոր ազգականների, հարևանների, կրթական հաստատությունների աշխատակիցների հետ՝ պահպանելով որդեգրման գաղտնիությունը.

4) կատարելու երեխայի լավագույն շահերից բխող՝ օրենքով նախատեսված այլ գործողություններ:

Խնդրահարույց Է «սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի (այսուհետ՝ համաձայնությամբ մուտք գործելու երեխայի բնակության վայր» ձևակերպումը, ուստի անհրաժեշտ է դիտարկել այլ մեխանիզմները, երեխայի լավագույն շահից ելնելով, սահմանափակումը շրջանցելու համար:

Միևնույն ժամանակ, օրենքը պարտավորեցնում է վերահսկողական մարմնին ապահովել որդեգրման գաղտնիությունը. երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը և աշխատողները, ինչպես նաև որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը:

Միևնույն ժամանակ, Հաագայի թիվ 33 կոնվենցիայի լավագույն փորձի ներդրման վերաբերյալ ուղեցույցով նշված է, որ որդեգրման գործընթացում խնդիրների բացահայտման և դրանց հետագա կանխարգելման և բացառման համար, որդեգրման վերաբերյալ հսկողություն իրականացնող կենտրոնական մարմինները կարող են նաև որդեգրման մասին անանուն ինֆորմացիա ստանալ ծնողներից: Պետք է ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված համակարգ, սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն ոչ միայն նրանց նյութական վիճակի, այլ նաև՝ այլ պայմանների վրա, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն՝ մեծանալ առողջ և ապահով միջավայրում՝ պատասխանատու ծնողների հետ, սահմանել կարգ՝ որդեգրող ծնողներին որդեգրումից առաջ վերապատրաստման և օժանդակության ծառայություններ մատուցելու մասին, և ստեղծել որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ: Պետությունը որդեգրումից հետո պետք է տրամադրի ծառայությունների ամբողջություն, որոնց նպատակը երեխայի՝ իր համար նոր միջավայրում ինտեգրման ապահովումն է⁸⁰:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել :**

Առաջարկություններ

- *Ստեղծել որդեգրման գործընթացի հաստատման կենտրոնացված համակարգ:*

⁸⁰ Հասանելի է <https://assets.hcch.net/docs/bb168262-1696-4e7f-acf3-fbbd85504af6.pdf> հղումով:

- Ստեղծել անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ
- Ապահովել ՀՀ-ում երեխայի որդեգրման ընթացակարգերի բարելավումը համապատասխան օրենսդրական հիմքերի միջոցով:

Ե. Հաշմանդամությունը, տարրական առողջությունը և բարեկեցությունը (Կոնվենցիայի 6-րդ, 18-րդ (3-րդ կետ), 23-րդ, 24-րդ, 26-րդ, 27-րդ (1-3 կետեր) հոդվածները)

1. Հաշմանդամություն ունեցող երեխաները

Կոմիտեն ուղջունել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումը 2005 թվականին և «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխությունների ընդունումը 2014 թվականին, որոնցով նախատեսվում է անցնել համընդհանուր ներառական հանրակրթության, ներառյալ նախադպրոցական կրթությունը: Կոմիտեին մտահոգել է, որ.

- (ա) Մասնկատներում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը և տոկոսաբաժինն աճում են՝ պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ,
- (բ) Մարզերում բնակվող և հաշմանդամություն ունեցող երեխաներին հասանելի չեն համարժեք խնամքը և ծառայությունները, հատկապես՝ վաղ հայտնաբերման և վերականգնողական ծառայությունները,
- (գ) Հաշմանդամություն ունեցող երեխաները մնում են խնամքի հաստատություններում նույնիսկ ավարտելուց հետո, քանի որ նրանց չեն տրամադրվում այլ լուծումներ, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ տեղավորվում են հոգեբուժական հիվանդանոցներում,
- (դ) Չնայած ներառական կրթության ավելացող միտումներին, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ, ովքեր ապրում են խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում, ֆորմալ կրթություն չեն ստանում,
- (ե) Անվճար ծառայությունները ցածրորակ են, ինչը ստիպում է հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին՝ լրացուցիչ վճարումներ կատարել, օրինակ, որակյալ պրոթեզներ կամ օրթոպեդիկ կոշիկներ ստանալու համար,
- (զ) Կրթական հաստատություններն ու ծրագրերը պետք է համապատասխանեցվեն համընդհանուր դիզայնի պահանջներին, որպեսզի նվազագույնի հասցվեն հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ դպրոցներում կրթության տրամադրումը:

Կոմիտեն առաջարկել է (կետ 36)՝

- միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող երեխաների ապահիստիտուցիոնալացման ուղղությամբ և նրանց տրամադրել ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակներ.
- բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական միջոցներ հատկացնել՝ ապահովելու վաղ հայտնաբերման և վերականգնողական ծառայությունների առկայությունը հաշմանդամություն ունեցող երեխաների, հատկապես՝ մարզաբնակ երեխաների համար,
- ապահովել համարժեք օժանդակության տրամադրումը հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ անգամ խնամքի հաստատություններն ավարտելուց հետո, ինչպես նաև ապահովել, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները ոչ թե տեղավորվեն հոգեբուժական հաստատություններում, այլ համայնքում ստանան համարժեք օժանդակություն և տեղ, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակին և մատչելիությանը,
- իրականացնել ծրագրեր, որոնք կապահովեն հաշմանդամություն ունեցող երեխաների սահուն անցումը հանրակրթությունից/ հատուկ կրթական հաստատություններից դեպի անկախ, համայնքային կյանք, ներառյալ մասնագիտական կողմնորոշման և նախնական մասնագիտական կրթության ծրագրեր,
- շարունակել ջանքեր գործադրել՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ներառելու ընդհանուր կրթական համակարգում, ընդ որում՝ այդ ընթացքում առանձնակի ուշադրություն դարձնել խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաներին.
- հրատապ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որպեսզի ծառայություններ մատուցողները վճարներ չգանձեն անվճար ծառայությունների դիմաց, և կանոնավոր հսկողություն իրականացնել մատուցվող ծառայությունների և պրոդուկտների որակի նկատմամբ:

1) Հաշմանդամություն ունեցող երեխաների ապահիստիտուցիոնալացման ուղղությամբ միջոցառումները

«Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի N 432-L որոշմամբ նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումներն իրականացվում են դեռևս 2000 թվականից, և դրանց հիմնական նպատակը երեխայի բարեկեցիկ կյանքն ընտանիքում և հասարակության

մեջ ապահովելն էր՝ մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման միջոցով: Բարեփոխումների այդ փուլը գրանցել է ինչպես ձեռքբերումներ, այնպես էլ նոր խնդիրներ: Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում թևակոխեցին նոր փուլ 2014 թվականին, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոփոխություններ կատարեց 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրում՝ համապատասխանեցնելու ռազմավարական քայլերը ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույցի պահանջներին: Այդ ռազմավարության շրջանակներում կարգավորվել են բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններում ու սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում երեխաների խնամքի տրամադրման, այդ թվում՝ տվյալ հաստատություններ նրանց ուղեգրման և ընդունելության հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2015 թվականի սեպտեմբերի 25-ին հաստատված N 1112-Ն որոշմամբ հաստատված կարգով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշմամբ սահմանվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև կարգավորվել են այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հետ կապված հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի «ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 18 արձանագրային որոշմամբ և դրանից բխող միջոցառումների ցանկում սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հիմնական սկզբունքները և ուղղությունները, ինչպես նաև նախանշվել են նոր տիպի ծառայությունների անհրաժեշտությունն ու դրանց ուղղությամբ իրականացվող հիմնական միջոցառումները: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստում հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30 արձանագրային որոշումը, որի հիմնական գերակայություններն ու սկզբունքները համահունչ են «Ինստիտուցիոնալ խնամքից դեպի համայնքային խնամքին անցնելու մասին» Եվրոպայի խորհրդի չափանիշների և ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի հիմնական սկզբունքներին:

Այդուհանդերձ, իրավական դաշտում իրականացված փոփոխությունները դեռևս բավարար չեն երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի լիարժեք իրացման համար: Ներառականության պահանջը, կյանքի դժվարին տարբեր իրավիճակներում հայտնվելու հանգամանքները և հասցեական ու թիրախային ծառայություններ տրամադրելու անհրաժեշտությունը, երեխաների պաշտպանության համակարգում առկա տարբեր մարմինների միջև պատասխանատվությունների և գործառույթների բաշխման անհստակությունը, ուղղորդման ոչ բավարար ընթացակարգն իրավական դաշտի վերանայման խնդիր են դնում: Հատկապես խնդրահարույց են երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման այլընտրանքային ձևերի պարագայում ընթացակարգերի և կարգավորումների ոչ լիարժեք ամբողջականությունը, պարզությունն ու արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության, միջկառավարական, միջազգային ու տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև շարունակական համագործակցության արդյունքում Հայաստանում պետական ֆինանսավորմամբ շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների թիվը գրեթե հինգ անգամ կրճատվել է՝ 2006 թվականի շուրջ 10000-ից նվազելով շուրջ 3900-ի՝ 2014 թվականի տարեվերջի դրությամբ, և ապա մինչև 2000 երեխայի՝ այլընտրանքային խնամքի բարեփոխումների շարունակական իրականացման արդյունքում:

ՀՀ ԱՄՆ Ներկայացրած տվյալներով, 2018 թ. ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի պետական հաստատություններում խնամվել է 570 շահառու, որից 466-ը ունեցել է հաշմանդամություն, 2019 թ. ընթացքում՝ 587, որից 471-ը՝ հաշմանդամություն ունեցող, 2020 թ. ընթացքում՝ 581, որից շուրջ 450-ը՝ հաշմանդամություն ունեցող, 2021 թ. ընթացքում՝ 584, որից՝ շուրջ 498-ը հաշմանդամություն ունեցող, 2022 թ. ընթացքում շուրջ 575, որից՝ շուրջ 478-ը ունի հաշմանդամություն:

Թեև վերջին տարիներին երեխաների խնամքի շուրջօրյա հաստատությունների վերակազմավորման քաղաքականության արդյունքում նվազել է այդ հաստատություններում խնամվող երեխաների թիվը, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը մասնագիտացված հաստատություններում աճում է՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու, խնամակալության, խնամատարության և որդեգրման հանձնելու գրեթե անհնարինությամբ պայմանավորված: Ծուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների ավելի քան 90 տոկոսը հաստատություններում հայտնվում է՝ առողջական խնդիրների և ընտանիքի սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից ելնելով: Չլուծված է մնացել մանկատներում 18 տարին լրանալուց հետո հաշմանդամություն ունեցող անձանց հետագա խնամքի և կեցության հարցը, որը շարունակել է կազմակերպվել մանկատանը՝ այլ լուծումների բացակայությամբ, իսկ մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձինք երբեմն տեղավորվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված

հաստատություններում: Այս իրավիճակը խոչընդոտել է շահառուների՝ համայնքում ներգրավված լինելու և ապրելու իրավունքի իրացմանը:

Ըստ ԱՄՆ-ի՝ ՅՅ կառավարության 2021թ. հոկտեմբերի 28-ի N 774-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «ՅՅ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման մեջ, որոնց համաձայն բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով ֆինանսական աջակցություն է տրամադրվում նաև 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մանկատանն առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն ստացած սաներին՝ որոշակի պահանջների բավարարելու դեպքում (Հայաստանի Հանրապետության քաղաքացի են, սեփականության կամ համասեփականության իրավունքով այլ բնակելի տարածք չունեն, պահանջներ՝ բնակելի տարածք օտարած չլինելու մասով): Կոնկրետ հաշմանդամ լինելու հանգամանքով պայմանավորված մանկատան շրջանավարտների բնակարանային ապահովության միջոցառում չի իրականացվում:

2020 թ. հունիսի 2-ի N ՅՕ-286-Ն օրենքով՝ «Չբաղվածության մասին» ՅՅ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխությունների և լրացումների համաձայն՝ անձի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (մանկատան) շրջանավարտ հանդիսանալու հանգամանքը ներառվել է գործազուրկին՝ աշխատաշուկայում անմրցունակ անձի կարգավիճակ տվող չափորոշիչների ցանկում: Միաժամանակ, հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ՝ հաշմանդամություն ունեցող անձինք համարվում են աշխատաշուկայում անմրցունակ անձինք, ովքեր իրավունք ունեն ընդգրկվելու զբաղվածության կարգավորման բոլոր պետական ծրագրերում առաջնահերթության կարգով՝ համաձայն նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Խնամատարության ինստիտուտի զարգացմանը խոչընդոտել են ինչպես իրավական դաշտի անկատարությունը, այնպես էլ դրա համակարգված զարգացման ուղղությամբ նախկինում պետական լիազոր մարմնի կողմից ցուցաբերվող ոչ բավարար քաղաքական կամքն ու հետևողականությունը՝ հատկապես վաղ մանկության տարիքի երեխաներին խնամատարության հանձնելու մասով: 2008-2018 թվականների ընթացքում խնամատար ընտանիքների և դրանցում խնամվող հոգեզավակների թիվը գրեթե չնչին է փոփոխվել: 2018 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերապատրաստումներ են կազմակերպվել 60 խնամատար ընտանիքների համար, իսկ խնամատարության հանձնված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվաքանակը 2017 թվականի 23 հոգեզավակից հասել է 40-ի:

2019 թվականի առաջին կիսամյակի տվյալներով 34 խնամատար ընտանիքում խնամվում էր 48 երեխա, որոնցից 6-ը՝ մասնագիտացված խնամատար ընտանիքներում: Երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներով պայմանավորված՝ իրականացվում է հանրապետությունում խնամատար ընտանիքների ընդլայնման գործընթացը՝ որպես շուրջօրյա խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվող այն երեխաների խնամքի ու

դաստիարակության կազմակերպման այլընտրանքային ձև, ովքեր տարբեր պատճառներով հնարավորություն չունեն խնամք ստանալու կենսաբանական կամ խնամակալ ընտանիքներում:

Այս ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2019 թվականի հունիսի 13-ին հաստատվել է «խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման և վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեգավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 751-Ն որոշումը և հստակեցվել ու բարելավվել են խնամատարության որոշ ընթացակարգեր, որոնք բարենպաստ հիմք են ստեղծում խնամատարության խթանման համար: Բարելավվել է նաև խնամատարության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացը: Մասնավորապես, «Մանուկ» տեղեկատվամեթոդական բազայում գործարկվել է խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման ենթաբաղադրիչը: 2019-ի երկրորդ կիսամյակում առաջին անգամ նախարարության կողմից կազմակերպվել են խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց վերապատրաստումներ, վերապատրաստվել է շուրջ 25 խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ: 2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 90 խնամատար ընտանիքում 94 երեխայի խնամքի իրականացման համար 152 828 400 դրամ, և առաջին անգամ երկու հոգեգավակի խնամքի իրականացման համար հատկացվող ֆինանսավորումը կրկնապատկվել է, մինչդեռ նախկինում ավելանում էր միայն 30 տոկոսով: Ներկայում շուրջ 47 խնամատար ընտանիքում խնամք է ստանում 65 երեխա:

Ըստ ԱՄՆ տվյալների՝ 2018թ. ընթացքում 2 հաշմանդամություն ունեցող երեխայի խնամք է կազմակերպվել խնամատար ընտանիքում, 2019թ. ընթացքում՝ 2, 2020թ. ընթացքում՝ 7, 2021թ. ընթացքում՝ 9, 2022թ. ընթացքում՝ 8: 2018թ. ընթացքում որդեգրվել է 10 հաշմանդամություն ունեցող երեխա, 2019թ. ընթացքում՝ 5, 2020թ. ընթացքում՝ 0, 2021թ. ընթացքում՝ 1, 2022թ. այս պահի դրությամբ 3 երեխա: 2018-2022 թվականների ընթացքում ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխա չի որդեգրվել: Նախարարության աջակցությամբ 2019-2021 թթ. իրականացվել է «Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում» ծրագիրը, որի նպատակը հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպման միջոցով՝ նրանց զբաղվածության ապահովումն է: 2019-2021 թթ. այս ծրագրում ընդգրկվել են հաշմանդամություն ունեցող երեխաների 88 ծնողներ:

Ցերեկային խնամքի ծառայությունները Հայաստանի Հանրապետության տարածքում բաշխված են ոչ համաչափ և կան մարզեր, որտեղ ցերեկային խնամքի ծառայությունները գրեթե բացակայում են: Ցերեկային ծառայությունների ծածկույթի համաչափ ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում ներառվել են «Երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» և «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու, մուտքը հաստատություններ կանխարգելելու և աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառումները: Վերոհիշյալ միջոցառումներն իրականացվելու են Երևանում և հանրապետության 10 մարզերում՝ հասարակական կազմակերպություններին պատվիրակման միջոցով:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման քաղաքականության արդյունավետության նախապայման է փաստարկված և տվյալների ու հետազոտությունների վրա հիմնված լինելը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգը՝ իբրև գործընթացների թափանցիկության, հաշվետվողականության հիմնական գործիք, ինչպես նաև փաստարկված քաղաքականության մշակման համար տեղեկատվական շտեմարան, ունի էական բարելավման և զարգացման կարիք: Համակարգում կան մի շարք թերություններ, մասնավորապես, բացակայում են կարևոր տվյալներ, փաստվում է մուտքագրվող տվյալների հավաստիության և հուսալիության խնդիրը: Առանձին խնդիր է անձնական տվյալների պաշտպանությունը: Այս ուղղությամբ 2019 թվականին նախաձեռնվել է համակարգի խնդիրների հավաքագրումը և արդիականացման աշխատանքների մեկնարկը՝ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2019 թվականի մայիսի 16-ի N 650-L որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը, որում կարևորվում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու այլընտրանքային, համայնքահենք ծառայությունների ցանցի ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այն նախանշում է բարեփոխումների նոր փուլ, որի նպատակն է ապահովել երեխաների պաշտպանության համակարգի և երեխաների իրավունքների իրացմանն ուղղված անհրաժեշտ միջավայրի ստեղծման համար համալիր միջոցառումներ՝ ելնելով ներկա իրավիճակից և նախորդ փուլերի ընթացքում ձեռք բերված փորձառությունից և քաղած դասերից:

Չնայած նրան, որ բնակչության հաստատություններում խնամքի տակ գտնվող երեխաների թիվը շարունակում է նվազել, մասնագիտացված հաստատություններում այն, ընդհանուր առմամբ, չի նվազում, բժշկական հաստատություններից առողջական խնդիրներ ունեցող նորածիններին մանկատներ շարունակական տեղափոխման պատճառով, ինչպես նաև նշվածը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող

երեխաների համար կենսաբանական ընտանիքներ վերադառնալու, որդեգրվելու կամ խնամատար ընտանիք տեղափոխվելու գրեթե անհնարինությամբ: 2015-2017 տարիների ընթացքում 181 երեխա, այդ թվում՝ 97 առողջական խնդիրներ ունեցող երեխաներ, ծննդատներից տեղափոխվել են մանկատներ: ՀՀ առողջապահության նախարարության տվյալներով՝ Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպություններում 2018-2022 թվականների ընթացքում արձանագրվել է հաշմանդամության պատճառով նորածին երեխաների մանկալքության 53 դեպք:

ՀՀ ԱՄՆ տվյալների՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է 65 երեխա, այդ թվում՝ 25 երեխա որդեգրվել է ՀՀ քաղաքացիների կողմից, նրանցից 3-ն ունեցել է առողջական խնդիր: Օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է 40 երեխա, և որդեգրված երեխաներից հաշմանդամություն է ունեցել 11-ը: Ըստ նախարարության տվյալների՝ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա հիմնականում չի որդեգրվում պայմանավորված այն հանգամանքով, որ երկրում բավարար չեն առողջապահական ծառայություններն ու առողջական խնդիրներ ունեցող երեխաների վերականգնողական կենտրոնները:

Աշխատանքներ են իրականացվել թեկնածու խնամատար ընտանիքների վերապատրաստման ուղղությամբ: Սահմանվել են խնամատարության 4 տեսակ, որոնցից մեկը մասնագիտացված խնամատար ընտանիքը նախատեսվում է այն դեպքերում, երբ գործ ունենք հաշմանդամություն, ծանր առողջական խնդիրներ, դաստիարակության դժվարություններ ունեցող, հոգեկան կամ վարքի խանգարումով, խորը սթրես ապրած (տրավմայի ենթարկված) երեխաների, ինչպես նաև անչափահաս մայրերի և նրանց երեխաների խնամատարության հետ: Դա խնամատարության հատուկ տեսակ է⁸¹:

Այսպիսով, անհրաժեշտ է ապահովել այլընտրանքային խնամքի համաչափ և ըստ կարիքի ծառայությունների ցանցի ընդլայնումը, համալիր աջակցության տրամադրումը հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ խրախուսելով կայուն եկամտի աղբյուրների ձևավորումը և զբաղվածությունը, շուրջօրյա խնամքի հաստատությունների ապահովման հիմնական ապահովումը՝ ներառյալ ոչ պետական հաստատություններն ու մասնագիտացված խնամքի հաստատությունները:

Առաջարկություններ

⁸¹ Տե՛ս

<https://www.unicef.org/armenia/media/2531/file/%D5%85%D5%B8%D6%82%D6%80%D5%A1%D6%84%D5%A1%D5%B6%D5%B9%D5%B5%D5%B8%D6%82%D6%80%20%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%20%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%84%D5%B8%D6%82%D5%B4%20%D5%A1%D5%BA%D6%80%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%20%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB.pdf> հղումով:

- Ապահիստիտուցիոնալացման գործընթացին զուգահեռ իրականացնել հաշմանդամություն ունեցող երեխաների կենսաբանական ընտանիքների սոցիալական աջակցման ծրագրեր:
- Կենսաբանական և մասնագիտացված խնամատար ընտանիքների համար իրականացնել շարունակական և խորացված մասնագիտական զարգացման ծրագրեր:
- Իրականացնել ծրագրեր ուղղված համայնքահեն բազմաուղորտային (առողջապահական, կրթական և սոցիալական) ծառայությունների զարգացման և ստեղծմանը, հատկապես մարզերում բնակվող հաշմանդամություն կամ զարգացման հապաղում ունեցող երեխաների համար, ինչը կնպաստի երեխաների կենսաբանական ընտանիքում մնալուն և ապահիստիտուցիոնալացման գործընթացին:
- Բժշկական հաստատություններում իրականացնել իրազեկման ծրագրեր ծնողների համար՝ առողջապահական հաստատություններում նորածինների առողջական խնդիրների, զարգացման հապաղումների և վաղ միջամտությունների արդյունավետության վերաբերյալ:

2) Մարդկային, տեխնիկական և ֆինանսական միջոցների հատկացումը

- Ուժեղացնել միջգերատեսչական համագործակցությունը՝ հաշմանդամություն կամ զարգացման հապաղում ունեցող երեխաների վաղ հայտնաբերումն, ուղղորդումն ու ծառայությունների մատուցումը ապահովելու նպատակով:

3) Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը, ովքեր ապրում են խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը, Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը

որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից: Այսինքն, մինչև 2025 թվականի նշված ժամանակահատվածը հատուկ կարիքներ ունեցող բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան հաճախելու իրենց ընտրած դպրոցը, որը պետք է լինի հարմարեցված իրենց կարիքներին և որտեղ կապահովվի կրթական գործընթացում վերջիններիս ներգրավումը իրավունքների երաշխավորման ողջ ծավալով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրված՝ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումն ապահովելու նպատակով, հաստատվել են մի շարք իրավական ակտեր:

Որպես առաջին քայլ, ՀՀ վարչապետի 2015 թվականի փետրվարի 17-ի N108-Ա որոշմամբ հաստատված՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի համաձայն, ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

- «Տևային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N1506-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N1330-Ն որոշումը.
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշումը.
- «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1047-Ն որոշումը.
- «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N968-Ն որոշումը.
- «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1058-ն որոշումը և այլն:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը կանոնակարգելու նպատակով հաստատվել են նաև՝

- «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը հաստատելու, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 6-ի N1281-Ն և 2009 թվականի նոյեմբերի 11-ի N927-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ

կրթության և գիտության նախարարի 2016 թվականի օգոստոսի 23-ի N825-Ն հրամանը.

- «Մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 23-ի N1202-Ա/2 հրամանը, (նոր չափանիշները մշակվել են Համաշխարհային առողջապահական կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա.
- «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N370-Ն հրամանը:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից Է, ի թիվս այլնի, ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները (4-րդ նպատակ): Համընդհանուր ներառական կրթության որակի և հասանելիության ապահովման հարցը մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական ներառական հասարակության զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը օրենսդրական մակարդակում երաշխավորված է կրթության բոլոր մակարդակներում՝ նախադպրոցական, հանրակրթական, բարձրագույն: Համընդհանուր ներառական կրթության գործնականում երաշխավորման նպատակով անհրաժեշտ է ապահովել ինչպես ֆիզիկական և միջավայրային մատչելիությունը, այնպես էլ մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացումն ու մեթոդաբանական և տեխնիկական հնարավորությունների հագեցվածությունը: Նշվածն իր մեջ ներառում է թե՛ համապատասխան ուսումնական հաստատության բազմամասնագիտական թիմի աշխատակիցների վերապատրաստումների, և թե՛ անհրաժեշտ ուսումնասովանակ պարագաների և ծրագրերի ապահովումը, դրանց թիրախային, արդյունավետ, հասցեական, մատչելի և հասանելի լինելը: Ներառական կրթության արդյունավետության ապահովման համար պետք է երաշխավորել բազմամասնագիտական թիմերի բավարար քանակը, որը պետք է որոշվի ոչ թե երեխաների թվի հարաբերակցությամբ, այլ երեխաների զարգացման հնարավորություններից, հատուկ կարիքներից ելնելով:

2017 թվականին ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն՝ արձանագրել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և խելամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական անձնակազմը՝ ներառական կրթության վերաբերյալ վերապատրաստումները և դասընթացների բավարար չեն: Կոմիտեն իր թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունում առանձնահատուկ կարևորել է ուսումնական հաստատությունների վարչական և ուսուցչական կազմի պարտադիր վերապատրաստումը՝ ներառական կրթության ներդրման և իրականացման վերաբերյալ: Իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ

չնայած պետության կողմից ձեռնարկվող քայլերի՝ ոլորտում առկա են դեռևս խնդիրներ, որոնք պետք է պատշաճ արձագանք և լուծումներ ստանան հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթության իրավունքի ապահովման համար: Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պարզաբանումների՝ 2020 թվականի ընթացքում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել է մանկավարժների կարողությունների զարգացման ուղղված վերապատրաստման դասընթացներ 268 ուսումնական հաստատությունների 4155 մասնագետների համար: Նախադպրոցական ոլորտի համընդհանուր ներառական կրթության ներդրման նախապատրաստման նպատակով դասընթացներ են իրականացվել և խորհրդատվություններ են տրամադրվել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին, ուսուցչի օգնականներին, ծնողներին և երեխաներին: 2020 թվականի ընթացքում հանրապետության 17 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը և «Աուտիզմ ազգային հիմնադրամը» մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը ծառայություններ են մատուցել Երևանի, Սյունիքի, Տավուշի, Լոռու, Շիրակի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 7000 երեխաների:

ՀՀ ԿԳՄՍՆ պարզաբանումների համաձայն՝ հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման անցման համատեքստում՝ հանրակրթական դպրոցներում ներդրված են ուսուցչի օգնականների հաստիքներ: Հաստիքների քանակը որոշվում է ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի թիվ 141-Ն որոշման համաձայն: Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործող իրավակարգավորումներով հիմնականում ընթերցողի, ուղեկցողի, ժեստերի լեզվի թարգմանչի հաստիքներ նախատեսված չեն: Ըստ նախարարության պարզաբանումների՝ անհրաժեշտության դեպքում խելամիտ հարմարեցումների համատեքստում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրամադրվող բարձրացված չափաքանակի շրջանակներում դպրոցը կարող է ապահովել նշված ծառայությունների մատուցումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցով ներկայացված են կոնկրետ օրինակներ դպրոցներում սանհանգույցների վիճակի և հարմարեցվածության վերաբերյալ, որոնք պետք է հաշվի առնել վերանորոգման աշխատանքներ կատարելիս:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման՝ տարբեր գերատեսչությունների տրամադրած տվյալների համադիր

ուսումնասիրության արդյունքում «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում ներառված առաջարկների կատարումը դիտարկվում է դեռևս մասնակի կատարված, քանի որ զեկույցում արձանագրված խնդիրները ամբողջական լուծում դեռևս չեն ստացել կամ որոշ դեպքերում քայլեր չեն իրականացվել: Չնայած ոլորտում ձեռնարկված վերոգրյալ քայլերին՝ մշտադիտարկումները և ուսումնասիրությունները վկայում են, որ խնդրահարույց է դրանց արդյունավետությունը, քանի որ վերապատրաստումների իրականացման, ծրագրերի մշակման գործընթացում ապահովված չէ հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց օրինական ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը, հաշվի չեն առնվում երեխաների կարիքների վերաբերյալ վերջիններիս դիտարկումները, վերապատրաստումները ոչ միշտ են իրականացվում կարիքների գնահատման արդյունքում և այլն: Պաշտպանը իր տարեկան հաղորդումներում արձանագրել է, որ ներառական կրթության ոլորտում գործադրվող ջանքերը չեն կարող արդյունավետ լինել, եթե պետության կողմից ձեռնարկվող քայլերում ներգրավված չեն հաշմանդամություն ունեցող երեխաները, նրանց օրինական ներկայացուցիչները: Ավելին, նշվել է, որ ո՛չ վերապատրաստումները, ո՛չ ծրագրերը չեն կարող իրապես երաշխավորել կրթության իրավունքի իրացումը, եթե դրանք մշակվում և իրականացվում են՝ բացառապես հիմնվելով ներառական կրթության տեսական, ակադեմիական ընկալումների վրա, և հաշվի չառնելով երեխաների իրական կարիքների՝ կանոնավոր և միջազգային չափորոշիչներին համապատասխանող մեթոդաբանությամբ իրականացվող գնահատման արդյունքները, տվյալ երկրին բնորոշ մշակութային, միջավայրային, վարքագծային առանձնահատկությունները: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի թիվ 4 ընդհանուր մեկնաբանությամբ նշվել է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի օրինական ներկայացուցիչները կարող են անհրաժեշտության դեպքում ներգրավվել ուսման ծրագրերի, ներառյալ անհատականացված կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Ընդ որում՝ կարևոր է նաև այն դիտարկումը, որ երեխաների ներկայացուցիչները կարող են նշանակալից դեր ունենալ՝ երեխաներին աջակցություն ցուցաբերելու հարցում մանկավարժներին օժանդակելու գործում, սակայն նրանց ներգրավումը նշված գործընթացում չի կարող նախապայման լինել երեխայի՝ ուսումնական հաստատություն ընդունվելու համար:

Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող երեխաների կրթական խնդիրներին՝ պետք է նշել նաև, որ 2020 թվականին COVID-19 համավարակը մեծ մարտահրավեր էր կրթության ոլորտի համար: Համավարակի տարածման պայմաններում կիրառված սահմանափակումները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի համընդհանուր ներառականության համատեքստում ևս առաջացրել են խոչընդոտներ: Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ

կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու միջոցառումների շրջանակներում արտակարգ դրության սկզբնական ժամանակահատվածում առհասարակ փակվել, իսկ հետո մասամբ վերաբացվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներին նեղ մասնագիտական ծառայություններ (լոգոպեդ, հոգեբան և այլն) մատուցող մասնավոր կենտրոնները: Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է եղել ոչ միայն այն պատճառով, որ այլընտրանքային ծրագրերի բացակայության պայմաններում ոչ միայն անտեսվում են հաշմանդամություն ունեցող երեխաների առանձնահատուկ կարիքները, այլ նաև նեղ մասնագիտական ծառայություններից երկարաժամկետ զրկվելը և շեղումները նախապես սահմանված գրաֆիկից բացասական ազդեցություն է ունեցել երեխաների հոգեբանական և առողջական վիճակի վրա՝ պայմանավորված վերջիններիս հատուկ կարիքներով: Մինչդեռ, երեխաների հոգեկան և ֆիզիկական առողջության արձանագրված դրական դինամիկան հնարավոր է եղել տարիների ընթացքում ծնողների և մասնագետների կանոնավոր և հետևողական իրականացված աշխատանքի արդյունքում: Այս խնդիրն արձանագրվել է նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում՝ Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման այցերի և հարցումների միջոցով: Մարդու իրավունքների պաշտպանի նշված հաղորդմամբ արձանագրվել է, որ արտակարգ դրության ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել դիմումներ՝ կապված հեռավար կրթության մատչելիության խոչընդոտների հետ, որոնք առաջացել են, օրինակ՝ լսողության և տեսողության խնդիրներ ունեցող երեխաների, աուտիզմ կամ Դաունի համախտանիշ ունեցող երեխաների համար: Նշվել է նաև, որ 2020 թվականի ընթացքում բազմաթիվ խոչընդոտներ են առաջացել հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների՝ հեռավար ուսուցմանը լիարժեք մասնակցությունն ապահովելու հարցում: Օրինակ՝ լսողական խնդիրներ ունեցող երեխաներից ոմանց լսողական սարքերն անմիջապես չեն միանում համակարգչին, ինչի պատճառով երեխան չի լսում համակարգչից արձակվող ձայները: Մինչդեռ անհրաժեշտ են հատուկ լրացուցիչ աքսեսուարներ, որոնք թանկարժեք լինելու պատճառով ոչ բոլորի համար են հասանելի, իսկ պետական համակարգված բավարար աջակցության այս հարցում չի եղել: Հեռավար ուսուցման ընթացքում խոչընդոտներ են առաջացրել նաև աուտիզմ ունեցող երեխաների համար, ինչի արդյունքում վերջիններս գրեթե զրկվել են կրթության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորություններից: Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամներից նույնպես բարձրացրել են համավարակի պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացման հետ կապված մի շարք հիմնահարցեր: Մասնավորապես, ըստ կազմակերպության պնդումների, հեռավար կրթության կազմակերպման ընթացքում ինչպես դպրոցները, այնպես էլ մասնագիտական ուսումնական հաստատությունները չեն ապահովել մատչելի ձևաչափերով կրթական նյութերի և ծրագրերի արդյունավետությունը

հաշմանդամություն ունեցող սովորողների համար: Օրինակ՝ արդյունավետ և բավարար կերպով չեն ապահովվել ժեստերի լեզվով թարգմանություն, Էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, խոսող գրքեր, նկարագարող նյութեր, ընկալելի և պարզեցված տեքստերով նյութեր: Արդյունքում՝ հեռավար եղանակով սովորողների կրթության իրավունքի իրացումն ընտանիքի համար առաջացրել է լրացուցիչ ֆինանսական բեռ: Կարևորելով վերոնշյալ քայլերը հեռավար ուսուցման պայմաններում կրթությունն ավելի ներառական և մատչելի դարձնելու ուղղությամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ դրանք որոշ դեպքերում ուշացած են եղել, ինչի պատճառով երեխաները բախվել են մի շարք միջավայրային և կրթական խոչընդոտների: Ավելին՝ հեռավար ուսուցմամբ իրականացվող դասընթացներն ամբողջ ծավալով հասանելի չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար, միշտ չեն ուղեկցվել ենթագրերով և ժեստերի լեզվով, ինչը կարևոր է հատկապես թույլ տեսողություն ունեցող երեխաների համար: Օրինակ՝ Հանրային հեռուստաալիքով հեռարձակվող «Հանրային դաս» նախագիծը բովանդակությամբ և տեխնիկապես ամբողջությամբ հասանելի չէ հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ըստ նշված հաղորդման՝ արտակարգ դրության պայմաններում կրթության ոչ բավարար մատչելիության մեկ այլ օրինակ է այն, որ հեռավար ուսուցման նախագծերով առաջարկած ֆիզկուլտուրայի տեսադասերով⁸² հաշվի չեն առնվել, օրինակ, հեռաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների կարիքները, ինչը չի բխում համընդհանուր ներառական կրթության սկզբունքներից և այս ոլորտում 162 պետության վարած քաղաքականությունից: Բարձրացված խնդիրը հատկապես մտահոգիչ է այն պատճառով, որ արտակարգ դրության պայմաններում այս երեխաներն ամբողջությամբ կամ մասամբ զրկված են եղել տարբեր նեղ մասնագիտական ծառայություններից, այդ թվում՝ իրենց առողջական կարիքներով պայմանավորված՝ անհրաժեշտ ֆիզիոթերապևտիկ ծառայություններից: Մինչդեռ հեռավար ուսուցման լուծումները՝ անկախ դասավանդվող առարկայից, պահանջում են առավել զգայուն, համապարփակ, հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը երաշխավորող ոչ խտրական մոտեցումներ: «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունն իրականացրել է Հայաստանում ապրող երեխաների և նրանց ընտանիքների կյանքում կորոնավիրուսի համավարակի ազդեցության արագ գնահատում, որի նպատակն էր բացահայտել այն հիմնական խնդիրները, որոնք առաջացել են համավարակի հետևանքով: Գնահատումն իրականացվել է «Վորլդ Վիժն Հայաստան»-ի ծրագրային բոլոր տարածքների ծայրահեղ աղքատ կամ խոցելի ընտանիքների շրջանում: Ըստ գնահատման՝ 28.6 տոկոս ընտանիքներում, որտեղ ապրում են հաշմանդամություն ունեցող երեխաներ, երեխաները չեն մասնակցել հեռավար դասերին:

Հարկ է նշել, որ հանրակրթության առաջին օղակի՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության խնդիրն առավել բարդ է

⁸² Տե՛ս հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական վարժությունների տեսադասերի օրինակը, <https://bit.ly/3fnjVHy> հղումով:

հաշմանդամություն ունեցող երեխաների նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքի իրացման պարագայում, քանի որ բացի համայնքներում բավարար քանակի հաստատությունների ապահովումից, անհրաժեշտ է նաև վերջիններիս հարմարեցվածությունը և բավարար թվով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու հմտություններ և գիտելիք ունեցող մասնագետների առկայությունը: Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար կարևոր է հենց վաղ տարիքից կրթության մեջ ներգրավվելը, որը կնպաստի հասարակության մեջ ներառվելու, հնարավոր բժշկական 164 միջամտություններն արդյունավետ իրականացնելու և երեխայի տարբեր ունակություններ բացահայտելու ձևավորելու, զարգացնելու գործընթացում դրական առաջխաղացմանը: 2020 թվականի մայիսի 6-ին Ազգային ժողովն ընդունել է «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը: «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով հռչակվում և երաշխավորվում է նախադպրոցական կրթության բնագավառի ներառականությունը, մատչելիությունը, հասանելիությունն ու որակը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման, զարգացման ու դաստիարակության, անվտանգ միջավայրի ստեղծման, կյանքի, առողջության պահպանման և ամրապնդման կարևոր երաշխիք:

Պաշտպանի՝ ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկուլյցի աշխատանքների շրջանակներում իրականացվել են մի շարք ֆոկուս-խմբային քննարկումներ, որոնց կազմակերպման աշխատանքները իրականացվել են նաև «ՍՈՐՍ» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի և «Արև-երեխաներ» հասարակական կազմակերպության աջակցությամբ: Դրանց ընթացքում, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները նշել են, որ մանկապարտեզներում չկան բավարար թվով մասնագետներ, որոնք համապատասխան պատրաստվածություն կունենան հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար: Մանկապարտեզները հաճախ դիտարկվում են որպես միայն խնամքի ծառայություններ մատուցող հաստատություններ, մինչդեռ պետք է ապահովվի նաև նախադպրոցական կրթության պատշաճ որակի ծառայությունների մատուցումը՝ պայմանավորված մասնագետների բացակայությամբ, ինչպես նաև առկա մասնագետների՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար անհրաժեշտ թերի հմտություններով:

Խնդրահարույց է նաև դպրոցներում ֆիզիկական մատչելիությունը: Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է ոլորտում արձանագրված որոշակի առաջընթացի մասին: Երևանում և մարզերում տարվել են աշխատանքներ դպրոցներում ֆիզիկական միջավայրի մատչելիության բարելավման ուղղությամբ, մինչդեռ ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման նպատակով իրականացվող հարմարեցումները հիմնականում դրսևորվում են մուտքային թեքահարթակների կառուցմամբ: Ընդ որում՝ կառուցվող թեքահարթակներն էլ ոչ միշտ են համապատասխանում գործող

իրավակարգավորումներով սահմանված շինարարական նորմերին, հարմարեցված չեն դպրոցի շենքային պայմանները, մասնավորապես՝ սանհանգույցները: Ավելին, հաշմանդամություն ունեցող երեխաների համար ուսումնական հաստատությունների մատչելիության խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն: Չնայած պետության կողմից որդեգրված ապահիստիտուցիոնալացման քաղաքականությանը, արձանագրված խնդիրներից է ծնողների՝ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին հանրակրթական դպրոցից հատուկ դպրոց տեղափոխելը՝ բազմամասնագիտական թիմի բացակայության և երեխաների հետ ժամանակային առումով ոչ բավարար մասնագիտական պարապմունքների իրականացման պատճառով:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթության իրավունքի ապահովման հարցում, բացի միջավայրային և ֆիզիկական մատչելիությունից, խնդիրներից է նաև հանրակրթական դպրոցներում դասագրքերի, ծրագրերի մատչելիության հարցը, որի մասին նշել են նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներն իրականացված քննարկումների շրջանակներում:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումների՝ դասագրքերի, ուսումնասօժանող պարագաների մատչելիության խնդիրն առկա է հատկապես հանրակրթական ուսումնական հաստատություններում: Հաղորդմամբ նշվել է, որ խնդիր է առաջանում, երբ հատուկ դպրոցի սաները, տեղափոխվելով հանրակրթական դպրոց, իրենց կրթությունը շարունակում են ստանալ այդ դպրոցի ուսումնական ծրագրի շրջանակներում: Մինչդեռ, դրանցում ներառված են այնպիսի առարկաներ, որոնք ներառված չեն հատուկ դպրոցի համար մշակված ուսումնական ծրագրերում (օրինակ՝ քիմիա, ֆիզիկա և այլն): Այս հարցում երեխայի կարիքները, զարգացման հնարավորությունները հաշվի առնված չեն: Արդյունքում, տվյալ դեպքում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովումը, ըստ էության, անհնար է դառնում կրթական առանձնահատուկ պայմանների, այդ թվում՝ համապատասխան ծրագրի բացակայության դեպքում՝ խոչընդոտներ ստեղծելով նաև սոցիալական լիարժեք ինտեգրման համար:

Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դպրոցների մշտադիտարկումը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում անհասկանալի են դասապրոցեսի նպատակներն ու աշակերտների զարգացմանն ուղղված քայլերը: Դասապրոցեսը հաճախ ունի միայն երեխային զբաղեցնելու նպատակ և երեխաներին առաջարկվում են վարժություններ կամ խաղեր, որոնց նպատակները վերջիններիս համար պարզ չեն կամ չեն համապատասխանում և միտված չեն երեխաների կրթական կարիքների բավարարմանը:

Հատուկ դպրոցներում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են նաև կրթության իրավունքի խնդիրներ՝ պայմանավորված երեխաների կրթական կարիքների թերի գնահատմամբ:

Հատուկ դպրոցներում Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրված խնդիրներից են COVID-19-ի համավարակով պայմանավորված՝ հեռավար եղանակով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաների կրթության իրավունքի իրացման խնդիրները: Մասնավորապես, մի խումբ երեխաներ ինտերնետ կապի կամ հեռահաղորդակցության միջոցների բացակայության կամ ոչ բավարար ծավալի հասանելիության պատճառով բախվել են իրենց կրթության իրավունքի իրացման խնդիրներին կամ առհասարակ դուրս են մնացել կրթությունից: Ավելին՝ դպրոցներից մեկի տեղեկատվության համաձայն՝ հեռավար ուսուցման համալիր heravar.armedu.am կայքէջում հաշվի առնված չեն չափավոր և ծանր մտավոր խնդիրներ ունեցող երեխաների կրթական կարիքները, տեղադրված չեն նրանց համար մատչելի, հասանելի և կարիքներին համապատասխան ուսումնական, ուսումնամեթոդական նյութեր:

Պաշտպանի՝ ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ արտահերթ հրապարակային վերոնշյալ զեկույցի աշխատանքների շրջանակներում իրականացված քննարկումների ընթացքում հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները նշել են, որ հանրակրթության մեջ ներառվելու առաջնային խնդիրը հատուկ կարիքներ ունեցող երեխայի տեղափոխման խնդիրն է: քանի որ ամեն օր դժվարություններ են առաջանում հանրային տրանսպորտով երեխայի տեղափոխումը կազմակերպելու հարցում, երեխայի վարքային առանձնահատկություններից ելնելով հանրային տրանսպորտի, ինչպես նաև մասնավոր փոխադրամիջոցների վարորդները հրաժարվում են մատուցել ծառայություններ: Այս առումով, պետության կողմից որպես օժանդակող ծառայություն չի տրամադրվում և հաճախ ծնողը երեխային հանրային տրանսպորտով տեղափոխման բարդ խնդիրների պատճառով և չունենալով գումար մասնավոր ծառայությունից օգտվելու կամ սեփական փոխադրամիջոց, երեխային չի կարողանում տեղափոխել դպրոց: Խնդիրը արդիական է նշվում է ոչ միայն հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների ծնողները՝ այլ նաև վարքային և մտավոր առանձնահատկություններ ունեցող երեխաների ծնողների կողմից: Նշված դեպքերում, փոխադրամիջոցի վարորդները և ուղևորները հաճախակի խնդիրներ են ստեղծում և ցուցաբերում են խտրական վարքագիծ: Ծնողներին մտահոգող մյուս խնդիրներից է աջակցող սարքերի բացակայությունն այն երեխաների համար, որոնք չեն կարողանում խոսքի և շարժումների միջոցով հաղորդակցվել: Բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների համար աջակցող սարքերի (հատկապես, երբ վերջիններս ունեն ինքնասպասարկման և կենսագործունեության դժվարություններ)՝ տեսականին և որակը չի համապատասխանում որոշակի առանձնահատկություններ ունեցող անձանց համար: Օրինակ՝ ներկայում նախատեսված չեն հատուկ կոմունիկացիոն սարքեր, որոնք խոսքի զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին կտան հնարավորություն արտահայտվելու և արդյունքում կրթական գործընթացին լիարժեք մասնակցելու համար: Երեխաների հատուկ կարիքների գնահատման գործընթացի նշված խնդրահարույց օրինակներից են այն դեպքերը, երբ երեխայի

գնահատման գործընթացը տևական բնույթ է կրում և նույնքան երկար ժամանակ է պահանջվում գնահատման արդյունքները ստանալու համար, որը դժվարացնում է այդ ժամանակահատվածում երեխայի կարիքներին համապատասխան կրթության ապահովումը, անհատական ուսումնական պլանների պատշաճ մշակումը: Ավելին, անհատական ուսումնական պլանների մշակման գործընթացում ծնողների մասնակցությունը չի ապահովվում և, ըստ ծնողների դրանք կրում են ձևական բնույթ և հիմնված չեն երեխաների իրական կարիքների և հնարավորությունների գնահատման վրա: Ավելին, տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետները դպրոցում գտնվում են ոչ ամբողջ ընթացքում և այդ ժամանակահատվածում հնարավորություն չի լինում լիարժեք ծանոթանալ երեխային և նրա առանձնահատկություններին: Հանրակրթական դպրոցներում նախատեսված չեն խմբակներ (նկարչության, կավի, պարի, երաժշտական և այլն), որոնց մասնագետները կտիրապետեն հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու հմտություններին: Իսկ գործող արտադպրոցական հաստատություններում էլ հիմնականում հրաժարվում են հատուկ կարիքներ ունեցող երեխաներին ընդունել: Բացի այդ, հանրակրթական դպրոցներում բավարար թվով ուսուցչի օգնականներ չկան, որի պատճառով ծնողը ստիպված է լինում երեխայի հետ մտնել դասարան, որպեսզի երեխան կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին: Ուսուցչի օգնականի բացակայության խնդիրը, հատկապես արդիական է մարզային համայնքներում: Քննարկումների ընթացքում նշվել է, որ լինում են դեպքեր, երբ թեև նախատեսված է ուսուցչի օգնականի հաստիքը, այն տևական ժամանակ թափուր է մնում, քանի որ առկա է մասնագետների պակաս մարզային համայնքներում: Ծնողները նշում են նաև, որ մեծ դժվարությամբ երեխային հասցնելով դպրոց հաճախ հայտնվում են այնպիսի իրավիճակներում, երբ երեխան մասնակցում է ընդամենը երկու դասաժամի: Լինում են դեպքեր, երբ ծնողը, երեխայի որոշ վարքային առանձնահատկություններից ելնելով, ստիպված է լինում երեխային դասասենյակից դուրս բերել և սպասել մինչև հատուկ մասնագետը ցուցաբերի երեխային համապատասխան աջակցություն, սակայն այդ պարագայում էլ լինում են դեպքեր, երբ մասնագետները, նշելով, որ երեխան անհանգիստ է տվյալ օրը, հորդորում են ծնողին երեխային տուն տանել: Ըստ ծնողների՝ լինում են դեպքեր, երբ ուսուցիչը գործնականում տեղյակ չէ երեխայի իրական կարիքների և կրթական կարողությունների մասին, և երեխային կարող է այնպիսի առաջադրանքներ հանձնարարել, որոնք կապահովեն երեխայի՝ դասադրոցեսին միայն ֆիզիկական ներգրավվածությունը: Արդյունքում, երեխայի կրթություն ստանալու իրավունքի իրացումը և ներառումը կրթական գործընթացում կրում է ձևական բնույթ: Ծնողների մեծամասնությունը նշում է, որ հատուկ կարիքներ ունեցող երեխայի խնամքը կապված է մեծ ֆինանսական ծախսերի հետ, սակայն երեխային ամեն օր դպրոց ուղեկցելու և որոշ երեխաների պարագայում դպրոցում ներկա գտնվելու ու դպրոցից տուն տանելու գործընթացը հնարավորություն չի տալիս ծնողներին, հիմնականում՝ մայրերին աշխատելու: Նշված խնդիրն ավելի է բարդանում այն ընտանիքներում,

որտեղ երեխայի խնամքով զբաղվող ծնողը միայնակ է: Ուստի, լավագույն տարբերակը հատուկ կարիքներով երեխային համար ուղեկցողի կամ անձնական օգնականի ծառայություններով ապահովելն է: Հարցված ծնողները փաստել են, որ լինում են դեպքեր, երբ հանրակրթական դպրոցի ուսուցիչները պատշաճ տեղեկացված չեն հատուկ կարիքներ ունեցող երեխայի կրթության առանձնահատկություններին և ստացվում է այնպես, որ մասնագիտական աշխատանքն արդյունք չի տալիս և երեխայի կրթական մակարդակը հետընթաց է ապրում:

Հաշվի առնելով վերո նշված գարգացումները, հարկ է արձանագրել, որ Կոմիտեի առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *ապահովել խելամիտ հարմարեցումների նվազագույն չափորոշիչներ բոլոր նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆիզիկական մատչելիությունը ապահովելու համար,*
- *նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար կազմակերպել ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ,*
- *պարբերաբար հանդիպումներ կազմակերպել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և նրանց ծնողների հետ վերջիններիս խնդիրները ուսումնասիրելու և կրթության գործընթացը առավել ներառական դարձնելու համար,*
- *հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կարիքների և գարգացման հնարավորությունների գնահատման գործընթացում խթանել և ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը,*
- *ապահովել հանրապետության բոլոր հանրակրթական և հատուկ հաստատություններում մատչելի դասագրքերի անհրաժեշտ քանակ, բոլոր կրթական հաստատություններում ապահովել բավարար քանակի դիդակտիկ նյութերի առկայությունը,*
- *ծնողների և երեխաների հետ իրականացնել վերապատրաստումներ և աշխատանքային քննարկումներ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների վարքի, նրանց նկատմամբ վերաբերմունքի և նրանց հետ շփման ձևերի վերաբերյալ՝ հանդուրժողականության բարձրացման նպատակով,*
- *գործնականում ապահովել ուսուցչի օգնականի հաստիքի համալրումը հանրակրթական դպրոցներում, բազմամասնագիտական թիմի ներգրավումը ըստ կարիքի,*
- *ապահովել կրթական համակարգում դասագրքերի հարմարեցումները անհատական մոտեցմամբ՝ ադապտացնելով համապատասխան երեխաների առանձնահատկությունների,*

- ապահովել հանրակրթական դպրոցների արտադասարանային խմբակներում (նկարչության, կավի, երաժշտական և այլն) հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու մասնագիտական կարողություններ ունեցող մասնագետների առկայությունը,
- ընդլայնել առկա համայնքահեն ծառայությունները՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և չափահաս անձանց համապատասխան ծառայություններ մատուցելու նպատակով,
- ապահովել երեխաների կրթության իրավունքների ոչ ձևական իրացումը՝ նրանց զարգացման հնարավորությունների և կարիքներին համապատասխան, 14) մասնագիտական աշխատանքների գրանցումներն ու արձանագրումը դարձնել առարկայական, չափելի, իրական,
- մշակել և ներդնել երեխաների կարիքների գնահատման այնպիսի մեխանիզմներ, որոնք գնահատման գործընթացը կդարձնեն կանոնավոր և ավելի հաճախակի՝ ներգրավելով նաև երեխայի հետ աշխատող մանկավարժներին,
- գործուն միջոցներ ձեռնարկել երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

4) Հաշմանդամություն ունեցող երեխաների համար իրականացվող ծրագրեր

Ըստ ԱՄՆ տվյալների՝ 2018-2022 թվականներին դրամաշնորհի պայմանագրերի հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց մատուցված սոցիալ-վերականգնողական ծառայությունները և դրանց մարզային բաշխվածությունը:

	2018	2019	2020	2021	2022
Երևան	1. «Աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային	1. «Աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնում», 80	1. Մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ», 90 շահառու 2. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական	1. «Մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ», 80 շահառու 2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-	1. «Մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ», 75 շահառու 2. «Հաշմանդամություն ունեցող

	կենտրոնում», 80 շահառու 2. «Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդներ ի ցերեկային խնամքի սոցիալ- վերականգնողա կան ծառայություննե ր», 50 շահառու	շահառու 2. «Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ- վերականգնողա կան ծառայություննե ր», 50 շահառու	աջակցություն ցերեկային կենտրոնում», 30 շահառու 3. «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 100 շահառու 4. «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական վերականգնում» 30 շահառու	հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 30 շահառու 3. «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 100 շահառու 4. «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական վերականգնում» 30 շահառու	անձանց սոցիալ- հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 30 շահառու 3. «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 100 շահառու 4. «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական վերականգնում » 18 շահառու
Արմավ իր			1.«Հաշմանդամու թյուն ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 30 շահառու	1. Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում», 30 շահառու	1. աշմանդամությ ուն ունեցող անձանց սոցիալ- վերականգնողա կան/հոգեբանա կան աջակցություն ցերեկային կենտրոնում, 25 շահառու 2. «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ- հոգեբանական

					վերականգնում » 10 շաբաթու
Գեղար քունիք			1. «Մտավոր խնդիրներով հաշմանդամությու ն ունեցող անձանց ցերեկային սոցիալ- վերականգնողակ ան ծառայություններ» , 25 շաբաթու	1. «Մտավոր խնդիրներով հաշմանդամությո ւն ունեցող անձանց ցերեկային սոցիալ- վերականգնողակ ան ծառայություններ », 75 շաբաթու	1. Հաշմանդամութ յուն ունեցող անձանց սոցիալ- վերականգնող ական/հոգեբան ական աջակցություն ցերեկային կենտրոնում, 25 շաբաթու

Լռոթի	1. Հաշմանդամություն ունեցող երեխանների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 60 շաբաթու	1. «Հաշմանդամություն ունեցող երեխանների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 60 շաբաթու	1. «Մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ», 25 շաբաթու 2. «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 60 շաբաթու	1. «Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 30 շաբաթու 2. «Հաշմանդամություն ունեցող երեխանների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 60 շաբաթու	1. «Հաշմանդամություն ունեցող երեխանների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 25 շաբաթու
Շիրակ			1. Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 30 շաբաթու		1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական/հոգեբանական աջակցությունը կենտրոնում, 25 շաբաթու
Վայոց ձոր			1. Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 30 շաբաթու	1. «Հաշմանդամություն ունեցող երեխանների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 35 շաբաթու	1. «Հաշմանդամություն ունեցող երեխանների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը կենտրոնում», 25 շաբաթու

Ընդամենը շահառուների թիվ	190	190	450	470	358
---------------------------------	-----	-----	-----	-----	-----

Նախարարության աջակցությամբ 2019-2021 թթ. իրականացվել է «Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում» ծրագիրը, որի նպատակը հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպման միջոցով՝ նրանց զբաղվածության ապահովումն է: 2019-2021 թթ. այս ծրագրում ընդգրկվել են հաշմանդամություն ունեցող երեխաների 88 ծնողներ: Հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների առումով, արկ է նշել, որ Պաշտպանի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ վերոնշյալ զեկույցով արձանագրվել է, որ երբեմն հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները ստիպված են համայնքի մարզիչներին կրկնակի գին վճարել իրենց հաշմանդամություն ունեցող երեխային լողալ սովորեցնելու համար: Մշակութային և մարզական օբյեկտների անմատչելիության մասին իր մտահոգությունն է հայտնել նաև Կոմիտեն՝ արձանագրելով հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների ոչ բավարար մասնակցությունը մարզական և մշակութային գործունեությանն ու միջոցառումներին, հատկապես գյուղական վայրերում: Ըստ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողական համայնքի ներկայացրած տեղեկության՝ վերականգնողական անվճար ծառայություն երևան քաղաքում կենտրոնացված է միայն 4 կենտրոնում:

Հիմնական բժշկամասնագիտական սպասարկում ունեն՝ «Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ, «ԱրԲես» առողջության կենտրոնը, ավելի քիչ ծավալով «Արաբկիր» ԲԿ-ն և «Երազի տուն» վերականգնողական կենտրոնը: Համայնքահեն վերականգնողական ծառայություն պետական պատվերի շրջանակներում հավաստագրված այլ կենտրոններում չի գործում, որոշ առողջության առաջնային պահպանման օղակներում պոլիկլինիկաներում (օրինակ՝ «Մուրացան» հիվանդանոցային համալիրի, թիվ 19 պոլիկլինիկան/ կան առանձին 2-4 թերապևտ-մասնագետ երեխաների համար: Այսպիսով, ծնողների պնդմամբ՝ երևանաբնակ շուրջ 4000 հաշմանդամություն ունեցող երեխա պետական պատվերի շրջանակներում տարեկան միայն 1-2 ինտենսիվ թերապևտիկ կուրս կարող են ստանալ, յուրաքանչյուրը առավելագույն 1-2 ամսվա ընթացքում: Մարզերի բնակիչներին առհասարակ հասանելի չեն վերականգնողական լիարժեք կենտրոնները, և մարդիկ ստիպված են լինում լրացուցիչ ծախսեր անել և վերականգնողական ծառայությունը ստանալ համապատասխան այլ մարզի կենտրոնում կամ մայրաքաղաքում: Նշված ծառայությունները շարունակում են անհասանելի մնալ նաև ֆիզիկական միջավայրի անհրաժեշտ հարմարեցումների բացակայության և այլ պատճառներով:

Վերականգնողական ամբողջ կուրսը ստանալու համար (օրինակ՝ Նորագյուղի կամ Կոչի վերականգնողական կենտրոններում) ծնողները դժվարություններ են ունենում բազմազավակ ընտանիքների մյուս երեխաներին առանց խնամքի թողնելու առումով: Ըստ բողոքների՝ մարզերում ծառայության որակը, որպես կանոն, գնահատվում է ավելի ցածր, ծառայությունների քանակը սակավ, թերապիաները բազմատեսակ չեն: Կենտրոնների մրցակցության պակասի, հատուկ գույքի և սարքավորումների բացակայության և մասնագիտական վերապատրաստումների սակավության պատճառով ծառայության որակը գրեթե չի բարելավվում: Խնդրահարույց է նաև հասանելիությունն ապահովող ծառայությունների տրամադրումը: Ծնողները փաստում են, որ հանրային տրանսպորտի միջոցների վարորդները (այդ թվում՝ տաքսի ծառայություն) հրաժարվում են որոշ դեպքերում տեղափոխել հաշմանդամություն ունեցող երեխային (հենաշարժողական խնդիրներ ունեցող, վարքային առանձնահատկություն ունեցող) կամ օժանդակող միջոցները (սայլակ, քայլակ և այլն): Ոմանք չունեն տաքսի ծառայությունից օգտվելու հնարավորություն կամ սեփական փոխադրամիջոց, ինչի հետևանքով երեխան զրկվում է հասանելիք և անհրաժեշտ ծառայությունից: Խնդիրն առավել ընդգծվում է մարզերից մայրաքաղաք հաշմանդամություն ունեցող անձի տեղափոխման ժամանակ, քանի որ այս պարագայում ավելի մեծ գումարներ են պահանջվում: Այս ամենի պատճառով առողջական առավել բարդ խնդիրներ ունեցող մի խումբ երեխաներ ուղղակի զրկվում են կենսական անհրաժեշտություն ունեցող ծառայություններից (թերապիաներից):

Երեխաների վերականգնողական ծառայության ստացման մեկ այլ խոչընդոտ է ծնողների զբաղվածությունը կամ ընտանիքի այլ երեխաներին առանց խնամքի թողնելը: Որոշ դեպքերում ընտանեկան կացության և այլ խնդիրների պատճառով երեխան չի մասնակցում իրեն տրվող 124 վերականգնողական բուժմանը, քանի որ ծնողը (խնամակալը) ուղղակի չի կարող մյուս երեխաներին թողնել առանց խնամքի կամ բացակայել աշխատավայրից: Այս կապակցությամբ կարևոր նշանակություն ունի, իհարկե, անձնական օգնականի ինստիտուտի ներդրումը: Ուսումնասիրությունը վկայում է, որ վերոգրյալ խնդիրն ունի համակարգային լուծման կարիք: Անձնական օգնականի ինստիտուտի ներդրման և համայնքահեն ծառայությունների ընդլայնման հրատապությունը COVID-19 համավարակի կանխարգելման նպատակով Հայաստանում հաստատված արտակարգ դրության ընթացքում էլ ավելի է ընդգծվել: Այս ինստիտուտի ներդրումը և գործնականում կիրառումը կոչված է ոչ միայն ապահովելու աջակցությունը ինքնասպասարկման դժվարությունների դեպքում և կենցաղային խնդիրներում, այլև ապահովել ծառայությունների հասանելիությունը: Անդրադառնալով ծառայությունների հասանելիությանը, ծնողական համայնքը մտահոգություն է հայտնել ծառայությունների մատուցման համակարգի կառավարման առնչությամբ: Համակարգն ինքնին չի ապահովում բոլոր կարիք ունեցող անձանց ծառայությունից օգտվելը: Հաշմանդամություն ունեցող անձանց, «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաներին վերականգնողական օգնությունը տրամադրվում է վերականգնողական անհատական ծրագրի (ՎԱԾ)

համաձայն՝ բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով: Այսպես, օրինակ՝ իրագեկ և հետևողական ծնողները հնարավորություն ունեն տարեսկզբին իրենց երեխաներին գրանցել բուլոր հասանելի կենտրոններում և ստանալ նախատեսված և դրանից առավել ծառայություններ, իսկ այլ երեխաներ ուղղակի տարիներով դուրս են մնում վերականգնողական բուժումից: Մինևույն ժամանակ, նշվածը փաստում է, որ բացակայում է վերահսկողական և գնահատման համակարգ վերականգնողական բուժման որակի, արդյունքների, հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության բացահայտման, ծառայություններից չօգտվելու պատճառների բացահայտման և չեզոքացման վերաբերյալ: Ի վերջո, պետական պատվերի քանակը և ծառայություններ տրամադրող մասնագետների քանակը սահմանափակ է, համակարգն աշխատում է ծանրաբեռնված ռեժիմով, բացակայում է շահառուների կամ նրանց ծնողների հետ համագործակցություն և երկխոսություն, արդյունքները հիմնականում պայմանավորված են անհատապես սպասարկող անձնակազմի մարդկային որակների և գիտելիքների վրա:

Բժշկասոցիալական փորձաքննության գործող չափորոշիչները և իրավակիրառ պրակտիկան արդյունավետ չեն ապահովում անձի սոցիալական ներառմանն ուղղված ծառայությունների տեսակների որոշումը: Հաշմանդամության սահմանումը թափանցիկ դարձնելու կապակցությամբ արձանագրված զարգացումը հաշմանդամության գնահատման նոր մոդել ներդնելու ուղղությամբ տարվող աշխատանքներն են, որոնք սակայն բավական դանդաղ են ընթանում: Նպատակն է բժշկասոցիալական փորձաքննությունից անցում կատարել անձի ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռնի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել անձի առողջական խնդիրների, նրա կարողությունների և միջավայրային գործոնների ունեցած ազդեցության համատեքստում և որոշել յուրաքանչյուր անձի անհատական ծառայությունների փաթեթը: Յուրաքանչյուր անձի անհատական ծառայությունների փաթեթը սահմանելիս կարևոր է շահառուների անհատական տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի ձևավորումը և գործարկումը: Ծնողական համայնքն իրավացիորեն կարևորել է վերականգնողական ծառայության մատուցման համակարգում, օրինակ՝ երեխաների անհատական տվյալների տեղեկատվական մանրամասն շտեմարանի ձևավորումը, որը կբարձրացնի համակարգի արդյունավետությունը, ծառայությունների թափանցիկությունը, հետևողականությունը:

Հետևաբար, կարող ենք փաստել, որ Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *Բացառել հաշմանդամություն ունեցող երեխաներին անորակ կամ վճարովի ծառայությունների, սարքավորումների, պարագաների մատուցումը: Չարգացնել մշտադիտարկման մեխանիզմը, որը թույլ կտա ծառայության որակին վերաբերվող նվազագույն պահանջներ սահմանել և գնահատել տրամադրվող ծառայությունների և պարագաների որակը:*
- *Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունները հասանելի դարձնել բոլոր մարզերում բոլոր երեխաների համար:*
- *Նախատեսել պարտադիր համայնքահեն ծառայություններ յուրաքանչյուր բնակավայրում, այդ թվում՝ համապատասխան կենտրոնների միջոցով, որը կապահովի կյանքի ողջ ընթացքում՝ վաղ տարիքից սկսած մինչև չափահասություն, ծառայությունների շարունակական մատուցումը և ապահովվածության զգացումը հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների մոտ,*
- *ապահովել ցերեկային խնամքի կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձանց համապատասխան ծառայությունների ամբողջական սպասարկմամբ մատուցումը (խնամք, զարգացում, վերականգնողական ընթացիկ թերապիաներ, բուժմասնագետների ծառայություններ):*

3) Առողջությունը և առողջապահական ծառայությունները

Իր դիտարկումներում կոմիտեն ողջունել է Անվճար ծննդաբանության պետական հավաստագրի 2008 թվականի ծրագիրը և Երեխաների հավաստագրի 2011 թվականի ծրագիրը, որոնք նպատակաուղղված են մոր և մանկան առողջության բարելավմանը: Կոմիտեն նաև ողջունել է Միկրոտարրերով և վիտամիններով ցորենի ալյուրի հարստացման 2011 թվականի հայեցակարգի և Պարենային անվտանգության հայեցակարգի և 2010-2015 թվականների գործողությունների ծրագրի հաստատումը:

Իր դիտարկումներում կոմիտեն մտահոգություն է հայտնել հետևյալ հարցերի շուրջ՝

- (ա) քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև առկա են առողջապահական ծառայությունների հասանելիության էական տարբերություններ, քանի որ որոշ ծառայություններ, օրինակ՝ ինտենսիվ նեոնատալ խնամքի ծառայությունները, առկա են միայն մայրաքաղաքում.
- (բ) չնայած Լորաձնային մահացության կրճատման առումով ունեցած ձեռքբերումներին, նեոնատալ և պերինատալ մահացության ցուցանիշները մնում են բարձր՝ պայմանավորված նեոնատալ բաժանմունքներում սարքավորումների անբավարարությամբ և աշխատողների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածությամբ.

- (գ) ոչ պաշտոնական (չձևակերպվող) վճարումները լայն տարածում ունեն, հատկապես՝ հիվանդանոցային պայմաններում, ինչը խոչընդոտում է անվճար բուժօգնության հասանելիությանը:
- (դ) չկան բավարար թվով որակավորված բուժաշխատողներ, ովքեր կունենային մոր և մանկան առողջության ծառայությունների մատուցման բավարար փորձ թե՛ պրոֆիլակտիկայի, թե՛ արտաքին բուժման ծառայությունների կամ՝ հիվանդանոցներում բուժում իրականացնելու առումներով:
- (ե) չնայած սնուցման ոլորտում ունեցած էական ձեռքբերումներին, կանանց և երեխաների շրջանում թերսնուցման խնդիրները շարունակում են լայն տարածում ունենալ, հատկապես՝ գյուղական շրջաններում, և գիրության բարձր ցուցանիշ է նկատվում մինչև 5 տարեկան երեխաների շրջանում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 38)՝

- ապահովել առողջապահական բոլոր ծառայությունների հավասար հասանելիությունը, մասնավորապես՝ արդար կերպով ապահովել առողջապահական ծառայությունների հասանելիությունը հղիության, ծննդաբերության ընթացքում, ներառյալ՝ շտապ ծննդօգնության և նեոնատալ շրջանում նորածնի խնամքի տեսքով, ինչպես նաև՝ բավարար ռեսուրսներ ապահովել գյուղական բնակավայրերում շտապ բուժօգնության և վերակենդանացման ծառայություններ մատուցելու համար:
- առողջապահական հաստատություններին տրամադրել բավարար նյութատեխնիկական միջոցներ, պարագաներ և սարքավորումներ, մասնավորապես՝ նեոնատալ բաժանմունքներում, ինչպես նաև՝ կազմակերպել աշխատողների մասնագիտական վերապատրաստումը:
- վերացնել անվճար առողջապահական ծառայությունների դիմաց կատարվող բոլոր ոչ պաշտոնական վճարումները, և ստեղծել այս պահանջը չկատարելու դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու և միջոցներ ձեռնարկելու գաղտնի համակարգ:
- միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու երեխաների առողջապահության համար պատասխանատու առողջապահական բոլոր մասնագետների պատշաճ որակավորումը և մասնագիտական պատրաստվածությունը:
- շարունակել հղի կանանց, նորածինների, նախադպրոցական տարիքի երեխաների և դեռահասների սնուցման վիճակի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրերի և հայեցակարգերի իրականացումը, հատկապես՝ գյուղական բնակավայրերում: Դա ներառում է առողջ սննդի սովորությունների տարածումը, շաքարով հարուստ ըմպելիքների և վերամշակված արագ սննդի ավելորդ սպառման նվազեցումը, քանի որ դա նպաստում է երեխաների շրջանում գիրության խնդիրների սրացմանը:

1) Առողջապահական ծառայությունների հասանելիությունը քաղաքային և գյուղական բնակավայրերին

Առկա է առողջապահական ծառայությունների հասանելիության տարբերություն քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև, ինչի մասին են վկայում նաև մի շարք ուսումնասիրություններ: 2015 թվականի տվյալներով, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» շրջանակներում այցեր են կատարվել ՀՀ մի շարք բժշկական հաստատություններ:⁸³ Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գյուղերում և քաղաքներում առկա է առողջապահական որոշ ծառայությունների տարբերություն. որոշ ծառայություններ չեն մատուցվում գյուղերում, ուստի կանայք ստիպված են լինում այցելել մոտակա քաղաքներ:

Նշյալ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Այսպես, ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ վերջին տարիներին հանրապետության 9 մարզային բուժհաստատություն վերանորոգվել է, ստեղծվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած խառը (մեծերի և մանկական) վերակենդանացման բաժանմունքներ, ստեղծվել և հագեցվել է 3 միջմարզային նշանակության մանկական վերակենդանացման բաժանմունք, տրամադրվել են նորածինների խնամքի և անհետաձգելի բուժօգնության սարքավորումներ: Ավելին, 2016 թվականին կառուցված՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու ԲԿ-ի թերապևտիկ բաժանմունքում ներառված է 10 մանկական մահճակալ: Կենտրոնի վերակենդանացման բաժանմունքը հագեցվել է երեխաների ինտենսիվ բուժօգնության համար նախատեսված սարքավորումներով: Ըստ նախարարության տվյալների՝ վերոնշյալ ԲԿ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներում գործում է նորածինների ինտենսիվ թերապիայի ծառայությունը՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով, մասնավորապես՝ նորածինների ինտենսիվ թերապիայի համար նախատեսված սեղան՝ տաքացուցիչով, նորածինների թոքերի արհեստական օդափոխության սարք, հետազոտման լամպ, ինֆուզոմատներ և այլ:

Բացի դրանից, Առողջապահության տրամադրած տվյալների համաձայն՝ ԵՊԲՀ-ի «Մուրացան» բժշկական համալիրում գործող նորածնային անհետաձգելի բուժօգնության ծառայությունն համալրվել է 2 ռեանիմոբիլով, իսկ վերջինիս նորածնային վերակենդանացման մասնագետների ներգրավմամբ ներդրվել է շուրջօրյա 24/7 խորհրդատվության համակարգ բոլոր հիվանդանոցների համար: Հանրապետության 35 բուժհաստատություն ապահովվել է անվճար հեռախոսային և ինտերնետային կապով՝ «Մուրացան» հիվանդանոցային համալիրում հիմնված 24/7-ի մասնագետներից խորհրդատվություն ստանալու համար:

⁸³ Տե՛ս http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report_arm_0.pdf հղումով:

Պաշտպանը 2017 թվականին արձանագրվել է, որ ըստ Առողջապահության նախարարության տվյալների՝ Վորլդ Վիժն կազմակերպության կողմից Սիսիանի, Գորիսի, Կապանի, Գավառի, Վարդենիսի, Ճամբարակի բուժօգնություններին տրամադրվել են նորածնային խնամքի և ինտենսիվ թերապիայի, նախածննդյան խնամքի և պտղի ախտորոշման համար անհրաժեշտ սարքավորումներ: Ավելին, «Վիվա-Սելլ» ընկերության կողմից 9 մարզային և Երևանի 2 ծննդատներին տրամադրվել են նորածինների վերակենդանացման և ինտենսիվ խնամքի համար անհրաժեշտ սարքավորումներ:

Առողջապահության նախարարության՝ 2022 թվականին տրամադրած տվյալներով՝ առողջության համապարփակ բժշկական ապահովագրության հայեցակարգը քննարկման փուլում է: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով իրականացվող բուժօգնության նկատմամբ բժշկական կենտրոններում վերահսկողությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով:

2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Կոնքազդրային հողի դիսպլազիայի նորածնային սկրինինգի ծրագիրը, իրականացման կարգը և իրագեկման թերթիկը հաստատելու մասին» No 3958–Ա հրամանով 2020 թվականի մարտ ամսից ներդրվել է կոնքազդրային հողի դիսպլազիայի նորածնային սքրինինգը ՀՀ ողջ տարածքում, որն ուղղված է նորածինների մոտ կոնքազդրային հողախախտի վաղ հայտնաբերմանն ու հաշմանդամության կանխարգելմանը, որի շրջանակում կատարվել է 15883 հետազոտություն և հայտնաբերվել է կոնքազդրային հողախախտ 1018 երեխայի մոտ, իսկ 2021թ.՝ 211 երեխայի մոտ: Սկրինինգի ընթացքում հայտնաբերված բոլոր երեխաները հսկվում և ստանում են համապատասխան բուժում: 2019 թ. իրականացված անհատական ռետինոպաթիայի սկրինինգի արդյունքում 14 նորածնին կատարվել է լազերային միջամտություն, հակաանգիոգեն ներարկում են ստացել 12 երեխա, կատարված վիրտեոռետինալ և հարակից վիրահատությունների կամ այլ միջամտությունների թիվը՝ 10, 2020թ. 19 նորածնին կատարվել է լազերային միջամտություն, հակաանգիոգեն ներարկում են ստացել 21 երեխա, կատարված վիրտեոռետինալ և հարակից վիրահատությունների կամ այլ միջամտությունների թիվը՝ 18, 16 նորածնին կատարվել է լազերային միջամտություն, հակաանգիոգեն ներարկում են ստացել 22 երեխա, կատարված վիրտեոռետինալ և հարակից վիրահատությունների կամ այլ միջամտությունների թիվը՝ 8: 2023 թվականին նախատեսվում է անդրենոգենիտալ համախտանիշի նորածնային սքրինինգին ծրագրի ներդրում:

Ըստ նախարարության՝ Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցած կազմակերպությունների պայմանագրային գումարները սպառված լինելու պատճառով պացիենտին (երեխա) չսպասարկելու վերաբերյալ ստացվել է 427 բողոք,

որից՝ 2018թ.՝ 205, 2019թ.՝ 4, 2020թ.՝ բողոք չի ստացվել, 2021թ.՝ 88, 2022թ.՝ 130: Ներկայացված բողոքների արդյունքում իրականացվել են վերաքաշխումներ կազմակերպությունների պայմանագրային գումարներում: Ճահառուներից (երեխա) օրինական ներկայացուցիչներից հիմնական դեղերի ցանկում ներառված դեղը չստանալու վերաբերյալ բժշկական կազմակերպությունում (պոլիկլինիկաներում) առկա չլինելու պատճառով ստացվել է 132 բողոք, որից՝ 2018թ.՝ 22, 2019թ.՝ 43, 2020թ.՝ 35, 2021թ.՝ 11, 2022թ.՝ 21:

Տրամադրվել են նաև տվյալներ 2018-2022թթ. կառուցված/վող, վերակառուցվող բժշկական հաստատությունների վերաբերյալ, որոնք հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի, սանհանգույցներից օգտվելու հնարավորություններով:

2018թ.-ին շահագործման են հանձնվել ՀՀ Արարատի մարզի Արտաշատի և Գեղարքունիքի մարզի Սևանի բժշկական կենտրոնները: 2020թ.-ին մեկնարկել է ՀՀ Գեղարքունի մարզի Մարտունու բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցման աշխատանքները, 2021թ.-ին մեկնարկել են ՀՀ Վայոց Ձորի մարզային հիվանդանոցի, ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովտի ԱԿ կառուցման, ինչպես նաև ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ, ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի ԲԿ, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի ԲԿ, ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ԲԿ, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի ԲԿ, ՀՀ Արարատի մարզի Մասիսի ԲԿ վերակառուցման աշխատանքները: 2022թ.-ին մեկնարկել է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Նաիրիի ԲԿ կառուցման աշխատանքները:

2021 թվականի ընթացքում Առողջապահության նախարարության կողմից մշակվել և Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 2751-Լ հրամանով հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույց»⁸⁴-ը:

ՀՀ առողջապահության նախարարությունը աշխատանք է տարվում բուժաշխատողների շրջանում գենդերային զգայունության բարձրացման, կանանց, այդ թվում հաշմանդամություն ունեցող, սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու, աբորտների ընդհանրապես և սեռով պայմանավորված աբորտների մասնավորապես, կանխարգելման շուրջ վերապատրաստման ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ակադեմիկոս Ավդալբեկյանի անվան ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի մանկաբարձության, գինեկոլոգիայի և վերարտադրողական բժշկության ամբիոնի հետ համատեղ մշակվել է ուսումնական ծրագիր մանկաբարձուհիների, բուժքույրերի, մանկաբարձ-գինեկոզների վերապատրաստման դասընթացներում հաշմանդամություն ունեցող կանանց սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանության և բուժօգնության տրամադրման մասին թեմաների ներառմամբ, իրականացվել է վերոնշյալ ամբիոնի

⁸⁴ Տե՛ս <https://www.moh.am/images/legal-806.pdf> հղումով:

դասախոսների համար դասընթաց՝ վերապատրաստման գործընթացում այդ հարցերին անդրադառնալու համար: Ընտանեկան բժիշկների ու մանկաբարձ գինեկոլոգների համար նախատեսված կատարելագործման դասընթացներում ներառված են և պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման, մասնավորապես, վերարտադրողական առողջության, առանձնահատկությունների, դեղորայքի ձեռք բերման իրավական հիմքերն ու բժիշկ- հաշմանդամություն ունեցող անձ փոխհարաբերությունների բժշկա-իրավական ու բիոէթիկական կարգավորումների, ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներին առնչվող հարցերի շուրջ: Վերոնշյալ հարցերին առնչվող բոլոր թեմաներն ընդգրկված են նաև ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության նշված մասնագիտություններով կլինիկական օրդինատորների ուսումնական ծրագրերում:

Կազմակերպությունների կողմից ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համար կազմակերպվել և ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կրեդիտավորվել է «Կանանց տարբեր խմբերի վերարտադրողական առողջության և իրավունքի ոչ խտրական մոտեցման սկզբունքները բուժաշխատողների մոտ» թեմայով սեմինար, որի ընթացքում քննարկվել են նաև հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողականության հարցերին վերաբերվող հարցեր: Սեմինարին մասնակցել է 200 բուժաշխատող: 2022 թվականի հոկտեմբերի վերջին նախատեսվում է վերը նշված սեմինարի երկրորդ փուլը:

Ներկայում պետական պատվերի շրջանակներում իրականացվում է հաշմանդամություն ունեցող երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնությունը, վերականգնողական և առողջարանային բուժումը, դժվարամատչելի հետազոտությունների իրականացումը և դեղերով ապահովումը: Նախարարի 2019 թվականի N 3462-Լ հրամանով հաստատվել է «Երեխաների վերականգնողական բուժման բարելավման միջոցառումների ժամանակացույցը», համաձայն որի նախատեսվում է ծառայությունը կանոնակարգող մի շարք փաստաթղթերի մշակում և նոր մարզային վերականգնողական կենտրոնների ստեղծում: Նպատակային ծրագրի շրջանակներում Առողջապահության նախարարության, «Արաբկիր» Միացյալ մանկական հիմնադրամի և «Արաբկիր» ԲՀ-ի երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի փորձագետների կողմից կատարվել է Հայաստանում գործող մանկական վերականգնողական ծառայությունների կարողությունների արագ գնահատում, գործող ծառայությունների քարտեզագրում, ոլորտի հիմնախնդիրների վերհանում, \$ՄԴ (ICF) հիման վրա երեխաների զարգացման խանգարումների գնահատման, դասակարգման և վարման համար մի շարք գործիքների մշակում, ծառայությունների բարելավման նպատակով առաջարկությունների փաթեթի պատրաստում: Փաթեթը ներկայացվել է կլոր

սեղանին շահագրգիռ գերատեսչություններին, մասնագիտական կառույցներին և հասարակական կազմակերպություններին:

Առողջապահության նախարարի 2020 թվականի մարտի 3-ի թիվ 1068-Լ հրամանով հաստատվել են զարգացման խանգարումներով/հապաղումներով երեխաների վաղ հայտնաբերման, վաղ միջամտության և վերականգնողական ծառայությունների իրականացման կարգերը, մանկական արտահիվանդանոցային վերականգնողական կենտրոնի (ծառայություն, բաժանմունք) անձնակազմի աշխատանքի ընդհանուր նկարագիրը, հաստատվել է Առողջապահության նախարարի 2020 թվականի հունիսի 18-ի «Նեյրոօրթոպեդիկ ախտաբանությամբ երեխաների բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններին և նեյրոօրթոպեդիկ ախտաբանություններով երեխաներին տրամադրվող հենասայլակների բաշխացուցակը հաստատելու մասին» թիվ 1923-Ա հրամանը, համաձայն որի մարդասիրական օգնության շրջանակներում տրամադրվել 155 հատ հենասայլակներ, ՀՀ առողջապահության նախարարության, «Զինիշյան» հիշատակի հիմնադրամի և Սևանի քաղաքապետարանի կողմից կնքված եռակողմ համաձայնագրի շրջանակներում ստեղծվել է և շահագործման հանձնվել Սևանի մանկական վերականգնողական կենտրոնը:

Չնայած ձեռնարկված վերոնշյալ քայլերի՝ ոլորտում դեռևս առկա են լուծում պահանջող խնդիրներ:

Պաշտպանի՝ 2021 տարեկան հաղորդմամբ բարձրացվել են մի շարք խնդիրներ՝ առողջության պահպանման իրավունքի պատշաճ իրացման տեսանկյունից: Նշված խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս առկա են հետևյալ խնդիրները.

Բժշկական կենտրոններում հսկողության ուժեղացման անհրաժեշտությունը՝ բժշկական օգնություն իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին անհամապատասխանությունը բացահայտելու, ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և թափանցիկ բաշխման ապահովման համար, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց համար տրամադրվող ուղեգրերի չափաքանակի ավելացման անհրաժեշտությունը, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների առողջության առաջնային պահպանման օղակը հասանելի դարձնելու ուղղությամբ անհապաղ քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը, շտապ օգնության հեռախոսահամարներն անխափան գործելու նպատակով հավելյալ հեռախոսահամարների ներդնման կարիքը, շտապ դեպքերի կանչերի համար շարունակաբար շտապօգնության բրիգադների և մեքենաների թվի ավելացման անհրաժեշտությունը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019 թվականին հրապարակած տվյալների՝ ըստ բնակչության վայրի, հետազոտված բնակչությունը, որպես բժշկական խորհրդատվության կամ բուժման չդիմելու հիմնական պատճառ, նշել է

ինքնաբուժումը (երևանաբնակներ՝ 62.2%, այլ քաղաքների բնակչություն՝ 56.2% և գյուղական բնակչություն՝ 47.2%), ֆինանսականը (գյուղական բնակչություն՝ 22.8%, այլ քաղաքների բնակչություն՝ 20.3%, երևանաբնակներ՝ 11.0%): Ֆինանսական պատճառը բնակության բոլոր վայրերում նշվել է որպես երկրորդ կարևոր պատճառ:

Ոչ պակաս կարևոր ցուցանիշ է ամենամոտ բուժկետի հեռավորությունը տնային տնտեսությունից: Ըստ 2018թ.-ի հետազոտության, նման տվյալներ ստացվել են միայն գյուղական բնակավայրերով: Ըստ այդ տվյալների, գյուղաբնակ տնային տնտեսությունների 73.5%-ը պատասխանել է, որ բուժկետը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Միևնույն ժամանակ, տնային տնտեսությունների 0.5%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 10 կմ-ից հեռու⁸⁵: **Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2022 թվականին հրապարակած տվյալների՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառներն ըստ աղքատության մակարդակի հետևյալն են.**

(%)

	Ոչ աղքատ	Աղքատ	Ճայրահեղ աղքատ
Ընդամենը այդ թվում՝	100	100	100
ինքնաբուժում	61.9	63.2	55.0
ֆինանսապես ի վիճակի չէի բուժվելու	5.4	15.7	13.5
չատ հեռու է	0.1	0.0	0.0
խնդիրը լուրջ չէր	8.0	5.5	3.9
կարիք չի եղել	2.8	2.8	8.8
բժիշկը բարեկամ/ընկեր է	17.7	8.9	8.7
այլ	4.1	3.9	10.1

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցել է բնակչության միայն 30.5%-ը: Ըստ աղքատության մակարդակի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցողներից ծայրահեղ աղքատ են եղել 2.6%-ը, աղքատ՝ 31.4%-ը և ոչ աղքատ՝ 66.0%-ը, իսկ բժշկական ապահովագրություն ունեցողներից ծայրահեղ աղքատ է 0.2%-ը, աղքատ՝ 10.8%-ը և ոչ աղքատ՝ 89.0%-ը⁸⁶:

2021 թվականին «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում բացվել է մանկական հոգեբուժական բաժանմունքը, որտեղ պետպատվերի շրջանակում ստացիոնար բուժում են ստանում երեխաները համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից, ընդհանուր՝ 12 մահճակալ: Սակայն խնդրահարույց է մնում մարզերում երեխաներին հոգեբուժական ծառայություններ մատուցելու

⁸⁵ Տե՛ս https://armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf հղումով:

⁸⁶ Տե՛ս <https://armstat.am/am/?nid=82&id=2529> հղումով:

հարցը: Պաշտպանի դիտարկումները վկայում են, որ կան մարզեր, որտեղի հիվանդանոցներում փթափուր է հոգեբույժի հաստիք, իսկ մանկական հոգեբույժի հաստիք առհասարակ նախատեսված չէ և ծնողները ստիպված են երեխաների բերել երևան հոգեբուժական խորհրդատվություն և ծառայություններ ստանալու համար:

Հարցի շրջանակներում անհրաժեշտ է շեշտել նաև առողջության համապարփակ բժշկական ապահովագրության ներդրումը, որի հայեցակարգը ըստ Առողջապահության նախարարության՝ քննարկման փուլում է:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրահանգել, որ **Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:**

Առաջարկություններ

- *Տրանսպորտային միջոցներ և ֆինանսական միջոցներ հատկացնել մանկաբույժների պարբերական այցերը դեպի գյուղեր ապահովելու համար:*
- *Մարզային հաստատությունները հազեցնել սարքավորումներով:*
- *Ավելացնել շտապօգնության բրիգադների քանակը և վերանայել կայանների տեղեկայվածությունը:*
- *Ուժեղացնել բժշկական կենտրոններում հսկողությունը*
- *Ավելացնել բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց համար տրամադրվող ուղեգրերի չափաքանակը:*
- *Ներդնել առողջության համապարփակ բժշկական ապահովագրության համակարգ:*
- *Մանկաբույժների, այդ թվում՝ մանկական հոգեբույժներ հաստիքների ավելացում նախատեսել մարզերում:*

2) Նեոնատալ և պերինատալ մահացության բարձր ցուցանիշները

2011 թվականից ի վեր արձանագրվել է երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի, տնային մահերի դեպքերի թվի իջեցում, ինչպես նաև մանկական (0-1 տարեկան) և 0-5 տարեկան երեխաների մահացության եական կրճատում (2016 թվականի մանկական մահացության ցուցանիշը կազմում է 8,8%՝ 2010 թվականի 11,4%՝ համեմատությամբ): Ավելին, 2013 թվականին Հայաստանում առաջին անգամ գրանցվեց 10%՝ ցածր մանկական մահացության ցուցանիշ, ինչի շնորհիվ Հայաստանը դասվեց ցածր մանկական մահացություն ունեցող երկրների շարքում:

Մանկական մահացության կառուցվածքում վաղ նորածնային մահացության տեսակարար կշռի կրճատում շուրջ 10 %-ով, իսկ պերինատալ պատճառներից մանկական մահացության ցուցանիշի նվազել է գրեթե 1/3-ով:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշմամբ ընդունված Երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվում են հետևյալ թիրախները.

- ա. նորածնային (0-28 օրական) մահացության ցուցանիշը կկրճատվի նվազագույնը 15 %-ով (ելակետ՝ 6.7 ‰, նպատակակետ՝ ≤ 5,5 ‰),
- բ. բնածին արատներով ծնված երեխաների տեսակարար կշիռը նորածինների ընդհանուր թվաքանակում կնվազի շուրջ 15 %-ով (ելակետ՝ 1.7 ‰, նպատակակետ՝ ≤ 1,5‰),
- գ. մանկական (0-1 տարեկան) մահացության ցուցանիշը կնվազի 20 %-ով (ելակետ՝ 8,8 ‰, նպատակակետ՝ ≤ 7 ‰),
- դ. մինչև 5տ. երեխաների մահացության ցուցանիշը կնվազի 20 %-ով (ելակետ՝ 10,3 ‰, նպատակակետ՝ ≤ 8,5 ‰),
- ե. մինչև 1 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշը կնվազի 10 %-ով (ելքային ցուցանիշ՝ 1.7%, նպատակակետ՝ ≤ 1,5%),
- զ. մինչև 14 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշը կնվազի 20 %-ով (ելքային ցուցանիշ՝ 0,5%, նպատակակետ՝ ≤ 0,4 %):

Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2022» զեկույցով ներկայացվել են հետևյալ վիճակագրական տվյալները⁸⁷՝ Մեռելածնության, նորածնային, շուրջծնական և մանկական մահացության գործակիցները, 2011-2021թթ.

Տարի Year	Գործակիցները՝ 1 000 ծնվածի (կենդանի ծնվածի և մեռելածնի) հաշվով/ Rates, per 1 000 births (livebirth and still birth)			Գործակիցները՝ 1 000 կենդանի ծնվածի հաշվով Rates, per 1 000 live births		
	մեռելածնության Still birth	նորածնային մահացության Neonatal	շուրջծնական (պերինատալ) մահացության Perinatal	նորածնային մահացության Neonatal mortality	հետնորածնային մահացության Post neonatal mortality	մանկական մահացության Infant mortality
Ընդամենը/Total						
2011	19.2	8.3	25.3	8.4	3.2	11.6
2012	18.7	7.8	24.1	7.9	2.9	10.8
2013	16.7	7.1	21.9	7.2	2.5	9.7
2014	17.0	6.6	21.8	6.7	2.1	8.8
2015	18.7	6.2	23.3	6.3	2.5	8.8

⁸⁷ Տե՛ս <https://armstat.am/am/?nid=81&id=2535> հղումով:

2016	16.9	6.0	21.0	6.1	2.5	8.6
2017	16.5	6.1	20.6	6.2	2.0	8.2
2018	16.7	4.9	20.1	5.0	2.1	7.1
2019	16.5	4.6	19.3	4.7	1.4	6.1
2020	12.3	5.5	16.0	5.6	1.8	7.4
2021	13.5	4.8	16.4	4.9	2.0	6.9
<u>Զտնայր/Urban</u>						
2011	18.4	8.3	24.7	8.5	2.8	11.3
2012	18.5	8.0	24.2	8.2	2.4	10.6
2013	16.1	7.3	21.4	7.4	2.1	9.5
2014	16.7	6.4	21.4	6.5	2.1	8.6
2015	18.4	5.9	22.8	6.0	2.6	8.6
2016	16.0	5.3	19.8	5.4	2.2	7.6
2017	16.3	5.5	20.2	5.6	1.6	7.2
2018	16.6	4.7	20.1	4.8	1.9	6.7
2019	15.9	4.0	18.5	4.0	1.2	5.2
2020	12.5	4.6	16.1	4.7	1.4	6.1
2021	13.5	4.5	16.4	4.5	2.1	6.6
<u>Գյուղ/Rural</u>						
2011	20.7	8.2	26.4	8.3	3.9	12.2
2012	19.0	7.3	23.9	7.5	3.5	11.0
2013	17.8	6.8	22.7	6.9	3.2	10.1
2014	17.6	6.8	22.4	6.9	2.2	9.1
2015	19.2	6.6	24.2	6.7	2.6	9.3
2016	18.6	7.4	23.3	7.5	3.1	10.6
2017	17.0	7.4	21.4	7.5	2.6	10.1
2018	17.0	5.2	20.0	5.3	2.6	7.9
2019	17.7	5.8	20.9	5.9	1.9	7.8
2020	11.7	7.6	15.8	7.7	2.4	10.1
2021	13.4	5.4	16.3	5.4	2.2	7.6

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 5-ի N 258-L որոշմամբ նշվել է, որ առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող 2020-2023 թվականների միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-L որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 26-րդ կետի 26.1-ին ենթակետով ամրագրված է՝ «Մոր և մանկան, առողջության բարելավում, վերարտադրողական ներուժի ավելացում, ծնելիության անկման տեմպերի նվազեցում» միջոցառումը: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՎԿ) տվյալների՝ վերջին 3 տասնամյակների ընթացքում ծնելիության ցածր, անգամ պարզ վերարտադրություն չապահովող մակարդակով (1.57) պայմանավորված՝ արձանագրվել է ծնելիության և ժողովրդագրական ցուցանիշների վատթարացում: Ծնելիության ցուցանիշը շարունակաբար նվազել է (1990 թ.՝ 22.5‰, 2000 թ.՝ 10.6‰, 2010 թ.՝ 14.7‰, 2018 թ.՝ 12.3‰)՝ կրճատվելով 1.8 անգամ: Որպես հետևանք, կենդանածինների թիվը 1990 թ. համեմատ կրճատվել է 2.2 անգամ (2019 թ.՝ 36131 ծնունդ՝ 1990 թ. 79882-ի դիմաց), իսկ բնական աճի ցուցանիշը՝ 4,9 անգամ (2019 թ. այն կազմել է՝ 3.3‰՝ 1990թ. 16.3‰-ի դիմաց): Ծնելիության անկման հետևանքով 1990 թ. համեմատությամբ 2018 թ.-ին արձանագրվել է 0-14 տարեկան երեխաների թվի կրճատում 1/3-ով, կազմելով 20,2%, իսկ անաշխատունակ բնակչության թվի կրկնապատկում մինչև 11.6%, ինչը վկայում է բնակչության ծերացման մասին: Ծնելիության անկման \$ոնի վրա համակարգում շարունակում են օրակարգային մնալ հետևյալ խնդիրները՝ հղիների ախտաբանությունների վաղ հայտնաբերման ու բուժման ոչ բավարար մակարդակ, որի արդյունքում արձանագրվում է հղիության անբարենպաստ ելքով պայմանավորված վերարտադրողական կորուստների բարձր մակարդակ (ինքնաբեր վիժում, մեռելածնություն, չգարգացող հղիություն, վաղաժամ ծննդաբերություն նորածնի՝ ցածր քաշով), որոնց թիվը վերջին տարիներին չնայած զգալի նվազմանը, այնուամենայնիվ տատանվում է տարեկան 2500-3000 շրջանակներում:

Համաձայն «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ»-ի հրապարակած տվյալների⁸⁸

⁸⁸ Տե՛ս <https://www.moh.am/uploads/2020TG-arm.pdf> հղումով:

ՀՀ ԾՆԱՂՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԾՆՈՒՆԴՆԵՐ, ԿԵՆՂԱՆԱԾԻՆՆԵՐ, ՎԱՂ ԼԵՈՆԱՏԱԼ (ԾՆԱԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐՈՒՄ) ԵՎ ՊԵՐԻՆԱՏԱԼ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ, 2019

Աղյուսակ 3.15

Մարզեր	Ծնունդների թիվը	Կենդանածինների թիվը	Մեռածածինների թիվը	0-6 օրական հասակում (ծննդաբերական բաժանմունքներում) մահացած նորածինների թիվը	Պերինատալ մահացուլության ցուցանիշ	Վաղ նեոնատալ մահացուլության ցուցանիշ
ՀՀ	36064	35985	586	71	18.0	2.0
այդ թվում						
Երևան	21066	20973	488	59	25.5	2.8
Արագածոտն	635	634	5	0	7.8	0
Արարատ	1874	1881	6	2	4.2	1.1
Արմավիր	1084	1073	12	0	11.1	0
Գեղարքունիք	1857	1859	7	1	4.3	0.5
Լոռի	2091	2106	8	2	4.7	0.9
Կոտայք	1870	1871	13	0	6.9	0
Շիրակ	2937	2932	38	5	14.5	1.7
Սյունիք	1232	1236	2	2	3.2	1.6
Վայոց Ձոր	307	306	2	0	6.5	0
Տավուշ	1111	1114	5	0	4.5	0

ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 28-ի N 234-Ա որոշման հավելվածով ներկայացված է ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկուլյոցը: Տվյալ զեկուլյոցով նշվում է, որ 2021 թվականին մանկական մահացության (մինչև 1 տարեկան) ցուցանիշը 2020 թվականի համեմատ նվազել է 8,1 %-ով և կազմել 6,8 %, մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը նվազել է 2,5 %-ով և կազմել 8,0 %⁸⁹:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *Շարունակական քայլեր ձեռնարկել երեխաների մահացության ցուցանիշի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:*

- 3) Ոչ պաշտոնական (չձևակերպվող) վճարումերը (հատկապես
- 4) հիվանդանոցային պայմաններում)

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակներից է առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ: Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ դեռևս առկա

⁸⁹ http://www.parliament.am/draft_docs8/176_2022_Karavarityan_Zekuyts.pdf հղումով:

Է բժշկական ծառայությունների դիմաց արվող ոչ պաշտոնական վճարումների պրակտիկան: Ինդիքը թե՛ անվճար ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկման պակասն է, թե՛ գործնականում այդ ծառայությունների դիմաց բուժաշխատողների կողմից վճար պահանջելը:

Այսպես, «Թրանսփերենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՅԿ), ԱՄՆ ՄՉԳ-ի և «Ասպարեզ» լրագրողների ակումբի նախաձեռնությամբ «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում Հայաստանի 10 մարզերում իրականացված և 2017 թվականին հրապարակված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շատ հիվանդներ տեղյակ չեն պոլիկլինիկաներում մատուցվող անճար, վճարովի և համավճարի սկզբունքով գործող ծառայությունների մասին: Այսպես, ուսումնասիրության շրջանակներում անցկացված հարցման համաձայն՝ հարցվածների 22.7 %-ը կարծում է, որ պոլիկլինիկաներում մատուցվող ծառայությունները և թերապևտի՝ տուն կանչը «մասամբ են վճարովի», 4.3 %՝ որ այդ ծառայությունները լիովին վճարովի են, իսկ մնացած 19 % -ը խոստովանել է, որ ընդհանրապես ոչինչ չգիտի վճարովի և անվճար ծառայությունների մասին: Փորձագետների պնդմամբ ստեղծված իրավիճակը բնակչության շրջանում անվճար և վճարովի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման համար բավարար քայլեր չձեռնարկելու արդյունք է:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրությունը պարզել է նաև, որ շատ դեպքերում, նշված մարդիկ վճարել են բուժաշխատողներին սեփական նախաձեռնությամբ, իսկ բուժաշխատողները հազվադեպ են գումար պահանջել (դեպքերի միայն 4 %-ը)⁹⁰: Ինչ վերաբերում է պոլիկլինիկաներին, ապա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդիկ հիմնականում վճարել են տարբեր բժշկական ընթացակարգերի, ախտորոշման, խորհրդատվությունների և հետազոտությունների համար: Մինևույն ժամանակ, 64 % դեպքերում նրանք վճարել են բուժաշխատողների պահանջով, իսկ 36 % դեպքերում՝ սեփական ցանկությամբ՝ ավելի որակյալ ծառայություններ ստանալու ակնկալիքով⁹¹: Ավելին, Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության (ՀԺԱՀՀ) 2015-2016 համաձայն, ծնունդների 13 %-ի դեպքում կատարվել են ծննդաբերության հետ կապված վճարումներ: 2010 թվականի նույն հետազոտության համաձայն, վճարողների թիվն ավելացել է շուրջ 5 %-ով (7,9 %): Ընդ որում աճել է գյուղաբնակների թիվը: Եթե 2010 թվականին վճարումներ կատարել է գյուղաբնակ կանանց 5.8 %-ը, ապա 2015-ին ցուցանիշը դարձել է 14.1 %: Գրեթե բոլոր կանայք վճարումները կատարել են կանխիկ: Հարցված 5 կանանցից 2-ը վճարել են 51 հազար և ավելի դրամ⁹²:

⁹⁰ Հասանելի է հետևյալ հղումով. <https://med.news.am/arm/news/16581/shat-hivandner-sharunakum-en-vtcharel-poliklinikanerum-anvtchar-tsarayutyunneri-hamar-pordzaget.html>, <https://transparency.am/files/publications/1515577747-0-615102.pdf>.

⁹¹ Տես նույն տեղում:

⁹² Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf>.

2011 թվականի հունվարի 1-ից, որպես ծննդագնության պետական հավաստագրի տրամաբանական շարունակություն, Հայաստանում ներդրվել է երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը

Նախարարության տվյալների համաձայն՝ տրվող բուժօգնության դիմաց գումար գանձելու կամ պահանջելու դեպքերը կանխելու նպատակով 0-7 տարեկան բոլոր երեխաներին տրվում է երեխայի առողջության պետական հավաստագիր, որի դարձերեսին գետնոված է տեղեկատվություն՝ անվճար հիվանդանոցային բուժօգնության ծավալների վերաբերյալ, իսկ անմիջական կապ պահպանելու և հարցերին օպերատիվ լուծում տալու նպատակով նշված են ՀՀ առողջապահության նախարարության շուրջօրյա թեժ գծի և մոր և մանկան առողջության պահպանման վարչության հեռախոսահամարները:

Ըստ Առողջապահության նախարարության՝ Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով իրականացվող բուժօգնության նկատմամբ բժշկական կենտրոններում վերահսկողությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով:

ՀՀ առողջապահության նախարարի 18.01.2022 թ. թիվ 189-Ա հրամանի համաձայն՝ Քաղաքացիների դիմումների և բողոքների արագ արձագանքման բաժինն իրականացնում է պացիենտի գոհունակության գնահատման մշտադիտարկում: Վերջինս ունի մատուցված բժշկական ծառայություններից պացիենտի գոհունակության, խնդիր առաջանալու դեպքում դրանց լուծմանը նպաստելու նպատակ: Սակայն, պետք է գործի նաև դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդում ներկայացնելու գործուն համակարգ:

Կոմիտեի վերո նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *Բացառել ոչ պաշտոնական վճարումները՝*
 - *շարունակել բուժաշխատողների և հասարակության իրազեկումն անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ,*
 - *ներդնել ոչ պաշտոնական վճարումների դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդումներ ներկայացնելու գործուն համակարգ:*

5) Կանանց և երեխաների շրջանում թերսնուցման խնդիրները

Կանանց և երեխաների թերսնուցման խնդիրը և դրա հետևանքները բազմիցս քննարկվել և ուսումնասիրվել են մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից: Խնդիրը դիտարկվում է թե՛ կոնկրետ անձի առողջության պահպանման, թե՛ առհասարակ հասարակության վրա դրա

ազդեցության տեսանկյունից: Ընդ որում թերսուլցումը կարող է հանդիսանալ որոշ հիվանդությունների ծագման պատճառ, իսկ կանանց թերսուլցումը հատկապես հղիության ժամանակ կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև պտղի զարգացման վրա:

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, վերջինիս և Առողջապահության նախարարության անցած տարիների ջանքերը նպաստել են թերաճության մակարդակը գրեթե կիսով չափ կրճատելուն ու բացառապես կրճքով կերակրման մակարդակը 30 տոկոսով բարձրացնելուն: Մինևույն ժամանակ՝ պակաս ուշադրություն է դարձվել երեխաների գերքաշության և գիրության կանխարգելմանը: Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2015-16 թվականների հետազոտությունը (ՀԺԱՀ) բացահայտել է մինչև 5 տարեկան երեխաների շրջանում գերքաշություն ունենալու տարածվածություն ցուցանիշը 14 տոկոս է, ինչը ցույց է տալիս վերջին տասնամյակում այս ցուցանիշի աճի միտումը (2005 թվականին՝ 11 տոկոս): Ավելին, Հայաստանում մինչև 5 տարեկան երեխաների 14 տոկոսը գերքաշություն ունի: Ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների երեխաները, գյուղական շրջանների երեխաները և այն երեխաները, որոնց մայրերն ունեն միայն հիմնական կրթություն, ենթակա են գերքաշության ավելի բարձր ռիսկի: Չնայած նախաձեռնողյան խնամքի մեծ ծածկույթին՝ հղի կանայք չեն հետևում ճիշտ սնվելու կանոններին: Հղի կանանց շրջանում վատ սնվելու/թերի սննդակարգի սովորություն և միկրոտարրերի դեֆիցիտի լայն տարածվածություն. սակավարյունության վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տվյալները տատանվում են 12 տոկոսից մինչև 60 տոկոս միջակայքում (հղի կանանց 60 տոկոսը չի ընդունել երկաթի, իսկ 50 տոկոսը՝ ֆոլաթթվի հավելումներ, հղի կանանց 60 տոկոսի սննդակարգն ունի երկաթի, իսկ 66 տոկոսը՝ ֆոլաթթվի պակաս): Սա մասամբ տեղի է ունենում առողջապահական ծառայություններ մատուցողների կողմից ոչ բավարար ուշադրության ու հղի կանանց կողմից սննդային հավելումներ ընդունելու նկատմամբ ավանդական համոզմունքների/ դժկամության պատճառով⁹³:

Կոմիտեն թերսուլցման մասին խոսելիս հատկապես առանձնացնում է շաքարով հարուստ ըմպելիքների և վերամշակված արագ սննդի ավելորդ սպառման նվազեցման անհրաժեշտությունը, քանի որ դա նպաստում է երեխաների շրջանում գիրության խնդիրների սրացմանը:

ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 3791-Ա հրամանով հաստատվել է «Դպրոցներում երեխաների առողջ սնուցման և ֆիզիկական ակտիվության սկզբունքների ներառմամբ առողջությունը խթանող օրինակելի քաղաքականությունը», որն ուղարկվել է ՀՀ կրթության և գիտության

⁹³ Տե՛ս

<https://www.unicef.org/armenia/%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D6%87-%D5%BD%D5%B6%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4> հղումով:

Նախարարությանը հանրակրթական դպրոցներին տրամադրելու համար: Մշակվել և հրատարակվել են «Դպրոցահասակների առողջ սնուցում» ուղեցույցը մանկավարժների համար, «Դեռահասների առողջություն» և «Հոգ տարեք ձեր երեխաների առողջության մասին» բրոշյուրը դպրոցահասակ երեխաների մայրերի համար: Ըստ ԿԳՄՍՆ պաշտոնական տեղեկատվության՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի օգնությամբ, Ճյուղային սննդի ինստիտուտի տեխնիկական աջակցությամբ և Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսական օժանդակությամբ 2014 թվականից Հայաստանում իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Դրա շրջանակում ՀՀ վեց մարզերի (Արարատ, Վայոց ձոր, Սյունիք, Տավուշ, Ծիրակ և Արագածոտն) շուրջ 50.000 աշակերտներ ամեն օր ստանում են տաք սնունդ: Այս տարի նախատեսվում է ծրագրի ազգայնացման և պետությանը դրա աստիճանաբար փոխանցման գործընթացում ներգրավել նաև Լոռու և Գեղարքունիքի մարզերի դպրոցները: ԿԳՄՍ նախարարությունը պատրաստակամ է միավորել ջանքերը՝ երկու մարզում ապահովելու ծրագրի՝ հնարավորինս ամբողջական և որակյալ անցումը: Ծրագրի նպատակը միայն երեխաներին տաք սննդով ապահովելը չէ, այն ունի նաև շատ կարևոր այլ բաղադրիչ. թույլ է տալիս դպրոցի շուրջ միավորել համայնքի ջանքերը՝ առողջ սնունդը և ապրելակերպը դպրոցական բաղադրիչում ներառելու և դրա միջոցով հանրային վարքականոն ձևավորելու տեսանկյունից: Դեռևս 2008 թվականից ներդրված «Առողջ ապրելակերպ» դասընթացի վրա հիմնված՝ նախարարությունը նպատակ ունի չափորոշչային փոփոխություններից հետո դպրոցներում ունենալ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակ: Այս հարցում, ըստ փոխնախարարի, հնարավոր է համագործակցությունը «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հետ: Փորձ է արվելու բաղադրիչը դիտարկել իբրև ուսումնական գործընթաց, երբ դասերի ժամանակ խոսելով առողջ սննդի: Վերջին տասը տարիների ընթացքում ծրագրի շնորհիվ օրական շուրջ 100.000 երեխաներ ապահովվել են սննդով (այդ թվում՝ ՄԱԿ ՊՀԾ կողմից), ներդրումներ են իրականացվել համայնքների տնտեսական միջավայրի և առողջ ապրելակերպի գաղափարների զարգացման գործընթացներում: Տաք սնունդ պատրաստելու նպատակով ՀՀ կառավարությունը 1-4-րդ դասարանների յուրաքանչյուր երեխայի հաշվով դպրոցներին հատկացնում է օրական 140 դրամ⁹⁴:

Մինևույն ժամանակ, Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ հանրապետության ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության հարցը տարիներ շարունակել է մնալ արդիական: Հանրապետության մի շարք ուսումնական հաստատությունների սննդի կետերում վաճառվում են այնպիսի սննդատեսակներ, որոնց վաճառքն ուսումնական հաստատություններում արգելվում է: Սննդային գործոնով պայմանավորված՝ զանգվածային վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների առաջացման ու տարածման, ինչպես նաև զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով՝ ելնելով առողջ և ռացիոնալ սննդի սկզբունքից՝ ուսումնական

⁹⁴ Տե՛ս <https://escs.am/am/news/8812> հղումով:

հաստատություններում չօգտագործվող սննդամթերքը և չպատրաստվող նշված ճաշատեսակներն ու խոհարարական կերակրատեսակները սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի 26-րդ կետով: ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ղեկավարը սննդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ավելին, ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն: Մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի որակի վերաբերյալ բողոքների ստացման և խնդրի շուրջ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ խնդրի վերաբերյալ բողոքներ չեն ստացել մարզպետարանները: Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատություններում սննդի որակի և անվտանգության առնչությամբ ՀՀ սննդի անվտանգության տեսչական մարմնի կողմից ստուգում է իրականացվել թվով 3 մանկապարտեզներում: Արդյունքում փորձարկման են ենթարկվել տվյալ մանկապարտեզներում պահեստավորված կարագը և պանիրը, որոնցում հայտնաբերվել են ՄԱՖԱՄ (մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմներ) և ԱՑԽՄ (աղիքային ցուպիկի խմբի մանրէներ): Վտանգավոր սննդատեսակները ենթարկվել են ոչնչացման՝ սահմանված կարգով: Սննդամթերքի անվտանգության, դպրոցականների սնուցման կազմակերպման և դպրոցականների առողջ սնուցման իրականացումը կարևոր հարցեր են երեխայի առողջ ֆիզիկական զարգացման և դասընթացներին լիարժեք մասնակցության համար: Ուստի, վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասու պետական մարմինները պետք է ապահովեն հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02- 2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանմամբ:

Չնայած վերոնշյալի, առողջ սնուցման պրակտիկան մեծ տարածում չունի դպրոցներում և ընտանիքներում, ինչի մասին են վկայում սույն բաժնում ներկայացված ուսումնասիրությունները: Արդյունքում դեռևս համակարգային առումով խնդրահարույց է մնում երեխաների և կանանց թերսնուցման հարցը՝ պայմանավորված տարբեր գործոններով:

Կոմիտեի վերո նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *Ուժեղացնել առողջապահության և կրթության ոլորտների համագործակցությունը՝ ծնողներին և երեխաներին ճիշտ սննդակարգի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու վերաբերյալ:*
- *Ուժեղացնել վերահսկողությունը դպրոցական սննդի՝ իրավական ակտերով ամրագրված չափանիշների պահպանման նկատմամբ:*

4) Կենսամակարդակը

Կոմիտեն ափսոսանք է հայտնել, որ տնտեսական ճգնաժամի պատճառով աճել է աղքատության ցուցանիշը երեխաների շրջանում, ընդ որում՝ ամենաշատը տուժել են հաշմանդամություն ունեցող երեխաները: Կոմիտեն ողջունել է երեխաներ ունեցող ընտանիքների համար նախատեսված նպաստների գործող համակարգը, սակայն մտահոգված է, որ ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3 %-ը և աղքատ ընտանիքների միայն 4.1 %-ն են պարբերաբար օգտվում դրանցից, որն ընտանեկան նպաստների բանաձևի թերությունների և պետական օժանդակության առկա մեխանիզմների մասին ոչ բավարար իրազեկվածության հետևանք է:

Կոմիտեն առաջարկել է (կետ 44)՝

- *Նոր թափ հաղորդելով շարունակել պայքարն աղքատության դեմ՝ ապահովելով նպաստների համակարգերի մեջ բոլոր խոցելի ընտանիքների ընդգրկումը, ապահովելով պետական օժանդակության հասանելիությունը նրանց համար, և բարձրացնելով առկա նպաստների մասին իրազեկվածությունը,*
- *Երաշխավորել բոլոր երեխաների համարժեք կենսամակարդակի իրավունքը:*

Մանկական աղքատության հիմնախնդրին անդրադարձնել է կատարվել սույն զեկույցի նախորդ բաժնում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016 զեկույցի, 2016 թվականին մինչև 18 տարեկան երեխաների 2.0 %-ը ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 34.2 %-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.8 և 29.4 %-ը: Այսպիսով, երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը: 2016 թվականին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 24.0%-ը ստացել է ընտանեկան նպաստ, այդ թվում՝ ընտանեկան

նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7 %-ը, ծայրահեղ աղքատների՝ 50.3 %-ը և ոչ աղքատների՝ 18.5 %-ը⁹⁵:

2016 թվականի տվյալներով աղքատ է աղջիկների 36.1 և տղաների՝ 32.4 %-ը (բոլոր երեխաների 34.2 %-ը): Մանկական աղքատությունն ըստ տարածաշրջանների. քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 2.1%՝ գյուղական բնակավայրերում բնակվող երեխաների 1.9 %-ի համեմատ⁹⁶:

2008 թվականի համեմատ Հայաստանում մանկական աղքատության ցուցանիշները դեռևս շատ բարձր են: Եթե 2008 թվականին ծայրահեղ աղքատ երեխաների 2.0%-ը, ապա 2016-ին՝ 1.6 %-ն: Աճել է նաև աղքատ երեխաների թիվը: Եթե 2008 թվականին աղքատ էին երեխաների 29.8 %-ը, 2016-ին՝ 34.2 %-ը⁹⁷:

Ճարուհակվել են «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի իրականացման աշխատանքները, որի շրջանակներում տրամադրվող ընտանեկան նպաստը սահմանում է ընտանիքի յուրաքանչյուր՝ մինչև 18 տարեկան անդամներին տրվող հավելումներ, որոնց չափը տարբերակվում է ելնելով ընտանիքի անապահովությունից, ընտանիքում մինչև 18 տարեկան անդամների թվից և ընտանիքի բնակության վայրից (բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր):

2022թ. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված մինչև 18 տարեկան անդամ (երեխա) ունեցող շուրջ 53000 ընտանիք ստանում է ընտանեկան նպաստ:

Սոցիալական աջակցության ծրագրերն ավելի հասցեական դարձնելու նպատակով վերանայվում է նաև ընտանիքների անապահովության գնահատման կարգը՝ ծայրահեղ աղքատներին պարենային զամբյուղով ապահովելու համար: Այսինքն՝ հասցեականությունն ուղղված է ծայրահեղ աղքատների առավելագույն ներգրավվածությանը անապահովության նպաստների համակարգում՝ երկրում ծայրահեղ աղքատության վերացման նպատակով: Անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմամբ նախատեսվում է ընտանիքներին դուրս բերել աղքատությունից՝ զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ:

ՀՀ ԱՄՅՆ տվյալների համաձայն՝ աղքատության և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիմնական բնութագրիչների շարժը 2015-2020 թվականներին հետևյալն է.

	2015	2016	2017	2018	2019	2020
Աղքատության մակարդակ ըստ աղքատության միջին գծի/շեմի, % ¹	29.8	29.4	25.7	23.5	26.4	27.0

⁹⁵ Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=82&id=1988>:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում:

	2015	2016	2017	2018	2019	2020
Ծայրահեղ աղքատության մակարդակ ըստ աղքատության պարենային գծի/շեմի, %	2.0	1.8	1.4	1.0	1.4	0.7
Աղքատ ընտանիքների քանակ ըստ աղքատության միջին գծի/շեմի, գնահատական ¹	242,475	238,140	206,885	188,782	212,078	216,898
Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված/ փաստագրված ընտանիքների քանակ	136,000	131,000	125,000	115,621	105,621	104,929
Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում նպաստառու ընտանիքների քանակ	105,408	106,296	103,723	95,516	86,757	90,751
Նպաստառու ընտանիքների մասնաբաժինը փաստագրված ընտանիքների թվում, %	77.5	81.1	83	82.6	82.1	86.5
Նպաստառու ընտանիքների հարաբերակցությունը ըստ աղքատության միջին գծի/շեմի աղքատ ընտանիքների քանակի նկատմամբ, %	43.5	44.6	50.1	50.6	40.9	41.8
Մեկ նպաստառու ընտանիքի հաշվով միջին ամսական նպաստ/աղքատության միջին շեմ հարաբերակցություն, % ¹	72.8	76.7	75.3	73.6	71.2	70.5
Մեկ նպաստառու ընտանիքի հաշվով միջին ամսական նպաստ/պարենային/ծայրահեղ աղքատության շեմ հարաբերակցություն, %	125.9	134.5	129.2	126.3	131.9	131.6
Յուզագրային հոդվածներ						
Միջին ամսական ընտանեկան նպաստի չափը, ՀՀ դրամ	30,350	31,350	31,350	31,350	31,350	31,350
Աղքատության պարենային շեմ, ՀՀ դրամ	24,109	23,313	24,269	24,827	23,763	23,828
Աղքատության միջին շեմ, ՀՀ դրամ ¹	41,698	40,867	41,612	42,621	44,048	44,482
Երեխաների աղքատության մակարդակը, %	33.7	34.2	30.8	29.2	33.6	33.9
Երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը, %	2.5	2.0	2.1	1.5	2.3	1.0

Կոմիտեի վերո նշված առաջարկությունը չի կատարվել, քանի որ դեռևս լիովին երաշխավորված չէ բոլոր երեխաների համարժեք կենսամակարդակի իրավունքը:

2. Կրթությունը, ժամանցը և մշակութային միջոցառումները (Կոնվենցիայի 28-րդ, 29-րդ և 31-րդ հոդվածները)

1. Կրթությունը, ներառյալ՝ մասնագիտական վերապատրաստումը և ուղղորդումը

Կոմիտեն ողջունել է այն, որ մայրենի լեզվով կրթությունը և դասագրքերը հասանելի են փոքրամասնությունների խմբերի երեխաներին: Կոմիտեն մտահոգիչ է համարել հետևյալը.

- հանրակրթական ուսումնական հաստատությունների, հատկապես՝ Նախակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների անբավարար վիճակը, այդ թվում՝ ջեռուցման, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների անբավարարությունը.
- կրթության ցածր որակը և ցածր պահանջարկն արհեստավարժ ուսուցիչների նկատմամբ.
- հիմնական կրթությունից հետո դպրոցներից դուրս մնացողների տոկոսային բարձր ցուցանիշը.
- դպրոցների ուսումնական ծրագրերի շրջանակում երկրում առավել տարածված կրոնի ուսուցումը որպես պարտադիր առարկա:

Կոմիտեն առաջարկել է (կետ 46)՝

- ներդրումներ անել հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքի բարելավման համար, այդ թվում՝ բարելավելով ջեռուցման, ապահով խմելու ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հասանելիությունը, մասնավորապես՝ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերում.
- համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրել ուսուցիչների կրթությունը բարելավելու համար, ինչպես նաև՝ որակավորման խիստ պահանջներ սահմանել որպես ուսուցիչ աշխատող անձանց համար.
- իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելով դպրոցներից դուրս մնալու խորքային պատճառները, և շահագրգռել երեխաներին, որպեսզի շարունակեն կրթությունը միջնակարգ դպրոցում.
- վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ դրանում արտացոլելով բոլոր երեխաների կրոնի ազատությունը և վերացնելով Հայաստանյայց եկեղեցու պատմության առարկայի պարտադիր դասավանդումը:

- 1) Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում

Հանրակրթական, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների, այդ թվում՝ ջեռուցման, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների անբավարարությունը շարունակում է խնդրահարույց մնալ Հայաստանում: Խնդիրը մշտապես բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկուլյցներում և հաղորդումներում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը», որի շրջանակներում մինչև 2030 թվականը պետք է ամրացվեն կամ նոր կառուցվեն թվով 377 դպրոցներ: Ծրագրի իրականացման համար ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1426-Ն որոշմամբ հաստատվել են «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրից» բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիրը, որի 1.1 կետի համաձայն պետք է հաստատվի ուժեղացվող և նոր կառուցվող դպրոցների 46 գերակա շենքերի ցանկը:

2017 թվականին նախաձեռնվել էր նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների ուսումնասիրման ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ գործող իրավական դաշտը, կատարվել են այցելություններ և մշտադիտարկումներ նշված հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Կատարված մշտադիտարկումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկուլյց⁹⁸, որում ներկայացվել են մշտադիտարկման արդյունքում վեր հանված ջրի և սանիտացիայի հասանելիության վիճակը, բացերը և խնդիրները և դրանց հաղթահարման համար առաջնահերթությունները: Այս խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում⁹⁹: Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման ընթացքում արձանագրված և արտահերթ հրապարակային զեկուլյցում առավել մանրամասն ներկայացված հիմնական խնդիրները հանգում են հետևյալին: Արտահերթ զեկուլյցին հաջորդիվ՝ 2020 թվականի ընթացքում մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել փաստեր, որոնք վկայում են ջրամատակարարման բացակայության մասին: Մասնավորապես, մշտադիտարկված 121 դպրոցից շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովված են եղել 105-ը,

⁹⁸ Տե՛ս <https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf> հղումով:

⁹⁹ Տե՛ս <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> (էջեր 151-156), <https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> (էջեր 195-202), <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> (էջեր 285-295):

իսկ մնացած 16 դպրոցից 1-ի (Սյունիքի մարզի) ներսում ջուր չկա, իսկ մյուս դպրոցում 3 օրը մեկ անգամ գրաֆիկով (Սյունիքի մարզի), իսկ 14 դպրոցում տրվում է ժամային գրաֆիկով: Օրինակ, Սյունիքի Խնածախ համայնքի միջնակարգ դպրոցում կատարված այցելության ընթացքում դպրոցի վարչակազմի կողմից ստացվել է տեղեկությունն առ այն, որ դպրոցի համար խմելու ջուրը բերվել է մոտակա աղբյուրից, իսկ երեք օրը մեկ անգամ տրվում է խմելու համար անափտան ջուր (խողովակների հին լինելու պատճառով ջրի գույնը և համը փոխված են լինում), որը հավաքվելով բաքերում, օգտագործվում է սանհանգույցներում: Բացի աղբյուրից բերվող ջրից, երեխաները նաև սեփական շշերով են ջուր բերում դպրոց: Ջուրը գրաֆիկով է հասանելի նաև, օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 90 դպրոցում՝ առավոտյան 10-ին և երեկոյան ժամերին, Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի դպրոցում՝ յուրաքանչյուր օր առավոտյան 8:30-ից մինչև 14:00-ն, Վերնաշենի դպրոցում՝ 9:00-ից 12:00-ն: Ընդ որում, ի տարբերություն քաղաքային համայնքների, գյուղական համայնքներում խնդիրն առավել նկատելի է: Այսպես, ջրամատակարարումը բացակայում է բացառապես մարզային դպրոցներում (օրինակ՝ Արագածոտնի մարզի 15 դպրոցում, Գեղարքունիքի մարզի 13 դպրոցում, Ծիրակի մարզի 12 դպրոցում): Նշվածը չափազանց խնդրահարույց է և ներկայացնում է ընդհանուր պատկերը Երևանում և մարզերում գործող հաստատությունների վերաբերյալ: Ստացվում է, որ Երևանում սովորող երեխաները մշտապես կարող են օգտվել խմելու հոսող ջրից, մինչդեռ, մարզերում ջրի հասանելիության ապահովման համար կիրառվում են տարբեր մեթոդներ (հաճախ նաև անձնական միջոցների հաշվին): Նշված խնդրի հետ մեկտեղ, հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված մի շարք դպրոցներում ջուրն անհասանելի էր ծորակների ոչ սարքին լինելու կամ դրանց բացակայության պատճառով: Ավելին, ուսումնասիրության ընթացքում հանդիպել են այնպիսի դեպքեր, երբ ամբողջ դպրոցում առկա է եղել ընդամենը մեկ ծորակ, ինչը բավարար չի կարող համարվել ջրի հասանելիության իրավունքի իրացման տեսանկյունից: Ավելին, գործող օրենսդրությամբ բացակայում են նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ համապատասխան շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ՝ ի տարբերություն հանրակրթական ուսումնական հաստատությունների: Դիտարկվել են նաև խմելու նպատակով ջրի օգտագործման եղանակները: Ուսումնական հաստատություններում խմելու ջրի հասանելիությունն ունի կենսարար նշանակություն: Հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպես են երեխաներն օգտվում խմելու ջրից: Վերջինս շատ կարևոր է երեխաների շրջանում ջրով փոխանցվող բակտերիալ, վիրուսային, սնկային և մակաբուծային հիվանդությունների առաջացման, դրա տարածման և ռիսկերի կառավարման տեսանկյունից¹⁰⁰:

¹⁰⁰ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ինֆեկցիոն բնույթի հիվանդությունների 80%-ը հիմնականում պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարահիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ: Ջրի միջոցով տարածվող հիվանդությունները լինում են ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն: Ջրամատակարարման կազմակերպման և շահագործման սանիտարական նորմերի, կանոնների

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են խմելու ջրից օգտվելու տարբեր եղանակները: Գյուղական նախադպրոցական հաստատություններում 34% դեպքերում երեխաները ջուր են խմում ընդհանուր բաժակից, իսկ քաղաքային հաստատություններում տվյալ տոկոսային հարաբերակցությունը կազմում է 22%: Ուսումնասիրվել է նաև սանհանգույցների հասանելիությունը: Կատարված այցի և ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել մի իրավիճակ, երբ զուգարանակոնքը թեև տեսողական առումով գտնվել են սարքին վիճակում, սակայն պարզվել է, որ ջրթող բաքերը գտնվել են անսարք վիճակում: Հաստատության յուրաքանչյուր հարկում աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց տեղակայված լինելու պահանջի ապահովման առաջնությամբ պարզվել է, որ հետազոտությանը մասնակցած 121 դպրոցի 35% շենքերի յուրաքանչյուր հարկում ըստ սեռերի առանձնացված սանհանգույցներ բացակայում են: Այցերի ընթացքում արձանագրվել են նաև մի շարք խնդրահարույց և անթույլատրելի դեպքեր, երբ սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրված չեն եղել փակ խցիկներում: , ինչը ևս խնդրահարույց է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության, սեռական դաստիարակության և հոգեբանական կերտվածքի տեսանկյունից: Ներկայացվածն անընդունելի է հատկապես երեխայի լավագույն շահի տեսանկյունից: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն արձանագրել են նաև, որ հաստատությունների սանհանգույցներում զուգարանակոնքերը միմյանցից անջատված չեն եղել նույնիսկ միջնորմերով: Առանձնացված սանհանգույցների բացակայությունը խնդրահարույց է երեխաների շրջանում առկա բռնության դեպքերի ռիսկի ավելացման տեսանկյունից: Հատկապես սանհանգույցների առանձնացված լինելը հատկապես կարող է բարձրացնել բռնության ռիսկի գործոնը, հատկապես տարբեր տարիքային խմբերի երեխաների՝ նույն սանհանգույցից օգտագործումը կարող է ռիսկային լինել տարիքով ավելի փոքր երեխաների համար: Ավելին, բավարար իրազեկման պակասի պարագայում բռնության 236 տեսանկյունից կարող է չափազանց ռիսկային լինել նաև դեռահաս աղջիկների և տղաների նույն սանհանգույցից օգտվելը: Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ շենքի ներսում չի գործել սանհանգույց դրսում տեղակայված լինելու պատճառով: Խնդիրների ուսումնասիրությամբ նաև դիտարկվել է, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների մասին իրազեկվածության պակասն է հանդիսանում ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջների և չափորոշիչների չապահովման պատճառ: Հաստատություններում իրականացված հարցումների արդյունքները վկայում են, որ երբեմն հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրազեկված չէ մանկական նախադպրոցական օբյեկտների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման հետևանքով հնարավոր բացասական հետևանքների մասին: Այսպիսով, վերոգրյալի

Խախտումը բերում է ինֆեկցիոն հիվանդությունների բռնկմանը: Ջրի միջոցով տարածվում են խոլերան, որովայնային տիֆը և պարատիֆերը, դիզենտերիան, սալմոնելոզը և այլն: Տե՛ս http://www.armwater.am/files/adb/Gap/Gender%20training%20_2015.pdf հղումով

հաշվառմամբ՝ պետության ուշադրությունն ենք հրավիրում վերը նշված խնդիրների վրա: Պետք է նկատի ունենալ, որ պետությունն ինքը պետք է նախաձեռնի և մշտադիտարկման պարբերաբար աշխատանքների միջոցով հետևողական լինի Մարդու իրավունքների պաշտպանի «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում վեր հանված խնդիրների լուծման ուղղությամբ: Ընդ որում՝ պետության կողմից զեկույցում արձանագրված խնդիրների մշտադիտարկումը պետք է մշտական գործընթաց լինի: Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետության առաջնահերթ ուշադրության առարկան պետք է լինեն ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ ամրագրել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար, գործողությունների ազգային ծրագրում ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության բարձրացման ուղղությամբ միջոցառումների ներառումը:

Հանրակրթական ու նախադպրոցական կրթական ուսումնական հաստատությունների շենքային ու գույքային անբավարար ու վատ պայմանների և ջեռուցման խնդիրներ են արձանագրվել Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման աշխատանքների իրականացման արդյունքում: Նշված խնդիրները տարիներ շարունակ բարձրաձայնվել են ինչպես հանրապետության տարբեր ուսումնական հաստատությունների աշակերտների կողմից Պաշտպանի աշխատակազմ պարբերաբար իրականացված այցելությունների, այնպես էլ Պաշտպանի ու աշխատակազմի ներկայացուցիչների մարզային հանդիպումների ընթացքում: Դեռևս 2019 թվականին ուսումնական հաստատությունների շենքային և գույքային անբավարար ու վատ պայմանների խնդիրներ են վեր հանվել, սակայն խնդիրը դեռևս արդիական է:

Ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմաններից գատ կան նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման և այլ խնդիրներ: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականին իրականացվել է մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմանների մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրվել են առկա հրատապ լուծում պահանջող խնդիրները: Այսպես, Արագածոտնի մարզում դրանց լուծում տալու նպատակով Կառավարության կողմից հրատապ ծրագրերին ուղղված կապիտալ դրամաշնորհներով 10 դպրոցներում իրականացվել են տանիքների, պատուհանների և մարզադահլիճների վերանորոգման աշխատանքներ, ևս 53 դպրոցներում շենքային պայմանների բարելավմանը ուղղված աշխատանքներ են իրականացվել դպրոցներում տնտեսված գումարների հաշվին: Արարատի մարզում մշտադիտարկման արդյունքներով առաջարկություն է

ներկայացվել Կառավարություն Նիզամիի, Լուսաշողի, Լանջառի, Ագատաշենի համայնքներում կառուցել մոդուլային դպրոցներ: Մշտադիտարկման արդյունքում Արմավիրի մարզում երկու դպրոցներում տեղադրվել է ջեռուցման համակարգ, երեք դպրոցներում իրականացվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իսկ երկու դպրոցների համար պատվիրվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր, Գեղարքունիքի մարզում նախատեսվում է 8 համայնքներում կառուցել նոր դպրոցական շենքեր, Սյունիքի մարզում՝ 2021 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին մշտադիտարկված 23 դպրոցներից 14-ում իրականացվել են, շինարարական աշխատանքներ:

Ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, սեյսմիկ անվտանգության խնդիրների շուրջ միջոցառումների իրականացումը ներառված է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման 1-ին հավելվածի 169-րդ կետում: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար հանրակրթական ուսումնական հաստատությունների դպրոցական գույքի նորացման, շենքային պայմանների բարելավման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման հարցերը ներառված են նաև ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-Լ N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 184-Ա որոշման հավելվածով ամրագրված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրում:

2021 թվականի ընթացքում ևս արձանագրվել են նաև ուսումնական հաստատություններում ջեռուցման խնդիրներ: Այս մասին են վկայում ոլորտի իրավասու մարմինների պարզաբանումները:

Այսպիսով, ուսումնական հաստատությունների մշտադիտարկման արդյունքների համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների անբավարարության վիճակը դեռևս առկա է. նշվածը սպառնում է առաջացնել երեխայի կրթության իրավունքի սահմանափակումներ: Թեև հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմանների խնդիրներ առկա են թե՛ քաղաքային, և թե՛ մարզային ու գյուղական դպրոցներում, սակայն ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ առավել խոցելի են այս առումով գյուղական դպրոցները: Ըստ ՀՀ ՏԿԵՆ-ի ՀՀ Արագածոտնի մարզում 2020 թվականի ընթացքում իրականացվել է նախադպրոցական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության խնդիրների գույքագրում և տվյալ հաստատություններում նախատեսված և իրականացվող շինարարական, վերանորոգման աշխատանքների շրջանակներում համամասնությամբ իրականացվում են նաև նշված աշխատանքները: Արագածոտնի մարզի դպրոցներում իրականացվել է ջրամատակարարման և սանհանգույցների բարելավման 44 ծրագիր:

ՀՀ Արմավիրի Արմավիր համայնքի 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններում կատարվել են կոյուղու դիտահորերի մաքրման աշխատանքներ, 4-ում՝ վերանորոգվել են մանկապարտեզի ընդհանուր ջրագծերը և 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն ապահովվել է 24 ժամյա ջրամատակարարմամբ, իսկ Վաղարշապատ համայնքի վերանորոգվող մանկապարտեզներում առանձնացվում են տղաների և աղջիկների սանհանգույցները, խմբերն ապահովված են մշտական հոսող ջրով: Փամբակ խոշորացված համայնքում նախադպրոցական կրթական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ կատարվող բյուջետային ներդրումերը ավելացվել են, վերանորոգվել է Մարգահովիտի մանկապարտեզի ջեռուցման համակարգը, Ազնվածոր և Արջուտ գյուղերում մինչև տարեվերջ նախատեսվում է ունենալ տիպային մանկապարտեզներ: Թումանյան խոշորացված համայնքում «Լորուտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը ապահովված չէ մշտաժամանակյա ջրամատակարարման վերականգնման աշխատանքներն ընթացքի մեջ են: **ՀՀ Կոտայքի** մարզում վերանորոգվել են դպրոցների ջրագծերը, իրականացվել են դեռատիզացիայի աշխատանքներ՝ պայմանագրերի համաձայն: Որոշ դպրոցներ ապահովվել են շուրջօրյա ջրամատակարարմամբ, տեղադրվել են նոր լվացարաններ հիգենայի պարագաներով:

2022 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշտադիտարկվել է Տավուշի մարզի Ագատամուտ, Բաղանիս, Կիրանց, Ոսկեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Այգեպար, Չինարի, Այգեծոր, Արծվաբերդ, Չորաթան, Բերքաբեր, Բարեկամավան, Սարիգյուղ, Կոթի գյուղերի հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններ և գրեթե բոլորը հարստություններում արձանագրվել է խմելու ջրի և սանհանգույցի հասանելիություն խնդիր:

Ըստ ՏԿԵՆ-ի տրամադրած տվյալների՝ Մեղրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության խնդիր առկա չէ, խնդրահարույց է ջրի որակը, որն արդեն տարիներ ի վեր չի համապատասխանում ստանդարտ չափանիշներին, ինչի համար համայնքը բազմիցս ահազանգել իրավասու կազմակերպություններին:

Այսպիսով, ձեռնարկվել են քայլեր ոլորտում բարեփոխումների ուղղությամբ, այնուամենայնիվ վերը ներկայացված տվյալները և ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս կան խնդիրներ:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- Ավելացնել հանրակրթական և նախադպրոցական կրթական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ կատարվող բյուջետային ներդրումները:
- Ուժեղացնել հսկողությունը հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցման՝ ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով նախատեսված ջերմաստիճանի ապահովման ուղղությամբ՝ հաշվի առնելով տվյալ հաստատության տեղակայումը և տարվա բնակլիմայական պայմանները:
- Ստեղծել և հասանելի դարձնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մասին տեղեկատվական բազա:

2) Կրթության որակը և արհեստավարժ ուսուցիչների պահանջարկը

3) Կրթության որակը և արհեստավարժ ուսուցիչների պահանջարկը

Հայաստանը դեռ չի մասնակցում միջազգային PISA և PIRLS ստուգատեսներին: Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Աշակերտների միջազգային գնահատման ծրագրին (PISA) ՀՀ անդամակցումը այս պահին նախապատրաստական աշխատանքների իրականացման փուլում է:

Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը : Վերջինս կանոնակարգում է հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի և չափորոշիչների ձևավորման ու հաստատման գործընթացները և Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում դրանց ներդրման հետ կապված հարաբերությունները: Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից՝ ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ, շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ, սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել է առարկայական փորձնական չափորոշիչները և ծրագրերը հաստատելու մասին հրամաններ: Առարկաներից են. Շախմատ, աշխարհագրություն, մայրենի լեզու, մաթեմատիկա և այլն:

Պաշտպանի 2018 թվականի զեկույցով նշվել էր, որ ուսուցիչները քննության հարցերը գերազանցապես վերաբերում են իրավական գիտելիքներին և հնարավորությունն չեն տալիս պարզելու թեկնածու ուսուցչի առարկայական և մանկավարժական պատրաստվածությունը¹⁰¹: ՀՀ ԿՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 16-ի N 06-Ն հրամանով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 15-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանով հաստատված կարգը շարադրվել է նոր խմբագրությամբ: Այսպես, ուսուցիչների թեստավորման փուլի համար յուրաքանչյուր հաստատություն նախարարության կողմից մշակված և պաշտոնական կայքէջում և «Կրթություն» շաբաթաթերթում հրապարակված հարցաշարից պատահական ընտրությամբ կազմում է 50 հարցից բաղկացած թեստ: Թեստավորման հարցաշարի բովանդակային բաղադրիչները բաշխվում են հետևյալ հարաբերակցությամբ՝ կրթության բնագավառի օրենսդրություն - 30%, մանկավարժական, հոգեբանական, ուսումնամեթոդական գիտելիքների տիրապետում - 70%¹⁰²:

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատվել է ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույթաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը: Թեստավորման նպատակն է ուսուցիչների առարկայական գիտելիքների իմացության աստիճանի գնահատումը և դրա արդյունքում ուսուցչի դրույթաչափի փոփոխությունը և հավելավճարի տրամադրումը:

2022 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՕ-35-Ն օրենքով փոփոխություններ են կատարվել «հանրակրթության մասին» ՀՀ օրենքում, որոնք ունեն հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության որակի բարձրացման, և դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակների ինչպես նաև ուսումնական հաստատությունների կառավարման մեխանիզմների կատարելագործման նպատակ:

Մշակվել է «հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի հիմնավորմամբ նշված ք, որ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի 7-րդ նպատակի 7.1 կետից: Միջոցառման անհրաժեշտությունը բխում է նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ

¹⁰¹ Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=83675> հղումով:

¹⁰² Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=150336> հղումով:

հողվածի 17-րդ կետի պահանջից: Միջոցառման գլխավոր նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին շնորհվող տարակարգի նոր մեխանիզմի ներդրումը, որով տարակարգի շնորհման հիմք է ընդունվում կրթության որակ և արդյունավետությունն ապահովող անհրաժեշտ մի շարք չափանիշների, այդ թվում՝ ուսուցչի գործունեության որակական ցուցանիշների առկայությունը¹⁰³:

Կոմիտեի վերո նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

Առաջարկություններ

- *Չայաստանը պետք է ավելի ակտիվ ներառվի միջազգային ստուգատեսներում՝ մասնակցելով նաև PISA և PIRLS ստուգատեսներին:*

4) Յիմնական կրթությունից դուրս մնալու խնդիրը

Կրթությունն ստանալու երեխայի իրավունքն ամրագրված է Չայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ, ինչպես նաև Չայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով:

Կրթությունն ստանալու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով և այլ ՀՀ օրենքներով: Խնդրին անդրադարձ է կատարվել Պաշտպանի 2019, 2020, 2021 թվականների տարեկան հաղորդումներով: Տարիներ շարունակ Պաշտպանի հաղորդումներով նշվել է, որ կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառների վերհանման և այդ երևույթի կանխարգելման հարցերի լուծման համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել «կրթությունից դուրս մնացած երեխա» եզրույթը, որը միայն **2021 թվականին է ամրագրվել ՀՀ կառավարության N 154-Ն որոշմամբ:**

Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու խնդիրը արձանագրվել է նաև ՀՀ կառավարության կողմից՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ: Այսպես, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Կրթության իրավունք» 2.3 կետով նշված է, որ կարևոր խնդիր է կրթությունից դուրս մնացած երեխաների հարցը: Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են, ինչպես օրինակ՝ ոչ բավարար սոցիալական պայմանները, երեխայի հաշմանդամությունը, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ոչ պատշաճ արձագանքը,

¹⁰³ <https://www.e-draft.am/projects/4505/justification> հղումով:

երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը, իսկ բնակչության առանձին խմբերի դեպքում՝ անգամ երեխաների վաղ ամուսնությունը:

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 154-Ն որոշման ընդունումից հետո, յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դասարանների կազմավորման ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և դպրոցների կառավարման համակարգի տվյալները, «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներկայացնում է 6–18 տարեկան այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն: Բացահայտված երեխաների ցուցակները, ինչպես նաև էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան հասանելի են «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում: ԿՏԱԿ-ի կողմից համակարգ մուտք գործելու համար հաշիվներ են տրամադրվում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներներին՝ ՀՀ կառավարությանը՝ ի դեմս Կրթության տեսչական մարմնին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, տարածքային կառավարման մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ ոստիկանությանը, Խնամակալության և հոգաբարձության մարմնին, Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին, սոցիալական դեպք վարողներին:

Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների պատկերը՝ ըստ մարզերի և սեռի հետևյալն է.

ՀՀ Արագածոտնի մարզ. 2018 թվականին կրթությունից դուրս մնացած երեխաների ընդհանուր թիվը եղել է 11, որից 6 տղա և 5 աղջիկ: Կրթությունից դուրս մնալու պատճառը 8-ի դեպքում երեխայի ծանր առողջական խնդիրն է, 1 երեխայի համար կազմակերպվել է տնային ուսուցում, 1-ը հաճախել է հետվիրահատական շրջանի բարելավումից հետո, 1-ը խուսափել է ուսուցումից և այդ հիմքով հաշվառված էր ոստիկանությունում: 2019 թվականին կրթությունից դուրս մնացած երեխաների ընդհանուր թիվը եղել է 10, որից 6 տղա և 4 աղջիկ: Կրթությունից դուրս մնալու պատճառը 8-ի դեպքում երեխաների ծանր առողջական խնդիրներն են, 2-ի դեպքում՝ ծնողի հիվանդությունը և ընտանիքի սոցիալական անբարենպաստ պայմանները: Ծնողների հետ տարված բացատրական աշխատանքների և տրամադրած նյութական աջակցության արդյունքում երկուսն ընդգրկվել են կրթության մեջ: 2020 թվականին բացահայտվել է կրթությունից դուրս մնացած 30

երեխա: 15 երեխայի պարագայում, որից 8-ը աղջիկ և 7-ը տղա՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ լրացած չի եղել 6 տարեկանը, 3 տղա երեխա-սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ են և աշխատում են իրենց տնային տնտեսությունում, 3 տղա երեխա -ծնողները ներկայացրել են արտերկիր մեկնելու մասին բացատրագիր, սակայն շարունակել են ապրել համայնքում 2 տղա երեխա -ցանկացել են արհեստ սովորել 7 հաշմանդամություն ունեցող երեխա, որից 3-ը աղջիկ և 4-ը տղա առողջական ծանր խնդիրների պատճառով չեն հաճախել դպրոց 2021 թվականին բացահայտել ենք կրթությունից դուրս մնացած 42 երեխա, որից 13-ը աղջիկ և 29-ը՝ տղա: Երեխաները դպրոց չէին հաճախել տարբեր պատճառներով՝ 8-ը այլ բնակավայր տեղափոխվելու, 9-ը աշխատելու, 2-ը ամուսնանալու, 2-ը ծայրահեղ ծանր առողջական խնդիրների: Տարվա ընթացքում դպրոց են վերադարձվել 21-ը:

Մարզում 2022 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ բացահայտվել է կրթությունից դուրս մնացած 20 երեխա, դպրոց է վերադարձրել 10-ը, իսկ 10 -ը՝ ավագ դպրոցի աշակերտներ են և աշխատելու պատճառով հրաժարվում են դպրոց հաճախել:

ՀՀ Արարատի մարզ. 2018-2022 թ.թ.-ներին գրանցվել է 18 դեպք՝ երկարաժամկետ բացակայություններ, որից 11 տղա, 7 աղջիկ: **ՀՀ Արմավիրի մարզ.** 2018-2022 թվականների ընթացքում ՀՀ Արմավիրի մարզում «կրթությունից դուրս մնացած» երեխաների ընդհանուր թիվը 222-ն է: ՀՀ Արմավիրի մարզպետարանի, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության համապատասխան ստորաբաժանման հետ մշտապես իրականացվել է համագործակցություն «կրթությունից դուրս մնացած» երեխաներին ուսումնառության գործընթացում ընդգրկելու նպատակով: **ՀՀ Գեղարքունիքի մարզ.** ըստ պարզաբանման՝ «Կրթությունից դուրս մնացած» երեխաներ մարզում չկան: **ՀՀ Լոռու մարզ.** 2018-2019 տարիների ընթացքում համայնքներից և դպրոցներից հավաքագրվել է 106 երեխայի տվյալ (48 տղա, 58 աղջիկ), որից 81 երեխա դպրոց չի հաճախել, 12 երեխա հաճախել է դպրոց, որից մեկի համար կազմակերպվել է տնային ուսուցում, 10 երեխա գտնվել է հանրապետությունից դուրս, 3 երեխայի վերաբերյալ տեղեկություններ չեն ստացվել: 2019-2020թ.թ.-ին հաշվառվել են կրթությունից դուրս են մնացած 52 երեխա (32 տղա, 20 աղջիկ), որից 19-ը Լեւոնտոսովո և Ֆիոլետովո համայնքների երեխաներն են, որոնք ներկայացնում են ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնություն համարվող ընտանիքները: 10 երեխայի ծնող, որոնց երեխաները պետք է հաճախեին 1-ին դասարան, պատճառաբանել է, որ երեխաները պատրաստ չեն դպրոցին, 5-ն առողջական խնդիրներ ունի, 4-ը քաղաքում չէ, 6-ը ուսման նկատմամբ անտարբեր վերաբերմունք է դրսևորում, 2-ը չի հաճախում բացակայությունների մեծ թվի պատճառով, մնացածն ունեն ընտանեկան տարբեր խնդիրներ: 2020-2021թ.թ.-ին հաշվառվել են կրթությունից դուրս են մնացած 41 երեխա (23 տղա, 18 աղջիկ), որից 22-ը կրկին Լեւոնտոսովո և Ֆիոլետովո համայնքների երեխաներն են: Պարզվել է, որ 3

երեխա հանրապետությունում չի գտնվում, 6-ը փոխել է բնակության վայրը, 2-ը աշխատում է, հոգում է ընտանիքի ծախսերը, 1-ը առողջական լուրջ խնդիր ունի, կան նաև ծնողներ, որոնք չեն ցանկանում երեխային դպրոց ուղարկել: 2021-2022թ.թ.-ին ևս հաշվառվել են կրթությունից դուրս են մնացած 66 երեխա (37 տղա, 29 աղջիկ), որից 38-ը Լեւոնտոսովո և Ֆիոլետովո համայնքների երեխաներն են: Երեխաներից 6-ը փոխել է բնակության վայրը, 14 ծնող սոցիալական բնույթի տարբեր պատճառաբանություններով երեխաներին դպրոց չեն ուղարկել, չեն կարևորում կրթությունը, 4-ը առողջական լուրջ խնդիրներ են ունեցել: **ՀՀ Կոտայքի մարզ.** Կոտայքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից «կրթությունից դուրս մնացած» երեխաների ընդհանուր թիվը՝ ըստ տարիների հետևյալն է.

- 2018 թվականի ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատություններից «կրթությունից դուրս մնացած» երեխաների ընդհանուր թիվը 13 է (4 աղջիկ և 9 տղա),
- 2019 թվականի ընթացքում՝ 11 է (5 աղջիկ և 6 տղա), որոնցից երեք երեխայի կրթական իրավունքը վերականգնվել է,
- 2020 թվականի ընթացքում՝ 11 (5 աղջիկ և 6 տղա) որոնցից: 2022 թվականի ընթացքում Կոտայքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից «կրթությունից դուրս մնացած» երեխաների ընդհանուր թիվը 5 է (4 աղջիկ և 1 տղա), որոնցից երկու երեխայի կրթական իրավունքը վերականգնվել է: Մարզում, հանրակրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներից են բնակության վայրի տեղափոխումը, բացակայությունների պատճառով նույն դասարանում մնալը, այդ թվում նաև առնացա դասերին չմասնակցելը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, հոգեկան առողջական խնդիրները, ծնողների խոչընդոտելը (հայրիկի), երեխաների դպրոց հաճախելու ցանկություն չունենալը: Չարեցազան համայնքում 2018-2022 թվականների ընթացքում կրթությունից ժամանակավորապես դուրս են մնացել 14 երեխա, որից 6-ը աղջիկ, 8-ը՝ տղա: Պատճառներն են՝ աղքատություն, ծնողավարման հմտության պակաս, տեղահանություն պատերազմի հետևանքով:

Ջրվեժ համայնքում արձանագրվել է դեպք, երբ երեխան Արցախից տեղահանված տղա է, որը կրթությունից դուրս կարող է մնալ՝ 2022 թվականի սեպտեմբերից կայուն չի հաճախել: Դպրոցի հոգեբանը, համայնքային սոցիալական աշխատողը աշխատանքներ են տանում երեխայի հետ: **ՀՀ Շիրակի մարզ.** 2018-2022 թվականների ընթացքում ՀՀ Շիրակի մարզում հայտնաբերվել է կրթությունից դուրս մնացած 184 երեխա՝ 62 աղջիկ և 122 տղա: Նրանք հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքների, ամուսնալուծված ծնողների, միայնակ մայրերի, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաներ են: Կրթությունից դուրս մնալու պատճառներից են արտերկիր մեկնելը, ծնողի ցանկությամբ հանրակրթության մեջ չներառվելը՝ առաջին դասարանում և ավագ դպրոցում, երեխայի կտրական կամարտահայտությունը ավագ դպրոց չհաճախելու մասին, ընտանիքին օգնելու անհրաժեշտությունը /օրավարձով աշխատանք/ ամուսնությունը, ինչպես նաև

սոցիալական ծանր վիճակը: Ձեռնարկված աշխատանքների արդյունքում 2018-2022 թվականների ընթացքում 85 երեխա վերադարձել է հանրակրթություն: **ՀՀ Սյունիքի մարզ.** ՀՀ Սյունիքի մարզում 2018-2022 թվականների ընթացքում մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: **ՀՀ Վայոց ձորի մարզ.** 2018 -2022թ.թ.-ի ընթացքում միայն եղեգիս համայնքում կրթությունից դուրս են մնացել թվով երկու արական սեռի երեխաներ, հագուստ չունենալու պատճառով: Համայնքապետարանի կողմից լուծվել է խնդիրը, որից հետո այդ երեխաները հաճախել են դպրոց: **ՀՀ Տավուշի մարզ. Կրթությունից դուրս մնացած երեխաներն չեն հայտնաբերվել:** Հաճախակի դասերից բացակայող սոցիալապես անապահով ընտանիքների 10 երեխաների և նրանց ծնողների հետ տարված աշխատանքների արդյունքում, նրանք վերադարձել են հանրակրթություն:

Մինևույն ժամանակ, Քաղաքապետարանի պարզաբանումների համաձայն՝ ՀՀ կառավարության 11.02.2021թ. թիվ 154-Ն որոշմամբ հաստատված՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգով նախատեսված «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգը դեռևս չի գործարկվում:

Համաձայն «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021 թվականի զեկույցի՝ 2020 թվականին դպրոց չհաճախելու հիմնական պատճառներից են երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը (0.7 ոչ աղքատ բնակչություն, 0.9 տոկոս աղքատ բնակչություն, 3.9 տոկոս ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան ստիպված է աշխատել (2.8 ոչ աղքատ բնակչություն, 2.8 աղքատ բնակչություն 8.4 ծայրահեղ աղքատ բնակչություն), ընտանեկան պատճառներից ելնելով (4.2 ոչ աղքատ բնակչություն, 3.2 աղքատ բնակչություն, 15.5 ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան չի ցանկանում սովորել (7.1 ոչ աղքատ բնակչություն, 9.9 աղքատ բնակչություն, 14.8 ծայրահեղ աղքատ բնակչություն), կրթությունը շատ թանկ է (1.3 ոչ աղքատ բնակչություն, 1.3 աղքատ բնակչություն, 12.3 ծայրահեղ աղքատ բնակչություն) և այլն¹⁰⁴: «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ վիճակագրական կոմիտեի նախորդ տարի արձանագրած պաշտոնական տվյալներն հետևյալն են. 2020 թվականի վիճակագրական պատկերի վերլուծությամբ նշվել է, որ 2019 թվականին դպրոց չհաճախելու հիմնական պատճառներից են երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը (0.7 ոչ աղքատ բնակչություն, 0.8 տոկոս աղքատ բնակչություն, 1.3 տոկոս ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան ստիպված է աշխատել (1.8 ոչ աղքատ բնակչություն, 2.4 աղքատ բնակչություն 3.2 ծայրահեղ աղքատ բնակչություն), բնակության վայրի մոտակայքում դպրոց չկա (0.1 ոչ աղքատ բնակչություն, 0.1 աղքատ բնակչություն, 0.0 ծայրահեղ աղքատ բնակչություն), ընտանեկան պատճառներից ելնելով (3.5 ոչ աղքատ բնակչություն, 4.7 աղքատ

¹⁰⁴ Հասանելի է https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf հղումով, էջ 110:

բնակչություն, 11.3 ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան չի ցանկանում սովորել (6.5 ոչ աղքատ բնակչություն, 10.3 աղքատ բնակչություն, 20.6 ծայրահեղ աղքատ բնակչություն), կրթությունը շատ թանկ է (1.3 ոչ աղքատ բնակչություն, 1.6 աղքատ բնակչություն, 2.4 ծայրահեղ աղքատ բնակչություն) և այլն¹⁰⁵:

Այսպիսով, պաշտոնական վիճակագրական պատկերը ցույց է տալիս, որ կրթության մեջ չներգրավվելու տոկոսները վերջին տարիներին աճել են: Բացի այդ, պետական մարմիններից ստացված վերոգրյալ պարզաբանումները երեխաների կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ խիստ մտահոգիչ են: Հիմնականում, որպես կրթությունից դուրս մնալու պատճառ նշվում են երեխաների՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու, ամուսնանալու, սոցիալապես անապահով պայմաններ ունենալու, աշխատելու և ծնողների ցանկությամբ դպրոց չհաճախելու հանգամանքները, Արցախից տեղահանված լինելը և այլն:

Արձանագրված պատկերում դրական փոփոխություններ ունենալու համար պետք են հստակ և անհապաղ քայլեր՝ երեխաներին պարտադիր կրթության մեջ ներգրավելու համար: Անընդունելի է որպես պատճառ նշել երեխաների առողջական առանձնահատկությունները, հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն ունենալը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթության մեջ չընդգրկվելու պատճառներից կարող է լինել ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիությունը, դպրոցներում դասագրքերի, ծրագրերի մատչելիության հարցը, հատուկ կարիքներ ունեցող երեխայի դպրոց տեղափոխման խնդիրը¹⁰⁶, որը անընդունելի է և խաթարում է երեխայի՝ կրթության իրավունքի իրացումը:

Անհրաժեշտ է, որպեսզի կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման կարգի գործարկմանը զուգահեռ աշխատանքներ տարվեն կրթությունից դուրս մնացած բոլոր երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովման համար՝ պետական, մարզային և համայնքային մակարդակում բազմամասնագիտական թիմերի ներգրավմամբ: Բոլոր շահագրգիռ մարմինները պետք է համատեղ մշակեն երևույթի կանխարգելման հստակ գործուն ուղիներ, որպեսզի դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա հաճախի դպրոց անկախ հաշմանդամություն, հատուկ կրթական կարիք ունենալու, սոցիալապես անապահով վիճակում հայտնվելու և այլ պայմաններից: Պետք է աշխատանք տարվի նաև ծնողների հետ՝ բացատրական աշխատանքների, երեխաների իրավունքների և ծնողների պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման

¹⁰⁵ Հասանելի է https://armstat.am/file/article/poverty_2020_a_4.pdf հղումով, էջ 99:

¹⁰⁶ Առավել մանրամասն տե՛ս ԶԶ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույց, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

միջոցով: Մինևույն ժամանակ, երեխայի՝ կրթության իրավունքի իրացման ապահովման գործում պետությունը պետք է օժանդակի ծնողին, նույնիսկ այն դեպքերում, երբ վերջիններս ցածր իրազեկվածության կամ այլ պատճառներով իրաժարվում են երեխային դպրոց ուղարկել:

Հարկ է նաև անդրադառնալ նոր կորոնավիրուսային պայմաններում 2020 թվականին կրթության իրավունքի իրացմանը: Պաշտպանը արձանագրել է մի շարք խնդիրներ, որոնք ներկայացվել են 2020 թվականի տարեկան հաղորդմամբ: Արանագրվել է, որ արտակարգ իրավիճակների պայմաններում հնարավոր համակարգային խնդիրների առաջացումը կանխելու և բացառելու նպատակով պետական իրավասու մարմինների կողմից պետք է իրականացվեն բոլոր հնարավոր խնդրահարույց հարցերի նախնական դիտարկում, ինչպես նաև ողջամիտ ժամկետներում այդ խնդրահարույց հարցերի կարգավորմանն ուղղված արդյունավետ միջոցների ձեռնարկում և գործնականում դրանց իրագործման ապահովում, յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նպատակով իրականացնել նրա կարիքների գնահատում՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուր երեխայի կարիքներին, պետք է երաշխավորել որևէ երեխայի՝ կրթությունից դուրս չմնալը՝ նրանց, ըստ անհրաժեշտության, ապահովելով հեռավար եղանակով կրթությանը մասնակցելու նպատակով անհրաժեշտ հեռահաղորդակցության միջոցով (համակարգիչ, պլանշետ կամ հեռախոս), ինչպես նաև համապատասխան ծավալով ինտերնետային կապի հասանելիությամբ, անհատական մոտեցում ցուցաբերել և առանձնահատուկ ուշադրություն դարձնել մի քանի դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներում այդ երեխաներից յուրաքանչյուրի հեռավար կրթությունը պատշաճ կազմակերպելու հարցին՝ ըստ անհրաժեշտության այդ երեխաներին ապահովելով բավարար թվով հեռահաղորդակցության միջոցներով և (կամ) համապատասխան ծավալով ինտերնետային կապի հասանելիությամբ:

Հատկապես կարևոր է անդրադառնալ նաև Արցախից Հայաստան տեղահանված անձանց իրավունքների ապահովման համատեքստում երեխաների կրթության իրավունքի խնդիրը: Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմի հետևանքով, հարկադրված լքելով իրենց հայրենիքը, որտեղ երեխաներն ապահովված են եղել կրթություն ստանալու հնարավորություններով, վերջիններս բախվում են իրենց կրթության կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրների: Արցախի մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի նոյեմբերի 9-ի արտահերթ զեկույցում արձանագրվել է, որ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների արդյունքում Արցախից տեղահանվել է մոտ 40,000 երեխա¹⁰⁷: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հրապարակած տեղեկության համաձայն՝ Արցախի ավելի քան 24,000 երեխա զրկվել է կրթության

¹⁰⁷ Տե՛ս

<https://artsakhombuds.am/en/document/766?fbclid=IwAR0sCVvQ4sfFIOerUBNeSJfIswq0s4YgQfUZNPmRIA Z8Aw9EA9dwD NSCc> հղումով:

իրավունքն իրացնելու հնարավորությունից՝ դպրոց հաճախելուց¹⁰⁸: Պաշտպանի իրականացված մշտադիտարկումը ցույց է տվել, որ անհրաժեշտ էր համակարգված եղանակով իրականացնել Արցախից տեղահանված յուրաքանչյուր երեխայի կարիքների գնահատում՝ նրանցից յուրաքանչյուրին ցուցաբերելով անհատական մոտեցում և հաշվի առնելով նրանց՝ հատուկ պայմաններում կրթությունն ապահովելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, անհրաժեշտ էր քննարկման առարկա դարձնել Արցախից տեղահանված երեխաների համար ուսուցման հեռավար և առկա եղանակների միջև ընտրություն կատարելու հնարավորություն ընձեռելու հարցը՝ ցուցաբերելով անհատական մոտեցում յուրաքանչյուր իրավիճակին: միասնական և համակարգված կերպով գնահատել Արցախից տեղահանված երեխաների կարիքները, ինչի հիման վրա վերջիններիս ապահովել անհրաժեշտ պարագաներով և դասագրքերով՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով նաև այլընտրանքային միջոցներ: Պետք տարվեին աշխատանքներ երեխաներին և ծնողներին նաև կրթության իրավունքի իրացման շարունակականության կարևորության իրազեկելու կապակցությամբ, ինչպես նաև ստեղծված բարդ իրավիճակում երեխաների հոգեբանական վիճակի վրա դասերին մասնակցության դրական ազդեցության վերաբերյալ՝ համապատասխան մասնագետների՝ մանկավարժների, հոգեբանների և սոցիալական աշխատողների գործունեությունը:

Կոմիտեի վերո նշված առաջարկություննր մասամբ է կատարվել :

Առաջարկություններ

- *Ձեռնարկել քայլեր կրթությունից դուրս մնալու դեպքերը կանխելու համար,*
- *աջակցել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ բնակության վայրից հեռու գտնվող ուսումնական հաստատություններ հասնելու գործում,*
- *բացառել դժվարին իրավիճակում հայտնվելու, ինչպես նաև հաշմանդամություն ունենալու հիմքով կրթությունից դուրս մնալը՝ ապահովելով կրթական ծրագրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մատչելիությունը:*
- *իրազեկման աշխատանքներ իրականացնել ծնողների և երեխաների հետ, մասնավորապես՝ այն ընտանիքներում, որտեղ երեխան դուրս է մնում կրթությունից՝ ծնողի որոշմամբ,*
- *մշակել աջակցության այնպիսի ծրագրեր, որոնց հիմքում ընկած կլինեն երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառների վերացմանն ուղղված գործողություններ,*
- *բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններին, խնամակալության և հոգաբարձության մարմին, ուսումնական*

¹⁰⁸ Տե՛ս <https://escs.am/am/news/7292?fbclid=IwAR2gTSVOYMQy1fYvJ2D7NjTLJr7PGaU-H3VSDop4pL-O74C9Ef1ZVJUFUqo> հղումով:

հաստատություններին և այլ շահագրգիռ մարմիններին իրազեկել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի և դրանով պայմանավորված գործողությունների մասին,

- *ապահովել ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ ընդունված պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի պահանջների կատարումը՝ բոլոր շահագրգիռ կառույցների կողմից:*
- *զարգացնել միջգերատեսչական համագործակցությունը կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման գործընթացում՝ բարձրացնելով խնդրին առնչվող մասնագետների հմտությունները այդ ուղղությամբ:*

Է. Հատուկ պաշտպանության այլ միջոցները (Կոնվենցիայի 22-րդ, 30-րդ, 38-րդ 39-րդ, 40-րդ, 37-րդ (բ)-(դ), 32-36 հոդվածներ)

1. Չուղեկցվող, ապաստան հայցող և փախստական երեխաները

Կոմիտեն ողջունել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի ընդունումը 2008 թվականին, որով նախատեսվում են առանց ուղեկցողի փախստական երեխաների և ապաստան հայցող երեխաների պաշտպանության հիմնարար երաշխիքները: Այդուհանդերձ, Կոմիտեն ավստոսանք է հայտնել, որ օրենքը չի համապատասխանում Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով ամրագրված նվազագույն սոցիալ-տնտեսական չափանիշներին, ինչպիսիք են, օրինակ, բարվոք բնակարանային պայմանների հասանելիությունը, պետական օգնությունը և հպատակագրումը: Հանձնաժողովին մտահոգել է նաև այն հանգամանքը, որ փախստական որոշ ծնողներ դժվարությունների են հանդիպել իրենց երեխաներին դպրոցներում տեղավորելու գործում՝ պայմանավորված նախկին դպրոցների փաստաթղթերի բացակայությամբ և փաստաթղթերի հայերեն թարգմանության խնդիրներով: Հանձնաժողովին մտահոգել է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիության մասին ՀՀ օրենքն ունի բացեր, որոնք կարող են քաղաքացիություն չունենալու վտանգ առաջացնել օտարերկրացի ծնողների երեխաների կամ Հայաստանի քաղաքացիությունից զրկված ծնողների երեխաների համար:

Կոմիտեն առաջարկել է (կետ 48)՝

- հաշվի առնելով Կոմիտեի թիվ 6 ընդհանուր մեկնաբանությունը ծագման երկրից դուրս գտնվող առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին (CRC/GC/2005/6), փոփոխություն կատարել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում՝ ապահովելու համար հիմնարար երաշխիքները և դրանց արդյունավետ իրագործումը.
- ապահովել կրթության հասանելիությունը բոլոր երեխաներին, անկախ նրանց կարգավիճակից, և վերացնել փախստական և ապաստան հայցող երեխաների՝ կրթական համակարգի մեջ ընդգրկման ճանապարհին առկա վարչական խոչընդոտները.
- փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ՝ ապահովելու, որ իր իրավագործության ներքո գտնվող ոչ մի երեխա իրավակարգավորումների կամ պրակտիկայի հետևանքով չդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

1) «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը

2015 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-193-Ն օրենքով «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ են կատարվել: Ամրագրվել են նոր մոտեցումներ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների կարգավիճակի և դրանից բխող երաշխիքների սահմանման ուղղությամբ: Օրենքով սահմանվել են «հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներ և փախստականներ» հասկացությունը (8-րդ հոդվածի 1-ին մաս), որում ներառված են ապաստան հայցող երեխաները կամ հաշմանդամություն ունեցող անձինք կամ հղի կանայք կամ միայնակ ծնողներ, ովքեր ունեն անչափահաս երեխաներ: Այնուհետ, Օրենքը սահմանվել է «առանց ուղեկցողի երեխա» և «ընտանիքից անջատված երեխա» հասկացությունները, որոնք իրենց բովանդակությամբ մոտ են Կոմիտեի թիվ 6 ԸՄ-ով առաջարկված ձևակերպումներին:

Օրենքը պարտավորեցնում է իրավասու պետական մարմիններին նշված երկու խմբերին ցուցաբերել աջակցություն իրենց իրավասության շրջանակներում՝ առավելագույնս ելնելով նրանց շահերից, իսկ լիազորված մարմինն պարտավորեցնում է աջակցել տեղավորման և խնամքի հարցերում՝ հաշվի առնելով ոչ միայն տարիքը, սեռը և այլ հատկանիշներ, այլ նաև «երեխայի շահերից բխող այլ հանգամանքներ» և ՀՀ օրենսդրությամբ երեխայի համար սահմանված բոլոր իրավունքները: Օրենքով սահմանվում է Պետության պարտավորությունը առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու առաջնահերթությունը՝ հաշվի առնելով նրանց լավագույն շահերը և խորհրդակցելով նրանց ներկայացուցչի հետ: Խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը, Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի կամ Ընտանիքի, կանանց և

երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից միջնորդությունը ստանալուց հետո, պետք է կատարվի կատ յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Օրենքի 50-րդ հոդվածով սահմանվել է, որ իրավասու մարմինները պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում բացահայտել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին՝ որպես հատուկ կարիք ունեցող խմբեր, ապաստանի վարույթի շրջանակներում նշանակել ներկայացուցիչ, ով պարտավոր է պատշաճ կերպով ներկայացնել նման երեխաների լավագույն շահերը, վարույթի ողջ ընթացքում ապահովել, որ բոլոր գործողությունները կատարվեն ներկայացուցչի մասնակցությամբ: Առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանության տրամադրման գործընթացում ընդգրկված բոլոր պաշտոնատար անձինք իրենց գործողություններում պետք է ելնեն երեխայի շահերի պաշտպանության սկզբունքից:

Վերը նշված օրենսդրական փոփոխությունները դրական են և երեխայակենտրոն: Դրանք կնպաստեն, որ նշված խոցելի խմբերի պաշտպանվածությունը էապես մեծանա: Այդուհանդերձ, ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք խոչընդոտում են երեխայի իրավունքների պատշաճ իրացմանը:

Կոմիտեի Թիվ 6 ընդհանուր մեկնաբանությամբ նշված է, որ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների համար անհրաժեշտ է ստեղծել նրանց բացահայտման առաջնահերթության համակարգ՝ սահմանային անցակետում նրանց նախնական ստուգման ու գրանցման ընդհանուր ընթացակարգերի շրջանակում: Թեև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ ապաստանի դիմումի գրանցման պահից սկսած՝ իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր և անհրաժեշտ գործողությունները հնարավոր սեղմ ժամկետներում բացահայտելու հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներին, այնուամենայնիվ, նման առաջնահերթ ընթացակարգեր կամ կառուցակարգը չի սահմանվում: Բացահայտման ընթացակարգը տեղի է ունենում ընդհանուր վարչական վարույթի շրջանակում՝ միգրացիոն հարցերով լիազոր մարմնի՝ Միգրացիոն պետական ծառայության վարույթում: Սահմանապահ ստորաբաժանումների ծառայողները, ինչպես նաև անձնագրերի և վիզաների վարչությունը, նման գործառույթներ չունեն: Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողների ու փախստականների, առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի նկատմամբ կիրառվում են Օրենքով նախատեսված ապաստանի ընդհանուր ընթացակարգերը, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Մինչդեռ Կոնվենցիայով և տրված մեկնաբանությամբ նախատեսում է ստեղծել երեխայի որպես խոցելի խմբի պատկանող անձի բացահայտման առաջնահերթության հիմքով հատուկ ընթացակարգ: Ուստի, անհրաժեշտ է օրենքով սահմանել նման խոցելի խմբերի՝ սահմանային անցակետում նրանց հայտնաբերման, բացահայտման առաջնահերթության մեխանիզմ: Նման մեխանիզմի բացակայությունը չի

ապահովում արդյունավետ երաշխիքներ պետական մարմինների կամայականությունների դեմ: Օրինակ՝ պատշաճ բացահայտման ընթացակարգի բացակայության պայմաններում անչափահաս ապաստան հայցողը կարող է հայտնվել քրեակատարողական հիմնարկում անորոշ ժամկետով, քրեական հետապնդման վարույթի շրջանակներում, առանց իրազեկ լինելու, որ իրավունք ունի դիմում ներկայացնել ապաստանի համար՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ապաստանի վերաբերյալ վարույթը իրականացվում է Միգրացիոն պետական ծառայության կողմից, որն էլ իրավասու է հայտնաբերել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների՝ որպես ապաստան հայցողների, ինչպես նաև անհապաղ կերպով աջակցի նրանց խնամքի, տեղավորման, խնամակալի նշանակման և այլ անհետաձգելի հարցերում, ստացվում է, որ նման երեխաների սահմանային անցակետում հայտնվելուց հետո մինչև միգրացիոն ծառայության կողմից վերը նշված գործառնությունների իրականացումն առկա է նկատելի ժամանակային բաց, որը կարող է տևել օրեր և նույնիսկ շաբաթներ: Օրինակ՝ ըստ օրենքի, առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների համար խնամակալի (կամ) հոգաբարձուի նշանակումը միջնորդությունն ստանալուց հետո կատարվում է յոթ աշխատանքային օրվա ընթացքում (հոդված 7): Նման իրավիճակը չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված «արագության» պահանջին, որը կամայականության դեմ կարևոր ընթացակարգային երաշխիք է համարվում: Ըստ այդմ, սահմանային անցակետ ժամանելու պես նման երեխաներին խնամակալության և հոգաբարձության նպատակով աջակցությունը պետք է ցուցաբերվի անհապաղ կերպով, որքան հնարավոր է շուտ¹⁰⁹, իսկ խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը՝ որքան հնարավոր է արագությամբ¹¹⁰: Յետևաբար, օրենքը պետք է վարչական վարույթը կարգավորի այնպես, որ կոնվենցիոն պահանջների իրականացումը հնարավոր լինի ապահովել սահմանային անցակետում ապաստանի հայց ներկայացնելուն անմիջապես հետո, որքան հնարավոր է արագ, քանի որ արագությունը, ըստ Կոնվենցիայի, կարևոր վարույթային երաշխիք է¹¹¹:

Օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումից բխում է, որ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս անձի ապաստան հայցելու դեպքում միգրացիոն ծառայությունը աջակցում է խնամակալի նշանակման հարցում: Այս առումով խնդրահարույց է թե «աջակցել» եզրույթը ինչպես է կիրառվում:

Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի երեխայի ինքնությունը և ազգությունը պարզելու համար, ինչպես նաև որոնի երեխայի ծնողներին կամ այլ ազգականներին ընտանիքի միավորման նպատակով, եթե այդ որոնումն ու միավորումը բխում են երեխայի շահերից: Ըստ թիվ 6 ԸՄ-ի, այս գործողությունները պետք է կատարվեն արագորեն, նախնական հարցազրույցի միջոցով, կենսատվյալներ և սոցիալական պատմությունն արձանագրելու համապատասխան մասնագիտական որակավորում

¹⁰⁹ Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, կետ 33:

¹¹⁰ Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, կետ 21:

¹¹¹ Տե՛ս Լույն տեղում:

ունեցող անձի կողմից և այլն: Երեխայի տարիքի գնահատումը ևս կարող է խնդիրներ առաջացնել: Տարիքի սխալ գնահատման դեպքում կամ վերջինիս բացակայության դեպքում, երեխան կարող է զրկվել ինչպես հատուկ պաշտպանության և աջակցության իրավունքից:

Թե «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը և թե «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը չեն կարգավորում այն դեպքերը, երբ առանց ուղեկցողի փախստական երեխայի կամ ապաստան հայցող երեխայի տարիքը հաստատող կամ ճամփորդական փաստաթղթերը կամ դրա մասին տեղեկությունները բացակայում են: Այն դեպքերում, երբ բացակայում է (ակնհայտորեն) անչափահասի տարիքում գտնվող անձի տարիքը հաստատող փաստաթղթերը կամ դրա մասին տեղեկությունները, երեխան համապատասխան մարմնի կողմից պետք է ուղղորդվի Երեխայի տարիքը որոշող հանձնաժողով¹¹², որի եզրակացությունը կարող է հիմք հանդիսանալ երեխայի տարիքը որոշելու և համապատասխան փաստաթղթերը վերականգնելու համար: Ընդ որում, երեխայի տարիքը որոշելիս մասնագիտական մարմիններին անհրաժեշտ է առաջնորդվել հոգուտ երեխայի կասկածի կանխավարկածով, ըստ որի եթե առկա են պատճառներ կարծելու համար, որ անձը, ում տարիքն անհայտ է, անչափահաս է, կամ եթե անձն ասում է, որ ինքն անչափահաս է, ապա կասկածը պետք է աշխատի հոգուտ երեխայի և նա պետք է համարվի երեխա¹¹³:

ՀՀ կառավարության 2017թ-ի մարտի 9-ի N 239-Ն որոշմամբ սահմանվում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի համար ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու կարգն ու պայմանները: Կարգավորվում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի (այսուհետ՝ երեխա) համար ապաստանի ընթացակարգի շրջանակներում ներկայացուցիչ նշանակելու հետ կապված հարաբերությունները: Կարգը տարածվում է 18 տարին չլրացած՝ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց վրա: Երեխայի համար ներկայացուցիչ նշանակվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) որոշմամբ: Եթե ապաստան հայցողը չունի իր տարիքը հավաստող փաստաթուղթ, ապա հիմք է ընդունվում նրա հայտնած տեղեկությունն իր տարիքի վերաբերյալ: Ծառայությունը ձեռնպահ է մնում երեխայի ապաստանի դիմումի առնչությամբ հետագա վարչարարության իրականացումից՝ մինչև նրա համար սույն կարգով ներկայացուցիչ նշանակելը: Երեխայի համար ներկայացուցիչ կարող է նշանակվել

¹¹² 20 հունվարի 2011 թվականի N 18-Ն ՀՀ կառավարության որոշում երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի n 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65185>:

¹¹³ Տե՛ս Տարիքի գնահատում: Միգրացիայի համատեքստում երեխաների իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի երկրների քաղաքականությունը, ընթացակարգերը և պրակտիկան: Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների բաժանմունք: Դայա Վենկեյի գեկույցը: Տե՛ս կետ 47: Անգլերեն տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/age-assessment-council-of-europe-member-states-policies-procedures-and/168074b723>:

չափահաս այն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակվող օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ում տվյալները բավարարում են սույն կարգի 9-րդ կետով նախատեսված պահանջներին: Ներկայացուցիչ հանդիսանալու թեկնածուների առաջադրումը կատարվում է Հայաստանի Հանրապետությունում փախստականների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների միջոցով՝ նրանց համաձայնությամբ: Երեխայի ապաստանի դիմումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայությունում ստացվելուց հետո հաջորդ աշխատանքային օրը ծառայությունը պաշտոնական գրությամբ դիմում է Հայաստանի Հանրապետությունում փախստականների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին՝ երեխայի համար ներկայացուցիչ նշանակման թեկնածուներ առաջադրելու խնդրանքով: Այդ հասարակական կազմակերպությունների ցանկը սահմանվում է ծառայության կողմից՝ խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով զբաղույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ: Ներկայացուցիչ հանդիսանալու թեկնածուն պետք է ունենա երեխաների հետ աշխատելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, փախստականների և ապաստանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմացություն, ինչպես նաև անցած լինի կարգով նախատեսված վերապատրաստման դասընթացներ: Ներկայացուցիչն իր գործունեությունն իրականացնելու է կամավորության հիմունքներով:

Թեկնածուների տվյալները ծառայությունում ստացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունվում է որոշում երեխայի համար ներկայացուցիչ նշանակելու մասին: Ներկայացուցիչ նշանակելիս նախապատվությունը տրվում է սույն կարգի 9-րդ կետով նախատեսված պահանջները բավարարող՝ երեխաների հետ աշխատելու առավել փորձառություն ունեցող թեկնածուին: Ծառայությունն ընդունված որոշման մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ներկայացուցչին: Եթե երեխայի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվել է խնամակալ/հոգաբարձու, ապա երեխայի ներկայացուցիչ է նշանակվում երեխայի խնամակալը/հոգաբարձուն: Եթե երեխան տեղավորվել է և նրա խնամքն իրականացվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում (մանկատուն, գիշերօթիկ, երեխայի աջակցության կենտրոն), ապա երեխայի ներկայացուցիչ է նշանակվում այդ հաստատության ներկայացուցիչը: Այդ դեպքերում երեխայի ներկայացուցիչ նշանակվում է խնամակալի/հոգաբարձուի կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ներկայացուցչի կողմից ծառայությանը հասցեագրված դիմումի հիման վրա՝ դիմումը ծառայությունում ստացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է նաև, որ պետական սահմանի անցման կետերում բացակայում է թարգմանության տրամադրումը: Սահմանապահ զորքերը, ի թիվս այլ պետական մարմինների, հարցազրույց են

անցկացնում ապաստան հայցողի հետ պաշտպանություն գտնելու ցանկության, անձի և ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալների, ինչպես նաև ծագման երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղևորության նկարագրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար: Ապաստան հայցողների հետ հարցազրույցների պատշաճ իրականացումը գործնականում ապահովելու, ինչպես նաև հատուկ կացարաններում բնակվող ապաստան հայցողների իրավունքներն ու պարտականությունները հասկանալի լեզվով իրենց լիարժեք ներկայացնելու նպատակով հնարավորինս անհրաժեշտ է ապահովել թարգմանություն օտար լեզուներով:

Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել:

Առաջարկություններ

- *Անհրաժեշտ է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում սահմանել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների հայտնաբերման, բացահայտման առաջնահերթության մեխանիզմ, որ այդ խոցելի խմբերի բացահայտումը չիրականացվի օրենքով սահմանված ընդհանուր կարգով:*
- *Օրենքում անհրաժեշտ է սահմանել այնպիսի համակարգ, որը հնարավորություն տա երեխաների տեղավորման, խնամակալության և հոգաբարձության խնդիրների կարգավորման հարցերը սկսել իրականացնել սահմանի անցակետում նրանց հայտնվելուց անմիջապես հետո, ապաստանի դիմումի գրանցման պահից, այլ ոչ թե տևական ժամանակ հետո՝ միգրացիոն ծառայությունում:*
- *Օրենքը պետք է համապատասխանեցնել կոնվենցիայի պահանջին, որ հնարավոր լինի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված գործողությունների կատարումը սկսել այն պահից, երբ երեխան հայտնվում է սահմանային անցման կետում կամ այլ կերպ առաջին անգամ հայտնվել է ՀՀ տարածքում իրավասու պետական մարմինների վերահսկողության տակ:*
- *Հաշվի առնելով, որ այլընտրանքային խնամքի կազմակերպման դեպքում նախապատվությունը պետք է տրվի ընտանիքահեն խնամքին, օրինակ՝ խնամատար ընտանիքներում, իսկ հաստատությունների ներքո խնամքի կազմակերպումը պետք է սահմանափակված լինի այն դեպքերում, երբ ընտանիքահեն խնամքի կազմակերպումն անհնարին է կամ չի բխում երեխայի շահերից, ապա **անհրաժեշտություն է առաջանում վերանայել վերոնշյալ օրենքի 24-րդ հոդվածը՝ համապատասխանեցնելով այն***

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային և ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույցին¹¹⁴:

- *Անհրաժեշտ է օրենսդրական կարգավորման ենթարկել երեխայի տարիքի գնահատումը՝ ըստ վերևում նշված սկզբունքների:*

2) Կրթության հասանելիությունը փախստական և ապաստան հայցող երեխաներին

2018 թվականին հրապարակված «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» Պաշտպանի զեկույցով նշվել է, որ փախստականի կարգավիճակ ունեցող և ապաստան հայցող երեխաների հանրակրթական դպրոցներում տեղավորման հարցերում հաճախ ծագում են խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են ոչ թե օրենսդրության բացով, այլ պրակտիկայով և համապատասխան ռեսուրսների բացակայությամբ: Լինում են դեպքեր, երբ տնօրենները խուսափում են ընդունել օտարերկրացի երեխաներին հիմնականում լեզվական խոչընդոտների համար, իսկ որոշ դեպքերում էլ ինտեգրման խնդիրների հետ կապված, հատկապես, եթե երեխաները ազգությամբ հայեր չեն: Խնդիրներ են ծագում նաև, երբ փախստական երեխաները չունեն պահանջված փաստաթղթերը, որոնք ընդհանուր կարգով պահանջվում են, օրինակ՝ ծննդյան վկայականի պատճենը, կամ պատճենը՝ նոտարական թարգմանությամբ ու վավերացմամբ: Նշվածը կարող է երկարացնել երեխայի՝ կրթության մեջ արագ ներգրավվելը:

Առաջարկություններ

- *Անհրաժեշտ ստեղծել փախստականի կարգավիճակ ունեցող անձանց ինտեգրացման և անհրաժեշտ ծառայությունների տրամադրման մեխանիզմ:*
- *Անհրաժեշտ ստեղծել փախստականի կարգավիճակ ունեցող անձանց իրազեկման մեխանիզմ:*

3) Ապաստան հայցող երեխայի քաղաքացիություն չունեցող անձ դառնալու բացառումը

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը ունի բացեր, որոնք կարող են քաղաքացիություն չունենալու վտանգ առաջացնել օտարերկրացի ծնողների երեխաների կամ Հայաստանի քաղաքացիությունից զրկված ծնողների երեխաների համար: Այս առումով կոմիտեն առաջարկել է փոփոխել

¹¹⁴ ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային ուղեցույց, Բանաձև 64/142 ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Տե՛ս, մասնավորապես՝ կետ 111: Հասանելի է հետևյալ հղումով. https://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf:

օրենսդրությունը այնպես, որ ապաստան հայցող ոչ մի երեխա իրավակարգավորումների կամ պրակտիկայի հետևանքով չդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ-ում բնակվող անձը, ով այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց չունի, համարվում է քաղաքացիություն չունեցող անձ: Այսինքն, ապաստան հայցող երեխան իր քաղաքացիության վերաբերյալ վարույթի ընթացքում ապացույց չներկայացնելու դեպքում կարող է դառնալ քաղաքացիություն չունեցող անձ: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը: Այս սահմանումը բխում է «Ապաքաղաքացիության կրճատման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոս ամսից, և որի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է իր տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ: Այդպիսի քաղաքացիություն շնորհվում է ծնվելիս՝ օրենքի ուժով, կամ շահագրգիռ անձի կողմից կամ նրա անուկից համապատասխան մարմնին՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով»:*

Ինչ վերաբերում է հանգամանքին, երբ երեխան ծնվում է ՀՀ-ում, ապա այս առումով «Քաղաքացիության մասին» օրենքի 12-րդ հոդվածը, որը կարգավորում է նման դեպքերը, 2015 թվականին էապես բարեփոխվել է և հարմարեցվել Կոնվենցիայի և վերը նշված՝ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին: 12-րդ հոդվածը իր նախկին խմբագրմամբ միայն սահմանում էր, որ ՀՀ-ում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք էին, ձեռք էին բերում ՀՀ քաղաքացիություն: Օրենքը չէր կարգավորում այն դեպքերը, երբ, օրինակ՝ ծնողների քաղաքացիությունը հայտնի էր, սակայն ծագման երկրի օրենսդրությունը տարբեր պատճառներով թույլ չէր տալիս ծնողին քաղաքացիությունը փոխանցել երեխային: Ստացվում էր, որ նման դեպքերում երեխան հնարավորություն չունեի ընդունել ՀՀ քաղաքացիություն և դառնում էր քաղաքացիություն չունեցող անձ: 2015 թվականի մայիսի 7-ին ՀՕ-33-Ն օրենքով 12-րդ հոդվածը էական փոփոխության ենթարկվեց և սահմանվեցին բազմաթիվ այլընտրանքային հիմքեր: Մասնավորապես, հոդվածի 1-ին մասի ներքո սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե, ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ծնողների քաղաքացիությունն անհայտ է, ծնողներն այլ երկրի (երկրների) քաղաքացիներ են, սակայն չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի (երկրների) օրենսդրության համաձայն, ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացի, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի

կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային, ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսի քաղաքացիությունն անհայտ է, ծնողներից մեկի քաղաքացիությունն անհայտ է, իսկ մյուսն այլ երկրի քաղաքացի է, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային:

Այսինքն, օրենքը համապատասխանեցվեց Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջին, համաձայն որի երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և **քաղաքացիության իրավունք:**

Այսպիսով, Կոմիտեի առաջարկությունը կատարվել է:

2. Տնտեսական շահագործումը, ներառյալ՝ մանկական աշխատանքը

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ զգալի թվով երեխաներ, ներառյալ՝ 14 տարեկանը չլրացած երեխաներ, դուրս են մնում դպրոցից, որպեսզի աշխատեն ոչ ֆորմալ ոլորտներում, օրինակ՝ գյուղատնտեսությունում, ավտոսպասարկման և շինարարության ոլորտներում, մետաղի ջարդոնի հավաքման գործում և ընտանեկան բիզնեսում: Կոմիտեն առանձնապես մտահոգիչ է համարել փողոցներում մուրալով զբաղված և ծանր ֆիզիկական (բանվորի և բեռնողի) աշխատանք կատարող երեխաների թվի աճի կապակցությամբ, ինչպես նաև այն հանգամանքի առնչությամբ, որ աշխատանքի տեսչություններն արդյունավետորեն չեն վերահսկում մանկական աշխատանքը:

Կոմիտեն առաջարկել է (կետ 50)՝

- ապահովել աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը Կոնվենցիայի 32-րդ հոդվածին, ներառյալ՝ գործող օրենքների արդյունավետ կիրառությունը և աշխատանքի տեսչությունների հզորացումը և ներգրավումը.
- ստեղծել մանկական աշխատանքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ, ապահովել երեխաների շահագործման մեղավորների նկատմամբ համաչափ պատժամիջոցների կիրառությունը, ընդ որում՝ այդ ընթացքում ապահովել հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին երեխաների տեղեկացվածությունը և նման մեխանիզմների հասանելիությունը երեխաներին: Այս առնչությամբ առաջարկվում է տեխնիկական աջակցություն հայցել Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագրից:

1) Աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը
Կոնվենցիայի 32-րդ հոդվածին, ներառյալ՝ աշխատանքի տեսչությունների
հզորացումը և ներգրավումը:

ՀՀ Սահմանադրությունը և օրենսդրությունը սահմանում է երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի բազմաթիվ հիմքեր, որոնք համահունչ են Կոնվենցիայի 32-րդ հոդվածի պահանջներին: Պարտադիր և հարկադիր աշխատանքի արգելքը սահմանված է Սահմանադրության 57-րդ հոդվածով, Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով, և Քրեական օրենսգրքով: ՀՀ աշխատանքային օրենսգրքով (այսուհետև՝ Օրենսգիրք) կամ դրանից բխող որևէ ենթաօրենսդրական ակտով երեխայի աշխատանքի «վատթարագույն ձևեր» հասկացություն ուղիղ սահմանված չէ: Սակայն, Օրենսգրքով սահմանված են երեխաների աշխատանքին վերաբերող մի շարք կարգավորումներ և համապատասխան երաշխիքներ: Մասնավորապես, Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ 2.1-ին մասով սահմանված է, որ տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում՝ մինչև տասնչորս տարեկան անձինք կարող են ընդգրկվել կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) և (կամ) կատարմանը՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնության դեպքում, որը չպետք է վնասի նրանց առողջությանն ու բարոյականությանը, ինչպես նաև չպետք է խոչընդոտի կրթությանն ու անվտանգությանը: 3-րդ մասի համաձայն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի: 4-րդ մասի համաձայն՝ մինչև 16 տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

Օրենսգրքի 257-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում մինչև տասնութ տարեկան անձանց ներգրավելն արգելվում է:

ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2308-Ն որոշմամբ հաստատված է մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը:

ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակված և Վարչապետի աշխատակազմ ներկայացված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով վերանայվել են նաև մինչև 18 տարեկան անձանց աշխատանքին վերաբերող կարգավորումները: Մասնավորապես.

1) Սահմանվում է, որ մինչև տասնութ տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն այնպիսի աշխատանքներում, որոնք չեն վտանգում նրանց առողջությունը (այդ թվում՝ ֆիզիկական և մտավոր զարգացումը), բարոյականությունը, չեն սպառնում նրանց անվտանգությանը և չեն խոչընդոտում նրանց պարտադիր կրթությանը: Նախատեսվել է սահմանել նաև, որ արգելվում է մինչև տասնութ տարեկան անձանց ներգրավել ակտիվային խմիչքների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ծխախոտի, ծխախոտային այլ արտադրատեսակների կամ դրանց փոխարինիչների, էրոտիկա, պոռնոգրաֆիա, սարսափ բովանդակող տպագիր հրատարակությունների, ֆիլմերի, տեսահոլովակների, հեռուստառադիոհաղորդումների, պոռնկագրական բնույթի այլ նյութերի կամ առարկաների արտադրության, օգտագործման, գովազդի, առևտրի կամ ցանկացած այլ եղանակով տարածմանը կամ իրացմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաև մուլտիմեդիա կազմակերպելուն կամ դրա գովազդելուն ուղղված:

2) Վերանայվել և կրճատվել են նաև աշխատող երեխաների աշխատանքային ժամերի տևողությունները և հստակ սահմանվել է, որ երեխաները կարող են աշխատել միայն պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս, մասնավորապես՝

- մինչև 12 տարեկան երեխաների աշխատանքային ժամերի տևողությունները փոփոխությունների չեն ենթարկվել, սակայն սահմանվել է, որ նրանք կարող են աշխատել պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս,
- 12-ից մինչև 15 տարեկան երեխաների համար նախատեսվել է սահմանել օրական մինչև չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան տասներկու ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս (Օրենսգրքի գործող դրույթում այս տևողությունը սահմանված է 12-ից մինչև 14 տարեկանների համար),
- 15-ից մինչև 16 տարեկան երեխաների համար նախատեսվել է սահմանել՝ շաբաթական մինչև 24 ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս (Օրենսգրքի գործող դրույթում այս տևողությունը սահմանված է 14-ից մինչև 16 տարեկանների համար):

3) Մինչև տասնութ տարեկան աշխատողների համար նախատեսվում է սահմանել պարբերական բժշկական զննության հստակ պարբերականություն: Մասնավորապես, սահմանվում է, որ մինչև տասնութ տարեկան աշխատողները պարտավոր են ենթարկվել պարբերական բժշկական զննության՝ յուրաքանչյուր աշխատանքային տարվա ընթացքում մեկ անգամ:

Գործող իրավական նորմերը ապահովում են Կոնվենցիայի 32-րդ հոդվածին համահունչ իրավական երաշխիքներ: «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության 2016 թվականի սեպտեմբերին հրապարակված Երեխայի պաշտպանության ինդեքսով Հայաստանի Հանրապետության ջանքերը Կոնվենցիայի 32-րդ հոդվածով սահմանված պարտականությունների կատարման ուղղությամբ թեև գնահատվել են նվազագույնը

ինը պետությունների շարքում (0,381 միավոր առավելագույնը 1,0 միավորից – ամենավատ արդյունքը ինդեքսի ինը երկրների շարքում), օրենսդրության և քաղաքականության ուղղությամբ կիրառված միջոցները գնահատվել են ամենաբարձր ցուցիչով՝ 0,615:

Այդուհանդերձ, վերոնշյալ ցուցիչում միևնույն ժամանակ այն կարծիքն է առաջ քաշվել, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ հստակ չէ, թե ինչպես են երեխայի աշխատանքի վերաբերյալ սահմանումները համապատասխանում ԱՄԿ պահանջներին, և այդ իմաստով առաջարկվել է օրենսդրությամբ հստակորեն սահմանել աշխատանքի «վատթարագույն ձևեր» հասկացությունը, և այդ հասկացության մեջ ամբողջությամբ սահմանել, որ արգելվում են աշխատանքի այլ բոլոր ձևերը, որոնք խոչընդոտում են երեխայի կրթությունն ստանալը և վնասում երեխայի ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը: Ի հավելումս, առկա է նաև տեսակետ, որ օրենսդրությունը, մասնավորապես՝ Աշխատանքային օրենսգիրքը չի սահմանում հարկադիր աշխատանքի եզրույթը¹¹⁵ և այդ առումով բացակայում են նաև հարկադիր աշխատանքի ցուցիչները: «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 2022 թ. հոկտեմբերի 5-ի N ՅՕ-360-Ն օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգիրքը լրացվել է նոր՝ 3.2-րդ հոդվածով, որով տրվել է «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» եզրույթի սահմանումը. պարտադիր կամ հարկադիր աշխատանք է համարվում որևէ ձևի հարկադրանքի գործադրմամբ կամ գործադրման սպառնալիքի տակ անձից պահանջվող կամ անձի կողմից կատարվող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը, բացառությամբ նշված հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝ այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը, զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը, յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ:

Հատկանշական է, որ Պաշտպանի աշխատակազմ ևս 2021 թվականին ստացվել են ահագանգեր քաղաքացիների կողմից Երևան քաղաքի մարդաշատ վայրերում երեխաների մուրացկանությամբ կամ չափահաս անձի կողմից վերջիններիս մուրացկանությամբ զբաղվելու մեջ ներգրավվելու մասին:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2018թ. ընթացքում ՀՀ ոստիկանության մասնագիտացված վարչության և տարածքային ստորաբաժանումների ԱԳ և ԸԲԿ ստորաբաժանման ծառայողների կողմից ոստիկանություն է ներկայացվել թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվող 51 անչափահաս /մի քանիսը ներկայացվել են կրկնակի անգամ/. 3-ը՝ վերցվել է պրոֆիլակտիկ քարտային հաշվառման, 36 անչափահասի տրվել է պաշտոնական նախազգուշացում և հանձնվել

¹¹⁵ Հարկադիր աշխատանքի արգելքը և բացառությունները ամրագրվել են 2015 թվականի ՀՀ Սահամանադրության փոփոխություններով (հոդված 57.5), ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված 3.1):

ծնողին, 1-ը՝ հանձնվել է թիվ 1 օժանդակ դպրոց, 2-ը՝ ուղղորդվել ՅՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն, 3-ի հետ անց են կացվել դաստիարակչական բնույթի աշխատանքներ և հանձնվել ծնողին, իսկ 6-ի վերաբերյալ հաղորդում է ուղարկվել բնակության վայրի ոստիկանության տարածքային բաժին:

Միջոցառումների ընթացքում հայտնաբերված 51 մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասներից 43-ը հայտնաբերվել են Երևան քաղաքում, 8-ը՝ Լոռու մարզում:

2018թ. թվականի ընթացքում ԶՅ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում /խմբերում/ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվել է 5 անչափահաս՝ Երևան – 3 / Մալաթիա-1, Արաբկիր- 2 /, Կոտայք- 1, Սպիտակ-1: 2019 թվականի ընթացքում մուրացիկ-թափառաշրջիկ միջոցառման շրջանակներում հայտնաբերվել է 46 անչափահաս /նշված անչափահասներից ոմանք մեկից ավել անգամ, վերջիններիս գերակշիռ մասը զբաղվել է տարբեր իրերի վաճառքով/: Հայտնաբերված դեպքերից 39-ով տրվել է պաշտոնական նախազգուշացում և հանձնվել ծնողին, 3 անչափահաս հանձնվել է Հանրապետական թիվ 1 կրթահամալիր, 4-ը՝ վերցվել է պրոֆիլակտիկ քարտային հաշվառման: Նշված 46 անչափահասից 3-ը եղել է իգական սեռի ներկայացուցիչ:

Միջոցառումների ընթացքում հայտնաբերված 46 անչափահասից 44-ը հայտնաբերվել է Երևան քաղաքում, 2-ը՝ Կոտայքում:

ԶՅ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում /խմբերում/ 2019 թվականի ընթացքում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվել է 9 անչափահաս՝ Երևան – 4 /Մալաթիա-3, Արաբկիր-1/, Հրազդան- / թափառաշրջիկ/, Նաիրի-1, Սպիտակ-1, Կոտայք -2:

2020 թվականի ընթացքում մուրացիկ-թափառաշրջիկ միջոցառման շրջանակներում հայտնաբերվել է 28 անչափահաս / վերջիններիս գերակշիռ մասը զբաղվել է տարբեր իրերի վաճառքով, /1 անչափահասը 3 անգամ, 3-ը 2-ական անգամ/: Հայտնաբերված դեպքերից 20-ով տրվել է պաշտոնական նախազգուշացում և հանձնվել ծնողին, 1 անչափահաս ուղղորդվել է <<Չատիկ>>, 2-ը՝ ՅՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոններ, 2-ը՝ վերցվել է պրոֆիլակտիկ քարտային հաշվառման, 2 անչափահասի վերաբերյալ հաղորդումներ են ուղարկվել վերջիններիս բնակության վայրի ոստիկանության տարածքային բաժիններ, իսկ 1 անչափահասի հետ անց է կացվել կանխարգելիչ բնույթի զրույց և հանձնվել ծնողին: Նշված անչափահասներից 5-ը եղել է իգական սեռի ներկայացուցիչ:

Միջոցառումների ընթացքում հայտնաբերված 28 անչափահասն էլ հայտնաբերվել է Երևան քաղաքում:

ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում /խմբերում/ 2020 թվականի ընթացքում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվել է 7 անչափահաս՝ Երևան- 3 /Մալաթիա- 3, որից 1-ը՝ տարածքային կարգով հաշվառման մեջ է գտնվել նաև Քանաքեռ-2Եյրթունի բաժնում/, Հրազդան- 1/ թափառաշրջիկ/, Կոտայք - 2, Վաղարշապատ-1:

2021 թվականի ընթացքում մուրացիկ-թափառաշրջիկ միջոցառման շրջանակներում հայտնաբերվել է 22 անչափահաս /վերջիններիս գերակշիռ մասը զբաղվել է տարբեր իրերի վաճառքով, /նշված անչափահասներից 2-ը ներկայացվել է 2-ական անգամ, 1-ը 3 անգամ/: Հայտնաբերված դեպքերից 17-ով տրվել է պաշտոնական նախազգուշացում և անչափահասները հանձնվել են ծնողներին, 2-ը՝ վերցվել է պրոֆիլակտիկ քարտային հաշվառման, 3 անչափահասի հետ անց է կացվել կանխարգելիչ բնույթի զրույց և հանձնվել ծնողին, 1 ծնող վերցվել է պրոֆիլակտիկ հաշվառման՝ երեխաների վրա բացասական ներգործություն ունենալու համար: Նշված անչափահասներից 16-ը եղել է արական, իսկ 6-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ: Հարկ է նշել, որ հայտնաբերված անչափահասների հետ իրականացվող աշխատանքներում ոստիկանության իրավասու ծառայողները համագործակցել են Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, Առողջապահության նախարարության, ՀՀՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի, Կապանի համայնքային վերականգնողական կենտրոնի ինչպես նաև շահագրգիռ այլ կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների հայտնաբերման նպատակով կազմակերպված միջոցառումների ընթացքում հայտնաբերված 22 անչափահասներից 16-ը հայտնաբերվել է Երևան քաղաքում, 6-ը Շիրակի մարզում:

ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում /խմբերում/ 2021 թվականի ընթացքում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվել է 10 անչափահաս՝ Երևան- 3 /Մալաթիա-2 ,Քանաքեռ-2Եյրթուն- 1 /տարածքային կարգով փոխանցվել է ոստիկանության Վաղարշապատի բաժին/, Արտաշատ-1, Կոտայք - 2, Հրազդան-2, Վաղարշապատ - 2:

ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողների կողմից 2022 թվականի 9 ամիսների ընթացքում մուրացիկ-թափառաշրջիկ միջոցառման շրջանակներում հայտնաբերվել է 22 անչափահաս /3-ը 2-ական անգամ/անչափահասների մի մասը զբաղվել է տարբեր իրերի վաճառքով/: Հայտնաբերված 22 անչափահասներից 1-ը տեղափոխվել է ՀՀՖ-ի երեխաների աջակցության կենտրոն, 2-ը վերցվել են պրոֆիլակտիկ քարտային հաշվառման, 5 անչափահասի տրվել է պաշտոնական նախազգուշացում, 4-ի

վերաբերյալ հաղորդումներ են ուղարկվել այլ տարածքային բաժիններին, 10 անչափահասի հետ անց է կացվել կանխարգելիչ բնույթի զրույց և հանձնվել ծնողին: Նշված անչափահասներից 18-ը եղել է արական, իսկ 4-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ: Չարկ է նշել, որ հայտնաբերված անչափահասների հետ իրականացվող աշխատանքներում ոստիկանության իրավասու ծառայողները համագործակցել են Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, ՀՀ-ի Երեխաների աջակցության կենտրոնի, ինչպես նաև շահագրգիռ այլ կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների հայտնաբերման նպատակով կազմակերպված միջոցառումների ընթացքում հայտնաբերված 22 անչափահասներից 20-ը հայտնաբերվել են Երևան քաղաքում, 2-ը Արմավիրի մարզում:

ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում /խմբերում/ 2022 թվականի 9 ամիսների ընթացքում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվել է 13 անչափահաս՝ Երևան- 9 /Մալաթիա - 4, Մաշտոց - 1, Շենգավիթ-3, Կենտրոնական- 1/, Կոտայք-1, Ախուրյան-1, Արտաշատ-1, Յրագղան-1:

Թեև նշված տարիների ընթացքում ցուցանիշները նվազել են, այնուամենայնիվ, խնդիրը դեռևս արդիական է: Մուրացկանությամբ զբաղվող երեխան չի իրացնում իր մի շարք իրավունքներ, ինչպիսիք են օրինակ՝ պատշաճ կենսապայմանների, առողջապահության ծառայողներից օգտվելու, կրթության իրավունքները և այլն:

Խնդիրը կանխարգելելու և վերացնելու նպատակով պետք է առկա լինի կայուն և արդյունավետ համագործակցություն իրավասու բոլոր մարմինների միջև: Երեխային հայտնաբերելուց հետո պետք է տևական ժամանակ վերահսկողություն իրականացվի երեխայի իրավունքների իրացման ապահովման երաշխավորման նկատմամբ: Պետք է աշխատանքներ տարվեն երեխայի ընտանիքի հետ, որպեսզի մուրացկանությամբ զբաղվող երեխան ոչ թե հայտնվի հաստատությունում այլ ապրի ընտանիքում, քանի որ հաճախ երեխաները զբաղվում են մուրացկանությամբ կամ տարբեր իրերի վաճառքով ընտանիքի սոցիալապես անապահով լինելու պատճառով: Յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի կարիքներից ելնելով՝ պետք է մշակվի երեխայակենտրոն աջակցության ծրագիր, որը կբացառի երեխայի՝ մուրացկանությամբ կրկին զբաղվելը:

Կարևոր է նաև դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերումը համայնքում, որտեղ առաջնային է խնամակալության և հոգաբարձության մարմնի արդյունավետ աշխատանքը, ով պարտավոր է համագործակցել ոչ միայն Ոստիկանության, այլ նաև սոցիալական ծառայությունների հետ, որպեսզի երեխաները և նրանց ընտանիքները ստանան անհրաժեշտ շարունակական աջակցություն:

Չարկ է նշել, որ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» N ՅՕ-361-Ն և «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման

ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» N 30-362-Ն օրենքները (նախագծերը ներառված են եղել նույն փաթեթում):

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածի, ինչպես նաև նույն օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածների իմաստով՝ շահագործում են համարվում այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, պարտադիր կամ հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը:

Այսպիսով, հաշվի առնելով վերո նշվածը, գտնում ենք, որ Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել:

Առաջարկություններ

- *Անհրաժեշտ է Աշխատանքային օրենսգրքում սահմանել երեխայի աշխատանքի «վատթարագույն ձևեր» հասկացությունը, և դրա շրջանակներում սահմանել, որ արգելվում է աշխատանքի բոլոր վատթարագույն ձևերը, որոնք կարող են խոչընդոտել կրթություն ստանալը և վնասել երեխայի առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը,*
- *ապահովել ՀՀ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ծառայությունների շարունակական և արդյունավետ համագործակցությունը՝ երաշխավորելու համար մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերումը և աջակցության տրամադրումը,*
- *զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ հեռուստատեսության միջոցով շարունակաբար իրազեկել հասարակությանը մուրացկանությամբ զբաղվող երեխաներ հանդիպելու դեպքում իրավասու պետական մարմիններ դիմելու հնարավորությունների և գործող մեխանիզմների մասին:*

2) Մանկական աշխատանքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմները և երեխաների շահագործման մեղավորների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը

Թեև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքի համաձայն, Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, սակայն այդ գործառույթը

սահմանափակված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այդ մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտումներին¹¹⁶ և հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերին¹¹⁷: Ակնհայտ է, որ Պաշտպանի աշխատակազմը չի կարող ստանձնել մանկական աշխատանքի մասին հաղորդումներ բողոքներ ներկայացնող միասնական, անձնական մարմնի դերը, իսկ գործող արհեստակցական միություններն էլ ինստիտուցիոնալ առումով ունեն հզորացման կարիք: Արհեստակցական միությունների նպատակները ամրագրված են «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում: Այդ նպատակները իրագործելու համար առաջնային նշանակություն ունի արհմիությունների դերի բարձրացումը, ինչն էլ կարևոր է աշխատողների իրավունքների և սոցիալական-տնտեսական երաշխիքների ապահովման ուղղակի և անուղղակի ազդեցության տեսանկյունից: Թեև աշխատանքային օրենսդրությունը, ինչպես նաև «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում են արհմիությունների գործառույթները լիազորությունները, նպատակները, սակայն ամրագրված նպատակների ու լիազորությունների պատշաճ իրագործման, ինչպես նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների բավարար ներգրավվածության համար ոլորտի մասնագետները, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան բազմիցս բարձրացնում են արհմիությունների փաստացի հզորացման անհրաժեշտության և կարևորության հարցը: Արհեստակցական միությունների գործառույթները, լիազորություններն ամրագրված են ոչ միայն «Արհեստակցական միությունների մասին», այլ նաև աշխատանքային օրենսդրությամբ: Սակայն, չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը, արհմիությունների փաստացի հզորացման կարևորության մասին մշտապես բարձրաձայնում են ոլորտի մասնագետները, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան՝ հստակ նշելով, օրինակ, աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների ոչ բավարար ներգրավվածության խնդիրը: Արհեստակցական կազմակերպությունների (արհմիություններ) գործունեության գործիքակազմն օրենսդրորեն կատարելագործելու ուղղությամբ միջոցառում, ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ նախատեսված է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

Երեխաների աշխատանքի կանխարգելման ու վերացման նկատմամբ պետական վերահսկողությունը ներկայում իրականացնում է ոստիկանությունը՝ անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման

¹¹⁶ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 2-րդ հոդված, 3-րդ մաս, ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:

¹¹⁷ Տե՛ս նույն տեղում, 15-րդ հոդված:

բաժանմունքի բաժանմունքների միջոցով, որոնք կատարում են պրոֆիլակտիկ աշխատանք, ինչպես նաև կոնկրետ գործերով իրականացնում են հետաքննություն և քրեաիրավական հիմքերի առկայության դեպքում դիմում են իրավասու մարմիններին քրեական հետապնդում իրականացնելու համար:

Սակայն Ոստիկանության տարածքային բաժինները մանկական աշխատանքի դեմ իրականացնում են գործունեություն միայն այնքանով, որքանով խնդիրը ունի հանցագործության հատկանիշներ (թրաֆիքինգ, հարկադրանք, սեռական շահագործում, և այլն), և եթե խոսքը վերաբերում է մուրացկանությամբ, թափառաշրջիկությամբ կամ փողոցային առևտուր կատարող երեխաների նկատմամբ պրոֆիլակտիկ գործունեությանը: Ոստիկանության պետի 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 3837 – Ա հրամանով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիքինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով: ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումների արդյունքում հայտնաբերված մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների մի մասը ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության կողմից ուղղորդվում են Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոն, ուր գործող բազմամասնագիտական խորհրդի կողմից անչափահասներին ցուցաբերվում է անհրաժեշտ բժշկական, բարոյահոգեբանական և սոցիալական օգնություն: Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասները ուղղորդվում են նաև ՀՀ տարածքում գործող համայնքային վերականգնողական կենտրոններ, որտեղ ինչպես անչափահասների, այնպես էլ նրանց ծնողների հետ իրականացվում են երկարաժամկետ կանխարգելիչ աշխատանքներ: Հայտնաբերված երեխաների վերաբերյալ միջնորդություններ են ուղարկվում նաև ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի քաղաքապետարան՝ վերջիններիս դպրոց վերադարձնելու նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարություններ, ինչպես նաև անչափահասների բնակության վայրերի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց աջակցություն ցուցաբերելու համար¹¹⁸: Չնայած այս գործունեությանը, ոստիկանության համակարգը և, մասնավորապես՝ Ոստիկանությունը չի կարող ծառայել որպես մանկական աշխատանքի մասին հաղորդումներ, բողոքներ ներկայացնելու միասնական, ազգային համակարգ՝ ինչպես առաջարկվել է Կոմիտեի կողմից:

2015 թվականին Կառավարության կողմից ընդունվեց «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման» ռազմավարություն,¹¹⁹ որով չի նախատեսվել մանկական աշխատանքի մասին հաղորդումների, բողոքների ներկայացման միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգ:

¹¹⁸ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի վերաբերյալ Հայաստանի հանրապետության ազգային զեկուլյին (հաշվետու ժամանակաշրջան 2012-2015 թվականների) հավանություն տալու մասին ՀՀ կառավարության 16.03.2017արձանագրային որոշում N 11: Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89124>:

¹¹⁹ Տե՛ս ՀՀ կառավարության արձանագրային որոշում N 37, 06.08.2015 , <http://www.irtek.am/views/act.aspx?aid=81848> հղումով:

Այսպիսով, Կոմիտեի առաջարկությունը մանկական աշխատանքի վերահսկողության վերաբերյալ միասնական, ազգային համակարգ ստեղծելու մասով չի կատարվել:

Բացակայում է մանկական աշխատանքի մասին հաղորդումներ, բողոքներ ներկայացնելու միասնական, ազգային համակարգ, երեխաների տարիքին և հանգամանքներին համապատասխան ձևով (child-friendly) հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ: Բացակայում են նաև աշխատանքի վատթարագույն ձևերում ընդգրկված աշխատող երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմները: Վերջինիս մշակումը և ներդրումը նախատեսված է Հայաստանի Հանրապետությանում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցով 2020 թվականին: ԱՄՅ նախարարության ներկայացրած ռազմավարական ծրագրի հաշվետվությունով չի ներկայացվել աշխատանքի վատթարագույն ձևերում ընդգրկված աշխատող երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմների ներդրման վերաբերյալ տեղեկատվություն:

Ինչ վերաբերում է հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին երեխաների տեղեկացվածությունը և նման մեխանիզմների հասանելիությունը երեխաներին ապահովելու վերաբերյալ Կոմիտեի առաջարկին, այս առումով ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաները ընդհանուր առմամբ իրազեկված չեն հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին, և նման մեխանիզմները հասանելի չեն նրանց վատ իրազեկման պատճառով¹²⁰: Հասարակական և այլ կազմակերպությունների գործունեության շնորհիվ խնամքի և պաշտպանության հաստատությունների սաների միջավայրում թրաֆիքինգի և շահագործման երևույթների մասին իրազեկվածությունն ավելի բարձր է, քան երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերին¹²¹: Հետազոտությունը նշում է նաև, որ երեխայի պաշտպանությամբ զբաղվող մասնագետների մոտ իրազեկվածության պակաս կա այս ոլորտում:

Առաջարկություններ

- *Անհրաժեշտ է ստեղծել մանկական աշխատանքի վերահսկողության ազգային համակարգ, որն իրավասու կլինի ընդունել բողոքներ, կատարել քննություն, հայտնաբերել իրավախախտներին (դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ), ինչպես նաև իրականացնել հանրային իրազեկման գործունեություն:*

¹²⁰ Տե՛ս «Հարկադիր աշխատանքը և աշխատանքային թրաֆիկինքը Հայաստանում». փորձական հետազոտություն: ԵԱՀԿ ԱՄՆ Պետքարտուղարության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրո: Երևան 2015. Էջ 106: <http://www.osce.org/hy/yerevan/212566?download=true> հղումով:

¹²¹ Հետազոտությունն իր մեջ ներառում է նաև երեխաների խնամքի և պաշտպանության ու հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում գտնվող երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր ռիսկերի հետազոտություն:

- Անհրաժեշտ է հզորացնել արհմիությունների կարողությունները երեխայի աշխատանքի հետ կապված ստուգումներ աշխատանքներ իրականացնելու նպատակով:
- Իրականացնել երեխայի վատթարագույն աշխատանքի ձևերի վերաբերյալ իրազեկմանն ուղղված աշխատանքներ.
 - ռիսկային խմբի երեխաների,
 - ծնողների (խնամակալների),
 - խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակազմի,
 - երեխայի պաշտպանությամբ զբաղվող մարմինների՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների, մարզպետարանների՝ Ընտանիքի, կանանց և երեխաների հարցերով զբաղվող բաժինների աշխատակիցների,
 - ուսումնական հաստատությունների,
 - սոցիալական աշխատողների և դեպք վարողների համար:

3. Անչափահասների գործերով արդարադատության իրականացումը

Կոմիտեն ի գիտություն է ընդունել այն հանգամանքը, որ ՀՀ ընդհանուր իրավասության յուրաքանչյուր դատարանում կա երեխաների գործերի քննությամբ մասնագիտացող մեկական դատավոր, և որ օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների հարցերը կանոնակարգվում են քրեական օրենսդրությամբ: Այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ՝

- ա) բացակայում է անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգ, ներառյալ՝ անչափահասների դատարաններ և անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ համապարփակ օրենսդրություն՝ արտադատական ուղղորդման մեխանիզմների և արդարադատության պաշտոնական համակարգին արդյունավետ այլընտրանքների վերաբերյալ դրույթների առկայությամբ.
- բ) երեխաները քրեական գործի նախաքննության ընթացքում նախնական կալանքի տակ են պահվում տևական ժամանակ.
- գ) երեխաների նկատմամբ կարող են կիրառվել 5-10 օր ժամկետով մեկուսախցում պահման պատժամիջոցներ.
- դ) «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը, որտեղ պահվում են ազատությունից զրկված երեխաները, ապահովված չէ տարրական հիգիենիկ և անկողնային պարագաներով: Նման հիմնարկներում պահվող երեխաները չեն ստանում պատշաճ կրթություն.

ե) առկա չեն քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաների վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ ծրագրեր:

Կոմիտեն առաջարկել է (կետ 52)՝

- սահմանել հստակ ժամանակացույց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի քննարկման համար, որով նախատեսվում է անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգի ստեղծումը, ինչպես նաև ապահովել դրա լիակատար համապատասխանությունը Կոնվենցիային, մասնավորապես՝ 37-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներին, ինչպես նաև այլ համապատասխան չափանիշներին¹²²: Կոմիտեն, մասնավորապես, առաջարկել է՝
 - ա) ստեղծել անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգ, ներառյալ՝ անչափահասների դատարաններ՝ հիմնված համապարփակ իրավական կարգավորումների վրա, ինչպես նաև ներդնել արտադատական ուղղորդման մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանխել օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների՝ արդարադատության ֆորմալ համակարգում հայտնվելը.
մշակել դատական քննության, պատժի նշանակման և պատժի կատարման նոր այլընտրանքներ, ինչպիսիք են՝ համայնքային աշխատանքը և տուժողի ու իրավախախտի միջև հաշտարարությունը (մեդիացիա)՝ խարանումից խուսափելու և իրավախախտների արդյունավետ վերաինտեգրումն ապահովելու նպատակով.
 - բ) ապահովել, որ երեխաների նկատմամբ նախնական կալանքը կիրառվի միայն որպես վերջին միջոց և հնարավորինս կարճ ժամկետով.
 - գ) հրատապ միջոցներ ձեռնարկել՝ արգելելու երեխաների պատժիչ մեկուսացումը, որը հավասարազոր է անմարդկային վերաբերմունքի.
 - դ) հրատապ միջոցներ ձեռնարկել, որ «Աբուլյան» և այլ քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաներին տրամադրվեն բոլոր անհրաժեշտ հիմնական պարագաները, հիգիենայի միջոցներ և անկողնային մաքուր պարագաներ, ապահովել հիմնարկներում պահվող երեխաների պատշաճ կրթությունը.
 - ե) ներդնել վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ ծրագրեր՝ հատուկ թիրախավորելով քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաներին:

¹²² Կոմիտեն այդ իմաստով անդրադարձել է Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններին (Պեկինյան կանոններ), Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշներին անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիդայան ուղենիշներ), Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններին (Հավանայի կանոններ), Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշներին, ինչպես նաև Կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանությանը (CRC/C/GC/10, 2007):

1) Անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգի ստեղծումը

Չնայած անչափահասների հարցերով մասնագիտացված դատավորներ ընտրելու Բարձրագույն դատական խորհրդի իրավասության օրենսդրական ամրագրմանը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով անչափահասների գործերով մասնագիտացված առանձին դատարաններ նախատեսված չեն: Այլ կերպ ասած, այսպիսի օրենսդրական կարգավորումներով փաստորեն անչափահասների գործերով առանձին դատարանների ստեղծման ինստիտուցիոնալ լուծումներ առկա չեն. ընդհանուր իրավասության դատարաններում շարունակելու են գործել մասնագիտացված դատավորներ:

2021 թվականի հունիս 30-ին ընդունված նոր քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված են անչափահասների վարույթին վերաբերող առանձնահատուկ դատավարական կարգավորումներ, ինչպիսիք են, օրինակ, անչափահասների վերաբերյալ վարույթի արագ և առանց անհարկի ձգձգումների քննության պահանջը և դրանով պայմանավորված՝ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամկետների երկարացման արգելքը:

Կոմիտեն անչափահասների գործերով արդարադատության համակարգի ներդրման շրջանակներում առաջարկել է մշակել դատական քննության և պատժի կրման այլընտրանքներ, ինչպիսիք են, օրինակ, հաշտարարությունն ու համայնքային աշխատանքը: Սրա հետ կապված հարկ է նկատել, որ քրեական օրենսդրությամբ որպես հանցանք կատարած անչափահասների նկատմամբ կիրառվող պատժին այլընտրանք նախատեսվում է միայն դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածով ամրագրված է, որ վարույթն իրականացնող մարմնի հրավերով անչափահաս մեղադրյալի ներկայանալը և նրա այլ պարտականություններ կատարելն ապահովելու նպատակով նրա նկատմամբ հսկողությունը կարող է հանձնարարվել անչափահաս մեղադրյալի ծնողին, որդեգրողին, հոգաբարձուին կամ փակ մանկական հիմնարկի վարչակազմին, որտեղ նա գտնվում է: Ծնողը, որդեգրողը, հոգաբարձուն իրավունք ունեն հրաժարվելու անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական հսկողություն իրականացնելուց: Անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց դաստիարակչական հսկողությունը կիրառելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողին, որդեգրողին, հոգաբարձուին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում է մեղադրանքի ելությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

Օրենսգիրքը ներառվել են ժամանակակից միջազգային-իրավական չափանիշների, ավելի քան քսան տարվա ընթացքում ձևավորված ներպետական բարձրագույն դատական ատյանների պրակտիկայի և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա: Սակայն բարեփոխված և առաջադեմ իրավական գաղափարները կյանքի կոչելու համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ իրավակիրառողը ճշգրիտ ընկալի Օրենսգրքով ամրագրված հայեցակարգային լուծումների և առանցքային ինստիտուտների նպատակային նշանակությունը և վերջիններս կիրառի դրանց տառին ու ոգուն համապատասխան¹²³: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով, բացի սույն Օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված ապացուցման ենթակա հանգամանքներից, ի թիվս այլնի պարզվում են՝ անչափահասի սոցիալական, ընտանեկան վիճակը, կրթության և դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները, անչափահասի վրա տարիքով ավագ անձանց ազդեցությունը, ենթադրյալ հանցանքի կատարման պատճառները և դրան նպաստող պայմանները:

Օրենսգիրքը թույլատրում է անչափահաս տուժողի կամ վկայի նկատմամբ փորձաքննություն կատարել միայն նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ բացառություն այն դեպքերի, երբ փորձաքննության կատարումն անհրաժեշտ է այնպիսի հանգամանքների հաստատման համար, որոնք կարող են հաստատվել բացառապես փորձագետի եզրակացությամբ:

Օրենսգրքով նախատեսված է նաև ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ:

Օրենսգիրքը նախատեսում է նաև անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատկությունները: Այսպես, անչափահաս տուժողի կամ վկայի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցելու տվյալ տուժողի կամ վկայի հարցաքննությանը: Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությունը կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կատարվում է հոգեբանի մասնակցությամբ: Անչափահաս տուժողը կամ վկան հոգեբանի առաջարկությամբ չի հարցաքննվում, եթե դա անհրաժեշտ է նրա իրավաչափ շահերի պաշտպանության համար, և պաշտպանության կողմը մինչդատական վարույթում հնարավորություն է ունեցել հարցեր տալու անչափահասին: Մինչև տասնվեց տարեկան տուժողի կամ վկայի հարցաքննությունն սկսելուց առաջ նախագահողը նրանց բացատրում է վարույթի արդարացի իրականացման համար ճշմարտացի ցուցմունքներ տալու նշանակությունը, սակայն չի նախազգուշացնում ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

¹²³ Տե՛ս <https://rm.coe.int/new-criminal-procedure-code-guideline-/1680a72908> հղումով:

Հարցաքննության ավարտին օրինական ներկայացուցիչն իրավունք ունի նախագահողի թույլտվությամբ հարցեր տալու անչափահաս տուժողին կամ վկային:

Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը օրենսգրքով տարբերակված է, և որպես տարբերակման հիմք է՝ ենթադրյալ հանցանքի կատարման համար մեղադրվող անձի տարիքը: Վարույթի կիրառման պայման է համարում անձի տասնութ տարին լրացած չլինելը նրան ձերբակալելու կամ մեղադրանք ներկայացնելու ժամանակ, այլ ոչ թե ենթադրյալ հանցանքը կատարելու պահին՝ ի տարբերություն մինչ 2021 թվականը գործող օրենսգրքով: ՀԱՄԱՃԱՅՆ Օրենսգրքի՝ այս վարույթը կիրառվում է նաև այն ժամանակ, երբ տարիքը հաստատող փաստաթղթի բացակայության պարագայում անձը հայտարարում է, որ անչափահաս է կամ նրան առնչվող փաստերից դա ողջամտորեն ենթադրվում է:

Ի տարբերություն ընդհանուր կանոնի, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալված անչափահասին պետք է մեղադրանք ներկայացվի և համապատասխան խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության դեպքում նա պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 48 ժամվա ընթացքում, իսկ դատարանն անչափահասին անազատության մեջ պահելու հարցը պետք է լուծի առավելագույնը 12 ժամվա ընթացքում, հակառակ դեպքում նա ազատ է արձակվում: Այսինքն՝ վերոնշյալ կարգով ձերբակալված անչափահասը չի կարող 60 ժամից ավելի լինել անազատության մեջ:

Ինչ վերաբերում է անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելուն, ապա անչափահաս մեղադրյալը չի կարող կալանավորվել, եթե նա մեղադրվում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ: Այս կանոնից միակ բացառությունը թույլատրվում է միայն այն ժամանակ, երբ նա չի կատարում իր նկատմամբ արդեն իսկ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պահանջներ: Այսինքն՝ անչափահասին վերոնշյալ հանցանքները մեղսագրելու դեպքում նրա նկատմամբ ի սկզբանե պետք է կիրառվի այլընտրանքային խափանման միջոց՝ դաստիարակչական հսկողությունը ընտրելու հարցը պարտադիր քննարկման առարկա դարձնելու պայմանով:

Անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով:

Մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կալանքը կամ տնային կալանքը կարող է կիրառվել, կամ դրա ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր դեպքում մեկ ամսից ոչ ավելի ժամկետով: Մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի կամ տնային կալանքի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) երկու ամիսը՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

2) վեց ամիսը՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում:

Առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվող անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքը կամ տնային կալանքը բացառիկ դեպքերում կարող է երկարաձգվել ևս առավելագույնը երկու ամսով: Անչափահասին ազատ արձակելու վերաբերյալ յուրաքանչյուր պատշաճ միջնորդություն վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է քննարկվի և լուծվի անհապաղ:

Վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ իրավասու է օրենսգրքով նախատեսված դեպքերում դատական նիստը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու մասին որոշում կայացնել:

Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անչափահասի դաստիարակության, բնակության, կրթության կամ աշխատանքի բնականոն պայմաններն ապահովելու, ինչպես նաև ոչ իրավաչափ ներգործությունից նրան առավելագույնս զերծ պահելու համար: Անչափահասի նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի և ներգործության մյուս միջոցները պետք է համարժեք լինեն նրան վերագրվող հանցանքի փաստական հանգամանքներին և ծանրության աստիճանին, ինչպես նաև անչափահասի անձին, նրա սոցիալական և հոգեկան վիճակին:

Վերոգրյալը վկայում է, որ Քրեական օրենսգրքում կատարվել են դրական փոփոխություններ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից:

Համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության տվյալների՝ 2021 թվականին մշակվել է «Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, ինչպես նաև ընտանեկան բռնության գործերով մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվող հոգեբանների վերապատրաստման ուսումնական ծրագիրը» և 2021 թվականին 25 հոգեբաններ վերապատրաստվել են՝ ստանալով համապատասխան որակավորում: Օրենսգրքով նախատեսված է նաև, որ եթե անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա նա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և առկա է հաշտության վերաբերյալ տուժողի և հանցագործության համար մեղադրվող անձի շահերի պաշտպանության պարտականություն ունեցող անձի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը: Եթե հանցագործությունից տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը չի կարող հաշտության հիմքով ազատվել քրեական

պատասխանատվությունից: Քրեական վարույթի շրջանակներում տուժող ճանաչված, 14 տարին չլրացած անչափահասների պարագայում, հաշվի առնելով վերջիններիս խոցելիությունը և անօրինական ներգործության բացառման հնարավորությունը, օրենսդիրը նախատեսել է, որ 14 տարին չլրացած անչափահասների դեմ ուղղված հանցանք կատարած անձը չի կարող հաշտության հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից, ապահովելու համար արդարության և անհատական պատասխանատվության սկզբունքը:

Եթե քրեական վարույթի շրջանակներում տուժող ճանաչված անձը 14-18 տարեկան է, ապա հաշտության հիմքով անձի քրեական պատասխանատվությունից ազատումն իրականացվում է ընդհանուր հիմքով՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

5) Ազատությունից զրկված անչափահասների պահման պայմանները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկուլյցներով մանրամասն անդրադարձ է կատարվել: Այսպես, մշտադիտարկման այցերի ընթացքում առանձնահատուկ ուշուժմասիրման առարկա են դարձել ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմաններն ու վերջիններս նկատմամբ վերաբերմունքի հատուկ պահանջների հետ կապված հարցերին: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ անչափահասները պետք է պահվեն իրենց համար հատուկ նախատեսված հաստատություններում և չպետք է պահվեն չափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում: Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման առանձնահատուկ պայմանների բացակայությունը խնդրահարույց է: Շարունակում է մտահոգիչ մնալ նաև ազատությունից զրկված անձանց՝ իրենց կամքից անկախ երկարատև միայնակ պահելու հարցը:

6) Ազատությունից զրկված անչափահասների զբաղմունքի և կրթության հետ կապված խնդիրներ

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորված անձը կրթություն ստանալու իրավունք ունի: Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածով: Ուղղիչ հիմնարկներում կրթության իրավունքի ապահովման կարևորությունն ընդգծվել է նաև միջազգային հիմնարար փաստաթղթերում: Այսպես,

Միավորված ազգերի կազմակերպության Անչափահասների նկատմամբ արդարադատությունն իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 26.6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է խրախուսել միջնախարարական և միջգերատեսչական համագործակցությունը՝ ուղղիչ հիմնարկներում պահվող անչափահասներին համապատասխան ակադեմիական կրթություն կամ հնարավորության դեպքում, արհեստավարժություն ապահովելու նպատակով, որպեսզի ուղղիչ հիմնարկից դուրս գալուց հետո նրանք լիարժեք կրթություն ունենան: ԽԿԿ-ի 2-րդ ընդհանուր գեկույցում նշվել է, որ ազատությունից զրկված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են դրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե կալանավորվածների: ԽԿԿ-ի իրավաբանության համաձայն՝ ազատությունից զրկված բոլոր անչափահասները պետք է պահվեն իրենց տարիքի համար հատուկ նախատեսված հիմնարկներում, որոնք ունեն անչափահասների կարիքներին հարմարեցված ռեժիմներ, և որտեղ անչափահասների հետ վարվեցողության կապակցությամբ վարչակազմը վերապատրաստված է: Ավելին, անչափահասների համար նախատեսված ազատությունից զրկման վայրերում պետք է հատուկ ջանքեր գործադրվեն երկարաժամկետ սոցիալական մեկուսացման ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Եվրոպական բանտային կանոնների 28.7-րդ կանոնի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց կրթությունը պետք է գործնականում հնարավորին չափ ներհյուսված լինի երկրում առկա կրթական և մասնագիտական վերապատրաստման համակարգի մեջ, որպեսզի ազատ արձակվելուց հետո նրանք կարողանան առանց դժվարությունների շարունակել իրենց կրթությունը և մասնագիտական վերապատրաստումը:

Ըստ Արդարադատության նախարարության տվյալների՝ 2018-ից մինչ 2022թ հոկտեմբեր ամիսն անչափահասների հետ իրականացվել մի շարք ծրագրեր, ինչպիսիք են օրինակ գեղարվեստական միջոցառումներին, ցուցահանդեսներին մասնակցելը, խմբային քննարկումներին և այլ միջոցառումներ:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում անչափահաս շահառուների հետ իրականացվել են վերասոցիալականացման հետևյալ ծրագրերը՝ կրթական, մշակութային, սոցիալական, կրոնական, սպորտային միջոցառումներ, ինչպես նաև տրամադրվում է իրավական և հոգեբանական խորհրդատվություն:

Պրոբացիայի ծառայությունում հաշվառված անչափահաս շահառուները մասնակցել են Կազմակերպության կողմից իրականացրած կրթական ծրագրերին, մասնավորապես՝ «Անգլերեն լեզու» և «Համակարգչային հմտություններ» դասընթացներին:

Հաշվառված անչափահաս շահառուների կրթությունը շարունակելու ուղղությամբ կատարվել են անհատական հոգեբանական խորհրդատվական աշխատանքներ,

ինչպես նաև իրավագիտակցության բարձրացման և անձնային աճին ուղղված աշխատանքների արդյունքում 2 անչափահաս շահառուներ ընդունվել են հանրակրթական դպրոցներ:

«Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության հետ կնքված հուշագրի շրջանակներում Պրոբացիայի ծառայության անչափահաս և երիտասարդ շահառուներին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու ԵԱԴ տեղական և միջազգային երիտասարդական ծրագրերին, իրականացվող արշավներին և այլ նախաձեռնությունների:

Պրոբացիայի ծառայության աշխատակիցները COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության ժամանակահատվածում պարբերաբար հեռավար խորհրդատվական աջակցություն են տրամադրել, ինչպես անչափահաս շահառուներին, այնպես էլ նրանց ընտանիքի անդամներին: Համագործակցելով տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ անչափահաս շահառուներին ընտանիքներին տրամադրվել են պարենային փաթեթներ («Հայաստանում կանանց հիմնադրամի» աջակցություն, «Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոն», «Արդարության ուղի», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սոցիալական ծառայությունների կենտրոն, «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպություն):

7) Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաներ

Ի գիտություն ընդունելով, որ որոշ միջոցներ ձեռնարկվել են տուժող և վկա երեխաների պաշտպանության ուղղությամբ, ինչպիսին, օրինակ, շահերի ներկայացուցիչ իրավաբանի և հոգեբանների ներկայությունն է հարցաքննության ընթացքում՝ Կոմիտեն, այնուհանդերձ, ափսոսանք է հայտնել, որ ջանքերը բավարար չեն և հավուր պատշաճի արտացոլված չեն Մասնակից պետության օրենսդրության մեջ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 54)`

- համարժեք իրավական դրույթների և կարգավորումների միջոցով ապահովել, որ հանցագործության վկա և տուժող բոլոր երեխաներին տրամադրվի Կոնվենցիայով պահանջվող պաշտպանությունը.
- լիարժեքորեն հաշվի առնել «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների մասնակցությամբ գործերով արդարադատության վերաբերյալ» Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները (հավելվածի տեսքով կցված են Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 2005/20 բանաձևին):

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի

փետրվարի 27-ի № 303 որոշման 51-րդ կետով սահմանվել է, որ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքով սահմանել անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգ, որպեսզի, մասնավորապես, բացառվի հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը (secondary victimization): Տևտեսական և սոցիալական խորհրդի թիվ 2005/20 բանաձևը, ի թիվս այլ ուղենիշների, սահմանում է, որ «(...) երեխայի նկատմամբ ճնշումներից խուսափելու նպատակով, նրա հարցաքննությունները/հարցազրույցները պետք է իրականացվեն հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից (...) բոլոր գործողությունները պետք է իրականացվեն հնարավորինս երեխայակենտրոն միջավայրում՝ կահավորված այնպես, որ հնարավորինս հարգվեն երեխայի ունակությունները, տարիքը, մտավոր կարողությունները (...):»:

Վերոհիշյալ թիվ 2005/20 բանաձևի 31-րդ կետի համաձայն՝ անչափահասների ներգրավմամբ վարույթն իր ամբողջության մեջ պետք է լինի երեխայակենտրոն, և այդ իմաստով վարույթը պետք է կազմակերպել այնպես, որ քրեական գործով քննության ընթացքում հնարավորինս նվազեցվեն արդարադատության համակարգի հետ երեխայի շփումները: Մասնավորապես, ըստ բանաձևի, անհրաժեշտ է նվազեցնել հարցաքննությունների թիվը, «սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լսումների և հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ (...) կամ, եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով, կապահովեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման համար մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաներին պետք է հարցաքննել (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման համար մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում: Պետք է նաև կահավորվեն առանձին դատական սպասարահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ: Ապահովել, որպեսզի տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայակենտրոն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ՝ նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան-փորձագետներ նշանակելու միջոցով (...):»:

Վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ Օրենսգրքով նաև ամրագրված է, որ անչափահասի մասնակցությամբ կատարվող քննչական գործողության առանձնահատկությունները: Այսպես, անչափահասի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվում է Կառավարության սահմանած կարգով որակավորված հոգեբան: Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանն իրավունք ունի մասնակցելու նրա օրինական ներկայացուցիչը: Քննիչն իրավունք ունի հանելու տրված հարցերը կամ չընդունելու ներկայացված

առաջարկները, սակայն ամեն դեպքում դրանք պետք է ներառվեն արձանագրությունում: Հոգեբանի առաջարկությամբ անչափահասի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով քննչական գործողությունը կատարվում է այնպիսի պայմաններում (վայրը, տևողությունը, մասնակիցների շրջանակը և այլն), որոնք թույլ կտան առավելագույնս երաշխավորել նրա լավագույն շահերը: Հոգեբանի առաջարկությամբ և անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությունն սկսելուց առաջ քննիչն անչափահասին տրվելիք հարցերը ձևակերպում և համաձայնեցնում է հոգեբանի հետ: Հոգեբանի առաջարկությամբ և անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ձերբակալվածի, մեղադրյալի կամ նրա պաշտպանի հարցերն անչափահասին տրվում են հոգեբանի հետ համաձայնեցնելուց հետո՝ առանց անչափահասի հետ անմիջական հաղորդակցության: Ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությանը մասնակցող և տասնվեց տարին չլրացած անչափահասին բացատրվում է ճշմարտացի ցուցմունք տալու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունք տալուց հրաժարվելու և սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Առաջարկություններ

- *Անհրաժեշտ է սահմանել անչափահասների հանցավորության վիճակագրական հստակ ցուցիչներ ու չափանիշներ՝ ապահովելով այդ վիճակագրությունը ստեղծող ու հավաքագրող կառույցների գործառույթային տարանջատումը և նրանց շարունակական վերապատրաստումը:*
- *Մշակել և հաստատել անչափահասների հանցավորության նվազման, կանխարգելման վերաբերյալ ռազմավարական ծրագիր՝ ներառելով ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կառույցների ներուժը:*
- *Անհրաժեշտ է դիտարկել Հայաստանում երեխայի տան /Barnahus/ ստեղծման հնարավորությունը՝ որպես երեխայի երկրորդային զոհացման կանխարգելմանն ուղղված կարևորագույն մեխանիզմ:*

Ը. ՄԱՆԿԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ և ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈՌՆՈԳՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՀՈԴԿԱՃՆԵՐ 3, 4, ԿԵՏ 2, 3; 5; 6 և 7)

1. Ներպետական քրեաիրավական կարգավորումների համապատասխանությունը Արձանագրությանը

Արձանագրության վերաբերյալ Ամփոփիչ դիտարկումներում¹²⁴ Կոմիտեն նշել է, որ թեև ՀՀ-ն արձանագրության բազմաթիվ դրույթներ ներառել է Քրեական օրենսգրքում, դրանք հիմնականում սահմանված են թրաֆիքինգի ներքո, այլ ոչ թե ինքնուրույն բովանդակությամբ, մինչդեռ մանկավաճառության և թրաֆիքինգի հանցակազմերը նույնական չեն, և այդ առումով Կոմիտեն առաջարկում է մանկավաճառությունը սահմանել ինքնուրույն բովանդակությամբ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 9)`

- մանկավաճառության հանցակազմը սահմանել թրաֆիքինգի բովանդակությունից դուրս և այնպիսի բովանդակությամբ, ինչպիսին նշված է Արձանագրության 2-րդ հոդվածում, այսինքն, հետևյալ կերպ`
«Երեխաների վաճառքը` ցանկացած եղանակով երեխային առաջարկելը, տեղափոխելը կամ ընդունելը` սեռական շահագործման, շահույթի նպատակով երեխայի օրգանների տեղափոխման, և երեխային հարկադիր աշխատանքի ներգրավման նպատակով».
- վերանայել Քրեական օրենսգրքը և ներմուծել Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված արարքները Քրեական օրենսգրքում` որպես քրեորեն հետապնդելի արարքներ.
- ստեղծել Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման միասնական համակարգ:

1) Մանկավաճառության հանցակազմի սահմանումը
ՀՀ քրեական օրենսգրքում

ՀՀ քրեական օրենսգրքում մանկավաճառության հանցակազմը սահմանված չէ այն բովանդակությամբ, որն առաջարկում է Կոմիտեն: ՀՀ նոր Քրեական օրենսգրքը մանկավաճառությունը սահմանում է 242-րդ հոդվածով` խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը: Մանկավաճառությունը սահմանված է նաև Քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով. երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը` շահագործման նպատակով երեխային կամ անօգնական վիճակում գտնվողին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձին շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը:

Արձանագրությամբ առաջարկվում է մանկավաճառության հանցակազմում ներառել **երեխայի սեռական շահագործման, վարձատրության դիմաց երեխայի օրգանների հանձնման և հարկադիր աշխատանքներում երեխայի**

¹²⁴http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC/C/OPSC/ARM/CO/1&Lang=En:

օգտագործման նպատակներով երեխա առաջարկելը, փոխանցելը կամ ստանալը:

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածի, ինչպես նաև նույն օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածների իմաստով՝ շահագործում են համարվում այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, պարտադիր կամ հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելը:

3) Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների ամրագրումը Քրեական օրենսգրքում և տվյալների հավաքագրման միասնական համակարգի ստեղծումը

Կոմիտեն նաև մտահոգություն է հայտնել, որ Արձանագրությամբ սահմանված ստորև նշված արարքները սահմանված չեն Քրեական օրենսգրքում որպես քրեորեն հետապնդելի արարքներ և առաջարկել է դրանք քրեականացնել հետևյալ բովանդակությամբ՝

- 1) երեխաների վաճառքը՝ որպես միջնորդ որդեգրման համաձայնությանը ոչ պատշաճ եղանակով հակելով՝ ի խախտումն որդեգրման վերաբերյալ միջազգային իրավական գործիքների.
- 2) Պոռնկությանը ներգրավելու նպատակով երեխային առաջարկելը, ձեռք բերելը, գնելը կամ տրամադրելը.
- 3) Մանկական պոռնոգրաֆիա ներմուծելը, արտահանելը, առաջարկելը կամ տիրապետելը.
- 4) Վերը նշված ցանկացած գործողության կատարման փորձը և նշված գործողություններին մասնակցելը կամ հանցակցությունը:

ՀՀ նոր Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով. խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը, սահմանվել է, որ խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը, եթե բացակայում են օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: Նշված արարքը, որը կատարվել է երեխային այլ պետություն տեղափոխելով կամ կեղծ որդեգրման միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանվում է, որ երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով երեխային կամ անօգնական վիճակում գտնվողին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը,

թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձին շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

Օրենսգրքի 300-րդ հոդվածով սահմանվել է մանկական պոռնոգրաֆիա ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը, տարածելը, իրացնելը, արտահանելը, ներմուծելը, առաջարկելը, գովազդելը, մատչելի դարձնելը, տնօրինելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հասանելիություն ձեռք բերելը կամ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորումների վրա կամ ցանկացած այլ եղանակով մանկական պոռնոգրաֆիա պահպանելը կամ մանկական պոռնոգրաֆիա դիտելը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք:

2015 թվականին ուժի մեջ է մտել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձանց շահերից բխող՝ նրանց հայտնաբերումը, պատշաճ նույնացումը, աջակցության, պաշտպանության և հասարակությանը սոցիալական վերաինտեգրման արդյունավետ ապահովումն է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների միջև, ինչպես նաև հասարակական, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության հետ ռազմավարական համագործակցության ընթացակարգերի ձևավորմամբ:

2. Իրազեկության բարձրացում ու տարածում

Կոմիտեն գտել է, որ Արձանագրության մասին հանրային իրազեկման ուղղությամբ բավարար միջոցներ չեն կիրառվել: Ձևաբերը սահմանափակվել են միայն թրաֆիքինգի և անչափահասների մարմնավաճառության թեմաներով: Մինչդեռ, Արձանագրությամբ սահմանված այլ հանցագործությունների մասին իրազեկում բավարար չափով չի արվել՝ հատկապես արձանագրությունը կիրառող մարմինների, ինչպես նաև լայն հանրության և երեխաների շրջանում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 15)՝

- Արձանագրության մասին լայն հանրային իրազեկում իրականացնել՝ մշակելով երկարաժամկետ կրթական և իրազեկման ծրագրեր, այդ թվում՝ քարոզարշավներ՝ կանխարգելման և Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների վնասակար հետևանքների մասին:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ Մշակվել և տարածվել են երեխայի իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, զանգվածային լրատվության միջոցներով տարածվել են երեխայի

իրավունքների վերաբերյալ տեսաձայնագրություններ, իրականացվել են երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկման ակցիաներ: Միջոցառումն իրականացվել է ինչպես ԱՍՀ նախարարության կողմից, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Միջոցառումն իրականացվել է «Երեխայի թրաֆիքինգ և շահագործում», «Մանկալքության կանխարգելման ծրագրի շնորհիվ կենսաբանական ընտանիք վերադարձած երեխաներ», «Հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի հմտությունների զարգացման ծրագրեր», «Որդեգրման գործընթացների բարեփոխում», «Խնամատար ընտանիքներ», «Երեխաների հանդեպ բռնություն» թեմաներով:

Ըստ տրամադրված տվյալների՝ ՀՀ ԱՍՀ-ն և գործընկեր «Ամբոր» բարեգործական կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել են իրազեկման դասընթացներ Նախարարության ենթակայությամբ գործող Երեխայի խնամքի հաստատությունների աշխատակիցների, Միասնական սոցիալական ծառայության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների, Երևանի թվով 12 խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատակիցների և Երեխայի խնամքի հաստատությունների 14-18 տարեկան երեխաների և իրենց ծնողների համար, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզերի առաջնային օղակի աշխատակիցների համար, որտեղ ուլորտային փորձագետների կողմից ներկայացվել են թրաֆիքինգի և շահագործման երևույթին առնչվող և դրա կանխարգելմանն ուղղված դրույթները:

5. Կիրառված միջոցները Արձանագրությամբ սահմանված հանցագործությունները կանխարգելելու համար

Կոմիտեն գտել է, որ պետությունը չունի մեխանիզմներ հայտնաբերելու, նույնականացնելու և մշտադիտարկելու այն երեխաներին, ովքեր գտնվում են արձանագրությամբ սահմանված հանցագործությունների զոհ հանդիսանալու վտանգի տակ: Պետությունը նաև չունի ծրագիր հատկապես թիրախավորելու համար աղքատության մեջ ապրող, չուղեկցված և խնամքի հաստատությունները հրաժեշտ տված երեխաներին, ինչպես նաև եզդիների համայնքի անդիկներին, ովքեր հաճախ ենթարկվում են վաղաժամ ամուսնության:

Կոմիտեն առաջարկել է (կետ 17)՝

- ստեղծել մեխանիզմներ նույնականացնելու, հայտնաբերելու և մշտադիտարկելու խոցելի վիճակում գտնվող երեխաներին, որոնք գտնվում են արձանագրությամբ սահմանված հանցագործությունների զոհ դառնալու վտանգի տակ, ինչպես նաև ստեղծել հատուկ ծրագրեր՝ թիրախավորելու համար աղքատության մեջ ապրող, չուղեկցված և խնամքի հաստատություններից դուրս եկած երեխաներին, ինչպես նաև եզդի համայնքի անդիկներին.

- Կոմիտեն առաջարկել է նաև վերանայել գործող համակարգն այն առումով, որ այդպիսի երեխաներին այցելություններն ու մշտադիտարկումն իրականացվեն ոչ միայն Ոստիկանության, այլև հատուկ պատրաստված սոցիալական աշխատողների կողմից:

6. Երեխա զոհերին պաշտպանելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները

Կոմիտեն գտել է, որ որոշ դեպքերում հանցագործությունից տուժած կամ վկա երեխաներին չեն տրամադրվել պատշաճ պաշտպանություն դատավարությունների ընթացքում, և որ մարմնավաճառության մեջ ներգրավված երեխաները ենթարկվել են վարչական տույժերի:

Կոմիտեն առաջարկել է (կետ 27)՝

- Պարտադիր դարձնել հատուկ պաշտպանության միջոցների կիրառումը քրեական դատավարությունում մինչև 18 տարեկան բոլոր անչափահաս զոհերի և վկաների նկատմամբ:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ: Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմինը համապատասխան անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կայացնում է հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշում, որի կատարումն անհապաղ հանձնարարում է իրավասու պետական մարմնին: Հատուկ պաշտպանության միջոցի կիրառումն ապահովվում է ինչպես քրեական վարույթն իրականացնող մարմնի անմիջական նախաձեռնությամբ, այնպես էլ դատավարական կարգավիճակ ունեցող անձի դիմումի հիման վրա:

7. Չոհերի վերականգնում և վերաինտեգրում

Կոմիտեն եզրահանգել է, որ սոցիալական վերաինտեգրումը և օգնությունը իրականացվում են հիմնականում հասարակական կազմակերպությունների կողմից, և փոքր օգնություն է տրամադրվում Ոստիկանության ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Կոմիտեն առաջարկել է (կետ 29)՝

- կիրառել բոլոր հնարավոր միջոցները ապահովելու համար, որ Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների անչափահաս զոհերը ստանան պատշաճ օգնություն, այդ թվում՝ ֆիզիկական և հոգեբանական վերականգնում, և ամբողջական սոցիալական վերաինտեգրում՝ վերականգնողական ծրագրերի կիրառմամբ:

«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է թրաֆիքինգի զոհերի, այդ թվում՝ անչափահաս զոհերի պաշտպանության երաշխիքները, նրանց տրամադրվող աջակցության տեսակները, կարգը և չափերը: Օրենքը սահմանում է, որ աջակցությունը նախանույնացման փուլում: Այսպես, այն անձը, որը նախանույնացման փուլում նախանույնացումն իրականացնող իրավասու մարմնի գնահատմամբ կամ իր հայտարարությամբ ակնհայտորեն կարիք ունի անհետաձգելի աջակցության, իր ցանկությամբ կամ իր գրավոր համաձայնության պարագայում այդ անձի նախանույնացումն իրականացնող իրավասու մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում ուղղորդվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու անհետաձգելի աջակցության տրամադրումը՝ այդ նպատակով օգտագործելով գործընկեր հասարակական կազմակերպությունների կամ այլ հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունները: Անհրաժեշտությունից ելնելով՝ իրավասու մարմինը կարող է պահանջվող գործողությունների իրականացմանը պետական այլ մարմնի միջոցով ներգրավել նաև օտարերկրյա պետություններում գործող համապատասխան հասարակական և (կամ) այլ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական միավորներին: Նախանույնացման փուլի մեկնարկի հետ մեկտեղ հավանական զոհը իրեն հասկանալի լեզվով իրազեկվում է իր իրավունքների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված դրույթների մասին: Հավանական զոհերի աջակցությունը կարող է ներառել նաև՝

- 1) անհետաձգելի բժշկական օգնություն.
- 2) նախանույնացման փուլի տևողությամբ ժամանակավոր կացարանի տրամադրում՝ նաև օրինական ներկայացուցչի և խնամքի տակ գտնվող երեխաների համար.
- 3) հիմնական կրթության ապահովում.

- 4) առաջին անհրաժեշտության բնափրային օգնություն.
- 5) առաջնային հոգեբանական օգնություն.
- 6) ընդհանուր բնույթի խորհրդատվություն.
- 7) խնամքի տրամադրում:

Ըստ ՀՀ ԱՍՀՆ-ի տվյալների՝ 2018-2022 թթ. ժամանակահատվածում նույնացման հանձնաժողովի կողմից նույնացվել է 17 երեխա գոհ /հատուկ կատեգորիայի գոհ/:
 Նույնացված գոհերին տրամադրվել է օրենքով սահմանված ողջ ծառայությունների փաթեթը՝ ներառյալ կացարանով ապահովում, միանվագ դրամական աջակցություն, բնափրային աջակցություն, սոցիալական աշխատողի և հոգեբանի ծառայություններ, ընդհանուր խորհրդատվական և փաստաթղթերի վերականգնմանն ուղղված ծառայություններ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մասամբ կատարվել են:**

Թ.ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻՆ ԿԻՑ՝ ՉԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվենցիային կից՝ Չինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը 2005թ.մարտի 21-ին, որը մտել է ուժի մեջ 2005 թվականի հոկտեմբերի 30-ին:

1.Կանխարգելում

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ՝

- դպրոցական ծրագրերում 8-րդ դասարանի աշակերտների համար (14 տարեկան և բարձր) ներառված է «Քաղաքացիական պաշտպանություն» առարկա, որի շրջանակներում ներառված է հրազենով ուսուցում.
- «Փոքր Միեր» ռազմական համալիրի կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս ընդունել 14 տարեկան երեխաներին, ինչպես նաև ներառում է հրազենով ուսուցում.
- Մոնթե Մելքոնյանի ռազմական դպրոցը, որն ընդունում է 16 տարեկան երեխաներ, որոնցից շատերը սոցիալապես անապահով ընտանիքներից են կամ խնամքի հաստատություններից, անցկացնում է հրազենի կիրառման կամ մարտարվեստի օգտագործման պարտադիր դասընթացներ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 11)՝

- հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերից բացառել զինվորական դասընթացները.
- միջոցներ ձեռնարկել, որ ռազմական դպրոցներում արգելվեն 18 տարեկանից ցածր երեխաների համար հրազենի օգտագործմամբ դասընթացները, ինչպես նաև մարտարվեստի դասընթացները.
- իրականացնել ռազմական դպրոցների պարբերաբար մոնիտորինգ՝ ապահովելու համար, որ դպրոցական ծրագրերը և ուսուցչական կազմը համապատասխանեն Արձանագրության պահանջներին.
- 18 տարեկանից ցածր երեխաները, ովքեր ընդունվել են ռազմական համալսարաններ, ենթակա չլինեն պարտադիր զինվորական ծառայության այն դեպքում, երբ տեղի ունենան զինված բախումներ, ինչպես նաև չպետք է ենթարկվեն զինվորական կարգապահական պատասխանատվության և պատժի:

ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ ոստիկանության պետի համատեղ հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական դպրոցներն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ուսումնական զենքով և ռազմամթերքով ապահովելու» կարգի 2-րդ կետով, որտեղ, մասնավորապես, նշվում է. ուսումնական զենք համարվում է միայն ուսումնական գործընթացում օգտագործվող զենքը, որից կրակելն առանց վերանորոգման անհնար է, ընդ որում, ուսումնական հաստատությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն ձեռք բերելու նաև սպորտային և որսորդական զենք:

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 983-Ն որոշման 76-րդ կետի համաձայն՝ *վարժարանում սանի սովորելու ժամանակաշրջանը չի համարվում զինվորական ծառայություն: Հիմնադրամի կանոնադրության 64-րդ կետի համաձայն՝ ուսումնական այլանում և դասացուցակում դասաժամերի մինչև 30%-ը պարտադիր հատկացվում է ռազմագիտության, ֆիզպատրաստության և լեռնային պատրաստության ծրագրերի իրականացմանը:*

Պաշտպանի 2018 թվականի վերոնշյալ զեկույցով անդրադարձ է կատարվել «Փոքր Միեր» կրթահամալիրի հարցին: ՀՀ կառավարության 2016 թվականի 29 դեկտեմբերի N1381-Ն որոշմամբ կրթահամալիրի վերակազմակերպման արդյունքում ավագ դպրոցի կրթական ծրագիրն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» պետական հիմնարկը: Ըստ Կառավարության որոշման՝ «Փոքր Միեր» կրթահամալիր» և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝

ստեղծելով «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց»՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ: «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան *հանրակրթական հիմնական (5-9-րդ դասարանների ընդհանուր և մասնագիտացված) ծրագրերի իրականացումն է*, իսկ գործունեության նպատակն է սովորողի կողմից հանրակրթության պետական չափորոշչի առարկայական ընդհանուր և ռազմաուսումնական մասնագիտացված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, սովորողի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, մասնագիտական կողմնորոշումը, ծրագրերին համապատասխան սովորողների դաստիարակության ապահովումը, ինչպես նաև ռազմաուսումնական մասնագիտացված կրթությունն ստանալու համար պայմանների ստեղծումը և խնամքի ու պաշտպանության ապահովումը:

2. Արգելք և այլ հարակից հարցեր

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը: Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: Չինված հակամարտությունների ժամանակ պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը:

Կոմիտեն առաջարկել է (կետեր 13, 15)՝

- փոփոխել Քրեական օրենսգիրքը և քրեականացնել 18 տարին չլրացած երեխաների զինվորական հաշվառումը զինված ուժեր և նրանց օգտագործումը զինված բախումների ընթացքում՝ պետական զինված ուժերի և ոչ պետական զինված խմբերի կողմից,
- քրեական օրենսգրքով սահմանել արտատարածքային իրավագործությունն նշված արարքների քրեական հետապնդման ու պատժի համար:

Հայաստանի Հանրապետության Նոր քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով սահմանվել է՝ միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքով հովանավորվող անձի կամ միջազգային իրավունքով պաշտպանությունից օգտվող այլ անձի հանդեպ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը: Նշված անձանց նկատմամբ միջազգային

մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը, երեխաներին զինված ուժեր զինվորական ծառայության զորակոչելը կամ հավաքագրելը կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը:

Նույն օրենսգրքի 12-րդ հոդվածի (քրեական օրենքի գործողությունը քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարելու դեպքում) 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց:

**Ի. «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ՝ ՉԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Արձանագրությունը հնարավորություն է տալիս երեխայի իրավունքների կոմիտեին՝ ստանալու հաղորդագրություններ երեխաներից, որոնք վերաբերում են երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով, ինչպես նաև դրա երկու կամընտիր արձանագրություններով, մասնավորապես՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամընտիր արձանագրության և «Չինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ» կամընտիր արձանագրություններով երաշխավորված իրավունքների ապահովմանը»:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ Հաղորդագրություններ ներկայացնելու կարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին ՀՀ օրենքը ընդունվել է 2021 թվականի հունվարի 19-ին: ՀՀ Արձանագրությունը ստորագրել էր 2019 թվականին: Արձանագրության վավերացմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն՝ պատշաճ ուշադրություն դարձնել իր իրավագրության ներքո գտնվող անձանց բողոքների վերաբերյալ կոմիտեի տեսակետներին և առաջարկություններին, պատշաճ ու ակտիվ միջոցներով և՛ չափահասներին, և՛ երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողներին, հավասարապես հասանելի ձևաչափերով լայնորեն հայտնի դարձնել և տարածել Արձանագրությունը և դյուրացնել մատչելիությունը երեխայի իրավունքների կոմիտեի տեսակետների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկություններին:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածում, ի թիվս այլնի, նախատեսված է նաև արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ (տեսազանգեր), օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և զանգվածային լրատվության միջոցներից, իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով պատիժ կատարող հիմնարկ կամ մարմին, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ և կուսակցություններ, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ դիմելու:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որպեսզի Պետությունը երեխաների համար դյուրին ձևաչափով Կոմիտեին հաղորդակցություններ ներկայացնելու հստակ ընթացակարգեր մշակի, իրականացնի Արձանագրության վերաբերյալ լայնածավալ հանրային իրազեկումներ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների իրազեկումներին: